


MEISTERPEE

O U W C U B C U



ՊԵՏՐՈՎԻՒՆ

ՕՍՄԱՆԻ

ԱԿԱԴԵԼ

Ի ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆՑ

ՄԻԶԵԿ

ՑՄԵՐ ՃԱՄԱՆԱԿՈ

ԱՇԽԱՏԱՍՏՐՈՒԹԵԱՄԲ

ԵՂԲԱՐՑ ՏԵՍՔԵԱՆ




ՊՐԻՖԱՆԵՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԵՏԵԱՆ

50 , ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՐԱԴՐ


1853 — 1270



Յ Ա Ռ Ե Զ Ա Բ Ե Ց

Աշխարհիս խիստ հռչակաւոր ազգաց պատմութեանց մէկն է արդարեւ (Օսմանեան փառաւոր տէրութեան պատմութիւնը) . մարդ չկրնար , առանց հիացման , առ քաջ ազգին մեծագործութիւնները , մեծամեծ պատերազմներն ու երևելի դէպքերը կարդալու . որոնց յիշատակը նշանաւոր մնացած է պատմութեան մէջ . Պրեթէ և դար է որ (Օսմանեան տէրութիւնն սկսած է , բայց մեծամեծ և անուանի թագաւորաց իրարու յաջորդութեամբն ու անոնց ըրած յաջող աշխարհակալութիւններովն առ տէրութիւնը քիչ ժամանակի մէջ ընդարձակ տարածութիւն մը ունեցաւ . այնպէս որ մէկ կողմէն մինչև Հնդկաստան , Ասիա և Ինդիա , միւս կողմէն մինչև Պերմանիա . և հարաւէն մինչև Եւթէովկիա տարածուեցաւ : Քաղաքականութիւնը , զանազան եւ րևելի անցքերու և փոփոխութեանց տակ մտնելով , չափազանց զարգացաւ :

Եւ ահա աս հզօր ազգին պատմութիւնն է ; որուն մենք ձեռնամուխ եղանք երևելի հեղինակներէ հաւաքելով ՚ի լոս ընծայել , ըստ խնդրոյ և առաջարկութեան ոմանց ազգասէր և բանասէր Յարգելեաց , որոնց կամքը լիովին կատարելու համար արժան համարեցինք իւրաքանչիւր թագաւորին պատկերը փորագրելու տալով ողատմութեան սկիզբ դնել :



ՊԱՏՄՈՒԹՒՆ

Օ Ս Մ Ե Ն Ե Ն

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Յունաց տէրութեան և Սէլջուկեանց պատմութեան վրայօք ենեղեկութիւն . — Օսմանեան տէրութեան սկզբնաւ պութիւնը :

Օսմանեան պէտութեան պատմութիւնն սկսելէն առաջ, պէտք է ժամանակակից տէրութեանց վրայօք տեղեկութիւնն մը ստանալ . ինչպէս է Յունաց տէրութիւնը (կամ Արևելեան տէրութիւն) և Խէլջուկեանց տէրութիւնը :

Արևելեան տէրութիւնը 395ին Կ'ըսկսի ու 1058 տարի տեւելով մինչև (Օսմանցւոցմէ 1453ին կոստանդնուպոլսոյ առնութիւնը կ'երթայ ու կ'ըմբազանայ : Ի՞այց իր փառքը շինանելէն առաջ, երկարատեն ընդարձակ երկիրներու վրայ կ'իջևէր . Ասիոյ Տաճկաստանը, Փոքր Վրիան, Վսորեստանը, Լգիպատուանը մէկ մասն իր իշխանութելը տակն էին : Ի՞այց 630ին ետեւ, տէ-

րութիւնը քիչ քիչ նուազեցաւ . Գոթացիք ու Լոմպարտացիք, մանաւանդ Արաբացիք, Խորալիան, Վսորեստանն ու Լոգիպտոսն առին, ու միայն Փոքր Վրիան ու Յունաստանի Հարաւային կողմի թերակղզին մնաց : Օանազան փոփոխութիւններէ ետեւ, տէրութիւնն աւելի նուազաւացաւ . Փոքր Վրիան գրեթէ բոլորովին Խէլջուկեանց ձեռքն անցաւ . բայց 1204ին չոքրորդ Խաչակրաց ահճնիշնան զօրքերը կոստանդնուպոլիս առին, ու Լատին տէրութեան գահը հաստատեցին հոն :

Յունաց տէրութիւնն իր երկիրներուն մեծագոյն մասը կորսընցուցած անդարմանելի թշուառութեան մէջ էր . ծովային զօ-

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ


բութիւնը , բանակները , կառավարութիւնը , տգիտութեան ու տկարութեան լուծին տակը կը հեծէին . Վաղաքային պատերազմները , կրօնից սնոտի վէճերն ու յափշտակութեան ոգին իր զօրութիւնը կ'ըսպառէին . Միւս կողմէն Խմիոյ մէջ Օսմանցիք կը բազմանային ու կը զօրանային և ընդարձակ տէրութիւն մը կը պատրաստէին :

(Օսմանեանց նախահայրը՝ Յարեմի ցեղէն սերեալ թիւրքը անունով մէկը կը կարծուի , որ թուրքաստան բնակելով՝ իր սերունդները բազմացեր ազգ մը ձեւացեր են հոն . ասկէ ժամանակ առ ժամանակ դուրս դաշտականներ երթալով՝ ոմանկը Աէլճուգեանք ըսուեցան , ոմանկը Ուզուզեանք և ոմանկը (Օսմանեանք՝ Օսման քաջ թագաւորին անուամբը :

Արևելյան՝ (Օսմանայ հաւը , Աղողներուն արշաւանքներէն ազատելու համար , իր ընտանեօքն ու հեծելազօր բազմութեամբը թուրքաստանէն ելաւ ու Արեւմուտք՝ Խմիոյ Տաճկաստանի մէջ թափառելու ասեն՝ Խփրատ գեւ-

տին մէջ ինկաւ ու խեղդուեցաւ . Այսոր վրայ , ոմանկը ցրուեցան , իսկ Երթօղուուլ իր հօրը տեղն անցաւ , և զօրքերն առնելով կեսարիոյ կողմերն եկաւ , ուր արդէն Աէլճուգեանց իշխանութիւնը հաստատուած էր , և Ալայէտին կը թագաւորէր . Ասմիջոցիս Աէլճուգեանք և Թաթարները պատերազմելու վրայ տեսնելով , Երթօղուուլ Աէլճուգեանց կողմն անցաւ , և անոնց թշնամեաց յաղթեց . Ալայէտին , աս ծառայուե փոխարէն , Վաղատիոյ (Խնկիւրիւ) կողմը կալուածք մը տուաւ , որ հոն բնակի իր բազմութեանը հետ , և մեծ պարգեներով վարձատրեց զան :

Երթօղուուլ , 1281ին , Յունաց հետ ալ պատերազմելով՝ կուտինա (Քէօթահեա) քաղաքն անոնց ձեռքէն առաւ : Խսկէ ետևալ Ալայէտինի յաջորդներուն մեծամեծ ծառայութիւններ ընելով , 1288ին 93 տարեկան մեռաւ . (Օսմանեան մեծազօր տէրութեան հիմները դնելէ ու իր պատերազմասէր գունդերն ու ընդարձակ երկիրները , իր Օսման որդւոյն թողէն ետեւ :





1853

سلطان عثمان غازى

سەھىپىئەن سەھىپىئەن سەھىپىئەن

ՊԵՏԱԿԱՆ ԹԻՒԴԻ

Օ Ս Մ Ա Ն Ե Վ Ե

ՍԿՍԵԱԼ Ի ՍՈՒՐԵԱՆ ՕՍՄԱՆԱՑ

ՄԻՒԶԵԻ ՑՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՍ

ՍՈՒՐԵԱՆ Օ Ս Մ Ա Ն Ե Վ Ե Վ Ե

1299—698

(Սաման 1259ին ծնաւ . իր բոլոր եղբարց մէջ ամէնէն քաջը և ամէնէն մեծն ըլլուրուն համար՝ Երթօղուուլ հօրը տեղն ինքը յաշըրդեց՝ 24 տարեկան հասակին մէջ . իր պատերազմաներ և կրօնասէր բնութիւնը խփառ երեւելի եր , գէմքը՝ վայելուչ , բարքը՝ քաղցր . այնպէս որ բոլոր իր զօրքերը մեծ համարում ունէին իր վրայ , և չափազանց կը սիրենի զինքը . Այսոր համար մեծ երկիւղ ձգեց Յունաց և մերձակայ տերութեանց մէջ :

(Սաման՝ ամէն բանէ առաջ , չանաց զօրքերը շատցընել ու իր տէրութեան սահմանները առաջնել . արդէն 25,000 հոդի և ընդարձակ երկիրներ ստացեր եր :

Ի յնէկէօլի Յոյն իշխանը՝ անորմէ չլախնաւլով , հավիւները կը նեղէր . Օսման առ բանս իմանալով , քիչ զօրքով անոր վրայ դնաց , ու բերդին տիրեց :

Պիլէճիկի ամրոցին իշխանը Օսմանայ ըրած յաղթութիւնները լուելով վախցաւ , և որպէս զի շըլայ թէ իր վրայ ալ յարձակի՝ բարեկամութի ըրաւ անոր հետ :

(Սաման՝ Կակիչէհրի մօս Կատալի անունով բարի ծերունաց մը տունը յաճախ կ'երթար , ու անոր հետ տեսութիւն կ'ընէր . անգամ մ'ալ անոր աղջիկը տեսնելով , ուղեց որ իրեն կնութետայ . բայց Կակիչէհրին Յոյն իշխանն ալ արդէն ուղած ըլլաւուն՝ Կատալի չհամարձակեւ

յաւ տալ անոր : Յոյն իշխանն
աս իմանալով Օսմանայ վրայ
պատերազմի ելաւ, բայց յաղ-
թուեցաւ, և Օսման անոր Քէօսէ
Միխալ անունով բարեկամը գերի
տարաւ. ասիկայ շատ սիրելի եղաւ
սուլթանին, մանաւանդ Եար-
հիսարի իշխանին իրեն դէմ ընեւ-
լու խաբէութիւնն իմացընելուն
համար : Անոր խրառներն ու ցու-
ցուցած ճամբաները մեծ դիւ-
րութիւն տուին Օսմանայ ուրիշ
շատ տեղերու ալ տիրելու : Իր
տոհմը Միխալ օղու ըսուեցաւ,
որ Օսմանեան տէրութեան մէջ
շատ հռչակուեցաւ, և մինչեւ
ժամ դարը տեւեց :

Արշափ Օսմանեան տէրութիը
կ'ընդարձակէր ու կը զրանար,
նոյնափ Յունաց և Մէջուգենց
տէրութիւնները կը տկարանային
ու կը նսեմանային . այնպէս որ
Յոյներէն շատերը՝ աւելի կ'ընտ-
րէին Օսմանեան իշխանութեան
տակին ըլլալ, քան թէ անզօր
պաշտպանութեան ներքեւ տագ-
նապիլ : Շատերը կամք Մահմէ-
տականութիւնը կ'ընդունէին,
կառավարիչները ձանձրանալով,
(Օսմանցւոց կը յարէին և ուրիշ-
ներն ալ կը խրատէին որ իրենց
հետեւին :

Արշափտուին Բ., Մէջուգեանց
թագաւորն ալ, անոր յաղթու-
թիւնները լոելով, պարգևներ
խրկեց. ՚ի նշան բարեկամութե՛,
զորսնք մեծաւ պատուով ընդու-
նեց Օսման :

Իսկ Պիլէճիկի բերդին իշխանը
նախանձելով Օսմանայ այսափ
մեծնալուն վրայ, ուղեց խրատու-
թեամբ մեռցընել զան : Իայց

Օսման իմանալով՝ վարպետու-
թեամբ գնաց սպաննեց զան ու
բերդին տիրեց :

Վաղատիսյ կողմերն ունեցած
քաղաքներն ու զիւղերը միա-
ցուց, ու ամէնը մէկտեղ “ Պա-
ղատիոյ միջակ ”, անուանեց : Երբ
Վարահիսար քաղաքն ալ Յու-
նաց ձեռքէն պատերազմու ա-
ռաւ, զան ալ ուրիշ միջակ կո-
չեց, և իւր աթոռը հսն հառ-
տատեց :

Վարաձա հիսարի Յունաց ե-
կեղեցին մղկիթի փոխեց . և օ-
րէնսուսոյց մը ու դատաւոր մը
դրաւ հոն, որ արդարութեամբ
քաղաքը կառավարեն, և ամեւ-
նեին Օսմանցւոց ու քրիստոնից
մէջ խորութիւն ընեն :

Երբ Արշափտուին Բ. մեռաւ,
Մէջուգեանց տէրութիը տասը
մտի բաժնուեցաւ, այսինքն Այ-
տըն, Մարուխան, Կէրմիսն, Հէ-
միս, Թէքէ, Մէնթէչէ, Պա-
րէսի, Վասթէմունի և Վարաման
գաւառաց տէրութիւնները, ու-
րոնց ամէն մէկը ինքնագլուխ իշ-
խողմունէր :

Ես միջոցիս Օսման Մէջու-
գեանց իշխանութեան տակէն ա-
զատեցաւ, ու ինքնագլուխ ե-
ղաւ . ասկէ սկսաւ Օսմանայ տի-
րապետութիւնը . ուստի իր ա-
թոռը Ենիշէհիր փոխադրեց և
սկսաւ իր երկիրները զրացընել,
ու իր մեծ զօրավարներուն մէկ
մէկ կալուածք տուաւ, որ իր
իշխանութիւնը ամէն կողմէն զօ-
րանայ : Իր Օրխան որդին Պա-
րաձահիսարի վրայ իշխան դրաւ,
Կիւնտիւզալփի եղբայրը Լակիշ-
հիրի կառավարիչ ըրաւ, ինչօւ

նիւ . Եօհտհիսար , Եշարհիսար , Եյնէկէոլ և Պիլէճիկ քաղաքաց վրայ ալ մէկ մէկ զօրավար դրաւ : Այսպէս (Օսման և քան զես քաջանալսով իր զօրութիւր կը լմդալայնէր . իր բնակած քաղաքին Ենիշէհիրին գիմացը Վէօփրիւ հիսար բերդը կը գտնուէր . (Օսման շատ ժամանակէ ՚ի վեր կը բաղձար ան ամրոցին տէր ըլլալ . ուստի զօրավարներուն հետ խորհուրդ ըստ որ անոր վրայ յարձակի . բայց երբ Տունտար իր ծերունի հօրեզպայրը դէմ կեցաւ՝ որ իրենց վրայ նորէն թըշնամի յարուցանելէ զգուշանան . Օսման բարկանալով աղեղը քաշեց ու գետինը փռեց զան : Այսուհետեւ բերդին վրայ յարձակեցաւ ու տուաւ զան : Կնկէ յառաջ անցաւ մինչեւ Մարմարածովը տիրեց , բաց ՚ի Պրուսայէն , որ Յունաց ձեռքը մնաց : Ուլուպատի կառավարիչն (Օսմանայ քաջութիւրը տեսնելով՝ անձնատուր եղաւ , ան դաշտմբ որ (Օսմանցիք Ուլուպատ գետէն անդ ին չափանի անցնին : Օսման իր խօսքին վրայ հաստատ կեցաւ ու գետէն չոնցաւ . այլ նաւով ծովին գառնաւ լով գետին միւս կողմն արշաւեց : Օսման՝ իր մահուանէ առաջ Պրուսա քաղաքին տիրելու այն պէս սաստիկ բաղձանք մ'ունէր որ գրեթէ 10 տարի զան պաշարելէ ետեւ , (Օրխանը , որ Վէօսէ Միխալին և ուրիշ քաջ զօրապետներուն նիզակակցութեամբը Թաթարները քաջութեամբ հալածեր եր , սպարապետ ըրաւ ու իր անձնական տկարունը համար զան խրկեց որ երթայ Պրուսան

առնու : Օրխան քաջութեամբ քաղաքին վրայ յարձակեցաւ , և այնպէս սոսկացուց անոր բնակիչները որ Պրուսայի կառավալարին ստիպուեցաւ քաղաքն անոնց ձեռքը յանձնել , այն դաշնաբով , որ ազատութեամբ դուրս ելելու թողուն զիրենք : Օրխան աս խնդիրն ընդունեց՝ բայց 30,000 ոսկի պահանջեց . այսպէս Պրուսա (Օսմաննեան տէրութեան նոր մայրաքաղաքն եղաւ :

(Օսման աս յաղթութեն լուրն իր մահուան անկողնոյն մէջ առանելով , հազիւ կրցաւ իր (Օրխան որդին տեսնել , որուն պատուիրելով՝ որ արդարութեամբ թագաւորէ ու իր մարմինը Պրուսա տանի թաղէ , մեռաւ Ենիշէհիր քաղաքին մէջ 10 (Օդոս . 1326ին (10 Տաճապան 725) 67 տարի ապրելէ ու 27 տարի թագաւորելէ ետեւ : Տաճիկ պատմաբանները (Օտմանոյ արդարասիրութիւնը , քաղցրութիւնը և չերմեռանդութիւր կը գովեն : Իայց մեռնելէն ետեւ , իր յաջորդին ոչ ոսկի թողուց , ոչ արծաթ և ոչ գոհար . այլ ընդարձակ տէրութիւն մը : Իր պալատին մէջ ուրիշ բան չկատան , բայց եթէ փառաւոր պատմուձան (Գաֆիլան) մը , մէկ խոյր , քանի մը ձիեր և ուրիշ կենդանիներ :

Եթէ կերպ խնայողութիւնը կը ցուցընէ անշուշն՝ թէ թշնամիններէն առած կողմառուաններին ինչ պէս իր զօրացը կը բաժնէր՝ զանոնիք քաջալերելու համար :

Թագաւորաց գանձուն մէջ պահածեած են մինչեւ հիմա (Օսմանայ սուսերն ու գրօշակը :

ՍՈՒԼԹԱՆ ՕԲԻ ԱՆ ԴԱՅ. Ի

1326—725

Առ թագաւորը 1285ին ծըսնաւ, ու 1326ին իր հօրը տեղը յաջորդեց, բայց նախ և առաջ մեծ դժուարութիւններ կրեց հայրենի ժառանգութիւնները բաժնելու համար. իր եղբարքն ալ վիճակներուն տէր ըլլալ կ'ուղէին. բայց Օրիսան խոհեմութեամբ առանց արիւն թափելու անոնց մէջ եղած խռովութիւնը խաղաղուց : Ալայէտափին եղբայրը խաղաղամէր ըլլալով բաժին չընդունեց, այլ ուղեց որ իր կեանքն առանձին գիւղի մը մէջ անցընէ : Բայց Օրիսան անոր խոհեմութիւնը ձանձնալով՝ ուղեց որ իր խորհրդատուն ըլլայ. ուստի իրեն Վէզիր 1 աշխուանեց զան :

Օրիսանց թագաւորութեան ժամանակը Օսմանեան տէրուեցառաջադիմութեան մեծ բայց մ'առնելտուողն եղաւ Ալայէտափին, որ իր մեծ հանճարովը Օրիսանց մեծամեծ օգուտիներ ըրաւ :

Ալայէտափին ամէն քաղաք դատաւորներ դրաւ, և խստիւ պատուիրեց որ երբէք անիրաւութիւն չընեն ու արդարութեամբ ամէնուն դատը քննեն : Օրիսագիրը մը յօրինեց, որն որ խիստ հաճայ և ընդունելի եղաւ, ու

1 Այսինքն է Փոխարքայ. առաջն Վէզիր Ալայէտափին եղաւ :

մեծ յարգ ստացաւ : Ամէն տեղ հիւանդանոցներ, մզկիթներ չենեց. զանազան քաղաքներու մէջ վաճառանոցներ հաստատեց, որ վաճառականնութիւր Օսմանցւոց մէջ ալ ծաղկի : Պրուսս քաղաքը գեղեցիկ և օգտակար յիշաստակարաններով զարդարեց ու քաքեցաց : Օրիսան Ալայէտափինի խորհրդով Օսմանցւոց մէջ դըրամահատութեան սկզբնաւորութիւնն ըրաւ իր անուամբը : Իր զօքքերը կանոնաւոր և անկանոն գնդերու բաժնեց. տասնազետներ, հարիւրապետներ ու հազարապետներ դրաւ . հետեւակ զօրոց խումբ մ'ալ հաստատեց, ըստ պոււմ մինչև Օրիսանայ ժամանակը Օսմանցւոց զօքքերը ձիւաւոր էին, և անոնց թաշակ կապեց, որ մինչև ան ժամանակը զօքքերն իրենց թշնամիներէն առած աւարովը միայն կ'ապրէին : Վէկ ձեւ և մէկ գոյն գլխարկ հոգնելու սովորութիւնը դրաւ :


Բայց երբ զօքքերն իրենց առած թոշակովն ինքընքնին զեղսիւթեան առւին ու պատերազմութու այնչափ հոգ չէին ըներ, Օրիսան իր Ալայէտափին եղավոն ու Վարա Հալլ Շէնսուէրէլլ՝ իր զօրացը տաղանդաւոր դատաւուրին հետ խորհուրդ ըրաւ, ու քրիստոնէութենէ ՚ի Վահմէտականութիւն գարձող պատանիներէն նոր դունդ մը կազմեց :



مکتبہ میرزا جعفر

سلطان اورخان عانی

مکتبہ میرزا جعفر



զորոնիք օր մը Հաճի Պէկթաշ աւ նունով ծերունի օրէնողիրին քովը տանելով, խնդրեց անորմէ սր իր օրհնութիւնը տալէ ետև, անոնց անուն մը դնէ : Պէկթաշ անոնց մէկուն գլխուն վրայ ձեռքը դնելով՝ ըստու . “ Այս գունդու “ Խնիչէրի կոչուի, անոր բաւ “ զուկը յաղթող ըլլայ և սուրը “ կորող ” :

Օրխան աս գնդին վրայ խիստ շատ հոգ տարաւ . անսնց համար զատ ու գեղեցիկ բնակարաններ շննեց, ուոզիկ կապեց ; ու պատերազմական կրթութիններ սորվեցընել տոււաւ : Անոնց թիւը մինչև հազարի հանեց, ու որոշ շեց որ տարուէ տարի Վահմէտականութեան դարձող քրիստոնեայ տղաքներէն հազարական հոգի աւելնայ ան գնդին վրայ, և ամեննեին չպակսի . եթէ պատերազմի կամ ուրիշ դիպուածի մէջ անսնցմէ պակսէին, հազար թիւը պէտք էր նոյն ազգին տըղաքներէն լեցընել . աս կանոնը մինչև Վէհէմմէտ Ռ. ի թոգաւ ւորութեան ժամանակը գնաց, և ան միջոցէն սկսու տարուան մը մէջ հազարին տեղն երկոտասան հատար աւելնալ, Ալիւլէյմանայ աւտենը՝ քան հազար, Վէհէմմէտ Դ. ին ժամանակը՝ քառասուն հազար, և վերջապէս Առուլժան Վահմնւտ Ռ. ի ձեռքովը բոլորվին ջնջուեցաւ աս գունդը :

Օրխան՝ իր Ալայէտատին եղօրը խորհրդովը մեծամեծ բարեկարգութիւններ ըրաւ . պատերազմի եղանակը կանոնաւորեց, ուրիշ

գունդ մալ կազմեց, որ բանակին առջև ճամբան շնորհեն, կամուրջներ նետեն և ուրիշ ամէն տեսակ պատերազմական ծառայութիւններն ընեն :

Այսպէս Օրխան ամէն կողմէն տէրութիւնը զօրացընելով՝ իր աշխարհակալութիւնները դէպ ՚ի Արևմտեան կողմն ընդարձակեց . 1328ին Նիկոմիդա քաղաքն առաւ, ու 1330ին ալ Նիկիա քաղաքին վրայ յարձակեցաւ գիշեր ժամանակ, և այնպէս մեծ երկիւղ ձգեց բնակչաց մէջ, որոնք անմիջապէս անձնատուր եղան, և Օրխան՝ փոխանակ անոնց ինչքն աւար ընելու, աղջիկները գերի տարաւ ու եկեղեցինին մզկիթի փոխեց . հոն իր Ալիւլէյման որդին կառավարիչ գրաւ և ինքը ծովէն անցաւ գնաց Յարակիա քաղաքը կողապտեց : Անէ դարձաւ Ալշառուգ վիճակները մոտաւ, Պարէսիոյ իշխանին հետ պատերազմեցաւ ու անոր երկրին տիւրեց, որուն մայրաքաղաքն էր Պերգամոն :

Այս պատերազմին էն ետև, 20 տարիի ըսփ հանգիստ անցուց . բայց այսպահ միջոցին մէջ իր տէրութիւնն ամէն կողմէն զարգացընելու ետեէ եղաւ, և Օսմաննեան զօրութին այնպէս հաստատեց, որ քիչ ատենուան մէջ անյաղթելի եղաւ . իր գրացի աղբաց քաղաքականութիւնը դիւտելով, սկսաւ ներքին կարգաւդութեան ամէջ իրութեանցն ալ հոգ տանիլ : 1342էն մինչև 1347 Քանդակուզէն Յունաց կայսեր՝ Յովհաննէս Ե. (Անդէ սնիկս Ե. ի որդի) իր հոգեղաւակին հետ ունեցած քա-

զաքական պատերազմաց պատճառ
ու աւը՝ Օրխան Քանդակուղէնայ
բարեկամութին սահցաւ . բայց
աս բանս գրեթէ Օսմանցւոց Եւ-
րոպա անցնելու ժամբայ մ'եղաւ :

Քանդակուղէն գիտնալով թէ
որչափ Օրխանայ օգնութեանը
հարկաւորութի ունի , իր թէու-
տորտ ազջիկն անոր կնութեան
տուաւ . Օրխան մեծ հանդիսիւ
և բազմութեամբ նաւուց Մի-
լիմի գնաց ուր Յունաց կայուն
ալ . իր աւագանիներով ու զօր-
քելով եկաւ , ու երկայն փառա-
ւոր հանդէսէ մ' ետև , ազջիկը
Մուլթանայ յանձնուեցաւ :

Օրխանայ իր աներին հետ ու-
նեցած բարեկամութին երկար չի
տեսեց : Եթէ 1350 և 1351ին ; Մեր-
վոյ թագաւորը Մակեդոնիայէն
հալածելու համար Օրխան 20,000
զօրք Յունաց օգնութե խրկեց ,
1352ին . Քանդակուղէնայ գէմ
Ճենովացւոց օգնեց . և եթէ
1355ին , կոստանդնուպոլսոյ մէջ
Քանդակուղէն և Յովհաննէս Եւ-
առանձին տիպելու համար իրա-
րու . գէմ . ապատամբելու ատեն՝
Օրխան 40,000 զօրք և իր Միւ-
լչյան որդին խրկեց , ուրիշ
մոքով չէր , բայց եթէ Եւրու-
պայի մէջ իր ոտքը հաստատելու
համար : Ուստի երբ Քանդա-
կուղէն՝ Յովհաննէս Եւ . ին և ա-
նոր նիզակակից տէրութեանց ,
Մերվիացւոց և Պուլզարաց գէմ
կը պատերազմէր , Միւլչյան իր
քաջ զօրավարներուն հետ Պուլ-

զարիս վրայ յարձակեցաւ ու կո-
ղապտեց , յետոյ անցաւ Զիւմի
ամրոցին տիրեց , որ Քանդակու-
ղէնայ իշխանութեան տակն էր :

Պարապատ տեղը Քանդակուղէն
Միւլչյանէն ամրոցը պահանջեց
ու 10,000 ոսկի ալ տուաւ , ին-
չու որ Միւլչյան չուալէն զատ ,
կէլսպոլու և Հռոդոսա քաղաք-
ներուն ալ տիրեց . ըստ որում ան
միջացին երկրաշարժութի մը պա-
տահելով թրակիս պարիսպնե-
րուն զանազան կողմերը կործա-
նեցան , ու Միւլչյան դիւրու-
թեամբ կրցաւ ներս մտնելու .
Յոյներն աս տեղերը նորէն գնե-
լու համար 40,000 ոսկի խոստա-
ցան , բայց Միւլչյան չկնդ ու-
նեց : Ենասեն Քանդակուղէն
Օրխանայ բողոքեց Օսմանեանց
իր երկիրներն արշաւելուն հա-
մար . բայց Օրխան հնարքով մը
պատասխանէց թէ առ ժամանակ
մի ձայն չհանէ և յարմար ժա-
մանակի մէջ իր կամքը կը կատա-
րէ : Միւլչյան իր երկրակալու-
թիւնները կը շարունակէր : Քան-
դակուղէն տէրութիւնը կորսն-
ցուց , ու իր բոլոր երկիրները
Օսմանցւոց Ճեռքնանցաւ (1356) :
Եյսպէս Միւլչյան Օսմանեան
տէրութիւնը Եւրոպայի մէջ տա-
րածելէն ետև , որսի ատեն ձիէն
վար կյնալով մեռաւ . (1357) :
Խոկ Օրխան երկու տարիի չափ
ալ մեծ խելքով և քաջութեամբ
կառավարելով 1359ին մեռաւ 35
տարի թագաւորելէ ետև :

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Ա. ՎԵՐԻ ԽՈՒՏԵՎՈՒՄՆԵՐ

1326—725

Մուրատ 40 տարեկան էր՝ երբ իր հօրը իշխանութել ձեռքն առաւ : Ամէն բանէ առաջ զայնացակները զօրացընելու և իր Ախուլյաման եղօրն Եւրոպից մէջ թողուցած երկիրներուն սահմանները տարածելու : Բայց երբ իմացաւ թէ թշնամիներն Աշրկւելքէն Օսմանեան երկիրները մոնելով կարշաւեն, անմիջապէս ետ դարձաւ, ու զանոնք հարսծելով, այսպէս երկիւղ մը ձգեց ամէն տեղ, որ իր տէրութեան սահմանները բնակող իշխաններէն սմանք տռանց պատերազմելու եկան անձնատուր եզան, ու իրենց քաղաքներն անոր ձեռքը յանձնեցին : Առւլթան Մուրատ այսպէս յաղթանակաւ նորէն Եւրոպու դարձաւ, և շուտով Կէպէթ . Չեօրի, Քէշան և Տէմութիքա քաղաքներն իր իշխանութեան տակն ինկան առանց երկար ընդդիմութեան, Այսուհետաւ Առաջանաւ Ապահանական կառավարիչն էր : Քաղաքին կառավարիչը չի կրնալով Լալա Շահինին զօրավարներէն էր : Քաղաքին կառավարիչը չի կրնալով Լալա Շահինին զօրաց գէմ գընել, փախաւ ու Վգրիանուազօլիս փառաւոր քաղաքը Անհմէտականներէն մէկը Վգրիանուազօլուսոյ վրայ խըրկեց, որ Յունաց տէրութեան երկրորդ մայրաքաղաքն էր : Քաղաքին կառավարիչը չի կրնալով Լալա Շահինին զօրաց գէմ գընել, փախաւ ու Վգրիանուազօլիս փառաւոր քաղաքը Անհմէտականներէն և (Օսմանեան պետութեան աթոռն եղաւ : Յետոյ անցաւ Լալա Շահին իր նիզակաւ

կեց զօրավարներուն հետ, ու Տօրիսքա, Վէրիա և Փիլիպոպէտօլիս քաղաքաց տիրեց (1362) : Բայց այսափայտազոլութիւններէն ետև Լալա Շահին քիչմը շփոթեցաւ, ինչու որ Անդրիայ և Պուլզարիոյ թագաւորաց հետ՝ Անդն Լուդուլիկս Ապահանաց թագաւորն ալ միաբանելով մինչեւ Վգրիանուազօլիս իր վրայ եկեր էին : Առւլթան Մուրատ ալ Պրուսա գարձած ըլլալուն համար՝ Լալա Շահին Համարձակեցաւ իր սահաւաթիւ գնդովն առանձին այնաչափ բազմութեան գէմ գնելու : ուստի իր քաջ նիզականից Հաճի Խլպէկին անոնց դէմ խրկեց : Այս իր 10,000 զօրքավլ զիշերով աշնոնց վրայ յարձակեցաւ և այնչափ բազմութին ահռեցընելով՝ հալածէց Վգրիցա քաղաքին մօտ (1363) : Երբ Հաճի Խլպէկի պատերազմէն յաղթանակաւ դարձաւ, Լալա Շահին անոր վրայ նոխանձելով, որ ըլլայ թէ իրմէտելի մեծ պատուոյ հասնի, հնարքով մը թսին խմցուց :

Մուրատ, 1370էն մինչեւ 1375 Յունաց մասին Ապահանազակեղանիան և մինչեւ Լալանիան տիրելէն ետև, պարտաւորեց Յովհաննէս Լուքոր թէսաղընիկէն և քանի մուռիւշը քաղաքներ իրեն տայ : Քէսաղընիկէն Վարա Հալիլ Դէնտէրէլի իր քաջ Վէզիրին ձեռքովը հնազանդեցուց :

թառ-ղբան կամ կայսերական դըրոշմը աս թագաւորը հնարեց . ինքը գիր չգիտնալուն՝ խկուտաց ցոս իշխանին դաշնոց թուղթին ստորագրելու համար , ձեռքը մերանը թաթիւց ու թուղթին տակը նշան ըրտւ . որն որ յետոյ թուղթայի փախուեցաւ :

Աերվիսյ իշխանն ապստամբելու անհնարութիւնը տեսնելով՝ խազազութիւ ըրտւ Վուրատայ հետ , և տուրք խոստացաւ . Իսկ Պուլզարաց Աիսման իշխանը՝ իր աղջիկն անոր կնութեան տալով՝ ազատեցաւ :


Վուրատո՞ 7 տարիի չափ Աերվիսյ , Պուլզարաց , Վաճառաց և Յունաց իշխաններուն հետ յաշախ պատերազմելով՝ անոնց երկիրներուն տիրելին ետե , Եդրիանուտօլիս դարձաւ ու իր պատերազմական զօրութիւնը կանոնաւորեց : 1381ին , իր Պայազիս որդին Կէրմիանու մեծ իշխանին աղջկանը հետ ամուսնացուց , որ իր հայրը մեռած ըլլալուն համար , անոր վիճակները , (որուն մէջն էին նաև Կյրիկէոլ , Թափշանլը , Աիսմաւ և Կուտինա քաղաքները) , իր ամուսնոյն սժիտքերաւ :

Վուրատո՞ Համիտի Հիւսէյին իշխանին խրկած պարգևներն ընդունելին ետե , անոր դեսպանին ըստաւ թէ՝ կ'ուզէ իր իշխանէն քանի մը քաղաք ծախու առնել : Հիւսէյին վախնալով որ ըլլայ թէ Վուրատ բարկանալով իր վրայ պատերազմի ելլէ ու իր բոլոր երկիրները ձեռքէն առնէ , վեց քաղաք ծախեց անոր , որք են . Պէկչէհրի , Վէյտի չէհրի .

Հալաւաճ , Գարա աղաճ , Ապարժաւ և Վէչէհրի :

Շարժնակ 2 տարիի չափ Պուլզարաց Ասֆիսյ բաղաքը պաշտրելէն ետե , վերջապէս Պալապան Վուրատայ իշխանն աս հնարքով տուաւ : Տղայ մ'իբր թէ Օսմանեան լուծէն աղատելու համար , Ասֆիսյի կառավարչին քովը գընաց ապաստանեցաւ . որ ան ալ ընդունելով իրեն սպասաւոր ըսրտւ . որ մ'երբ անոր հետ մինակ որսի համար քաղաքէն խիստ հեռացան , տղան իր պատրաստած պարանովը յանկարծ կտպեց զանու մինչեւ զօրավարին քովի այնպէս կապած ձիուլ տարաւ . Պալապան զան քաղաքին բոլորակը պատուտցնելին ետե , առանց պատերազմելու Ասֆիսյին տիրեց :

Յովհաննէս Պալէոլոդ Յունաց կայսրը (Օսմանեան իշխանութեան ըլլալին ձանձրանալով , Հռուովմէնաց և Ուրբանոս Ե . պապին աղաչէց որ Վուրատայ իշխանութեան տակէն ազտակու համար իրեն օգնէ . երբ անոր խոստմունքն առնելով իր աժմուը կը դառնար , Վենետիկ հասած ատենը պարտաստէրները չի թողուցին զան : Վնդրոնիկոս , անոր երէց որդին , որուն յանձնուած էր առժամանակեայ Յունաց աէրութեան կառավարութիւնը , հոգ չըրտւ , և իր հօրն իրեն ըրած աղաչանքները չլուսու զարկաւ . բայց անոր Վանուել կրտսեր եղբայրն անմիջապէս պահանջած դրամը ժաղվելով՝ գնաց իր հայրը Վենետիկէն ազատեց , ու անոր հետ կոստանդնուպոլիս վերադարձաւ :





غازی خداوند کار سلطان مرا رخان اول

کتاب خاندان شاهزادگان ایران و افغانستان

جعفری، پژوهشگاه، ۱۳۹۴

Յովհաննէս կայօրը , իր Վանուէլորդւոյն ըրած երախտեացը փոխարէն , և մանաւանդ իր անդրանիկ որդւոյն չարութիւր պատմելու համար , Կնդրոնիկոսին իշխանութիւր Վանուէլուն տուաւ :

Կնդրոնիկոս Պալէոլոդ աս բանիս համար ոխ պահէլով՝ միտքը դրաւ որ իր հօրմէ ապատամբէի . ուստի Վուրատայ Վաւձի պէջ անզգամի որդւոյն հետ խորհուրդը ըրաւ , որ իր չար կամքն 'ի գործ դնէ :

Վուրատ առ եղածները Վրիաւ յէն լսէլով՝ անմիջապէս Յունաց կայօեր հետ տեսնուեցաւ , ու ապատամբներուն վրայօք հարց ու փորձ ըրաւ . բայց անոր աս գործիս մէջ անմեղութիւնը իմանաւ լէն ետեւ , Եւրոպա դարձաւ , ու անոնց բանակած տեղը գիշերով՝ հասաւ , և բարձր ձայնով պառաց որ անձնատուր ըլլան : Վաւձի պէջնին հետ միաբանող զօրքերը , Վուրատայ աս հզօր ձայնին միշտ հնապանդելու սովորած ըլլալով , զինքը թողուցին և Վուրատ կողմն անցան , ու թողութիւն խնդրեցին . իսկ ապատամբները մինակ մնալով՝ փախան : Հետեւեալ առառու Վուրատ Տէմսթիքա քաղաքը պաշարեց , ուր իր որդին ապատամբներ էր . այնչափ բարկութիւնը գրգռած էր , որ զան բռնելով աչքերը կուրցընելէ ետեւ սպաննեց , և անոր հետ միաբանող Յոյներն իր աչոց առջև երկ - երկու հոդի պարիսպէն վար նետել տուաւ , Հրաման խրկեց նաև Յունաց կայօեր , որ Կնդրոնիկոսը բռնէ , ու աչքերը փորէ . կայսրն իր նիզակակցին աս ահեղ հրամանին

վրայ՝ եռացեալ քացախով իր անզգամ որդւոյն աչքերը կուրցընել տուաւ :

Յովհաննէս Պալէոլոդին Վանուէլորդին , որ Ծէսաղոնիկէի վրայ կը կառավարերէր , իր եղբօրը կրած ալատիմէն չխրատուելով , Վէրէղ քաղաքը (Օսմանցւոց ձեռքէն յափշոակելու ջանաց : Վուրատ ապատամբ իշխանին դէմ իր խոյրէտոտին փաշա վէզիքը խըս կեց . Վանուէլ , տեսնելով որ թշնամեաց բանակն իր բանակէն աւելի մեծ էր , վախցաւ ու կոստանդնուպոլիս փախաւ , ուր իր հայրը չհամարձակեցաւ ընդունել զան , Վուրատէն վախնալով՝ որ ըլլայ թէ զինքն անոր խորհրդակից կարծէ : Ողորմելի փախըստականը գէպ 'ի Եսբոս կղզին գնաց , ուր Շենովացիք կը տիրէին . բոյց Վուրատայ երկիւղը այնպէս տարածուած էր , որ Շենովացիք ալ անոր թշնամին չընդունեցին : Կո դժբաղդ վիճակին մէջ , Վանուէլ յուսահատեալ որոշեց որ Երթայ Վուրատայ ուղին իյնալով թողութիւններէ : Վեհանձն Վուլժանը , երկար ատեն զան իր քովը պահէն եւ տե , ներեց անոր յանցանացը , ու իր հօրը խրկեց : Եհա այսչափ տկարութեան մէջ կը գտնուէր Յունաց իշխանութիւնը , մինչեւ անզգամ կայսրը , առանց Վուրատայ հրամանին չհամարձակէւ ցաւ իր որդին ընդունելու :

Խոյրէտոտին հզօր փաշային մահը (1386) Վուրատայ թշնամիններն այն ահուեցուցիչ վէզիքէն աղուտեց , որուն լոկ անունը զանոնիք կը սարսափեցընէր : Եւայէտոտին ,

Պարամանի իշխանը, յարմար աւ սիթ սեպելով, ապստամբութե օրինակ տուաւ Վուրատայ հնա զանդով իշխաններուն, ու Օսմանցւոց վրայ պատերազմի ելու : Վուրատ, իր բանակը նոր կարգադրութիւններով հաստատեց, և իր հումկու զօրավարները քաջաւերելով անոնց վրայ յարձակեցաւ : Այս նոյն պատերազմին մէջն էր, որ Պայէղիտ իշխանը, Վուրատայ որդին և յաջորդը, իր անյաղթ քաջութիւնն առաջնին անդամցուցուց, որուն համար Երազը (Կայծակ) կոչուելու արժանացաւ :

Պատերազմին տաքնալու ատենը, թմբուկներուն ու փողերուն ահեղագու ձայնը, և այնչափ անթիւ զօրաց գրեթէ միաբերան Վարուած Ֆէ և աղաղակները նուրահաս իշխանազունին սիրութ փառաց անյաղթ բաղձանքով մը լեցուցին, ու իր եռանդագին ու գիէն յաղթահարուելով ձիէն վար իջաւ, իր հօրը առջելը գըշնաց խոնարհեցաւ և թախանձեց զան որ թշնամեաց դէմ պատերազմելու . հրաման տայ իրեն . երբ Վուրատ չիցաւ անոր աղաղանացը յաղթել, ելաւ Պայէղիտ ու Կայծակի պէս խոյացաւ թըշնամեաց բանակին վայ, և թիմուրթաշ (Երկաթեայքար) իշխանին հետ մէծ ջարդ տալով, Ալսյէտակինը հալածեց : Պացին (Օսմաննեանք) կոնիան պաշարեցին ուր Ալսյէտակին փախչերէր . փախչուտակները նեղ մեալով թողութիւնդրեց ու Սուլթանին ձեռքը համբուրեց, Վուրատ ալ անոր ըրած չարութիւնը մառնալով :

Ներեց ու անոր բոլոր երկիրներն ետ դարձուց :

Պէկ շէհրի բնակիչները Վուրատայ աս յաղթութիւններուն ականջ չի դնելով, անոր քաջութիւնը արհամարհեցին, ու անորմէ ապստամբելու փորձեր փարձեցին . իսկ Վուրատ քանի մ'օրուան մէջ միայն կրցաւ զանոնիք հնաղանդեցընել : Իր պալատականները զինքը կը յորդուրէին որ աս առթիւ թէքքէի փոքրը իշխանին երկրին ալ տիրէ, Սուլթան Վուրատ գուողաւթիւն պատասխան տուաւ . “ Առիւծը, ըսաւ, մժզիկները որսալու համար իր ժամանակը չերանցըներ ” :

Այսափ փառաւոր յաղթութիւնները (Օսմանցւոց անյաղթ զօրութեան երկիւղն ամէն տեղ տարածելով, կ'երեար թէ՝ այնուշետև Վուրատ հանգուութեամբ իր կեանքը պիտ անցընէր . բայց աս իշխանին բազդը իր յաղթութեանց պատուղը վայելելու համար չէր : Ապիւթէ յաղթանակաւ Պրուսա մայրաքաղաքը մտաւ, որ Աերվիսյ ապղստամբութեան լուրն իմացաւ . Լազար՝ Աերվիսյ իշխանը, ծածուկ Բուլղարաց անօրէն իշխանին հետ միաբանեցաւ, Պրուսացիք ալ անոր կողմն անցան . անկողմերը գանուազ գրեթէ քսան հազար (Օսմաննեանք աս միաբանեալ աղքերէն ջարդուեցան . Սուլթան Վուրատ աս լսելով թէ մը շիոթեցաւ, բայց անմիջապէս իր զօրութիւր վերստին ամփոփեց : Իր Ասիսյ մէջ ունեցած երկիրները հինգ հաւատարիմ իշխանաց ձեռքը յանձնելուն

ետև, իր պատերազմական պատրաստութիւնները փութացուց : Խայրէտտինի Ալի-փաշա որդին երեսուն հազար զօրքով թշնամեաց վրայ խրկեց, ու ինքն ալ անոր ետեւէն Եւրոպա անցաւ : Խսկոյն Ալի փաշային ահեղ զօրութեանը հնազանդեցան թրնովա, Շումնա կամ Շումլա քաղաքները : Այնուհետև յառաջ անցաւ քաջ Ալի փաշան . ու Նիկոպօլիս քաղաքը պաշարեց, ուր Խիսման ապաստանուեր էր, և այնչոփ նեղը խօթեց զայն, որ փախստականը անձնատուր եղաւ . զօրավարը զինքը Վուրատայ տանելով, Խիսման՝ Խիլստրի ամրոցն ու իր երկիրներուն հարկը վճարելով, անոր ձեռքէն աղատեցաւ : Բայց Խիսման՝ Վուրատայ հետ ըրած գաշինքներուն վրայ հաստատ չի կենալով, ոկուր Սիլստրին ու Նիկոպօլիսը ամրացրնել, որով նորէն մէջերնին պատերազմ ծագեցաւ :

Ալի փաշան անոր ըրած ոպատրաստութիւնները տեսնելով, բուռն զօրութեամբ անոր վրայ յարձակեցաւ ու Խիսմանը բըռնեց Վուրատայ բերաւ . Սուլթանը՝ իշխանին երկիրներուն տիրելէն ետեւ, անոր կենացը խնացեց, ու վեհանձնութեամբ անոր իշխանութեանն արժանի ռօճիկ անգամ կապեց : Առ յաջող յաղթութիւնը (Սամանեան ընդարձակ իշխանութեան վրայ 20 գլխաւոր քաղաքներ աւելացուց (1389) :

Խիսմանայ յաղթութիւլը Աերվիոյ Լազար իշխանը չերկմանեցուց . իր Տէմէթրիոս զօրավարը համարձա-

կեցաւ Շէհիրքէօյի ամրոցին վրայ յարձակիլ ու աիրել, բայց թիւմուրթաշի Յաղջի պէջ որդին վերըստին ետ առաւ զան : Լազար՝ անսատեն Պասնիոյ, Ալպանիոյ, Վալոքիոյ և նոյն իսկ Վաճառաց իշխաններուն միաբանութեամբը յանդ գնութեամբ անոր վրայ պատերազմի ելաւ : Վուրատ ալ իր նիզակակից իշխանները, Պայէղիստ որդին ու Յագուալ չէլէպին կան չեց ու մեծ բանտի մը պատրաստել տալով : Աերվիոյ Պոսովայի դաշտավայրը հասաւ :

Թշնամեաց թիւը չափազանց ըլլալուն՝ իր զօրավարներուն հետ խորհուրդ ընել ուղեց, թէ խոհ հեմութիւն է արդեօք այնչափ բազմութե ընդդիմանալը . բայց արին Պայէղիստ, ամէն երկչուտ խորհուրդ ներն արհամարհելով, պատերազմ առաջարկեց : Իրեն հետ միացան նաև բոլոր զօրավարները . ամէնուն սիրտն եռանդով լցուեցաւ, ու Վուրատ յարձակման հրամանը տուաւ : Հետեւեալ առտու կանուխ, երկու կողմէն նշան տալով, սոսկալի պատերազմ բացուեցաւ, երկու կողմէն ալ բաժանալով հաւասար ուժով կը կառուէին . իսկ Պայէղիստ, կայծակի պէս առագութեամբ թշնամեաց . բանակներուն մէջ մտնելով իր երկաթեայ ծանր լախտավի արիւանահս ճամբայ մը կը բանար : Ամանապէս Յագուալ չէլէպին, որ Պայէղիստոյ եղբայրն ու միանգամցն անոր փառացը նախանձորդն էր : առաւելես քաջանուն հանդիսանալու համար, մեծ ծամեծ նախաճիրներ կը գործէր

թշնամեաց վրայ , զօրավարները
խրախուսուելով անսնց օրինակին
կը հետեւէին . “ Շոշողուն սրոյ
“ երկաթը , կ'ըսէ Օսմանեան
“ պատմագրին մէկը , ոռոգած
“ յորդավէժ տրիւնովը յակնթի
“ գոյնի փախուեր էր նետերուն
“ պաղպատը՝ հրափայլ բոսոր գոյն
“ մ'ըստացեր էր . պատերազմի
“ դաշտն անթիւ կառափներով
“ ու խոյրերով լցուած՝ կակաչի
“ ընդարձակ պարտէդմը դարձեր
“ էր . : Վերջապէս քրիստոնեայ
ազգերը կը յաղթուին , Աերվիս
իշխանը գերի կը տարուի , զօրա
քերը կը փախչին և Օսմանեանիք
յաղթութիւնը կ'ըստահան :

Այ ահապին մարտէն ետե ,
Վուրատ պատերազմին դաշտը աչ
քէ անցուց , և զարմացաւ երբ
տեսաւ որ մեռնող զօրքերը բու
լորն ալ երիտասարդ էին , ու ա
մենեին ծեր չի կար : Աուլթանը
աս յաղթութեանը վրայ ուրաւ
խանալու ատեն իր կեանիքն ալ
կորսընցուց . ըստ որում գետ
նտուարած արիւնաշաղախ դիակ
ներուն մէջէն կիսամեռ մէկը , իր
բոլոր ոյժը ժողվելով , յանկարծ
ուրի վրայ ելու , ու Աուլթանայ
վրայ յարձակելով իր դաշցնը
անոր փորը խօմեց : Էնիշէրինէրը
արքայասպանին ետեէն կ'իշնան ,
բայց երեք անդամ ձեռքերնէն
կը փախչի , ու վերջապէս բաղա
մութէլ մէջ դիաթաւալ կ'իշնայ
վերստին՝ իր կեանիքը ծանրակշու
վուանգի մէջ դնելէն ետե : *

* Այ արքայասպանն էր Սիլու Քոսկիլովիչ ա
նունով ազնաւական ցեղէ Սերվացի մէկը , Պատ
մագիրները Առ լթան Մուրատայ մահուան պա
րագաները կը զանազաննեն . ուստի մէք խիստ
հաւանականին հետեւցանք :


Վուրատ՝ ՚ի մահ վիրաւորեալ ,
հրամացելէն ետեւ որ Լազարն ըս
պաննեն , իւր փառացը տեսա
րանին մէջ մեռաւ 1389 թուա
կանին և 791 ամի Հիմքէթին :

Հազիւ թէ Վուրատ իր վերջնն
շունչը տալու վրայ էր , երբ ա
ւագանիները Պայէղիտայ բոլոր
տիքը հաւաքուելով , իրենց հաւ
ատարմութիւնը ու ակնածուիը
նորընտիր Աուլթանին յայտնե
ցին . զօրքերը բարձրաձայն իբւ
րեւ միաշունչ աղաղակաւ անոր
քաջութեց գործքերը գովելով
‘Վեցէ Աուլթան’ կը պուային :

Վուրատայ մարմինը արքայա
կան վախնը բերին , զմռսեցին ու
Պատուայ * տանելով Զեքիրկէի
շրմին (Բիրպէ) մէջ թաղեցին :

Վուրատ Ա. Օսմանեան աղա
գին մէջ ելած խիստ անուանի

* Պրուսիի մէջ երեք գերեզմանն (Բիրպէ) կայ ,
որոնք խիստ հյակասպ և փառաւոր շինաած
են , մասն անդ Սուլթան Օսմանայ գերեզմանը .
վեց առ աշխն Սուլթանները աս զ երեզմաններուն
մէջ թաղուած են . Օսման և Օրխան կիւ
միւշ . Գու պղէ (Արծաթապար Գմբէլ) անուանվ
գերեզմանն մէջ կ'սնկցին . Սուլթան (Հ. ,
որու վաս Ա. և Մուրատ (Հ. Զեքիրկէին մէջ
ամփոփուած են . մերշապէս Մէհմետաւ Ա. մի
այն Եւշլ . մարէթին մէջ թաղուած է : —
Պրուսիի մէջ առ փառաւոր գերեզմաններն
զամ , կը գտնուին նաև անթիւ . երակելի կ'իշանե
ներու , թագաւորներու , եկեղեցականներու ,
գիտաններու , բանաստեղներու , երակէշա
ներու , և բժիշներու գերեզմանները : Աէս
համայիլ , հաշակառ մասենագիրը , աս թիւը
միւշ Ֆաթիկ կը հանէ : Պրուսա մինչև կրտան
գնացագույց Օսմանաց իշխանութեան ներքե
նաւալ , Օսմանեան պետութեան առ աշխն մայ
րուազըն էր , ու այնուհետեւ տէրութեան եր
րորդ անուանի քաղաքն եղաւ : Իր հանքային
նուրերը (Ծըմնիկ , Ըլէճա) քաղցրահամ սրուուց
ներն ու իր երկրէն և ճարտարութենէն յառաջ
եկածները խիստ անուանի են , որոնց մէջ կը
տէնուի մետաքարը , որն որ մինչև հիմա առա
տուէն ուրիշ քաղաքաց կը մատակէրարէ՝ տե
ղական ձեռակերտուածներուն պէտք ելածը հո
գալէն ետե . Պրուսա քաղցրքը մինչև ցայսօր իր
և շրջակայ արթարձաններուն մէջ զանազան
աղգեր կը պարունակէ , ինչպէս են . Տաճիկ ,
Հայ , Յայն և Հրեցյա , որոնց թիւը մինչև 70000
կընայ ելլեւ :



ԱՍՏՈՅ Պ

թագաւորներէն մէկն եղաւ . իւ
մացական կարողութիներով զար-
գացեալ , իր ժողովուրդէն միան-
դամայն սիրելի և ակնածելի էր :
Այսպէս պատերազմական և քա-
զաքականութեան հմուտ ըլլալով ,
միշտ մեծանուն հանդիսացաւ ,
և Օսմանեան իշխանութեան առհա-
մանները խիստ տարածեց : Օս-
մանայ հաստատած պատերազմա-
կան բարեկարդութիւնը կատա-
րելագործեց : Վեծ խնամք տա-
րաւ նաև իր փոքր նաւախում-
բն : Վինչել իւր ժամանակը մի-
այն մէկ վէզիր կար , բայց թիւ-

մուրթաշ իկանիոյ պատերազմին
յաղթութիւնը շահելուն համար ,
Վաւրատ զինքը Պէյլէրպէյի (նա-
խարարապէտ) անուանեց , իր ե-
րկրորդ վէզիր : Օկզիանութեան
թշնամի ըլլալով , իր բոլոր զգեստա-
ներուն մէջն ամենէն փառաւորն
էր բարտկ և թեթև մնդուսէ
պատմուձան մը : Իր կեանիքը Վահ-
մէտականուն զարդարման համար
զօհեց , ու Վարիանուազօլուսոյ * մէջ
կայսերական պալատին գիմացը
ահագին մզկիթ մը շնեց , ու ա-
նունը Վարագիէ դրաւ , որ մինչեւ
հիմայ առ անունը կը կըէ :

ՍՈՒԼԹ. Թ. Վ. Պ. Ա. Յ. Ֆ. Տ. Ա. Ե. Բ. Լ. Տ. Բ. Բ. Ո.

1389 — 791

Պայէղիտ Առաջնոյն թագաւոր
րութիւնը մեծագործութիւննե-
րով ու փառաւոր աշխարհակառ
լութիւններով երեւելի կը հան-
դիսանայ , և վերջապէս յան-
կարծ կատարեալ ցաւալի գետ-
քով մը կը վերջանայ :

Պայէղիտ Կըլլուրը Պոսովյի

համբաւաւոր պատերազմէն ետև ,
որուն մէջ իր մեծ քաջութիւնը
ցուցուց , ծածուկ կերպով մը
իւր Կագուալ չէլէպի եղագորն իր
փառացը վրայ նախանձելը գիւ-
տեր էր : Պատերազմի դաշտին մէջ
Առւլթան կոչուելով , վախցաւ որ
ըլլայ թէ Կագուալ չէլէպին իրեն

* Արիանուսովովս քաղաքը Ասրիանոս կոյսրը
շնեց , որ բումէլի ամէնէն մեծ քաղաքներէն
մէկն է՝ երեք գետերու մէջ տեղը շնուած .
քաղաքին գեղեցիկ գրութեանը պատմառաւ ,
վաճառքները փոխադրելու գիւրութիւնը , իր
առեսաւրին խիստ մեծ գործունեութ ու տուաւ :
Օհասը , քաղցրուենիները , օթոյները , Եգիպ-
տուն և Պարսկաստաննեն ելածին նման վարդի
ջուրն ու իւղը իր երեւելի բերքերն են : Մինչեւ
հիմա բլուրի մը վրայ կերեւի Առվլաններէն
հիմա ժամանակը շնուած պատար , երեւելի և
անթիւ շնուածքները Տէրութեան երկրորդ մայ

րազարարը կը շքեղացընեն : Վաճառանոցները ,
եկեղեցները , վարժառունները , կոմուրշնե-
րը , պարագներն ու մզկիթները , որոնց շատին
վրայ հասարակ ծագկուած է , մզկիթներուն
զեղեցիկացէն աշխարհականը (Ծնարէ) , պղնձէ զար-
գերով պաճառնեալ սիւնաւոր ձեմելիքները , ա-
նոնց գմբեթներուն խորոֆիքը մեծագործ և ըս-
քանչելի գոները , աղքիւները , վերջապէս ա-
մէն բան ճանապարհորդին ու շագրութեանը ար-
ժանի են , և անոր մէջ ժամանակ առ ժամանակ
ծաղկած անմիւ բանաստեղծեցուն տուած շլ-
քէդ գովիսանները կըստուգեն :

ոլիրելի եղան զշրոց օդնութեն
իր թաղաւորութիւր յափշտակէ ,
Օքիանայ ըստածին նման , որ իր
Ալայէտափին մեծ եղորը տեղը
թագաւորեր էր . ուստի գահն
եղելէն քանի մը ժամ ետև , իր
Երագուագ չելէպի եղայրը շու-
տով մը խեղդել տալով իր իշ-
խանութեանը մէջ անկասկած և
ապահով եղաւ : Այս եղանակ ըս-
տանութիւնը , Օսմանցւաց մէջ
դրեթէ իիստ պատուելի մասը
նկատուած և մասնաւորապէս
տէրութեան մեծամեծաց համար
պահուած է . Իսկ գողերուն ու
շարագործաց յատկացեալ պա-
տիճն է կախազանը կամ ցցահա-
րութիւնը * :

Յաջորդ պայտպատին եղաբքն
սպաննելու սովորութիւր գրեթէ
Պայէզիտէն կ'ըսկի : Բայց երբ
այն իշխանագունները , փոխանակ
սպաննուելու , միայն արքունեաց
մէջ փակուելու կը դաստապար-
տուին , կ'ըզգուշանային որ ա-
նոնցմէ զաւակ չնի . եթէ ոչ

պէտք էր ծնած ժամանակը մեռ-
ցընելզան : Այս բանս ուրիշ բանի
համար չէր , բայց եթէ իրենց
անդրանիկ որդւոյն յաջորդու-
թիւնն ապահովելու , և ուրու-
թիւնն աս տեսակ շփոթութիւն-
ներէ ու երկպատակութիւններէ
ազատելու համար , որոնք շատ
անգամ մեծամեծ արիւնհեղու-
թիւններ կը պատճառեն :

Ուլթան Պայէզիտ իր Օսման-
եան կառավարութիւր ձեռք տո-
նելը Մարտ իշխաններուն իմացը-
նելով , Ուլրատ Ա. ին Աերվաց
գէմ սկսած պատերազմը շարու-
նակելու ետևէ եղաւ : Հրաման
ըրաւ իր զօրավարացը , որ իրենց
արշաւանքները յառաջ տանին :
Իկիթ պէյը Պասնիա մտաւ , և
Ֆիրուշ պէյը մինչև Վիտին քա-
ղաքը գնաց : Իսկ ինքը Իւսպիւպ
քաղաքին և Պարաթովիսյ արծա-
թի հանքերուն տիրեց , և Օս-
մանցւոցմէ գաղթական տանելով
բնակեցուց հոն : Ատեփաննոս ,
Աերվայ իշխանն ու Լազարայ որ-
դին , Պայէզիտայ թագաւորելը
լսելով , շուտով Ուլթանին խըն-
դակցութեան գնաց , ու հաշ-
տութիւն խնդրեց . Պայէզիտ ա-
նոր խնդիրըն ընդունեց ան դա-
շինքով . որ պէտք եղած ժամա-
նակն իրեն օգնէ , իր քոյրը կը-
նութեան տայ , ու տարիէ տարի
իր երկրին հարկը վճարէ :

Պալէոլոդեանք Յունաց տէրու-
թեան ահագին յեղափախութիւ-
ները տակաւին կը շարունակէին :
Յոդհաննէս կայսեր Անդրանիկոս
որդին ու Յովհաննէս թոռը ,
որոնք Ատեճի պէյին որոտամբու-
թէն իր վեր բանտորկուած էին ,

* Օսմաննեան ժառանյաթեան տակն եղան ան-
ձինքը երբ մահուան կը դատապարուին , ի-
րենց վիճակին համամայն պատուալ կամ նշաւա-
կութեամբ կ'ըսպաննուին : Հասարակ մարդ մը
կը կախուի . զօրականները և օքինականները (իւ-
լէմա) փեղգաման կ'ըսան . քալպակական պաշտօ-
նաարձերն ու զինուորները կը զլաստուին , և
գլուխին երեք օր հրապարակին մէջ չկը մնայ ՚ի
ուս հասարակութեան . ու մէկ ծանուցագիր
(էնֆիա) մը կը գնեն վրան , որուն մէջ իրենց
յանցանքը նշանակուած է : Կառանկնուորուց
մէջ , վէզիրի մը կամ փաշախի մը գլուխը արծա-
թի սկսուազի (Բէքա) մէջ մազմորեայ սիւնի մը
կրայ կը դնեն : Օրեւ գանձուի մօտ : Զօրափորի մը
կամ նախարարի մը գլուխը տախասակէ սկսուե-
լի մէջ և առաջն գրան գմբէթին տակը կը գլ-
րուի : Իսկ սուրբն կարգի պաշտօնաատաց գլ-
րուիր , առանց պատուաց , նցն գլուն տաշ-
դեամինը կը թողուն :

Պայէղիսայ թագաւորելը լսելով,
իրենց հօրը դէմ անոր օդնուշ
թիւնը խնդրեցին : Պայէղիս աս
յաջող առիթը ուրախութեամբ
ձեռք առնելով կոստանդնուպոլ
սոյ վրայ քալեց , Վնդրոնիկոսը
և անոր որդին ազատեց , և ա
նոնց տեղը , Յովհաննէս կայսրն
ու անոր Վանուէլ որդին բանա
տարկեց նոյն աշտարակին մէջ :
Վնդրոնիկոս կայսր ըլլալով՝ Պա
յէղիսայ ըրած ծառայութեանը
փոխարէն պարտաւորեցաւ տարին
քանի մը կենդինար ոսկի և արս
ծաթ վճարելու : Բայց հետեւ
տարին իր խոստմանը վրայ չկրա
ցաւ կենալ , ու Յովհաննէս և
Վանուէլ երկու գերիներն ալ
Շենովացւոց օգնութեամբն ա
զատելով , անձամբ Վուլթանայ
առջեւ գացին ու ներուժն խընդ
րեցին : Յովհաննէս նախորդ
կայսրը խոստանալով որ միշտ իւ
րեն հնաղանդ պիտ' ըլլայ , իր Վնդր
ոնիկոս որդւոյն տուած ոսկին
ու արծաթը վճարելէն զատ , ա
մէն պատերազմի մէջ 12000 զօր
քով Օսմանցւոց օգնելու առա
ջարկեց : Վուլթան Վուրատ աս
բանիս հաճութիւն տալով , վեշ
րբոտին Վնդրոնիկոսին տեղ , զան
իր գահը նստեցաւ : և Վա
նուէլն անոր գահակից ըրաւ .
բայց փոխանակ Վնդրոնիկոսը
դարձեալ շվլթայի զարնելու , կոս
տանդնուպօլիսէն գուրս գտնու
ած Յունաց տէրութեան ունե
ցած Վիլիլքի , Հէրակլէս , Հը
ռոդոսուս , Տանիա , Պանիրո և
Ծէսաղոնիկէ քաղաքներն անոր
ձեռքը յանձնեց որ կառավարէ :
Վուլթան Պայէղիս Վերլոց հետ


հաստատած հաշոռութեան միջու
ցաւը մեծամեծ յիշատակարան
ներ և հաստատութիւններ կանգ
նելու ձեռնամնուխ եղաւ : Իր
թագաւորութելը մէջ տարի չան
ցուց , որ մէկ ազգօգուտ շնու
թիւն մը չի շնէ : 1391ին սկսաւ
Վնդրոնիկոսը կըլլալորմ Խան
թաղին մէջ երկու գեղեցիկ շի
նութեանց հիմնարկութիւնը ,
այսինքն մէկ ազգատանոց և մէկ
մզկիթ , որուն գմբէթը 4 կամար
ներով կեցած է : Բայց Պայէղիս
տէրութեան գանձը՝ իր ընելու
աշխարհակալութեանց ծախուց
համար պահել ուղելով , աւելի
յարմար տեսաւ , որ Վնդրոնիկո
սը մղիթին շնութեան ծախ
քերը հանելու համար Ըլաշէհիր
քաղաքին տիրէ , այսինքն Փիլա
տելփիոյ , որ Յունաց Վսիոյ մէջ
ունեցած միակ քաղաքն էր : Վս
երկին կառավարիչը անոր անձնա
տուր ըլլալ չուղելով , Պայէղիս
կատղած՝ նոյն ինքն Յունաց կայ
սերներուն հրամայեց որ երթան
տիրեն , Յովհաննէս և Վանուէլ
Պայէղուդ ահարկու Վուլթանին
բարկութենէն վախնալով , վա
տութեամբ գացին նոյն իրենց
քաղաքին վրայ յարձակեցան , և
խաղաղութեամբ առնուլ չկրնա
լով , բռնութեամբ իշխեցին ու
իրենց նիղակակից տիրապետին
յանձնեցին : Պայէղիս Ըլաշէհիր
մէջ մղիթներ , բաղնիքներ և
մէկ վարժարան մը շնէց . քա
ղաքին եկամուտէն աս ծախըերն
ընելէն ետե , աւելցածը՝ Վն
դրիանուպօլսոյ մէջ սկսած շնու
թեանը գործածեց :



غازى سلطان يلدزم بايزىزىخان اول

UNIVERSITY LIBRARIES U. CALIFORNIA LIBRARY

115.07.12-1463-1474



Այսընի իշխանը , որուն կառավարութեան ներքեւ մինչև անժամանակը Ալաշէհիր կը պաշտապանուէր , վախնալով որ ըլլայթէ Պայէղիս իր բոլոր երկիրներուն տիրէ , երդում ըրաւ որ միշտ հնագանդ պիտ'ըլլայ անոր . դրամ կարելու արտօնութենէն զրկուելէն զատ , իր Վիեսոս մայշաբառքն ալ անոր թողուց , և իր իշխանութեան աթոռուը թիրէ փոխագրեց , որուն օթոցները երեւի են հիմա : Այսնպէս Սուրուխանի և Վէնթէշէի իշխաններն իրենց երկիրները (Օսմանեան հզօր տէրութեան յանձնեցին) , և վախնալով դացին Պանթէմունիի և Վինովի իշխանին քովի սպասանուեցան : Երլորդը իր նոր տիրած երկիրները մէկ նահանգ անուանեց ու իր Երթողբուլ որդւոյն տոււաւ : Այսողէս Վէճուգեան իշխանութիւնները բամնող տասը թագաւորութիւններներն եօթը (Օսմանեան լուծին տակը խոնարհեցան : Վիայն Պասթէմունիի և Պարսմանի իշխանները տակաւին աղաս էին՝ մէկը փոքր Վրիոյ Հիւսիսային և միւսը Հարաւային կողմը :

Օսմանցոց , Առողթան Օրխանայ ժամանակէն , Ալայէտամինի հետ ունեցած բարեկամութեան պատճառաւը , Պայէղիս չկրցաւ իր փառատիրութեան փափագը լեցընել : Եր միջոցիս Ալայէտինի դէմ եղած բոլորը Երլորդը պատճառ բռնելով կերման ու թէքքէն բոլորովին հնաղանդեցնելէն , և իր Վիերուգպէյ որդին աս նոր վիճակին վրայ գլուխ գնելէն ետև , Պա-

րամանի վրայ վաղեց , որուն իշխանը վերին Վիճիկիա վախաւ : Պայէղիս Վկանիսն պաշարեց , և իր ճարպիկութեամբն առանց ընդդիմութեան տիրեց և անոր բնակչոցը մեծ արտօնութիւններ տոււաւ . աս յուսով Պարսմանի Վժշէհիրը , Նեկտէ և Վգուրատ քաղաքներն ալ կամօք անձնաւուր եղան և անոնց կառավարութիւններ բութիւնը Վէլլէթպէյի Յիմուրաթաշն յանձնուեցաւ : Պարսմանի իշխանն իր բոլոր վիճակները չկրպնցընելու համար , մէկ մասը աշխարհակալին յանձնեց և հաշտութիւն ուղեց ընել , Պայէղիս անոր խնդիրըն ընդունեց՝ ան դաշնիքալոր Զարշամպագէտն երկու տէրութեանց սահմանն ըլլայ այնուհետեւ :

Վրիոյ մէջ ամէն իշխանները հզօր թագաւորին տէրութեանը ներքեւ կը խոնարհէին . Պայէղիս ամէն բան կարդի գնելէն ետև , իր բոլոր զօրութեամբը Եւրոպա գարձաւ : Վմէն բանէ առաջ մկան իր Եւրոպական վիճակաց գուռը Վէլլակօլու քաղաքն ամրացընել , որն որ Քամթալանցւոցմէ և նոյն իսկ (Օսմանցւոցմէ աւերած էր . իր նաւախմէին համար ամուր աշխարակուլ անքոյթ նաւահանգիստ մը շնեց՝ թշնամեաց արշաւանացը գէմ գնելու համար : Վյունուհետեւ գէսլ 'ի Արծովեղոգոս և Ծիւղանդիս գիմեց , հրաման խրկեց Յունաց կայսեր և Վոնուէլի փոխանորդին որ զատ դաշնաց իշրենց հարկաւոր եղած օդնուին ընեն , և անոնց նիզակակցութիւնը վաթսուն նաւով Վիոս (Ոագրու)

կղզւայն վրայ գնաց և բոլոր քաշարքն ու գիւղերը մէկուել մասիր գարձուց, որոնք 84 տարի առաջ (Օսմանցւոց աւերելէն ետե, ակսեր էին վերստին ծաղկել.)

Օւերունի Յովհաննէս կայսրը, որ Պայէղիսէն վախնալով, իր որշ գւոլը Յունաց Փիլատելիիաքաղաքին վրայ յարձակեր էր, սկսաւ, բայց շատ ուշ, իր Կստանդինուս պօլս մայրաքաղաքը պաշտպանելու համար պարփակներով աւերել ամրացրնել. Շինութեան համար քարը պակսելով, իր նախնիքներէն շնուռած երեք ամենագեղեցիկ եկեղեցիները փլեց, որոնց մեկը Քառասուն Վարտիրոսաց եկեղեցի կը կոչուէր՝ Վարդիստոս կայսերէն շնուռած, երկրորդը Վամենայն Վրբոց՝ Վեծն Լեւոնէն, և երրորդը Ս. Վոկիոսի՝ Վեծն Կստանդիանսուէն: Այս եկեղեցիներէն հանած քարերովի երկու մեծ քառակուսի բերդ եր շնեց: Պայէղիս նոյն միջոցին Ասիօյ արշաւանքներէն գառնալով Պառսա կը մանէր, ուստի Եւրոպա պիտի անցնէր. Յունաց կայսեր ըրածները լսելով, հրաման խրկեց անոր որ իր բոլոր շնածները նուրին հիմնայտակ կործանէ, եթէ ոչ իր Վանուէլ որդին, որ Պայէղիսայ քովը ծառայութի կ'ընէր, պիտի կուրքացած տեսնէ: Օւերունի կայսրը, աս ահեղ հրամանին վրայ, վախնալով որ չըլայ թէ իր որդին սպաննէ, մեծ երկիւղով և տրամութեամք անոր հնազանդեցաւ, և իր նոր շնել տուռած բերդերը կործանեց: Վանուէլ աս բանս և իր հօրը մահուան գոյմն իմանալով,

իր լրտեսները խարեց ու Կառանդնուալովիս փախաւ: Պայէղիս իր իշխաններուն անհօգութեանն ու նոյն իսկ Վանուէլի դէմ բարկանալով դեսպան մը խրկեց անոր, ըսելով թէ՝ ասկէ ետե (Օսմանցւոց գատերը տեսա, նելու համար Տաճիկ գտուալոր մը պիտի գուռի Կաստանդինուս պօլիս: ըստ որում արժան չէ, կ'ըսէր, որ վաշճառականութեամբ կամ ուրիշ առթիւ Կոստանդինուս պօլիս գանուող Տաճկաց գտաստանը քրիստոնէից ձեռքով տեսնուի: և եթէ ընդունուելու ըլլայ, բոլոր քաղաքին ծովեղերը պիտի գոյութի: Բանակ մ' ալ խրկեց պատգամաւորին հետ, որոնք Իւթանիայէն թըրակիս անցնելով, բոլոր գիւղերն աւերեցին և բնակիւները գերի տարին: այսուհետեւ հրաման ըրունակ որ Իւթանդիան պաշորեն: Այ եղաւ (Օսմանցւոց Կստանդինուսագոլիսն առաջին անդամ պաշտուած շարելը, որի որ եօթն աշխան տեսեց: Քաղաքին պատնէներուն տակը զօրաց գունդ մը գդուշութեան համար միշտ կ'ըսպասէր: բանակին մնացած զօրքերը յառաջ անցնելով, Բաւրարիան, Վալաքիան, Պասնիան և Վաճառիստանն առապատակեցին: Աւալաքիոյ իշխանը Պայէղիսայ հնազանդելով՝ հարկ խստացաւ: Վրեթէ աս տարուանէ կը համրութի Վահներուն (Օսմանցւոց հարկելը (1391): Երբ Պայէղիս իր Եւրոպիոյ մէջ ունեցած թշնամեացը հետ կը պատերազմէր, Ալայէտափն, յարմար ժամանակ կարծելով վե-

րըստին ապստամբէցու : Կյուր
ապի շահաստակաւթեամբ մինչեւ
Գաղափար * և Պրուսա հասնելով
Պալէրպէի թիմուրթաշ գերի
ապրեր էր . Պայէզիս իսկայն զար-
մանալի արագութիւն Երիս գտու-
նալով , անձամբ իր ապստամբ
հապստակին վրայ քալեց : Ալայ-
էտաին Երլորդմին այսպէս կայ-
ծակի նման դարձը չյուսալով ,
յանկարծակի եկաւ . իսկայն գեռ-
պան մը յաւզարկեց Պրուսա , որ
երթայ հաշուութիւն և ներումնն
խնդրէ անորմէ . բայց Պայէզիս
այսպէս պատասխան խրկեց անոր-
թէ . Առւրը միայն կարող է իւ-
րենց դատաստանը տեմնելու :
Առափ երբ Ալայէտաին շփոթու-
թեան մէջ էր , Հառաւ Երլոր-
դուր և Ալայի դաշտավայրին մէջ
անոր վրայ յարձակելով , խիստ
կարճ պատերազմէ մ' ետև զօր-
քերը հալածեց , և Գարամանի
իշխանն իր Ալի և Վէհէմմէտ
երկու որդւովքը գերի տարաւ
ու թիմուրթաշայ յանձնեց որ
զանոնք պահպանէ : Ալայէտաին
Պայէզիսայ գալը լսած առենը ,
մեծամեծ պարգևներով թիմուր-
թաշայ աղջառութիւն տուեր էր .
բայց կողմատպեան առով չաշ-
տուեցաւ Գարամանի իշխանին
հետ , այլ երբ զան իր իշխա-
նութեան տակը տեսաւ , առանց
Պայէզիսէն հրաման ինդրելու
կախելուուաւ : Իսկ երկու իշ-

խանազունները Պրուսա մշտնջեւ-
նաւոր բանափ մէջ մնացին : Առ
յաղթաւթենէն ետեւ , Եգուէրոյ ,
Խանիա , Եցշէհիր և Լարէնտա
քաղաքներն ու բովանդակ Դաւ-
րամանիան (Օսմանեան պետու-
թեան տակն անցան) :

Պայէզիս այսպէս փոքր Ալից
Հարաւային մասին գրեթէ բու-
լորտին տիրելով , իր ահարկու-
րանակը գէպ ՚ի Արևելեան և
Հիւսիսային կողմը տարածեց ,
որ իր աշխարհակալութիւններն
ընդլայնէ : Եեթաստիոյ , Կեսա-
րից և Եւգուկիոյ կողմէրը Վէ-
մէտ Պիւրհանէտուն իշխանը ,
Թաթարաց քանի մը ցեղերու
վրայ կը կառավարէր , որոնք երկ-
րին գեղեցկութեանը համար առ
կողմէրն եկեր էին բնակելու :
Զկնալով Պայէզիսայ գէմ կե-
նալ , Խարբերդու լեռները փա-
խու . ուր Գարա (Օսման որ երկ-
րին իշխանն էր , զինքը բանելով
սպաննեց : Առւլթանն առ առ-
թիւ Եեթաստիոյ . Եւգուկիոյ և
Կեսարիոյ քաղաքաց և Պիւրհա-
նէտունի բոլոր երկիրներուն տի-
րեց (1392) .

Վէլըուգեան տասը թագաւո-
րութիւններէն միայն Գարամէ-
մունիի իշխանութիւնը տակաւին
Օսմանեան լծոյն տակը չհնազան-
դեր էր : Քէօթրիւմ Պայէզիս ,
որ քիչ մը ժամանակ առաջ ,
Վէնթէշի և Այսընի իշխանաց
աղջառանարանն եղեր էր , Պայէ-
զիս Երլորդմին ընդ գիմանալ չի-
կինալով . իր իշխանութեան Վալ-
սուն , Շամիկ և Օսմանձըք գըլ-
խաւոր քաղաքները , պղնձի մե-
ծագանձ հանքերով մէկտեղաշ

* Գաղափար (Էնկիւրի) Հայրաստանի և Ալ-
միկոյ Տամբաներուն կենդրոնը շնուռած . Փարք
Արից վաճառականութեան համբարտոցն էր :
Եղ քաղաքը , որ էին ժամանակը շատ երեկի
էր , հիմա իր գեղեցիկ դրժարանները . քաղ-
ահամ պառազներն ու հայ ժալովաւեան հար-
աբաւթին անոր համբաւը կը պայծառ ացընեն :

Խարհակալին ձեռքը յանձնեց ,
և աղաւեց որ Վինովն ու իր եր-
կին իրեն թողու . Երլուրը մ-
հաւանութիւն տուաւ , եթէ
ինքն աղ Վէնթէցի և Վարնի
իշխանաց որդիքն իրեն յանձնէ ,
բայց անոնք Վէնկ-թիմուրին
(Վալ-Լիրկաթ) քովն ապաստա-
նուեր էին , որ աս ժամանակս
կ'ըսկեր Վարևելեան կողմը մեծ
քաջուիներ ցուցընել : Վանցմէ
քիչ մը ժամանակ ետե , նոյն
իսկ Քէօթրիւմ Խուլթան Պայէ-
զիսէն երկինչելով փախաւ անոր
քովս գնաց՝ իր բոլոր երկիրները
Վինովէն մինչեւ . Կաստանդնու-
պոլսոյ նեղուցը , որուն մէջն էր
նաև իր Պասթէմունի * գեղեցիկ
մայրաքաղաքը , Պայէզիսայ յանձ-
նելով :

* Գասթէմունի Օսմանեան տերութեան ա-
մենին մեծ և առաւ հանք ունեցող քաղաքն
է . իր մասնաւոր հարստութիւններին ու ճար-
տարակութեանը շատ անունի եղաւ : Քաղաքը
խորոնկ ծորի մը մէջ շնուած է , մէջ տեղի
տհագին ժայռ մը կը , որուն վայ հին արոց
մը կը տեսնուի : Գասթէմունի շատ անունի
մակիթներ ունի , որոնց հարստագույն թեան
հնարքը նշանակութեան արժանի է . 12.000 Տա-
ճիկ , 500 Ցշն և 50 տուն չայ կան մ.ջ .
Առ քաղաքին մէջ քանի մը բանաստեղծներ
ծնուն , նմանապէս Զէյնէկ անուանի կին հեղին
նակը հստ ծնած է :

Ասոր մօն գանուած երեւլի քաղաքներն
են . — Սամիրան՝ որն որ Միհրգան Տիղանաց
քերայը շքելցուց : Անորմէ ետե մեծամած
փափախութեանց և արկածներու առարկը ըլլո-
ւով , հիմն կիսակործան արանինշերով շնչա-
պատած հատիւ 2000 բնակիչ կը պարունակէ :
— Իրին գետին եղեցը ; որ հիմն Զարգարա-
սուցու կը կոչուի , Ամսախ քաղաքը կը գըտ-
նուի . շատ անուանի միշտակարաններ ունի ,
որոց մէջ կը տեսնուի Պայէզիս թ . էն շնուած
100 քառակուսի ոսք մ.ծութեամբ գեղեցիկ
մէկիթն ու Փիր Խլասաց համար կառացուած
գերեզմանը , որ անուանի ուխտասելի է Տաճ-
կաց . թագաւորական հին աշտարակին աւ երակ-
ները , անոնց մէջ եղած գերեզմանները , հին

- Առւլման Պայէզիսայ այնչափյա-
ջուլ յազմութիւններով պան-
ծացեալ սկսաւ անհոգութիւն-
ընել . Վր թագաւորն առաջին
անգամ օրինաց հակառակ զինքն
արքեցութեան և զեղիսութեան
տուաւ . իր Վերպիացի կնոջն ու
Վլի փաշա անդրամ վէզիրին հը-
րապուրանիքներէն խարուելով .
Բայց Պայէզիսայ իր անձին աէր
ըլլուով , երկար ժամանակ աս
ախտին մէջ չմնաց , այլ իր Վ-
միր Վէիս * փեսային տաւած խը-
րատներէն յօրդորուելով և տես-
նելով որ իր ու մէզ զիրին չար օ-
րինակովք ժողովուրդը կը դայ-
թակէր , զգաստացաւ , և մեծ
խստութիւն բանեցուց աս միջոցին
անոնց մէջ սպրոդած չար ախտերը
չնչիլու : Վրդէն ութառուն դա-
տաւորներ , որոնք ժողովրդաց
դատաստանը տեսնելու համար
անիբաւութիւն և կաշուազ զանոնիք
կը հարստահարելին , Պէկչէհիր

Ծանցքներն ու Խաֆանտիարի պալսու : — Օս-
մանները Վրման ըրման գետին եղեցը գեւեց'կ
աւերով չմնաւած է . որուն մէջ երեկի կը
տեսնուի 19 կամարէ բաղկացեալ կամարը
Պայէզիս թ . էն շնչաւած :

* Էմիր Սէիս , Պայէզիսայ աստրինի ու ներ-
հուն վեռան , որ մը Առվլթանաց հետ Պրուսոյու-
նոր շնուած մէկ կիթը պտըսելով , երբ Պայէզիս
իրեն կը հարցընէր թէէ շնութիւնն ի նշակս է .
և Տէր իր , պատասխանեց Էմիր Սէիս , առ շե-
ան մէտուն գեղեցիս թիւնը , մ.ծութիւնը ,
և արկախաւոց ու վշելուչ ձեւն անհամաւ
և են , բայց իր կատարելութեանը հանճերը մէկ
և բնին կարուսութիւն ունի , եթէ ան ալ ըլլոյ
« Զեր Վէհամառութեանը իմաս համելլ պիտի
» ըլլոյ : — Է՞նչ բան , հարցաց Պայէզիս աշ-
» խուժիւ : — Ըստ իմ՝ կարծեաց ուկտը եր
» միզիթին շըստ անկիւնը շըստ դիմեսուն շնել .
» ան սունին շնութիւնն վայելութիւնն անթերի
» պիտ'ըլլոր , և Զեր Բարձրութիւնը պիտի
» գար անոնց մէջ բարեկամներու հետ զրար
» զանար » : Ար խրատը շատ ազգեց Պայէզիսայ ,
ու երգում ըրաւ որ մէկ մ'ալ գինի շնմէ .

տան մը մէջ դնելով, կ'ուղէր այրել տալ զանանք : Բայց Ալի փաշա զանանք կորսնցընել չուզ զելով, և արդէն իսկ հրամանը տրուած ըլալուն համար, Պայէս դիտայ ծաղրածուին 1000 տուգադ խոստացաւ՝ թէ որ Առւլթանայ միաբը կարենար փսխել : Ծաղրածուն Պայէզիտայ ներկայանաշ լով աղաջեց զան որ զինքը Կոստանդնուպօլիս գետագանութեան խրկէ : “ Ի՞նչ բանի համար, հարցուց Առւլթանը : — Որպէս զի, ըստ, երթամ կայսերէն Յայնդիտուն կրօնաւորներ խընդրեմ որ մեղ դատաւոր ըլլան, մեր տպէտ դատաւորաց տեղը, որնիք այրել կ'ուղեմք ո : Պայէզիտա աս հենգնութեան միտքն ի մանալով, վէցիրը կանչելտուաւ, և հարցուց թէ ի՞նչ է պատճառը որ այնպէս գիտուն դատաւորներ կաշուակուրծ ըլլան : “ Գլխաւոր պատճառը, ըստ մէզիրը, մինչեւ հիմա իրենց ոռոճիր անորոշ մնալն է ո : և առաջարկեց որ այնուհետեւ հաստատ հասոյթ մը ուհմանուի : Ուստի որոշեցին որ դատաւորը տեսած դատաստանէն հարիւրին երկու առնէ :

Պայէզիտ սկսաւ այնուհետեւ գովելի վարք մը ցուցընել ժողովը գրեան, որով իր առջի գէշ օրինակիներուն յիշատակը ջնջել կ'ուղէր : Ուստի Պուխարի ծերունուցն խրատիւքը Պրուսայումէջ երկու մկիթթ շնեց :

Այս միջոցներս էր գրեթէ որ Պայէզիտ Առւլթան կոչուելու պատիւը խնդրեց և ստացաւ Եշ գիտուսի ամիրապետէն :

Պրուսա քաղաքը թշնամեոց արշաւանքներէն աղատ պահելու համար, պարիսպով պատեց, և նոյն ժամանակը, Կոստանդնուպօլաց դիմացն ասխակոն եղելքը կազմէ հիսոր ամրոցը շնեց, որպէս զի Կոստանդնուպօլիսն աւելի նեղ խօժէ :

Իսկ ինքն Պայէզիտ Կոստանդնուպօլաց պաշտման պարաւաստութիւնները տեսնելու փութալով թեսազնիկէ քաղաքն առաւ, բայց վեհանձն յաղթողը մերսամին օրինաւոր տիրոջը յանձնեց : Որպէն Խայրէատին փաշան Վուրատայ թագաւորուել վերջին տարինները թեսազնիկէի վրայ տիրած էր, բայց նորէն Վանուել իշխանին տուաւ : Պայէզիտ իր զօրութիւր գէտ ՚իշխուս դարձուց : Բուլղարիս մէկ մասը Պոսովյայի պատերազմէն առաջ, մէկ մասն ալ ետև Օսմաննեան տէրութեանը հնազանդեցաւ : Միսթու և Վիտին, Վիկոպօլիս և Վիլատի Բուլղարիս Դանուպի վրայ եղած խիստ ամուր քաղաքները քիչ մատեն ընդդիմացան : Միսման իշխանը Վիկոպօլ սոյ մէջ պաշարուած երկար, ժամանակ Օսմանցւոց իշխանութիւր գէտ կեցաւ, բայց վերջապէս ինքն ու իր որդիքը անձնատուր եղան :

Վիկիսմանն Ամառաւաց թագաւոր Պայէզիտայ ըրած յաղթութիւններէն վախնալով, գեսպան խրկէց անոր, ու հաշութիւննել ուղեց : բայց Պայէզիտ Բուլղարաց աշխարհէն կողոպտած զէնքերով ու դրոշներով զարդարուած որպէս որահ մը տարաւ գեսպա-

Այսուհետև պատրաստուեցու անձամբ Պարամանի իշխանին վայ ելլելու՝ անոր աղատամբ բութիւնը և Պրաւացի մէջ ըրած աւերմունքը պատմելու համար : Այնէկէօլ ամրոցը հասնելով , Եղիպատրի Սուլթանին նամակ մը գրեց՝ անոր հետ բարեկամական յարաբերաւթիւնները հաստատելու համար , ու քիչ մը եաքը անորմէ ուրախակցութեան դեռ պանները մեծ հանդիսիւ ընդուչնեց : Օսմանեան սուլթանն Իսլամականի իշխանը

Հրաւիրեց որ իր Պատումը պէջ որ զին իւր գնդովն իրեն օգնութեն իրկէ, ու Աէրմիանու Վագուապ պէյին հրամացեց որ Պարամանի վրայ քայլելու համար պատերազմականց անցնելու ճամբան յարէ ։ Վաշէհիր, Վէկչէհիր, Վէտիշէհիր և ուրիշ ամրոցներ գիւրութեամբ իրեն հնազանդեցան ։ Վէհէմմէտ Վիսնիան պաշարեց, բայց Պարամանի իշխանը յաղթողին արշաւանքէն վախնալով, եկաւ անոր ոտքն ինկաւ՝ ճակատը չուան մը կապած ՚ի նշան հնազանդութեան*, և աղոտեցաւ ։ Վէհէմմէտ գէպ ՚ի հիւսիս գարձաւ Շահիկը Օսմանեան աերութեան միացընելու համար ։ բայց հազիւթէ հոն հասու, որ Պարամանի իշխանին կը ին աղոտամբութեան լուրն առաւ ու վերստին իր բանակը փութով ետ գարձուց, միտքը գնելով որ առ պատամին անպատճառ բռնէ ։ բայց իր արշաւաման ժամանակը հիւսնդացաւ Պաղատիյ մէջ, ու իր բոլոր բժիշները չկրցան աղէկցընել ։ Վէրջապէս Վէրմիս անու իշխանին անուանի Վինոն բժիշկը կանչեցին, որ աւելի իր բանաստեղծական ոգւյն համար Շէյխ անուամբ ճանչցուած էր ։ Ոնան Շէյխ իմացուց որ Վէհէմմէտայ հիւսնդութեան պատճառը ուրիշ բան չէր, բայց եթէ մելամազձութիւն մը, և թէ յաղթութեան լուր մը ամէն առողջարար գեղերէն աւելի ներգործութիւն պիտ'ընէ ։ Պայէղիս փաշա աս գեղը ճարելու յանձնաւ ։

* Առ ձեւ իսնաբհութիւնը թողութիւն կը գնենէր բաց ՚ի մահապարտներէ ։

առ եզրւ ։ Վրկոր առենէ ՚ի վեր Պարամանի իշխանին հետ բարեկամութիւն ունենալով հրաւիրեց զան որ իր քայլը դայ, որպէս զի եթէ Վէհէմմէտ մեանելու ըլլայ ինքը պատրաստ ըլլայ Օսմանեան աերութեան անձը ձեռք ձգելու ։ իշխանը խաբուեցաւ, ու Պայէղիս փաշա, որ գարանը մուած կ'ըստասէր, անոր վրայ յարձակեցաւ, ու իշխանին Վաւութաֆա պէջ որդին գերի առաջաւ ։ Վնչողէս որ բանաստեղծ քժիշկը գուշկէր էր, յաղթութեան լուրը Վուլթանին հիւսնդութիւնը առողջացուց ։ Վէհէմմէտ Վաւութաֆա պէջ Պարամանի իշխանին որդւոյն աղատաւթիւն տուաւ ։ իշխանացուննիր ձեռքն կուրծքին վրայ գնելով, իր հօրն անուամբը ըառ երգումն ըրաւ ։ “ Ցորչափ կենդանութեան հոգին առ մարմայն վրան է, ըստւ, բնաւ Օսմանցւոց աշխարհին վրայ աչք չի սպասի գնեմ ո ։ Վէհէմմէտ այս պէս երգմամբ հաստատեալ հաշտութեան վրայ գոհ եղած, անոնցմէ առած քաղաքներն ետ գարձուց, և իշխանին որդւոյն թմբուկներ, դրօշակներ, ձիեր և ուղուեր պարգևեց ։

Վրիտասարդ իշխանացունը հազիւ Օսմանեան բանակն հեռացաւ որ իր երգումը դրժելով ան կողմերը թողուցած արօստական ձիերը յափշտակեալ իր հետը տարաւ, ըսելով ։ Պարամանեանց և Օսմանցւոց մէջ պատերազմը չի դադրի երբ էք ։

Վրբ աւագանիներն անոր ըրած երդման անհաստատութեանը վրայ կը զարմանային, Վուսթաֆա

իր կուրծքը ծածկող զգեստին ծուցէն նոր խեղթած աղաւնի մը հանեց, որն որ Վէհէմմէտոյ առջևն երդում ըրած ատենը կենդանի կը պահէր, ու ըստւ . “ Ես խօսացայ չ'ապատամբիլց որչափ կենդանութեան հոգին աս մարմնոյն վրայ է ” : Այսպէս աղաւնին մեռցնելով, իշոնից մէջ ամրացաւ . Սուլթան Վէհէմմէտ աս կեզծ երդ ման վրայ բարկացաւ ու ուխտադրուժիշխանները պատժելու գնաց . Վէհէմմէտ պէյ գարամանի իշխանը դէպ ՚ի կիլիկիա փախաւ, ու Վուսթաֆա երրորդ անդամ յաղթուելով, հաշոռութիւն ինսդրեց : Վէհէմմէտ, խիստ գթասիրա ըլլալուն համար, երրորդ անդամ երդ մազանցներուն ներեց ու աս գեղեցիկ խօսքերն ըստւ . “ Եթէ ես զձեղ պատժեմ, իմ փառքս պիտի նսեմացընեմ . թէ որ ձեր անօրէն սիրու ձեղ երդ մազանցութեան կը տանի, իմ սիրոս անուանո մեծութեան արժանի խորհուրդներ կու տայ . ուստի կ'աղատեմ զձեղ ” :

Ախալմամբ Վենետիկցւոց ու Օսմանցւոց մէջ գժոռութիւն մը ժադելով, Վէհէմմէտ աղարտաւորեցաւ Վւրուզա վերադառնալ, կելիոլուի մէջ երեսուն նաւէ բաղկացեալ տորմիզ մը կազմեց, որոնցմուլ Չալը պէյ Օսմանեան ծովակալ Վարչակեղագոսի Ապշա, Վնտրո, Փարոս, Վիլու և ուրիշ մանր կղզիներն ասպատակեց . ուրոնց իշխանը Պետրոս Օէնօ Վենետիկցի ասպետը, Օսմանցւոց ու Վենետիկցւոց մէջ հաստատուած դաշնիքը չի գիտնալով .

(Օսմանեան նաւախումբին մեծ վիաս հասցուց : Օսմանցիք վրէմն առնելու համար, Վե ծովին Վլուլսպոնտոս դարձող երկու Վենետիկցի վաճառականի նաւերը բռնեցին, ու Վլուլսպոնտոս հասնելով մայրաքաղաքը որաշարելու վրայ էին, երբ Վենետիկցւոց տասն և հինգ նաւէ բաղկացեալ նաւատօրմիզն երեցաւ Պետրոս Վորէտանի հրամանատարութեան տակ, ու մինչեւ Վլուլսպոնտոսի նաւահանգիստը հասաւ : Օսմաննեանիք սաստիկ կերպով թունաւոր նետեր հոսեցուցին թշնամեաց վրայ, բայց անսնց նետած թնթանօթներէն ցրուեցան, ու Վորէտան, թէև երկու սաստիկ վերքեր ընդունեց, սակայն յաղթութիւնը յառաջ տարաւ . ծուվակալին նաւը ու տասն և հինգ նաւեր բռնեց, ու նաւատօրիներն սպաննել տուաւ իրենց կանանց և որդւոց դիմացը, որոնք ծովի վերքը կայնած կը դիտէին :

Հետեւ լառտու բռնուած գերիներուն մէջէն Ռէնովացի, Վաղվացի, Քաթալանցի, Աիկիլիացի, և Կրետացի նաւատօրիները, որոնք Օսմաննեան նաւախումբին վրայ իրենց գէմ կը պատերազմին, նաև վերուն կայմերէն կախել տուաւ : Ըստ նաւամարտէն գրեթէ երեք ամիս ետև (9 Յուլիս 1416) վերըստին խաղաղութեան դաշնիքը հաստատուեցաւ, այն պայմանաւոր՝ երկուկողմէն բռնուած գերիներն ետ գարձնեն, Օսմանցւոց ու Վենետիկցւոց մէջ տեղի ունեցած թշնամութեան գործքը գագրեցընեն ու աս վերը լիններուն թոյլտուութիւն ըլ .

Ես Արշակեղագոսի մէջ աստանաց ու ու հարատափհարազ ծովասպատակները պատճելու . Այդաշանց հաստատութիւնը , որի որ Անտրէա . Փրաբռօթ . և Տէլֆինո Վէնիենիքու ատորագրեցին , ապարայն սկիզբ՝ Օսմանեան գեապան . մը Վէնետիկի տարաւ . ու Վենետիկ ցիք շքեղ հանդիսիւ ու պատուալ ընդունեցին զմնիքը ու իրեն հետ եղող բոլոր բազմութիւնը , և հասարակապետութեծախիւթը զանոնք կերակրեցին , ու գեսպանին ոսկեկուռ գիպակներ , ըստ Օսմանցւոց զարգարուած չորս աղեղ տուին * :

Եղին տարին արևելեան հարստութեանց բոլոր իշխաններուն և թագաւորաց կողմէն խնդակցութեան Վէհէմմէտայ , անոր հետ բարեկամութեան գեսպաններ հաստատելու համար . որոց մէջ երեւելիներն էին Շահրութ Թիմուրայ որդին , Վարա Լուսութ Թիւրքմէններուն թագաւորը , Հայոց Վրաց և Աղուսեմից իշխանները .

Վակայն Եւրոպայի մէջ Վրահը և Վաճառք ապստամբելու , կ'ու զէին ինքնագլուխ տիրել . Որուն համար Վէհէմմէտ պարագաւորեցաւ իր բանակներն արեւմաւոք տանել . Ասկալիք պատերազմէմ' ետեւ , ապստամբները յաղթուեցան , ու հաշտութիւն իշխեցին . Վէհէմմէտ . հաւա-

նեցաւ , ու հարկ պահանջեց , ու Վրահաց իշխանին որդին պատանի առաւ . Վէելի ապահովութեան համար , Վալաքիս մէջ բերդ մը չնեց . ու անունը Երքերի (արմատ երկան) գրաւ , որ Վլահներէն Շուրճավկոչուելով , պատմութեան մէջ յաճախ . կը յիշուի . Տանուազի եզերը գըոնուած քանի մը աւրուած բերդեր ալնորոդեց . Միկոպօլսոց վրայ Դիւնէյտ ապստամբ իշխանը կառավարիչ գրաւ :

Ուրիշքանի մը պատերազմներէ ետեւ , որոնց մէջ գրեթէ միշտ յաղթողգտնուեցաւ , Վիստարացաւ քանի մը սահմանակից իշխանաց ընդվզութիւն խոնարհեցնելու համար . Վարա . Երուսութ մարմարմէնաց թագաւորը Երզնից մէջ կառավարիչ գրեթէ բի Փիիր Խօմէրը , որ Վարահիսարն առնելու . կ'ըսպառնար . որուն իշխանը Հասան պէյ Վէհէմմէտայ օգնութեան համնելին առաջ գերի ինկեր էր . Վիենոյն միջոցին , Խոֆէնտիար , որուն Վասրմ որդին (Օսմանեան բանակին մէջ իբրև պատանդ կը կենար , պատմամբ ելու փորձ փորձեր էր , սակայն Վէհէմմէտ զան հնազանդեցուց , ու Վանեգրա , Վասթէմունիւ և քանի մը քազաքներն առնելու , հաշտութիւն քրաւ :

Վէհէմմէտ Վրուսա գառնալու ատենը , Թամթարաց մէկցեղի մը հանդիպեցաւ , որոնք մարմարայ արշաւանաց ժամանակը եկեր հզն հաստատուեր էին . Առջմանը հարցընելով թէ ով են իրենք , և ով է իրենց գըուխը , պատա-

* Վենետիկիք , Օսմանեանք և Յոյնք չողմացեցոց աս տվյութեանը ժամանգեցին . որոնք երեք քան կու տայնեց գետակներուն բնակարան . ո ոճիկ և պարունակն : Հիմա Օսմանցւոց մէջ միայն պատմուհան մը պարգևելու ավզորութիւնը մնաց :

խանեցին թէ իրենք Թաթարոց Սամզարեան ցեղէն են, ու իրենց Վիճնէթ պէջ իշխանը հարսանիք մը գացած է : “ Այսպէս ուրեմն, ըստ Սուլթանը, իմ պատերազմելու զբաղած ժամանակս այս Թաթար իշխաններն իրենց ժամանակը խնջոքով կ'անցընեն, ու իմ առջևս չեն երեքը . արիք ու, բեմն, Եւրոպա անցէք ” . Վիճնէթ պէջ իր հասուածով Եւրոպա գաղթեց , ու Գոնուշ գաշտին անցէք ” . Փիլիպպէպօլսէն մէկ օր հեռաւորութեամբ Կոստանդնուպօլսոյ Ճամբռուն վրայ . Գաղթալայրը մինչեւ ցարդ (Թաթար պազարը (Թաթարաց վաճառանոց) կը կոչուի .

Դրեթէ աս միջոցին , ու երբ սուլթան . Վէհէմմէտ Եւրոպա անցնելով՝ Վէլիոլուի ծովային քայլայեալ զօրութիւնը հասուատելու կ'ըլքազէք , իփստ վառն գալից . և երեկի խոռովութիւնն մը Օսմանեան պետութեան կործանումը կ'ըսպառնար նորահնար ազանդի մը պատճառաւը . որուն պատրուակին տակը փառասէր մարդիկ բարձր իշխանութիւնն մը ձեռք ձեռլու փափագելով , իւրենց գաղտնի և վատշուէր խորհուարդն ՚ի գործ գնելկը ջանային . Աս ձեռանարկութե ծնունդ տուողն էր բազմահանձար Սիմոնօր լու Վէտրէտին , որ Վիրայի մաս հուանէ ետե , Վէհէմմէտ անոր կենացը խնայելով ու իր պարէնին համար տարեկան եկամուտ շնորհ հելով Նիկիա խրկեց բայց Վէտրէտին հնարքով փախաւ անկէ , ու իր մուածութեամբ և զարմանալայցա ջողոկութեամբ պատրաստած նո-

րահնար տղանդի մը վարդապետութիւնները կը հրատարակէր , որուն հիմք ազատութեան ու հաւատարութեան վրայ հաստատելով , նոր տէրութիւն մը կ'ուղէր կազմել .

Վէտրէտին իր սկզբանց յառաջադիմութեանը ու իր փառասիրութեան ճանբան գծելու համար , իր խորհրդոցը գործիք ընտրեց Վէօրբլիւձէ Վուսթաֆա կրօնամու երիտասարդ շնիթը , որուն աշակերտները վինքը Տէտէ* Վուլթուն կը կոչէին անոր կրօնական և քաջարական գերագոյն իշխանութիւնը իմացընելու համար : Այնպէս Խորլադ Վէմալի Բիւտպին ուրացող Հրեայն Վէտրէտինի ուրիշգործիք մ'եղաւ :

Վառնք բազմաթիւ տէրվիշներու գլուխն անցած ամէն տեղ նոր վարդապետութիւնն մը կը բարոգէին : Բայց որովհետեւ առ քարոզրութեան գաղտնի նպատակը Եւրոպից և Վրիոյ տիրապետութիւնը ձեռք առնել էր , ուստի առ նորակրօն առաքեալները կը քարոզէին թէ՝ ուլ որ քրիստոնեաները աստուածապաշտ չի համարիր . ինքն է անկրօննը . Վէօրբլիւձէ իր քարոզիչ աշակերտներէն Վիստանի կողմէն եր ստանալով մինչ ըլ վեց հազար հոգի եղան :

Վէհէմմէտ աս խոռովութիւնները լսելով , Արուխանի Սիսման իշխանը , որ Վէրվաց թագաւորին որդին էր , ան նորակրօն

* Տէտէ կը կոչուի , միաբանութեան մը կամ վանքի մը նախագահը կամ կառագործը :

բաղմութե վրայ խրիեց, որ զանոնք պատմէ . բայց աս իշխանն իր բոլոր բանակաւը պատերազմն մէջ զոհ եղու : Այ յաղթութեան, վրայ , աղանդաւորներն իրենց յանդգնութիւնը կրինաւ պատկեցին, ու իրենց գունդն ամէն կազմէ կ' բառուարանար : Ոչ հէմմէտ իր տէրութիւնը վասանդի մէջ տեսնելով, վերստին Այարանի և Այրուխանի նոր կառավարչին հրամայեց որ իր բոլոր զօրութեամբն աղստամբներուն վրայ քալէ . բայց աս ալ առաջնեն աւելի բաղդաւոր չփանուեցաւ, բանակը բոլորովին ցիրուցան ըլլալով՝ քանի մը հոգւով միայն մազապուր Ապանեսիա փախաւ :

Այ աստեն Առւլթանը զայրանաւու իր Առւրատ որդին խրիեց անոնց վրայ , որ թէկ տասներկու տարեկան, բայց Ամասիյ կառավարին եղած էր . Այ իշխանազունը, իր Պայէղիստ փաշա վէզիւրին առաջնորդութեն ու բազմաթիւ ասիական և եւրոպական օժանդակ գնդով մինչև տղանդաւորոց հաստատուած տեղերը յառաջ անցաւ, ու Ճամբուն մէջ բոլոր իր գէմն ելողներն սպաննեց , մարդիկ, կանայք, աղայք և ծերք առ հաստարակ զոհ եղան : Վերջապէս Օմիւռնիյ մօտերը Պարապրուն հասան, որ բուն խոկ ապստամբութեան կաղաղն էր . հոս ահագին պատերազմ մը բացուեցաւ, ու Պէօրբլիւճէ Առւլթաֆա խիստ ընդդիմակալութէմէմ' ետև, պատերազմէն կենդանի մնացող բազմութեան հետ բռնուելով Եփեսս բերուեցաւ : Իրեն տւած սոսկալի տան-

շանկներն անկարելի եղան, զինքն իր մնորութենէն դարձընելու : Դահիճները ձանձրանալով՝ անոր Չեռքերն ու ոտքերը խացուծեցին վրայ բեռներով տարուծած, ու ու զտի մը վրայ դրած , բոլոր քաղաքին մէջ պարացուցին անոր ացաց առ ջե նոր վարդապետութեան հետեւով ու դարձի չեկող աշակերտները չարաջար սպաննեցին :

Թէպէտեւ Առւսթաֆա Պէօրբլիւճէի մահուանէ ետեւ , աղանդաւորաց զօրութիւնը տկարացաւ , բայց իր կազմնակիցները նանքահաւատութեամբ կը ձայնին թէ՝ Առւսթաֆա տակաւին ողջ է երկրի վրայ :

Արկէ ետեւ ալ, Առւրատ և Պայէղիստ փաշա Վւրոստ անցան , ուր աս նոր տղանդին հեղինակը Պէտրէտին Ամասիյ ին օղու նոր վարդապետութիւնը կը հրատակէր . Այրէսոքաղաքին մօտերը տնոր հանդիպելով , զօրքերը ջարդեցին, ու զինքը գերի բանելով, Առւլթանին առջեւը բերին . Ոչ հէմմէտ զան աւագանիներուն առջեւը յանդիմաննելով , ըստ վճռոյ գենպետին հրամայեց որ կախաւի :

Ահա այսպէս Առւլթան Ոչ հէմմէտայ բուռն զօրութեամբը աս նորահնար վարդապետութիւնը ընջուեցաւ , որ Օսմաննեան Տէրութեան հիմը կը շարժէր :

Հաղիւ թէ սուլթան Մէհմէմ
մէտ աս խռովայով աղմնդը բաղը
մաթիւ մարդկանց մահուամբը
ջնջեց , որ վերասին ուրիշ գուցէ
աւելի մեծ վտանգ մը Պայէզիւ
տայ որդւոյն տէրութեան կոր
ծանումը կ'ըսպառնար :

Ուսւթափա անունով մէկը՝
Գաղատիոյ պատերազմին մէջ ան-
յայտ եղող Պայէզիւտայ որդին եմ-
ըսելով , իբրև Մէհմէմմէտայ ե-
րեց եղբայրը կ'ուզէր հայրենի
գահակալութեան օրինաւոր ժա-
ռանգութիւնը առնուլ * :

Արդէն բաղմաթիւ ժողովուրդ-
ներ , Շիւնէյտ կառավարիչը , կողը
մնապետ Թիմուրթաշայ որդիքը ,
ինչպէս նաև Լուրէնոս , իրեն հետ
միաբաներ էին : Ու Վալաքիոյ
և Նիկոլուսոյ իշխանին օգնու-
թեամբը դէպ ՚ի Թէսազնիկէ
քալեր էր :

* Բիւզնուդայի պատմագիները կը հաս-
տառն թէ աս նոյն Պայէզիւտայ որդին , և
Մէհմէմմէտայ Սուսւթափա եղբայրն է , որ
Գաղատիոյ պատերազմին մէջ անյայտ եղու .
Բայց Օսմանեան պատմիները , բայց ՚ի՞ն-
չով պատմագրէն , ոյս բաղդաֆանդիր Սուս-
թափային յիշտակութիւնը յաջրտ ուու-
թամին օրովու կ'ընեն , և Ծիւզմէ Սուս-
թափա (Արդէ Սուսթափա) կ'անուաննն : Բայց
հաւանականաբար՝ առաջնութեան կարծիքը
աւելի սոսոյդ կ'երեւի . գանդի նախ՝ Թէ-
մուրայ հրամանաւը պատերազմի գաշտին
մէջ եղած խռովագութիւններէն ետև . Պա-
յէզիւտայ Սուսթափա որդւոյն ոչ դիմէլ և
ոչ նշան մը տեսնուեցաւ . Երկրորդ՝ Մէ-
հմէմմէտա տարիի մեծ գումար մը կը
վճարէր Յունաց կայսեր Սուսթափային պահ-
պանութեանը համար . Երրորդ՝ աս բաղդա-
ֆանդիր արքայորդին ոչ միայն բաղմաթիւ
ժողովուրդ իր կողմէ ձգեց , այլ և տէրու-
թեան մէծամեծները , ինչպէս հիմա պիտի
տեսնուի . և վերջապէս՝ ծերունի Նէջի
պատմագրին վկայութիւնը որ նոյն դարսն
մէջ ծնած է :

Մէհմէմմէտ անոնց դիմացն ե-
լաւ , ու անոր զօրքերը ցրուեց :
Մուսթափա , և Շիւնէյտ Եփե-
սոսի և Օմիւռնիոյ իշխանը (որ
երկու մնագամ ապստամբեր և
երկու անգամ ալ թողութիւն
ընդուներ էր) , քանի մը հո-
գւով Թէսազնիկէ ապաստանե-
ցան : Մէհմէմմէտ քաղաքը պա-
շարեց , ու ստիպեց անոր Տէմէ-
թրիսս Լապարիս կառավարիչը
որ զանոնք իրեն յանձնէ . բայց
Տէմէթրիսս հեղութիւն պատաս-
խան տուաւ . “ Թէ ինքը սուլ-
թան Մէհմէմմէտայ , ինչպէս նաև
Յունաց կայսեր ծառան է . սա-
կայն առանց կայսեր հրամանին .
Ժլրնար իրեն քովը ապաստանու-
ած ամենանուաստ գերին յանձ-
նելու , և որովհետեւ սուլթանը
իբրև իւր հայրը կը Ճանչնայ
զկայսրը , պէտք է որ նախ անոր
հրամանը ընդունի ” : Մէհմէ-
մէտ ուղղակի գրով աս խնդիրը
կայսեր իմացուց , որ պատասխան
տուաւ . “ Թէ իր աէրութեան
երկիրները ապաստանող փախըս-
տականները երբէք պիտի չյանձ-
նէ . քանզի աս կերպով ոչ եթէ
թագաւորի գործ ըրած պիտըլ-
լոց , այլ բռնաւորի . Թէ՝ եթէ
կայսեր մէկ եղբայրը սուլթանին
քովը փախչէր , սուլթանը պիտի
հաճէր առանց գատաստանարանի
վճռոյն գէմ օրինազնցութիւն
ընելու յանձնել զան . բայց
ինչորէս որ Մէհմէմմէտ դաշնիքի
մը մէջ կայսրը իր հայրը Ճանչ-
նեցէր էր , արդ՝ ինքը Մանուէլ
երդմամբ կը հաստատէր թէ մին-
չել իր և իր որդւոյն կենացը վախ-
ճանը պիտի չաղատէ ոչ Մուս-

Թափան և ոչ Շիւնէյտը ։

Ո՞ի և նոյն միջոցին հրաման խրկեց կայսրը Տէմէթրիսս լէոնտարիստին, որ Վուսթաֆան ուշ Շիւնէյտը ցռկանաւի մը մէջ գընէ, ու կոստանդնուպօլիս խրկէ։ Հաւատարիմ կառավարիք հնազանդեցաւ։ ու Վէհէմմէտ կայսեր հաշուսեր դաշներ ըրաւ որ կայսրը Վուսթաֆան, Շիւնէյտը և իրենց երեսուն ընկերները գտուշութեամբ պահէ, և Վէհէմմէտ պարտաւորի տարիէ տարի երեք հարիւր հազար փող տալ։

Վ լահաց իշխանը պատժելու համար, որ Վուսթաֆային օգնութիւն տուեր էր, Վէհէմմէտ Վալաքիտն ասպատակեց։ Վյապէս Սուլթանը իր աշբութիւնը աս սովառնադին վտանգներէն խաղաղուց։ իր Վուսթաֆա գուցէ կեղծ եղայրը արգելանոցի մէջ կը գտնուեր, ու Դասըմեղը բայրը (որն որ Խիւլէյման իր Ֆաթիմէ քրոջը հետ Յունաց կայսեր քովը երբե գրաւ բարեկամութեան թողուցեր, և Վանուէլ Վէհէմմէտոյ յանձներ էր (4 Վայիս, 1412), գահակալութեան ապահովութեանը համար իր Պայէզիս Լըլուրը հօրը ըրածին նման չմեռցուց, այլ միայն կուրցինել տուաւ զան, ու Վգ հիսար քաղաքը ցռւցուց որ հօներթոյ բնակի։ Վմէն անգամ որ Վէհէմմէտ Պրուսա կուդար, իր Դասըմ եղայրն ու Ֆաթիմէ քոյրը իր քովը բերել կու տար, ։

* Համեր ինը հարիւր հազար փող կը դնէ։

Ժամանակին վաղը (ագւէ) Օսմանեան արդի մէկ գահեկանէն աւելի էր։

ու եղայրական սիրովանոնց հետ կը խօսակցէր։

Յունաց հետ դաշներ ըրած տարին, երբ Վէհէմմէտ ամէն բան խաղաղոցնելով կոստանդնուլու պոլսէն անցնելով Ասիա կ'իջնար, Վանուէլ կայսրը դաշնոց ասպարահն իրութիւնը ստուգելու համար պատշաճ առիթ սեպելով, Տէմէթրիսս լէոնտարիստ, Դասպատանը և Վանուէլ Քանդակակուղիւ աւագանիւներով ու պարգևներով անոր առ աջը խրկեց։ որոնք քաղաքէն գուրս անոնց հանդիպեցան, ու մեծ պատուով մինչեւ Պոսփիրի եզերքը Երկ Աման (հիմա Պէշիքթաշ) ըսուած տեղը անոնց հետ ընկերացան։ Բոլոր Ճամբան՝ Վուլթանը Տէմէթրիսս լէոնտարիստներին հետ խօսակցեցաւ։ Վանուէլ կայսրը իր որդւով քը ըրսկանաւի մը մէջ անոր կ'ըսպասէր, ուրիշ ցռկանաւ մ'ալ աւելի շքեղութիւն զարդարուած պատրաստեր էր, որուն մէջ սուլթանը մտաւ։ Երկու ինքնակալները իրարու բարեկցին, և բարեկամական սիրով իւրաքանչիւր ոք իր նաւառուն մէջէն խօսակցեցան։ Վյապէս քով քովի իրենց Ճամբան շարունակեցին մինչեւ Խրիստովիս (Աքիւտար), ուր Վուլթանը ցռկանաւէն ցամաքը եւսւ, և իրեն համար պատրաստուած վրանը մտաւ։ Կայսրը և իշխանները ցռկանաւուն վրայ սեղանը նստան, և ժամանակ առժամանակ սուլթանն ու կայսրը իրարու սիրոյ և բարեկամութենեցան կը խրկէին։ Երիստան դէմ, Վուլթանը ձիով

Նիկոմիդա քաշուեցաւ , և կայսրը մայրաքաղաքը դարձաւ :

Հետեւեալ գարնան մէջ Առւթանը վերասին Ադրիանուպոլիս եկաւ , ու կայսրը Տէմէթրիսս էնտարիսը խրկեց զան ողջունելու համար : Առւթանը մեծ սիրով գեսարանը ընդունեց . բայց երեք օր ետքը , կաթուածէն զարնուելով ձիէն ինկաւ :

Տէմնելով որ պիտի մեռնի , իր հաւատարիմ Պայէղիս փաշա վէղբը կանչեց , և հրամայեց որ ինչպէս իր վրայ մեծ խնամք ունէր , նոյնպէս իր Առւրատ որդւցն ալ հոգ տանի , որ նոյն ժամանակը իբրև Վասիս կառավարիչ թիւբը մէններուն դեմ տէրութեան արեւելքան սահմանը կը պաշտպանէր . զան իր տեղն ստեցընէ , ու իր երկու կրտսերագոյն զաւակները Յունաց կայսեր պաշտպանութեանը և Խրնամոցը յանձնէ , որպէս զի չըլլայ թէ Առւրատ իր անդրանիկ որդին զանոնք սպաննէ՝ իր գահէն վախնալով :

Հետեւեալ առտու՝ Առւթանը իր բանակը հասաւ . զօրքերը ըստ սովորութեան միաձայն աղաղակներ ու բարեմաղթութիւններ ըրին . սակայն հետեւեալ օրը , երկրորդ անգամ կաթուածը վը բան գալով՝ լեզուն բռնուեցաւ , ու իրիկունը մեռաւ :

Խորհուրդ ըրին Խպրահիմ և Պայէղիս փաշա երկու վէղբները որ սութանին մահը չյայտնեն , մինչեւ որ անոր Առւրատ անդրանիկ որդին չխմանայ և անոր տեղը չյաջորդէ : Անմիջապէս Խլվան պէյը արտորնօք Վա-

սիա խրկեցին որ Մէհէմմէտոյ մահը խմացընէ անոր , ու իրենք ըստ սովորութեան կանոնաւոր կերպով խորհրդարանը կը կազմէին . բայց որպէս զի սուլթանին մահը իմացուելուն պէս՝ զօրքերը Մէհէմմէտոյ ամէն մէկ որդւցն կողմն անցնելով երկպառակութիւններ չելլեն , և քանի մը գունդ զօրքով Կոփոյ մէջ Առւրատը հաստատեն , ձայն հանեցին թէ Առւթանը կ'ուղէ Կոփոյ մէկ կողմը յարձակիլ , և թէ Պարէս սիս մայրաքաղաքին մէջ զօշամուզով պիտ'ըլլուի :

Անկնելէն առաջ ; Ենիչէրիները և սպաները կ'ուղէին նախ Առւթանը տեսնել , որպէս զի իւմանան թէ կենդանի՞է : Պարապատեղ վէղբները կ'աշխատէին զանոնք համոզելու թէ արքայն հիւանդէ , և տեղէն շարժելն անգամ վանդաւոր է , և անոր կենդանութեան վրայ ունեցած տարակոյսնին ականջը հասնելով , աւելի շուտով պիտի մեռնի :

Վերջապէս Ճարերնին հատնելով , Առւթանին մահը գիտցող երկու բժիշկներէն Պիւրտ իւղէն անունով մէկը , բանակը հանգարտեցընելու համար , հնարք մը հնարեց : Առւթանը իր արքայական շքոց պատմուածանները հադցուցած գահի մը վրայ նըստեցուցին Ադրիանուպոլսոց պալատին կերի գտակնոնը . անշունչ մարմնոյն ետեւը ներքին չորս մանկւակներէն (իւ աղասը) մէկը պահուելով , ու մուշտակին թէզանիքները իր թէերը անցընելով , երբեմն երբեմն կը շարժէր զանոնք : Պրահին պատուհանները

դոցած էին, քանզի, ըսին, բը-
միշները իմացուցին թէ օդը հի-
ւանդին վկաս կրնայ տալ :

Այսպէս ենիչերիներն ու սպա-
ները պատուհանին տակէն անց-
նելով ու հեռուէն սուլթանին
մութ տեղը ձեռքերը շարժելը
տեսնելով, գոհ եղան և բարե-
մազթութեան ձայներով Ասիա
դարձան : Քառասուն օր Մէհէմ-
մէտայ մահը պահէցին, մինչեւ
որ Վուրատայ համար դացող
սուրհանդակը վերադարձաւ ու
յաջորդ ալքայորդւոյն Ամսիա-
յէն Պրուսա հասնելուն, և իր
հօրը իշխանութիւնը ձեռք առ-
նելուն լուրը բերաւ : Ան ժամա-
նակը Մէհէմմէտայ մահը և մի-
անդամայն Վուրատայ յաջորդե-
լը հրատարակեցին, ու սուլթա-
նին դիսկը դադաղի մէջ դրած
բանակին հետ Պրուսա տարին,
և Եշլ Իմարէթ շերիմին մէջ
թաղեցին, որ ինքը շնուր էր, և
որու մէջ իրմէ զատ մէկը չժա-
զուեցաւ* :

Սուլթան Վուրատ և Սուլթան
Պայէզիս նախահարց ըստածին նը-
մն, Մէհէմմէտ ։ Պրուսայի և
Եղիանուպուսոյ երկու մայրա-
քաղաքաց մէջ մզկիթներ շնեց:
Իր գահը ելեւէն քիչ մ' ետքը,
աս վերջին մայրաքաղաքին մէջ

իր Ախւելյման և Վուսա երկու
եղայրներէն սկսուած մզկիթին
շնուրիլ կսոտարեց* : Մէհէմմէտ
սուլթան Վուրատ Աչէն Պրուսայի
մէջ սկսուած մէծ մզկիթն ալ
վերջացուց : Աս ու ուրիշ շատ
երեւելի շնուրթիւններէն ետեւ,
իր մզկիթն ալ շնեց Եշլ Իմա-
րէթ անունով** :

* Աս մզկիթը . որ Պարիցա գետին ե-
ղերը Փիլապեարօն երթալու ձարմբուն
վկա շնուրած է, Աւլու ձամփի (Մէծ մրդ-
կիթ) կըսուի, ու չորս ձական ունի
իւրաքանչիւրը հարփեր ութուն ոսքէն .
Եօթը գմէկթ ներաէն, ու հինգ գմէկթ
գրան կը տեսնուի, երկու մզկիթ աշա-
րակ ունի :

** Եշլ Իմարէթ մզկիթը երեւելի է իր
փառաւոր զարդերով, թանկագին քարե-
րով, և քաներակգորսութեան ձարմբու-
թեամբն ու նրբութեամբը : Արտաքին պա-
տերը մէծ կար քառակուսի կարմիր, կա-
նաչ, միխագցն, գելին, ու և ձերմակ
մազմարիններով շնուրած է, որն որ իսխան
նորածե տեսքով է կերպի : Միայն մէկ
գուռ մը ունի, որ մինչև ձականին վերին
ծայրը կ'ելք գեղեցիլ զարդերով : Երեք
տարի շաբանակ առ դրան համար 40.000
ոսկի զրհուեցաւ ութման Ալայտամին
Սեբաստիո մէջ շնածին գերազանցելու հա-
մար : Ս զիմիթին ներբեն կողմը աղին. իւ-
ցեղններով և յախճապակիններով զարդա-
րուած է . պատերը գեանէն մինչև մար-
դու մը բարձրութեամբը կանաչ յախճա-
պակիններով պատած է : Գմէկթներն ու
աշոտարակները ժամանակաւ բոլորովն կա-
նաչ պարսկայն յախճապակիններով պատած
է եղեր, այնպէս որ արեւունձաւ ագայիթները
վասն զարկած ատենը կարծեն թէ դի թեալ
պալսարի մը զիմուխու գմէկթներ և սիւներ
կը փայլէն : ասոր համար մզկիթին անունը
Եշլ Իմարէթ ըստեցաւ, այսինքն կանաչ
շնուրթիւն : Ասոր քովը Մէհէմմէտայ գե-
րեզմոնիլ կը տեսնուի զարմակի պարտէվի
մը մէջ ութանիկիւնի ձեռվ շնուրած : Աեր-
քին և արտաքին պատերը կանաչ յախճա-
պակիններով պատած էն :

Աս երկու մշատականաց քովը, գորա-
տուններ և աղքատանոցներ շնուրեցան,
ու անմայ արտահութեանը համար Մէհէմ-
մէտ եկամուտներ հաստատեց :

* Սուլթանին մահը պահելու սովորուելը,
որ յաճախ պիտի տեմնէնք օսմանեան պատ-
մութեան մէջ, յաջորդին գահակալութեան
ասպահովուել համար կ'ընէին, երբ ժառան-
շը հեռու տեղ մը գտնուելը . ասկայն ժա-
մանակ անշնելով յաջորդ արքայորդինըը
հեռու տեղեր կուսակալութեան չէին խըր-
կեր այլ արքունեաց կանանցը կը պահէին,
որպէս զի առ վասնէն աղատին *

Ուհեմմէտ Ա., որիր ըրած եւ ըսկելի հաստատութիւններովն ու քաղցրաբարոյութեամբը Զելչ պի ազնիւ անուանը արժանացեր էր, Խելծուգեան Ուլթանաց ամէնէն մեծը սեպուելու պարծանը քը ունեցաւ: Ուհեմմէտ Զելչ պիին իշխանութեան ժամանակը սկսան գիտութիւններն ու մատենագրութիւնները ծաղկիւ: Յէ և քանի մը հնախոյդ աղդեր Ուհեմմէտ Ռ. էն առաջ Օսմանեան գրականութիւնը ծաղկած չէր կըսեն, սակայն Օսմանեան պետութեան տարեգրութիւններէն կիմացուի թէ Ուհեմմէտ Ա. ին ժամանակէն սկսած էին գըրագէտները, բանաստեղծները և օրէնսգէտները զարդանալ, ու յաջորդ սուլթաններուն օրովը ասոնց վրայ աւելցան չափաբերներն ու ասողաբաշխները: և աւելի ետքը՝ գեղեցկադիրներն ու նուագահարները: Աս ոմանց գետութեանը անձանօթ մնացած ժամանակաց կենսագիրները, գետուններն ու արուեստագէտները, և իրենց աշխատասիրութեց յարդը Օսմանեան գրականութեանաւոր ճիւղի մը և արուեստից պատմուե հետ կըյարին:

Սուլթան Ուհեմմէտ Ա. ին ժամանակը գտնուած երեւելի վէզիրներուն վրայ, օրոնք իրենց հանձարամտութեամբը կամ քաջութեամբը մեծանուն հանդիսացան, հոս փոքր ինչ ծանօթութիւն տալը պատշաճ համարեցինք: Խպրահիմ փաշա, որուն համար Օսմանեան պատմագիրները Ուհեմմէտայ մեծ վէզիրն

էր կըսեն, Վլի փաշային որդին էր՝ Դեհանէրէ լիի գերդաստանէն: Ծիւզանդացի պատմագրաց սուլթան Ուհեմմէտայ բոլոր տէրութեանը մէջ Խպրահիմ փաշա վէզիրին վայոց յիշատակութիւն մը չընելին, և Պայէզիտ փաշան իբրև առաջնին վէզիր Ճանչնալին (Օսմանեան ժամանակագրուց միւտքան վկայութիւնը չեն կրնար տկարացընել: Վնսաւանդ զի աս անյիշատակութիւնը կը ցուցընէ թէ Խպրահիմ փաշա աւելի իր մըտաց հանձարովը քան թէ բաղկաց ուժովը տէրութեան ծառայերէ, Պայէզիտ փաշա վէզիրը Պաղստիոյ պատերազմին մէջէն Ուհեմմէտը փախցընողը, դան ամէն տեսակ վտանգներէն ազատող, և միանգամայն անոր վէրշնի խնդիրքը կատարողի եղաւ: Ուհեմմէտայ երրորդ վէզիրն էր Այվազ կամ Խլաս փաշան, որ Պարամանի իշխանին դէմ Պրուսան քաջութեամբ պաշտպանեց: Ոիխալ օղութի, Խւրէնոսի և Յիւմուրթաշը երեք գերդաստանաց Օրիսանայ և Վաւրատայ ժամանակէն ունեցած ժուանդական աւագութեան աստիճանը յաջորդներուն վրայ ալ անցնելով, մեծամեծ ծառայութիւններ ըստին անոնք ալ տէրութեան:

Ուհեմմէտայ Աման Շէյխ և Քիւրտ Խւզէն բժիշկները իրենց տնունը անմահացուցին, առաջնինը՝ Խոսրէֆ և Շիրին անուն պարսկերէն քերթուածոյն թարգմանութիւը, և երկրորդը՝ Սուլթանին մահը չըայտնելու համար բանեցուցած հնարքովը:

ՍՈՒԹԸՆ ՄԱՏԲԸԸ Բ. ԵՊԻՒԼ ԽԵՅՐԸԹ

824—1421

Վուրատ Բ., որ հաղիւ տասն
և ութն տարեկան էր*, և արգէն
վեցը տարիէ ՚ի վեր Վմասիս կ՚իշ
խէր, իր հօրը տեղը յաջորդեց
առանց իշխանութիւնը կորսնցը
նելէն վախնալով իր եղայրները
Յունաց կայսեր յանձնելու : Ար
գէն իր երկու անդրանիկ եղայր
ները, որոնք իրմէ առաջ Վմա
սիս կը կառավարէին, սուլթան
Վէհէմէտայ կենդանութեան
ժամանակը մեռէր էին . երկու
կրասերագոյն եղայրներն ալ ետ
քը ժոնտ ախտէն մեռան :

Վուրատ Վմասիսէն Պրուսա
համնելով, ենիչէրիները գիմացը
ելան ու հնազանդութիւն ցու
ցընելով մինչեւ իր պալտով ու
զէկից եղան . Պրւիսարի կամ Լ.
միր Խուլթան ծերունին, որ Վուլ
թան Պայէցլատայ փեսան էր, ա
նոր մէջքը սուր կախեց : Վուլ
թան Վուրատ իր հօրը գիտէր
կանաչ մզիթին դիմացը շրիմին
մէջ թազել տուաւ, և ութը օր
սուգ ընելէն ետեւ, Գարամանի
և Վէնթէչի իշխանաց, Վաճա

ռաց Վիկիսմնատ թագաւորին և
Յունաց կայսեր գեսպաններ խըր
կեց իր հօրը տեղը յաջորդելուն
լուրը տարածելու, և իր հօրը
հետ ունեցած գաշինքնին նորու
գելու համար :

Գարամանի իշխանին հետ բա
րեկամնութեան գաշինքը հաստա
տեց, ու Վաճառաց հետ հնդա
մեայ զինադադարումն ըրաւ :
Վուրատայ գեսպանները կոս
տանդնուալիս չհասած, Վա
նուել մարդ խրկելով՝ սուլթան
Վուրատէն իր երկու կրտսեր եղ
բարբը կը պահանջէր ըստ վերջին
բաղձանաց Վէհէմէտայ, եթէ
ոչ, կ'ըսէր, Պայէզիտայ Վուս
թափա որդին կ'աղատեմ, որ Օս
մանեան իշխանութեան բուն ժա
ռանգն է, ու Եւրոպայի Տաճ
կաստանի իշխանը կ'ընեմ, որուն
շուտով Վսիոյ Տաճկաստանն ալ
պիտի հնազանդի : Պայէզիտ փա
շա Վուրատին անունովը պատաս
խան տուաւ թէ՝ մեր օրէնքին
դէմ է մեր որդիքը քրիստոնէից
ձեռօքը դաստիարակելու . ուսւ
տի միայն բարեկամնութիւնը բա
ւական ըլլայ կայսեր :

Վուրատախամնին վրայ՝ Վանու
ել, Օսմանեան սուլթաններուն
իր երկրին հասցուցած չարկը
միտքը ըբերելով, Տէմէթրիսս
Վասքարիս Լէսնտարիս իշխանը,
տասը աղէկ զինեալ հաւերալ է
մնոս խրկեց, որ անկէ Վուրատա


* Վուրատ Բ. Տնած էր հիմքէթի 806ին
1401 ամին քի . իր հօրը յաջորդեց 824-
1421ին, իշխանութենէն հրաժարեցաւ 847
-1455ին, տարի մուտքը՝ երկրորդ անդամ
կառավարութիւնը ձեռք առաւ 848-1444
ին . և արնայի պատեր ազմն ետեւ՝ վերաբին
հրաժարեցաւ, ու երկու ալիս ետեւ՝ երրորդ
անդամ իշխանութիւնը ձեռք առաւ, ու
մինչեւ իր մահը տիրեց 855-1451



سلطان مراد خان ثانی ابوالخیران

ՄԱՐԴԱՆ ՄԱՐԴԱՆ Բ. ԹՈՒԻԼ ԽԱՅՐԱՆ

ՀՀ Ռ. Շահագիով. Գյուղ.



ֆան ու անոր Շիւնէյտ խորհըրադակից իշխաննը ազատուէ : Վուսթափա՝ կայսեր իրեն ըրած առ երախտեաց փոխարէն, երդում ըրաւ անոր որ Կէլիպօլուն, ու Կոստանդնուպօլսոյ հիւսիսային կողմը գտնուած բոլոր ծովեղերւեաց տեղերը մինչև Վալսքիս, և Հարաւէն թեսազիոյ քաղաքները մինչև Ղրիսոս կամ Աթոս Եւսը իրեն թողու :

Աս երդումէն ետե՝ Տէմէթրիս Ան Վուսթափային և Շիւնէյտին հետ Կէլիպօլու ելաւ . քաղաքին և մերձակայ տեղերուն բընակիներէն շատը անոնց հետ մի աբանեցան և Վուսթափան իրը և տէրութեան բուն ժառանգը ձանցան . բայց ամբականները բացարձակ Վուրատայ կոզմի ըլլանին յայսնեցին, ու չուզեցին ամրոցը անոնց ձեռքը յանձնել : Ան ատեն Վուսթափա սկսաւ իր կողմանակիցներովը յառաջ անցնիլ ու իր զօրաց թիւը աւելցը նել : Տէմէթրիս Լէնտարիս վերըստին եկաւ Կէլիպօլուի դիմացը խարսխեց ու քաղաքը պաշարեց :

Վուրատայ Խպրահիմ և Այլաղ փաշա վէղերները առ եղածները լսելով, յորդորեցին երխտասարդ սուլթաննը որ Վուսթափային դէմ Պայէղիս փաշա ծերունի սպարապէտը խրկէ : Պարապ տեղը Պայէղիս փաշա և Ծիմուրթաշայ երեք որդիքը (որոնց վէղերութեասիճնը շնորհեր եր սուլթան Վէհէմմէտ) կը ջանային առ հըրաւերը ընդունիլ, քանզի Խպրահիմ և Այլաղ միւս երկու վէղերները սոփեցին դանոնք :

Վէրջապէս Պայէղիս փաշա յանձնառու եղաւ ինքինիքը դոհել առ վոանգաւոր ծառայութիւնը իր իշխանին ընելով, և աղաւելով միայն որ իր մահուանէն ետե՝ Ծիմէթրացայ Աւմուր պէյ երէց որդւոյն յիսուն հազար փող կը տակը տան, Եւրոպա անցաւ, ու անկէ զօրք ժողվելով, գրեթէ երեսուն հազար հոգւով Վարիանսուպօլսոյ դիմացը ձախճաւ խուտ գաշտի մը մէջ քանակեցաւ : Վուսթափա ալ իր աւելի ստուար դնդովը հան հասնելով, Վուրատայ զօրաց պառաց թէ՝ ինքը տէրութեան բաւն ժառանգնէ, և թէ՝ պէտք չէ որ իրեն դէմ պատերազմին : Անմիջապէս Վուրատայ զօրքերը Վուսթափային կազմն անցան . Պայէղիս փաշա և իր Համզա եղբայրը բռնուելով շլթայի զարնուեցան :

Անզգամ Շիւնէյտը, որ շտուտարիներէ ՚ի վէր Պայէղիսայ վրայ կը նախանձէր, Վուսթափային հրաման առնելով, իր աչաց առջեւ անոր գլուխը կտրել տուաւ, իսկ անոր Համզա եղբայրը ազատեց, զկարծելով թէ օր մանիկա իրմէ վրէժը պիտ' առնու :

Աս յաղթութեան լուրը Կէլիպօլ համնելով, ամբականները Տէմէթրիս Լէնտարիս սպարապիսին անձնատուր եղան, որ կը պատրաստուէր ամրոցին մէջ նոր ամրականներ, զէնքեր և ռազմամթեր դնել : Բայց Վուսթափա յանկարծ երեւանալով՝ դէմ դրաւ, ըսելով թէ՝ ինքը Յունաց կայսեր օդորին համար պատերազմ ըներ : Այլպէս Յոյները ապրատամբ իշխանը արգելունոցէն աւ-

զատելով, անկէ օգուտ մը չկըրսցան քաղել, և Տէմէթիոս իր ակնկալութեանը մէջ խաբուելով նաւերը ճամբայ հանեց, ու վերստին կաստանդնուպոլիս դարձաւ : Են ատեն Վանուէլ որոշեց որ Վուրատայ գիմէ, և անոր հետ բարեկամութիւն հաստատէ : Տայց ինչպէս որ բարեկամութեան գաշնիքը Վուրատայ երկու կրտսեր եղբարց իրեն յանձնելով կ'ուղիք հաստատել, Վուրատ չհաւանեցաւ, ու Փոկիոյ Շենովացւոցմէ օգնութիւն խրնդրեց, որոնք իրեն նաւեր տուին, և իրենց նախորդ սուլթանին տուած հարկին մէկ մասը խրկեցին անոր * :

Վուսթաֆա աս միջոցին ինքը զինքը ապահով կարծելով, Վցրեանուազուսոյ մէջ հեշտութեանց և զեղսութեանց ետեէ եղեր էր: Շիւնէյտ իմացուց անոր թէ պէտք է Վրիա անցնիլ ու Վուրատայ պատրաստած զօրաց հետ պատերազմիլ: Վուսթաֆա մասութեանց քունէն արթնալով իր զօրքերը ժաղվեց ու Կափսակ

* Մէկամինէ (Միամիլի) կղզւն մէջ ձենովացիք ինքնիշխան կը տիրէին: ու կղզւն դիմաց գտնուած լւռնէն առաս պազեղ հանելով մէծ շահ կընէին: Միքայէլ զաւողքի թագաւորութեան ժամանակը, քայլաւալցիներ սկսէր էին աս հանքը գործել, ու ասոր համար Յունաց կայսեր տարեկան տուրք կը վճարէին: բայց երբ Տաճիկերը իրենց արշաւանքները մինչեւ ասկողմերը սփռեցին: ու հանքագործներուն ապահովութիւնը վրանգի մէջ դրին: Լատինացիք Յունաց օգնութեամբը յերսն սուրբութ և ծովուն եղեքը ամրոց մը շինեցին: որ Նոր Փոկիւա անուանեցաւ: Մէկմէտ Ա. ին ժամանակը՝ սկսան Սուլթանին հարկ վճարել:

եկաւ: Ոուլթան Վուրատ, որ կը պատրաստուէր մեծաւ զօրութեամբ Հւրուպա անցնել Վուրատաֆան նուածելու համար, լըսելով որ ապատամբ իշխանը Աստիք հասեր է, իսկոյն Պրուսայէն ելու, և Աւլուպատ գետին բուլութիքը բանակեցաւ: գետին վարայ եղած կամուրջը կորեց ջուրը նետեց, ու իր զօրութիւնը դէպ ի ծովը և գետին բուլութիքը տարածելով, Վուստաֆային սպասեց, որ գետին միւս կողմը բանակած էր:

Ծիմուրթաշց Ալի պէյ, Աւմուր պէյ և Աւրուճ պէյ որդիքը յորդորեցին սուլթան Վուրատը որ Վիխալ օղլուն ազատէ, որ պէս զի Վուսթաֆային յառաջապահ զօրքերը, որոց զօրավարները սուլթան Օսմանայ ժամանակէն Վիխալեանը էին, իրենց զօրագլուխին ձայնը լըսենսւն պէս, անոր կողմը անցնին: Վուրատ աս խորհրդին հաւանութիւն տուաւ, ու սուրհանեցիներ խրկեց Հւրուպատ, որ Վիխալեան Վէհէմմէտը ազատեն:

Վր միջոցին Վուրատայ քիթէն երեք օր սաստիկ կերպով արիւն հասեց, որն որ զօրքերը յաղթուելու գէշ գուշակութիւն մը կարծեցին: Զորբորդ օրը՝ թէև արիւն հոսութիւն դադրեցաւ, սակայն Վուրատ այնքան տկարացեր էր որ պատերազմելու զօրուիրը չէր մնացեր:

Վիխալեան Վէհէմմէտ բանակը հաւանելով, վէ զերներուն խորհրդով գիշեր ժամանակի, ինչպէս որ Վուրատ Ա. իր Սալջի պէյ ապատամբ որդւուցն հետ միաբար:

նած զօքքերը իր կողմը ձգելու
համար ըրաւ , բարձրածայն իր
նախնի պատերազմակից ընկերնե-
րը կանչեց : Եր ձայնը դիշերուան
լուռթեան մէջ գետին միւս կող-
մէն լուռելով , բոլոր բանակը խը-
ռովեց : Որուն գլխաւորները
թուզան , կը բէնոսի որդիքը և
ուրիներ , որոնք կը կարծէին թէ
իրենց նախնի զօրագլուխը երկար
ատենէ ՚ի վեր մեռած է , անոր
կենդանի ըլլալը լսելով ուրախա-
ցան , և անոր յորդորանօքը Ուռ-
րատոյ կողմն անցան :

Ուռսթաֆային հետ միաբա-
նող անկանոն զօքքերէն հինգ հա-
զար հոգի ուղեցին գետին հու-
նէն (լէլլա) անցնիլ ու գիշերանց
անոնց վրայ յարձակիլ : Ուռրատ
անոնց խորհուրդը իմանալով ,
Ումուր պէյը երկու հազար ենի-
չքիներով անտառի մը ծայրը
դարանը մոցուց , որ մինչեւ գե-
տին հունը կը ասարածուէր : Երբ
Ուռսթաֆայի հետեւակ զօրաց
մէկ մասը գետէն անցան , ենի-
չքիները վրանին յարձակեցան ,
շատը սպաննեցին , ու մնացեալը
բռնեցին : Ենիչքին մէկը աս
ողը մելիներէն երկու հոգի բըռ-
նելով , մինչեւ բանակին ան տեղը
տարաւ , ուր միս կը ծախսուէր ,
ու անոնք մսավաճառին տալով
տեղը ոցնարի գլուխ մ'առաւ :

Երբ լիլիաս փաշան այսպէս ՈՒ-
խալեանին յաջողիլը տեսաւ՝ հը-
նաբք մը խորհեցաւ Ռիւնէյտ իշ-
խանը Ուռսթաֆային անջատելու
համար : Գիշեր ժամանակ Ռիւ-
նէյտայ Համզա պէյ եղքայրը նա-
մակաւ մ'անոր խրկեց , որուն
մէջ սուլթանին անուամբ Այս-

ալմի կառավարութիւնը կը խօս-
տանար՝ եթէ Ուռսթաֆայի կող-
մէն հրաժարի : Լիլիաս փաշա ու-
րիշ նամակ մ'ալ գրեց Ուռսթա-
ֆային , իբրև մուերմութեամբ
ծանուցանելով անոր թէ՛ Ռիւ-
նէյտ իր բանակին մեծագոյն մա-
սին հետ միաբանելով , միտք ու-
նի զինքը սուլթանին ձեռքը մատ-
նել :

Այս երկու նամակները ապար-
դիւն չմնացին . քանիզի Ռիւնէյտ
իր վրաններուն մէջ լապտերնե-
րը վառել տալով , իր եօթանաւ-
սուն խիստ հաւատարիմ ծառա-
ներուն հետ լուռթեամբ փա-
խաւ , որոնք գիշեր ժամանակ իւ-
րենց ունեցած ոսկեղէն և ար-
ծաթեղէն թանկագին ինչքը իւ-
րենց վերարկուին տակը պահե-
լով գէպ ՚ի Այտընի կողմը գա-
ցին : Ուռսթաֆային զօր-
քերը պանական երկիւղի մը մէջ
մնալով , խառնաշփոթ խուճապ-
մամբ սկսան փախչիլ : Պարապ
տեղը Ուռրատայ զօրքերը , որոնք
գետին ասդի կողմն ըլլալնուն հա-
մար՝ չէին կրնար ետևնէն երթալ ,
“ Կեցիք , կեցիք , մի՛ փախչիք ”
կը պոռապին : Ուռսթաֆային զօր-
քերը ամէն կողմ ցըռուեցան ,
իսկ ինքը իր բանի մը ծառանե-
րով մինակ մնալով , կէլիպօլու
փախսաւ ապաստանուեցաւ :

Ուռլիթան Ուռրատ փախստա-
կան զօրքերուն երդում ընել
տուաւ , և Ուլուպատ գետին վը-
րայ աւրուած կամուրջը շնկելով
լափսակէն անցաւ , ու արտորնոք
Եր Փոկէայի ձենովացի իշխանին
սուրհանդակ մը խրկեց աղաչե-

լով որ իր նաւատօրմիջը պատրաստէ կէլիպօլու անցնելու համար : Վտորնօ եօթը նաւով եւ կաւ, ու Վուրատ իր հինգ հարիւր աղէկ զինեալ մարդիկներով վր ամէնէն մեծին մէջը մտաւ, ու միւս նաւերուն հետ մէկուղ Շենովացւոց օգնութեամբը ճամբայ ինկաւ : Երբ նեղուցին մէջ տեղը հասան, Վտորնօ Վուրատաց առ ծնկան վրայ գալով, աղաջեց որ պաղէղին համար ունեցած պարտքը իրեն շնորհէ : Վուրատ բարեկամութեամբ անոր աղաջանքը ընդունեց, և 27 000 ոսկւոյ պարտամուրհակը գրիչով դիմ մը քաշելով աւրեց :

Վուսթաֆա պատնէներուն վրայէն Վուրատաց Ճենովացի նաւախմբով դէպ ՚ի Վուրոսից ծովալեղը յառաջանալը տեսնելով, Վտորնօյի նաւուն վրայ նաւակաւ մը նուրիակ մը խրկեց, որ եթէ Վուրատը իրեն յանձնէ՝ 50 000 ոսկի պիտի տայ իրեն : Վտորնօ աս նուէրը ընդունեց, և սուլթանը անոր անկիղծութենէն ընորհակալ եղաւ :

Վուսթաֆա իր զօրութիւնը նաւահանդստին վրայ տարածեր էր թշնամեաց նաւախմբին մըսունելն արգիլելու համոր . ան ատեն Վտորնօ քաղաքէն հեռու նաւերուն խարիսխուր նետել տուաւ, և հրամայեց որ զօրքերը ցամաքը ելեն : Քառան մակոյիներով նախ 500 նետաձիգ զօրք ելան, եաքը Վուրատ ալ հաղար նետաձիգ և երեք հաղար իր խիստ քաջամարտիկ զօրքերովը ցամաք ելաւ : Վզելնաւոր և պարսաւոր զօրքերը իրենց նետերով և քա-

րերովը Վուսթաֆային զօրքերը հալածեցին : Վուսթաֆա Վդրի անուպօլս փախաւ, ուրիշ շտապաւ իր գտնածը առնելով Վալորիս անցաւ :

Վուրատ երեք օր կէլիպօլու կեցաւ, և ամրականները սուրէ անցուց, որոնք իրեն նաւահանդիսոը մտնելուն արգելք եղեք էին . ասկէ ետեւ Վտորնօյին և անոր ծովացին զօրքերուն հետ, որոնք սեաւ զրահներ հագած, և նիղակներով ու կացիններով զինուորած էին, Վդրիանուուպօլսոյ վրայ քալեց, որուն բնակիչները բաղմութեամբ անոր առաջն ելան : Վուրատ զանոնք իր պալատը հրաւիրելով մեծ խընչ ծցք մը տուաւ, որն որ ուրախութեան ձայներով և յաճախ բարեմազգութիւններով վերջացուց : Շենովացւոց իշխանը մեծ պատուով մեծարեց, և մեծամեծ պարգևներ տուաւ, և անոր զօրքաց ալ առաջ ընծաներ բաշխեց : Վուսթաֆա իր կողմակիցներէն մասնուելով, Գըղը աղաչի* մէջ բռնեցին ու կաղելով զան Վուրատայ տուջեր բերին, որ խայտառակութեամբ Վդրիանուուպօյ մէկ աշուարտկէն կախել տնւաւ :

Յունաց Վանուել կայսրը երբ տեսաւ որ Վուսթաֆային մահուամբը իր յայսը պարապ ելաւ, նկատ վախնալ, անոր համար վերըստին Վուրատայ գեսպաններ խրկեց ու ջանաց զինքը . անմեղ ձեւացընել, ու բոլոր եղածնեւ :

*Գըղը աղաչ Վդրիանուուպօլէն մէկ օր հետու և հիւսիսացին կողմը :

բուն յանցանքը Պայէղիսոյ վրայ
կը գիզեր , որ չուզեր էր Առւլ-
թանին սրգիքը կայսեր ձեռքը
յանձնել : Առւրատ դեռպանները
տեսնել անգամ չուզեց , այլ
զանոնք քանի մօր կեցուց , մինչ
չե որ իր բանակը բոլորովին պատ-
րաստ ըլքայ Կոստանդնուպոլսոյ
վրայ քալելու , ու ետքը արձա-
կեց զանոնք , պատուիրելով որ
ըսեն իրենց կայսեր թէ ինքն աւ
անձամք ետենէն պիտի հասնի :

Առւրատ քսան հազար հոգիով
յառաջ անցաւ գետ՝ ի Խիւզոն-
դիոյ մայրաքաղաքը , ու բոլոր-
տիքը եղած ամէն գիւղերը և ար-
տերը սյրեց , անսառնները ըս-
պաննեց , բնակիչները գերի տա-
րաւ , այդինները , ձիթենիները ա-
ւերեց , և իր հետեւակ և ձիւտոր
զօրքերը բոլոր աւերեալ երկրին
վրայ տարածելով ցամաքին կոշ-
մէն քաղաքը պաշտեց . որմէ
մէկ նետածիգ հեռաւորութիւ-
պատնէշմը շնուց թշնամեացնե-
տած քարերը արգիլելու համար ,
ու հին աշտարակի մը վրայ յար-
ձակեցաւ , որ թօօփ գափուի մօտ
շնուռած էր , և որու քովին փոք-
րիկ գետ մը Կոստանդնուպոլ-
սոյ մէջ կը մտնէր : Քաղաքին
պարիսպներուն բարձրութեամ-
բը երկաթապատ անիւներով
փոյտեայ աշտարակներ մօտեցու-
ցին , ու մանգաղներով և ուրիշ
պատերազմական գործիքներով
լցուած սայլեր բերին : Եցն մի-
ջոցին ալ սկսան ականներ բա-
նալ և ջրանցքներուն ճամբա-
ները փնտռել քաղաքին մէջը
մանելու համար : Առւրատ զօր-
քերը յորդորելու և անոնց թի-

ւը շատցընելու հոմար , հրատա-
րակեց որ քաղաքը իր բոլոր գան-
ձերովը զօրաց պիտի յանձնուի :
Այ խոստման վրայ բանակը շա-
փաղանց խրախուսեցաւ , ու բազ-
մաժիւ անծանօթ մարդիկներ ե-
կան անոնց հետ միացան , յու-
սալով որ Յունաց գանձերը պի-
տի կողոպտեն :

Են ատեն ծերունի Պուխարին
ալ հինգ հարիւր տէրմիներով
պատերազմին գաշոը եկաւ էգ
ջորիի վրայ հեծած : Բալոր տէր-
միները անոր առջև կը խոնար-
հէին , և ձեռքերն ու սորքերը կը
համբուրէին : Պուխարի ջորիէն
իննելուն պէս , իր շքեղ վրանին
տակը քաշուեցաւ , ու սկսաւ
գրքերուն մէջ վինուել թէ նր
օրը և նր ժամուն քաղաքը Օս-
մանցոց ձեռքը պիտի յնաց : Այ
միջոցին՝ տէրմիները Յունացնա-
խատական խօսքեր կը նետէին ,
և իրենց ձայներովը օդը կը հըն-
չեցընէին . “ Ուր են ձեր պաշո-
պանները կը պոռային . վազը ձեր
քաղաքը պիտի առնունք , ու ըշ-
ձեղ գերի պիտի տանինք :

Երկար ժամանակ մոտածութիւ-
նացընելէն ետեւ , Պուխարի գուրս
ելաւ , բոլոր ժողովուրդը իր
բոլորտիքը ժողովեցան որ տոլու
պատգամը լսեն . ան ատեն Պու-
խարի իր ախտարական գուշա-
կութեամբը հաստատեց թէ 1422,
Օգոստոս ամսոյ քսան և չորսին
կէս օրը մէկ ժամ անցած , ին-
քը ձի պիտի հեծնէ , ու իր սու-
րը բանալով օդին մէջ երերցը-
նելէն , և երեք անգամ “ Կոտ-
ուած ” գոչելէն ետեւ , քաղաքին
պարիսպները անմիջապէս ինքնին

պիտի փլչեն :

Որոշուած օրը հասաւ, Պու-
խարի գեղեցիկ ձի մը հեծաւ,
և իր առջևը մեծ վահան մը բըռ-
նել տռւաւ : Այս վայրկենին որ
պատեանէն սուրը դուրս կը հա-
նէր, հինգ հարիւր տէրվիշները
ու բոլոր բանակը միաբերան
“ Առուած ” կը պոռային, ինքն
ալ նյոնը կրկնելով, խթանը ձի-
ուն խօթեց, մինչև քաղաքը յա-
ռաջ անցաւ, ու հրամայեց որ
ամէն կողմէն յարձակին :

Խանուէլի Յավհաննէս որդին
և յաջորդը անոնց դիմացն ելաւ,
իր զօրքերն ու բնակիշները քա-
ջալերելով որ իրենց հայրենիքը
և կեանքը պաշտպանէն : Վետե-
րուն բազմութիւնը անձրեի պէս
երկու կողմէն կը տեղար : Ի՞ւ-
զանդիոյ բոլոր բնակիշները պա-
տերազմի ելեր էին . կտնայք և
մանկունք իսկ սուրի տեղ ման-
գաղ, և վահանի տեղ տակառի
յատակ առնելով պարիսպէն
դուրս ելեր էին : Յունոց ար-
խոնտաները և երև ելիները վե-
զիրներուն և ամիրաներուն հետ
կը կռուէին, իսկ տէրվիշներուն
հետ քաղաքին միայնակեացներն
ու քահանաները : Օսմանեանց
և Յունաց առհասարակ խառն
աղաղակները, նետերուն շաշիւ-
նը, և հրազինուց թնդիւնը պա-
տերազմը զարհուրելի կ'երեցը-
նէին :

Երեւ իր ճառագայթները ամ-
փոփելու վրայ էր, և տակաւին
Յօյները անդրդուելի քաջութէ-
րենց պատերազմը կը շաբունա-
կէին, երբ յանկարծ Օսմանեանը
պաշտպան մեքենաներուն կրակ

տուին, ու շուտով ետ քաջու-
եցան* : Քանզի Յունաց տէ-
րութիւնը բաղդախնդիր կեղծ
Մուսթաֆան Մուրատայ վրայ ա-
պլստամբեցընելով օդուտ մը վ-
տեսնելուն համար, Մուրատայ
տան և հինգ տարեկան Մուս-
թաֆա եղայրը անոր դէմ ա-
պլստամբեցուց, որ իր մատ-
ուռակ Լյասս կառավարչին հետ
Գարամանին և կէրմիամու իշխա-
նաց օգնութեամբ դէպ ՚ի Պրուսա
գնաց : Քաղաքին բնակիշները ի-
րենց մեծամեծաց հետ 100 մե-
ծագին օժոց ընծայ տուին, բայց
չուզեցին քաղաքին դռները բա-
նալ, խմացընելով որ սուլթան
Մուրատայ հաւատարիմ մնալու
համար երգում ըրած են :

Մուսթաֆա անկէ Նիկոյ վե-
րայ գնաց, որուն Ֆիրուզ պէ-
յի որդի Ալի պէյ կառավարիչը
քառասուն օր դէմ դրաւ :

Այս ապլստամբութեան լուրը
կոստանդնուպոլսյ վրայ բռնու-
թեամբ յարձակելու ատենը Մու-
րատայ հասնելով, անմիջապէս
պաշարումը վերցընել տռւաւ,
ու Ֆիրուզ պէյը Վալաքիոյ դէմ
գացող զօրաց հրամանատար, և
Լուրէնոսի որդին Շումէլիի վրայ
կառավարիչ գնելէն ետե, ար-
տորնօք Արիա դարձաւ : Բայց
երբ իր յառաջապահ գունդը
Նիկոյ առջևը հասաւ, թաշէտ-
տին Մուսթաֆայի վէզիրը՝ իշ-
խանը բաղնիքէն հանելով, ձի մը
հեծցուց և անոր հետ փախաւ :

* Բիւզանդացի պատմագիրները Օսման-
յաց առ քաշուելով հրաշւեք յաղթուիլը
կը ցուցունն ։ սակայն հետեւել պատճա-
ռը հաւանականագոյն կ'երեի:

Ոակայն Ելիաս պէջ Ոուսթաւ ֆայի մատառուակը Ոուրաւաէն կաշառք առնելով, բաղդախնդիր իշխանը բռնեց, ու սուլթանին տարաւ. Ոուրատ ալ հրամայեց որ այս երրորդ Ոուսթաֆանքաղաքին դիմացը գանուղող թղենիէն կախեն, և անոր դիակը Պըրուսա տարին թաղեցին. Իսկ Թաճէտոին վէզիրը փախչելու տտենը բռնեցին և կտոր կտոր ըրին:

Երբ Ոուրատ իր վերջին եղբօրը յաղթելու ետևէն էր, Ոինոպի և Գասթէմունիի Խսֆէնտիար իշխանը, Ոուսթաֆային ապստամբութիւնը յարմար առիթ սեպելով, Օսմանեան լուծը իր պարանոցէն թոթվելու փորձ կը փորձէր. բայց իր Գասորմ պէջ որդին իրմէ զատուեցաւ, ու բանակին մեծագոյն մասը անոր հետ Ոուրատայ կողմն անցաւ. Խսֆէնտիար նեղը մտնելով հնագանդեցաւ, ու իր աղջիկը անոր կնութեան տուաւ, և Գասթէմունիի լերանց հանքերը անոր յանձնեց (1423):

Ոի և նցն միջոցին՝ Եւրոպիոյ մէջ Ոուրատայ զօրապետները մեծամեծ յաղթութիւններ յառաջ կը տանէին. Ֆիրուզ պէջ դէպի հիւսիս Վլահաց դէմ պատերազմը շարունակեց. որոնց իշխանը հարկ և մեծագին ընծաներ տուաւ, և հաշոտութիւն խընդրեց. Իսկ Եւրէնոսի որդին դէպի հարաւ Յունաց դէմ թշնամութեան գործերը շարունակեց, ու Ալպանացւոց (Արնաւուտ) վրայ մեծ յաղթութիւն մ'ըրաւ:

Ոուրատ Եւրօպտ դառնալէն

տռաջ ուղեց իր վէզիրներուն թիւը նուազեցընել. քանզի տէրութեան գործերը տեսնելու համար հինգ վէզիրը աւելորդ կը սեպէջ : Եւրէնոսի երեք որդւոց (որոնք Ելիաս փաշա և Իպրահիմ փաշա վէզիրներուն տեղակալներըն էին,) Ումուր պէջը Կէրմիանու իշխան դրաւ, Ուրուժ պէջը Արիոյ մէկ կողմին կառավարիչ ըրաւ, և Ըլի պէջին Ոարուխանի կառավարութիւնը տուաւ : Ելիաս փաշային թշնամիները զինքը աբաստանեցին որպէս թէկ' կ'ուզէ սուլթանը գահէն վար առնել ու ինքը անոր տեղը նոտիլ : Օրմը՝ Ոուրատ ըստ դիպաց ձեռքը վէզիրին ուստին վրայ դնելով, իմացաւ որ անիկա ներսէն զրահաւորած է : Ի՞նչ է աս, հարցուց սուլթանը : և վէզիրին տուած պատասխանը, թէ զօրականներէն վախնալուն համար այսպէս զրահաւորեալ է, սուլթանին անոր վրայ ունեցած կասկածները հաստատեց, և հրամայեց Ոուրատ որ անոր աչքը կուրցընեն : Այսպէս վէզիրութիւնը միայն Իպրահիմ փաշային ձեռքը մնաց :

Ոուրատ Վդրիսնուազուս դարձաւ, ու Ոինոպի իշխանին աղջըկան հետ կարգուելու հանդէսին պատրաստութիւնները ըրաւ : Ոուլթանին սեղանին վրայ կերակուրները մեծարող Լիվան պէջը, որուն ցեղը յաջորդաբար աս արքունական ծառայութիւնը ու սուլթանին ամուսնութեանց վերաբերեալ առաքելութեան պաշտօնն ունէր, Խալիլ փաշայի այրիացեալ կնոջ հետ Ոինոպ

Խրկու եցաւ : Որուն կառավարի ք իրեն ինքնակալին վայելած պատուովը ընդունելութիւն տուաւաս դեսպաններուն , և իր աղջիկը անոնց յանձնեց : Խժանուհին որ համնէր՝ խիստ հանդիսաւոր տօնախմբութիւն ներ կը կատարուէր : Վդրիանուալիս համնելով՝ այնպէս մեծ փառքով մտաւ , որուն նման մինչ չե ան ժամանակը նոյն մայրաքաղաքին մէջ տեսնուած չէր . և խիստ շքեղութեամբ հարսանեկան հանդէսը կատարեցին : Վուկէ ետև Ոուրատ իր երեք քայրերուն հարսանիքը ըրաւ . որոնց մէկը Գասում պէյ Խսփէնտիարի որդին առաւ , երկրորդը՝ Փոքր Ըսիյ կառավարիչ Գարաճա չէլ չպին , և երրորդը՝ Խպրահիմ փաշաի որդին Ոահմուտ չէլէ պին : Այն տարին Ոանուէլ Յունաց կայսրը մեռնելով , Ոուրատ անոր յաջորդ Յութաննէս կայսեր հետ հաշուութիւն ըրաւ այն դաշնաքով՝ որ Ոեաւ ծովուն եզերը գտնուած բոլոր քաղաքները և ամրոցները յանձնէ , ու ինքը երեք հարիւր հազար փող կամերեսուն հազար վենետիկեան ոսկի հարկ վճարէ :

Ոուրատ Ոերվաց և Վահաց հետ բարեկամութեան հին դաշներունորդեց Ոաճառաց Ոիկիսմանտ թագաւորին ալ ոսկեկուուշուխա , մետաքսեայ դիսպակներ , չորս ոսկեզօծ ամաններ , չորս ոսկեծայր գաւաղաններ և տասը շքեղ օթոցներ դեսպանի մը հետ խրկեց որ երկու տարի գլուխադարումն ընեն : Ոիկիսմանտ ալ , աս ընծաներուն փոխարէն ,

երեք ոսկի գունդ , վեցը կտոր թաւիշ (Գապիֆ) , ինը կտոր երեք կարմիր , երեք սեաւ և երեք կապոյտաղնիւ չուխա , վեցը գեղեցիկ ձի , և երեք հազար Ոաճառաւստանի ոսկի (Յուլիս , 1424) :

Ոուլթան Ոուրատ իր սահմանակից տէրութեանց հետ բարեկամութեան դաշները հաստատելուն եաւ , դարձաւ վերստին ուխտագրուժ Շիւնէյտ իշխանը պատժելու համար , որ , ինչպէս տեսանք , Պայէղիստայ մեռնելուն ի վեր , Օսմանեան տէրութեան դէմ ապստամբողներուն հետ միաբանելով , մեծ իշխանութեան մը համնելու կը բաղձար : Տիւզմէ Ոուսթաֆային բանակէն իր եօթանասուն հաւատարիմ ծառաներուն հետ գիշերով փախչելով Օմիւռնիս հասեր էր . ուրուն բնակիչները իրենց քաղաքակից իշխանին գալուստը իմանալով բաղմութեամբ անոր կողմըն անցան : Վնոնցմէ չորս հազար քաջամարտիկ զօրքեր ընտրեց , ու Եփեսոսի վրայ քալեց , ուր Այտընի կառավարիչը անոր իր վրայ գալը իմանալով պատրաստ կը գանուէր : Շիւնէյտ պատերազմին մէջ իր ըսխուը անոր գըլուխը իջեցուց ու ձիէն վար գըլուրեց . պատերազմը վերջացաւ ու Շիւնէյտ իրեն խոստացուած Այտընի կառավարութիւնը ձեռք առաւ ինչուան երկու տարի , մինչ որ Ոուրատ իր տէրութեան սահմանները ապահովընելով , այն անզգամը պատժելու համար՝ Խալիլ Եախչի պէյ Պայէղիստայ քեռայրը , որ Շիւնէյտէն սպան-

նուտծ էր, անոր վրայ խրկեց : Երկու բանակները իրարմէ քիչ հեռանորութեամբ բանակեցան : Շիւնէյտայ Քիւրտ կրտսերագոյն որդին և եղայրը փորձ փորձել ուղելով, սխալեցան . Խալիլ զանոնք բռնեց և ուղղակի Վդրիա նուպօլիս խրկեց, ուրկից զդժայակապ կէլիպօլու խրկուեցան :

Շիւնէյտ տեսնելով որ իր եղայրն ու որդին գերի ինկան, Սամոս կղղւոյն դիմացը . Յոնիոյ եղեքը Խփսալա ըսուած ամնւր բերդը ապաստանեցաւ, որուն մէջ բաւական պաշար և ռազմամթեր պահուած կար : Մուրատ Շիւնէյտայ զօրութիւնը շուտով տկարացընելու համար, Ծիմուր թաշյ Ռւրուճ պէյ որդին, և Պայէզիտ փաշային Համզա պէյ որդին խրկեց անոր վրայ . որոնց գալը իմանալով, Շիւնէյտ ամրուցը իրմէ փոքր Պայէզիտ եղօրը յանձնեց, ու ինքը երեք նաւակով կիլիկիա փախաւ, ու Գարամանի իշխանէն օդնութիւն խընդրեց . բայց աս իշխանը խիստ մեծ գժուարութեամբ անոր ստակ և հաղիւ հինգ հարիւր ձիսւրոր զօրք օդնութիւն տոււաւ . քանզի Շիւնէյտ ուրիշ անդամ զինքը խաբեր էր :

Շիւնէյտ իր սակաւաթիւ գընդովվ Խփսալա եկաւ, որն որ Համզա պէյ յիսուն հազար հոգւով պաշարեր էր : Այնչափ զօրքաց գէմ դնելը անհնար կարծելով, հնաբքով մը ամրոցը մտաւ, և սկսաւ անկէ ուժով կոռուիլ թշնամեաց հետ : Աս ամրոցը ծովան եղեքը սեպացեալ ժայռի մը վրայ շնուած ըլլալով՝ երկար

ատեն դիմացաւ : Համզա պէյ իմացուց սուլթանին թէ առանց ծովային զօրութեան անհնար է ամրոցին տիրել : Մուրատ Շիւնէյտոց իշխանը երեք նաւով Խփսալա խրկեց ծովին կողմէն պաշարելու համար + Խնատեն Շիւնէյտ յուսահատեցաւ, ու երբ իր հետը Գարամանէն բերած հինգ հարիւր օդնական գումար ամառ անձնատուր եղաւ :

Բայց երբ Համզա պէյ, որ Շիւնէյտայ անձնատուր եղած ատենը կիֆեսոս կը գտնուէր գործի մը համար, իրիկունը դարձաւ, եղածը իմանալուն պէս չորս դահիճ խրկեց անոր վրանը, որոնք անոր խոր քունի մէջ եղած ատենը Շիւնէյտը իր բոլոր ընտանիքովը խղդեցին . գլուխնին Արքիանուպօլիս խրկեցին սուլթանին, որ հրաման խրկեց կէլիպօլու որ Շիւնէյտայ Համզա եղբայրը և Քիւրտ որդին սպաննեն : Այսպէս Շիւնէյտի գերդաստանը ջնջուեցաւ, որ քսան տարի շարունակ (Սամանեան կառավարութիւնը վտանգի մէջ դըրաւ (1425) .

Մուրատ, աս ապստամբ իշխանէն ազատելով, ինքն ալ Ասիա անցաւ որ իր տէրութեան սահմանները ամրացընէ : Կիֆեսոս հասած ատենը՝ կւրուպայէն և Ասիայէն դաշնակից տէրութեանց դեսպանները եկան իրենց իշխանաց խնդրակցութիւնը իմացընելու համար . Մուրատ Ալահաց :

Ուրվաց, Յունաց, Ճ'ենովացուց, Հուզողոսի իշխող ասպետաց գես պանները սիրով ընդունեց, և ամէնուն հետ բարեկամութեան գաշնքը նորոգեց, բաց ՚ի լի եւ նետիկցւոց. քանզի անոնք Յունաց կայսերէն թէնսաղօնիկէն գընելնուն համար՝ Ո՞ուրատ անոնց գէմ ոխացած էր :

Ասից քանի մ'իշխանութեանց մէջ նորանոր խոռովութիւններ ծագելով՝ Ո՞ուրատ պարտաւորեցաւ իր յաղթական սուրը անոնց վրայ դարձընել: Մէնթէչէի լինաս պէյ իշխանը երկու օրդի թողուցեր էր: Վհմէտ և Օվէիս, որոնք իրենց հօրը մահուանէն ետքը բռնուեցան ու կուդոկից տէրութեան բանտը նետուեցան: Երկուքն ալ՝ մէկը յարդի պարկի մը մէջ պահուելով, միւսն ալ վարսակի պարկի մէջ մտնելով, ազատելու միջոցը գտան: Օվէիս նորէն բռնուեցաւ և իր բանտապետին հետ սպաննուեցաւ, որ ծգեր էր զինքը որ փախչէ: Վհմէտ Պարսկաստան փախաւ, ու Ո՞ուրատ անոնց կառավարութիւնը Պալատան փաշախն տուաւ:

Ծէք.քէի Օսման պէյ իշխանը, Պարամանի իշխանին օգնութիւնը Վնթալիոյ սմիոցը պաշարեց, ու րուն Ֆիբուղ պէյ: Օսմանցւոց կողմանէ դրուած կառավարից նոյն միջոցին մեռեր էր, բայց անոր Ճամզա պէյ որդին Պարահիսարէն վաղեց եկաւ, ու Օսման Վնթալիոյ մօտերը հիւանդութենէ բռնուելով, Ճամզաժամանակ ունեցաւ զօրք ժողվել, ու թշնամեաց վրայ յարձակի: Օսման պատերազմին մէջը ըս-

պաննուեցաւ, և իր քյորը գերի բռնուեցաւ:

Պարամանի իշխանը Ո՞ուրատայ հետ ըրած բարեկամութեն ուխութը գրմեց ու Վնթալիոյ պաշարումը շարունակելու ատենը թընդանօթէ մը զարնուելով մեռաւ: Իր երեք օրդւոց մէջէն միայն Պարահիմ կըցաւ: Պարամանիա փախչիլ և իր հօրը դիակը հետը տանիլ: իսկ միւս երկու խսա պէյ և Վնթալի պէյ օրդիքը գերի բըռնուեցան և Ո՞ուրատայ խրկուեցան: Ո՞ուլթանը Պարահիմին մէկ գրօշ և մէկ թմբուկ խրկեց զան Պարամանի իշխանութեան մէջ հաստատելու համար, և բարեկամութիւնը նորոգուեցաւ Պարամանի մէկ մասը Օսմանէանց յանձնելով:

Վն միջոցներուն Վմասիոյ և Եւդոկիոյ շաղականները ելուզակները շատնալով, բնակիչները անհանգիստ կ'ընէին, որոնց գլխաւորներն էին Վրզըլ Գօճա Թիւրքմէնին չորս օրդիքը: Իւրբէճ փաշա, որ սուլթանին վաղեմի դաստիարակը, և ան միջոցին փոքր Վմիոյ կառավարիչն էր, և զինքը այնչափ սիրելի ըրած էր Ո՞ուրատայ օր իր անուամբը ստակ կըտրելու պատիւը ունեցեր էր, ճարտար հնարքով մը զանոնք ջնջեց: Ո՞ուլթանին անուամբը անոնց նամակ մը գրեց, և հրաւիրեց զանոնք որ Վմասիա ժողվուին ու խորհրդակցին թէ ինչպէս Վլ փարսլանի որդւոց վրայ յարձակին, որոնք Ճանիկի ծովեղերեայ կողմերը ամրացեր էին:

Եւ որպէս զի դիւրութեամբ իր մտադրեալ որոն գայթը ՚ի գործ

դնէ , Իւրբէճ փաշա իր բանակը քովէն հեռացուց , զինքն Վմասից մէջ հիւանդ ձեւացուց , ու իր որդին ընծաներով անոնց առաջը խրկելով , ներումն խնդրեց իր հիւանդութեան պատճառաւ գալ չկրնալուն համար , և զանոնիք Վմասիա հրաւիրեց : Այս հընարքը յաջողեցաւ . Թիւրբէն ներն (Օսմանցւոց վրայ ամեննեին կասկած մը չունենալով ու անոնց ցուցըցած բարեկամութեանը նայելով , անոնց հաւատացին . Օսմանցիք մեծ պատառվ ընդունելութիւն տուին , և փառաւոր խնջոյք մ'ըրին . բայց երբ Թիւրբէն ներն ինքզինքնին բոլորովին ուտելու և խմելու տալով , գիշերը քունէն և արբշուութենէն թմբերեցան , Իւրբէճ փաշա նոյն տեղը հասաւ , զանոնիք ամենքն ալ զղմայի զարկաւ ու ըստարերկրեայ բանտի մը մէջ նետեց . դուռը հիւսեց ու կրակ տուաւ անոր . չորս հարիւր Թիւրբէնները մուխէն խղուեցան : Այս ընելէն ետե անոնց բընակած տեղը գնաց , և անոնց հարստութիւնները կողոպտեց :

Այս կոտորումէն եօթն օր ետե՝ երբ Իւրբէճ Վմասիա վերադարձաւ , պառաւ կին մ'անոր ոտքն ինկաւ , և թախանձեց որ իր որդւոյն մորմինն իրեն յանձնէ , որն օր Թիւրբէններուն մէջէն չէր , կ'ըսէր , այլ այն իրեկուն ըստ դիպաց անոնց մէջ գտնուելով , անոնց հետբանտարկուերէր . Ազաւանքն ընդունուեցաւ , և խանդակաթ մայրը չորս հարիւր դիականց մէջ փնտռեց ու իր որդւոյն մարմինը գտնելուն

պէս իսկոյն անոր վրայ ինկաւ սրտաձմիկ լոցերով : Մեծ ու րախութեամբ տեսաւ որ տակաւ ւին կենդանութեան նշան կայա նոր վրայ . առաւ զան ու իր տունը տարաւ , և այնչափ գեղերը բաւ , որ առողջացուց զան :

Իւրբէճ հրամայեց որ Թիւրբէններուն դիակները չժաղեն , այլ բաց տեղը նետեն երկնից թռչուններուն և երկրի գազան ներուն կերակուր ըլլալու համար :

Իւրբէճ փաշա նոյնպէս դաւա ձանութեամբ մը Գօճա - դայա ամբոցին տիրեց , որ (Օսմանճը) մօտերը սեպացեալ ժայռի մը վրայ շնուած է : Անոր Հայտէր իշխանը , ամբոցին անմատոց դըրեցը , և ունեցած ուազմամթերին վրայ վատահ ըլլալով , անհոգ կենար , և ամեննեին անկե դուրս չէր ելլեր : Իւրբէճ ուրիշ միջոց չտաաւ զան յաղթահարեւ լու , բայց եթէ իր աղջիկը Հայտէրի մօտերիմ բարեկամ : Թայշ փուրին կնութեան խոստանալով , բերդին համբարանոցները և զինարանները կրակ ձեւ տուաւ . որով Հայտէր պարտաւորեցաւ անձնատուր ըլլալու (4427) :

Արկէ ետե՝ Իւրբէճ փաշա Շանիկի բերդն առնելու կը ջանար , որ Հիւսէլին պէջ Թիւրբէն իշխանին ձեռքն էր : Վսիկա գուշակելով որ պիտի չկրնայ (Օսմանեանց զօրութեանը դէմ դնել , և կամ անոնց դաւաճանութեան զոհ պիտ'ըլլայ , ինքնին իր բերդին բանալիները Իւրբէճին բերաւ . սակայն փոխանակ ազատութիւն ստանալու , Պրուսա բանտարկուեցաւ : Հիւսէլին հը

նարքով մը անկէ փախաւ ու սուլթան Վուրատայ քովը գնաց, որ անոր կենացը խնայելէն զատ՝ իումէլիի կողմը կուռակալութիւն մը տուաւ :

Այ միջոցին Կէրմիանու իշխանը Վուրատայ ըրած յաղթութիւնները լսելով, և անոր բարեկամութիւնը շահել ուզելով, անոր այցելութեան եկաւ Ադրիանուպօլիս : Վուրատ անոր առաջը ելաւ և մեծարանքներով պատուեց զան : Իշխանն աւ անոր այսպիսի ընդունելութեանը պատաժանելու համար, ՚ի դարձին՝ այնչափ առատաձեռն գտնուեցաւ, և իր ուղղեկիցներըն ու առաջնորդներն այնչափ շռայլութեամբ լարձատրեց որ Կէլիպօլու հատած ատենը, ծովէն անցնելու համար բնաւ դըրամը չէր մնացեր : Ուստի նամակով մը Սուլթանին իր պէտքն իմացուց : Վուրատ որ անոր երկիրներուն աչք ունէր, այսպէս ծառայութիւն մ'ընելու առիթը չփախցուց : նամակը կարդալէն ետեւ՝ ստակի մեծ գումար մը իրկեց : Շատ չանցաւ իր առատաձեռնութեան պատուղը քաղեց : տարի մը մ'ետքը՝ իշխանը մեռաւ, և իր երկիրները սուլթան Վուրատայ թողուց :

Այ գործքերը Ասիս մէջ պատահած ժամանակը՝ Եւրոպից մէջ ուրիշ խռովութիւններ ելելով, Վուրատ պարտաւորեցաւ իր զօրութիւնը հոն շարժելու : Վերալոյ Ստեփան Լաղարովիչ իշխանը մեռնելով, տեղը յաջորդեց Դէորդ Պրանքովիչ իշխանը : Ստեփան Լաղարովիչին մահուանէն

ետեւ Վաճառաց ձեռքն իշխալու քաղաքներուն գաշտնց մէջ, ամենէն երեւելին էր Քոլումպաղ, կամ ըստ Տաճկոսց՝ Կէօլիքաջինիք քաղաքը, այսինքն՝ աղաւնի Ումէնտրէ և Օրշովա քաղաքաց մէջ տեղը Դանուապ գետին աջ թեկին վրայ շնորհած : Բայց մեռնող իշխանը աս քաղաքը նախարարի մը յանձներ էր իր 12 000 սոկի պարտքին տեղը : Աիկիսմնուտ Վաճառաց թագաւորը չուզելովնոյն գումարը վճարել . նախարարը իր գրաւը չկորսնցընելու համար որոշեց որ քաղաքը Օսմանցւոց ձեռքը յանձնէ : Սուլթան Վուրատ գեաց որ զան պաշտպանէ : Աիկիսմնուտ զինադադարում մը խնդրեց, ու աս առթիւ կրցաւ ծովէն ու ցամաքէն քաղաքն ամերացընել, ու երբ Դանուապը կ'անցնէր, Օսմաննեանք զինադադարման դաշտնց չնայելով, անոր զօրուց վրայ յարձակեցան ու մեծ ջարդ տուին : Երբ Աիկիսմնուտ թագաւորին հեծած նպւը գետեղքէն հեռացաւ, քաջ զինուարին մէկը փոքր ձի մը հեծաւ, ու միայն երկու հետևակ զօրքով Տաճկաց վրայ յարձակեցաւ, որոնք զան Վաճառաց թագաւորը կարծելով, սպաննեցին : Դէորդ Պրանքովիչ Սերվաց իշխանն աւ Վուրատէն հաշտութիւն ուզեց, և պարտաւորեցաւ յիսուն հաղար սոկի տարեկան տուբբ վճարել, Վաճառաց հետ ունեցած բոլոր յարաբերութիւնները դադրեցընել, և Օսմաննեանց նիզակից կակից ըլլաւ :

Այ պատերազմէն ետեւ, որով Վուրատ Ռումիլիի սահմանադը-

լուիսը՝ Քոլումպաղ և Հրշովա
երկու քաղաքները շահեցաւ, ու
րիշ աւելի յաջող յաղթութիւն
մունեցաւ թեսազոնիկէի մէջ ,
որուն բնակիչներն (Օսմանցւոց
ասպատակութիւններէն ձանձ
րացած , և բիւղանդեան կայսե
րէն յօյսերնին կորելով , իրենց
քաղաքը Վենետիկցւոց ծախեր ,
և իրենց քաղաքապետ՝ կայսեր
Վնդրոնիկոս եղացը ետ խրկեր
էին : Մուրատ աս բանիս վրայ
քարկացաւ , ուրիշ տէրութեանց
հետ հաշտութեան դաշինքը նու
րսգեց , բայց Վենետիկցւոցը
մերժեց . անոնց կողմանէ եկող
դեսպաններուն այսպէս պատաս
խանտուաւ . “ թեսազոնիկէն իր
Պայէզիտ հաւս առած ըլլալով ,
պէտք էր որ ինծի ինար իրրե
հայրենի ժառանգութիւն . Փը-
ռանկը ի՞նչ իրաւունք ունին այն
քաղաքը ճախու առնելու : Կայ
թող իրենց երկիրները քաշուին ,
և կամ ինքը անձամբ պիտի գայ
զիրենք պատժելու ՞ : Յունաց
դեսպաններուն ալ այսպէս ը-
ստաւ . “ Եթէ թեսազոնիկէն կայ-
սեր ձեռքը մասցած ըլլար , ամե-
նենին միտք չունէր անոր դպշե-
լու . բայց չկրնար իր և Յունաց
իշխանութեանց մէջ Վենետիկ-
ցւոց քաղաքը տեսնել ” : Ի 14
Փետրուար 1430 , Մուրատ Վարի-
սոնուպօլէն Աէրէղ եկաւ , ուր
ինքզինքը զեղսութեան և զքօսա-
նաց տուաւ : Արևայէն Համզա
սլէյը կանչեց և խրկեց որ թե-
սազոնիկէն պաշարէ : Օսմանեան
զօրքերը հարիւրապատիկ աւելի
էին պաշարուողներէն , և ամբա-
կաններն այնչափ սակաւաթիւ է-

ին , որ մէկ հոգի երկու երեք
մարտկոցներու վրայ կը ծառա-
յէր : Կիրակի օրը , այսինքն՝ 26
Փետրուար 1430 կէս դիշերին ա-
հազին երկրաշարժ մը պատահե-
ցաւ , որ պարսպին մէկ մասը փը-
լելով , Օսմանցւոց դիւրին ճամ-
բայ մը բացաւ : Պարապ տեղը
Համզա պէտ երեք անգամ յոր-
դորեց զանոնք որ անձնատուր
ըլլան , խստանալով անոնց որ ի-
րենց կենացը ինայէ , և քաղա-
քացւոց աղատութիւն տայ . Վե-
նետիկցիները չուզեցին մտիկ ը-
նել , իսկ Յոյները քաշուեցան :

Փետրուարի վերջին դիշերը՝
Մուրատ հրամայեց որ հետեւեալ
օրը ընդ հանուր յարձակում մ'ը-
նեն , բնակիչներն անոնց հարու-
տութիւններով մէկտեղ իր զօ-
րաց ըլլայ , և միայն երկրին հո-
ղն իրեն թողուն : Վաղաքին բը-
նակիչներն եկեղեցիները վաղե-
ցին , և իրենց թշուառութեանը
վրայ կ'ողբային ու օգնութիւն
կը կանչէին :

Վենետիկցիները պարսպին ամ-
րականներուն մէկ մասը , որոնց
բոլորը հաղիւ 500 հոդիի կը հաս-
նէր , ներս քաշեցին , ու նաւա-
հանդստին կողմը տարին վախնա-
լով որ իրենց հասարակապետուէն
նոյն օրը հասած երեք ցռկանա-
ւերը Տաճիկները չայրեն :

Հետեւեալ առտու լուսնալուն
պէտ՝ Օսմանեան զօրքերը սան-
դուզներով , խրամները լեցընե-
լով , կատարութեամբ քաղաքին ա-
րեւելեան և արևմտեան կողմէրը
յարձակեցան : Վրեւելեան կողմի
պարիսպն աւելի անզօր ըլլալուն
համար , Օսմանեան խիստ քաջ

զինուորներն ան կողմն անցան . Խակ ինքն Վուրատ իր ներկայուածեամբն իր զօրքերը և ականահատները կը քաջալերէր ; անոնց պարգևներ կու տար և խոստամունքներ կ'ընէր : (Օսմանցւոց կողմէն արձակուած կարկուտինը ման նետերը չէին թողուր որ մէկ Վենետիկցի մը պարիսպներուն վրայ երեխ . և միայն ըստ դեպաց քարեր կը նետէին պաշրողաց վրայ , որ անոնց սանդուղներով վերելակելնին արդիւլեն : Այսու ամենայնիւ շատ զինուորներ սահմգուղքին կէսը չի հասած՝ անոնց վրայ նետուած քարերէն կը գահավիմէին . վերջապէս զինուորին մէկը սուրն ակռաներով բռնած աշտարակի մը գագաթը հասաւ , ու վենետիկցի մը սպաննելով գլուխը վար նետեց , միւս Վենետիկցին ները կարծելով թէ բոլոր պարիսպն առնուեցաւ շուսպաւ ըստ կախչիլ . ան ատեն բոլոր սանդուղները (Օսմանեան զօրքերով լցուեցան և պարիսպը թըլրուեներու ձայներով առնուեցաւ :

Վենետիկցիներէն որը՝ բերդին գետնափորերուն մէջ գացին սողեցան , որը՝ խրամներուն մէջ , որը գէպ ՚ինաւահանդիմոր կը վաղէր . յուստովով որ հանթնամեաց ձեռքէն ապահովը լրայ . բայց (Օսմանեան զօրքերը այն կողմէն ալ ներս մտնելով , սովորալի տեսարաններ ՚ի գործ գրուեցան : Իւրաքանչիւր Տաճիկ առջեւ գունդ մը գերի ձգած , Օսմանեան բանակը կը քչը Հաւալի բաւակը մ'էր տեսնել կա-

նանց և տղայոց աղաղակը , մեռեալներուն ձչիւնը , ծերոց հառաջնքը , զաւակաց իրենց ծնողաց գրկէն բաժնուիլ : Եօթն հաղար հոգիի չափ գերի բռնուեցան ու զղթայի զարնուելով (Օսմանեան բանակը տարուեցան . Տուները և պալատները աւերեցին թողուր որ մէկ Վենետիկցի մը պարիսպներուն վերելակելնին կամ կտոր կտոր ըրին : Դեմետրիոս սրբոյն գերեզմանը բացին անբաւ գանձ գտնալու յուսուլ , և անոր մարմինը յօշեցին :

Այսպէս ահա թեսաղնիկէ * քաղաքը այսպիսի աղէտիւք (Օս-

* Զիայ այնպէս կին և երեւլի քաղաք մը , որ գարերուն շրջանին մէջ ցաւալի տղէաներ չի կրէ , թշնամեաց անգթութեան զոհ չըլւայ , ինչուն և թեսաղնիկէ քաղաքը : Աս քաղաքը առաջ չաղիս և թէրման կ'ըստէր . Աւճն Աղքամնդրի փեսան զան նորէն չինելով , իր կնոյն անուամբը թեսաղնիկը կոչէր : Երկար ժամանակ Յակիրութեան ժամանակը համբաւաւոր հանդիսացաւ . աս վերջնները քաղաքը ճարտարապետութեան մեջամ. Ժիշտու կարաներով շքեղացուցին : Ենիճէ . Վարտար քաղաքը նայող գուռը մինչեւ ցայոյօց յաղթական կամարով մը շինուած է , որն որ քաղաքին բնակիչները Օկտավիանոս և Անտոնինոս աշխարհականերուն համար կանկնեցին : Ներոն կոսնթացի ձեռով ուիւներ կանդնեց , ուրոնց վրայ Երկու կտրդ Յունաց գեղեցիւն աղձանները դրաւ : Թեսաղնիկէն Արաբացոց բանութեանը զոհ եղաւ , ու հազիւ 100 լիտր ոսկի տաղավ աղատեցաւ . Կորմանացի ծալսապտակները Արաբացոցմէ աւելի շատ չառուցին առ քաղաքին . որոնք Սկիլս Գուլբէլման թագաւորին առաջնորդութեամբն եկան , Եկեղեցները ու գերեզմանները պիտեցին , քաղաքը աւերեցին , բնակիչները կոսորցին : Մուրատ Ա. Խայրէտուքին փաշային ձեռքովը թեսաղնիկէն առաւ (1386) . Ետքը Բիւղանդացոց անցաւ , նորէն Պայէղեատ առաւ (1364) , ասկայն առ սուլթանին մակուանէն ետեւ . Օսմանեանք իրենց անտերընըութե ժամանակը կորուն-

մանցիք տուին : Ծայց Մուրատ չուղեց որ քաղաքը անմարդաբը նակ մնայ , երբ գերիներուն ծը նողքը կամ բարեկամները անոնց փրկանքը տուին , հրաման ըրաւ որ իրենց քաղաքը երթան , ու իրենց բնակութիւնը վերստին անոնց տուաւ : Այն տուները , որոց տէրերը չգտնուեցան , Տաճիկ գաղթականներով լեցուց . եկեղեցիներէն շատերը մշկիթի փոխեց , ոմանց քարերը հանեց ու Վարիանուպօլիս խրկեց , հոն իրեն շինած բազնիքին դործածեւ լու համար . իսկ վանքերը կարաւանաց իջևաններու փոխեց :

Ինը Հոկտեմբեր 1431ին , Կանա եայէն գեսպաններ եկան Մուրատայ ու իրենց քաղաքին բանավիճերը բերին , այն դաշնիքով որ նոյն քաղաքին բնակիչները սուլթանին կառավարութեան տակը իրենց ազատութիւնը պահեն : Այդաշնիքը ընդունուեցաւ , և սուլթան Մուրատ բանավիճները ընդունելով , իր ստորագրութիւրաբունի հրովարտակ մը տուաւ գեսպաններուն : Այս միջոցին տասն և ութը վերակացուներ խրկուեցան Սուլթանին կողմէն որ քաղաքին իջևեն : Ասոնք հոն հառնելուն պէս , իրենց առաջին դործքը , դաշնաց հակառակ Ա .

Յուցին , Մէհմէտ Ա . նորէն առաւ , Ետքը գարձեալ Յունաց ձեռքն անցաւ , որնք Վէնետիկուց վաճարեցին : Այսպէս թէւ անդադար աւերմունքներ կրեց թեսաղոնիկէն ասկայն իր գեղեցիկ գրիցը պատճառաւ , միշտ ծաղկեալ քաղաք մը , ու Թբակիոյ , Թեսաղիոյ և Քումիլի առուտերին կենդրոնն եղած է : Քաղաքին տուները ամփիթէատրոնի ձեռվ կ'երեին : Բնակիչը 80 000ի կը հանի . որոց 50 000ը Տաճիկ են , մացածը չըկայ Ցըն և Հոյ :

Միքայէլ անուամբ եկեղեցին և ամրոցները քանդեցին , ու քաղաքին ազիկներէն յափշտակեցին : Իսկ ինքն Մուրատ կէլիսկուլւ դնաց , որն որ ծովին կողմէն Վէնետիկուց Վնդրէաս Մոչէնիկօ ծովակալը կը զարնէր . հոն Վէնետիկուց հետ հաշոռութիւրաւ :

Այս տարին , ինչպէս նաև անկէ առջի տարին՝ Խիստ մեծ գիշպուածներ պատահեցան . սովոր , ժանտախտը , և յաճախ սասանութիւնները մեծամեծ կոտորածներ ըրին եւրոպական մասին մէջ . Սուլթանին Եղուսուփ և Մահմուտ երկու եղարքը , Մէհմէտ Պուխարի ծերունին , որ Մուրատ Ա . էն մինչև Մուրատ Բ . Օսմաննեան պետութեան մեծամեծ ծառայութիւններ ըրաւ . Այլաղ փաշա վէզիրը , և Խորահիմ փաշա մեծ վէզիրը ժանտախտէն մերան . ասոնց վրայ Մուրատայ Մէհմէտ որդին ծնելով (1423) , Մուրատ միիթարեցաւ :

Վլատ Տրագուլ* անունով իշխանին մէկը , Տան Վալաքիոյ ժառանգ իշխանը մեռցուց ու ինքն անոր տեղն անցաւ ու ուղեց Մուրատայ հետ հաշոռութիւն ընկել : Մուրատ ուղեց օրինաւոր ժառանգին իրաւունքը պաշտպանել և անօր վրայ գունդ մը զօրք խըրկեց . Վլատ անոնց յաղթեց , բայց սուլթանին հարկ խոնտանալով իր իշխանութեան մէջ հաստատուեցաւ :

* Տրագուլ կը նշանակէ Վլահաց լեզուով առանց . Վլատ իր դիւական անգթութեանը համար Տրագուլ կոչուած էր :

Վուրատ թրանսիլվանիա անցաւ ու աւերեց զան . իսկ հետևեալ տարին (1433) , Վաճառաց Վիկիամոնտ թագաւորը նորէն իշխանութիւնը ձեռք առնելով , Վուրատ անոր հետ ունեցած բարեկամութիւնը նորոգելու համար , ոսկեկուռ հանդերձներ և ոսկւով լեցուն երկուտառան օսկեղէն բաժակներ ընծայ խրկեց անոր տասն երկուգետսպաններու ձեռքով , որոնք Վիկիամոնտ ընդունեց , և անոնց փոխարէն ընծաներով արձակեց զանոնք :

Այս բարեկամութեան հակառակ Վիկիամոնտ գաղտնի թղթակցութեամբ Գարամանի իշխանը ոտք հանեց Օսմանեանց անոր նախորդ իշխաններէն առած երկիրներուն վերստին իշխելու համար . Իպրահիմ պէյ Գարամանի իշխանը Թիւբըմէններուն Վիւէյման պէյ իշխանին գեղեցիկ ձին խարէութեամբ մը գողնալ տուաւ , ամիկա ալ Վուրատայ գանգատեցաւ . երբ Իպրահիմ պէյ չուղեց ետ դարձընել զան , պատերազմ բացուեցաւ մէջերնին : Անատեն Վուրատ իր զօրաց հըրամանատարութեանը Վարլճէ փաշյին տուաւ , և ինքն անձամբ Վրիա անցաւ . անմիջապէս Պէկչէհրի , Վշչչէհր և Վկոնիա քաղաքները իրեն հնապանդեցան : Իպրահիմ փաշա Վիլիկիա փախաւ , և իշխանի մ'ու իր կնոջն աղաւանիքով , որ Վուրատատայ քոյրն էր , հաշտութիւն խնդրեց : Վուրատ հաւանեցաւ , ու առած քաղաքները ետ դարձուց . բայց նորէն Վւրոպա դարձաւ ապստամբեցը

նող թագաւորը պատժելու :

Պրանքովիչ իշխանը , որ նոյն ապստամբութեան համախոհ էր , ինքզինքը սուլթանին բարկութենէն աղատելու համար , ժամանակ չկորսնցուցած գեսողաններ խրկեց սուլթանին՝ աղաջելուղան որ իր Վարա աղջկան հարսանիքը կատարէ , որուն հետ քանի մը տարի առաջ նշանուած էր : Վուրատ հաւանեցաւ , և իշխանուհին Վերվաց և Օսմանցւոց մէջ հաշտութեան գրաւ մ'եղաւ :

Ենուհետեւ Վուրատ Վլի փաշա Վւրէնսոսի որդին Վաճառաց վրայ խրկեց , որ Վերվաց և Վլահաց նիղակակից զօրքերով գընաց մինչև թրանսիլվանիա մտաւ , Վէտեաշ քաղաքն առաւ , Պրաշվան այրեց , և քառասուն և հինգ օր շարունակ երկիրը աւերեց , ու եօթանասուն հազար գերի բռնեց ու Վուրատայ տարաւ :

Են ձմեռը Վուրատ սերվիոյ իշխանուհւոյն հետ ամուսնուաթեան հանդէսը կատարեց . բայց գարնան մօտ (1438) , Վւրէնսոսի թագ պէյ որդւոյն հրապուրամնօքը , Վուրատ վերստին Վերվաց իր աներ թագաւորին և թրանսիլվանիոյ իշխանին վրայ յարձակելու կը խորհէր . զանոնք իրենց տղաքներովն իր քով կանչեց : Պէտք Պրանքովիչ Վերվաց իշխանը Վէմէնտրէ քաղաքն ամրացուց , իր Պրիգոր անդրանիկ որդւոյն յանձնեց , և ինքն իր գանձերով և կրտսերագոյն որդւով Վաճառաց Վլահէրթ թագաւորին բով վրայաւ : Իսկ Տրագուլ փախչէլու ժամանակ չունեցաւ և Վէ-

լիպոլուի աշտարակին մէջ բանատարկուեցաւ . բայց իր երկու որդիքը պատահնդ տալով, որսնը իբրև գերի Հսիա խրկուեցան, և երդում ընելով որ անդրդուելի հաւատարիմ պիտի մնայ, աղաւեցաւ ու իր իշխանութեան մէջ վերստին հաստատուեցաւ :

Ուուրատ երեք ամիսի չափ Աէմէնտրէն պաշարեց, որ առեն Իօհագ պէջը Վէքքէէն ու խոտառութենէ դառնալով, Օսման Զէլէպի թիմուրթաշայ թոսոին հետ Աէմէնտրէի վրայ յարձակեցան, ու առին : Պրանքովիչ որդւոյն աչքերը այրեցին, ու Եւդոկիոյ բանտը խրկեցին :

Իսհագ պէջը և Օսման Զէլէպին Նիկոպոլսոյ վրայ քալելուատեննին՝ Վաճառաց գնդիմը Օսմանեան երկիրներուն վրայ յարձակիլը լսեցին . անմիջապէս իրենց ընթացքը առնոնց գէմ գարձուցին : Ասոկալի պատերազմէ մ'ետե՝ Վաճառները փախան , ու Օսմանեանք այնչափ գերի բոնեցին, որ իւրաքանչիւրը մէկ կօշիկի հետ կը փոխէին . և Աշդ փաշա զատէ օսմանեան պատմագիրը, որ նոյն պատերազմին մարտիկներէն մէկն էր, կ'ըսէ թէ հինգ գերի 500 փողի հաղիւ կը ցերէ ծախել : Պարապ տեղը Ալպէթ Աէմէնտրէն առնելու փորձ փորձեց . Օսմանեանք Վաճառաց զօրքերուն վրայ այնպէս վախ ձըգեր էին, որ իրենց միակ երես պէտքէն անոնք կը փախչէին Պայլը, գայլը, պոռալով :

Ուուլթան Վուրատ, որ իր իշխանութեան սահմանը ընդարձակելով, կ'ուզէր միշտ հեռաւ

ւոր տէրութեանց հետ քաղաքական յարաբերութիւններ ունենալ, բարեկամութեան նամակներ կը գրէր Եգիպտոսի սուլթաններուն, Պարամանի իշխանին, Վահրուխ թիմուրի որդւոյն, և անոնց հետ կը թղթակցէր : Վ լատիխալաւ Եւհաց թագաւորին հետ ալ կ'ուզէր բարեկամութի ստանալ . ուստի անոր գեսալաններ խրկեց, անոր հետ բարեկամութեան դաշնիք ընել խոստացաւ, եթէ Վ լատիխալաւ Վաճառաց հետ ունեցած բարեկամութիւնը աւրէ, և թողու որ Պազիմիր անոր եղայրը Պոհեմիոյ իշխանութիւնը վարէ . բայց այն միջըն Վաճառաց Ալպէթ թագաւորը մեռնելով (1440), Վ լատիխալաւ պատասխանեց թէ երբ ինքը Վաճառատան գայ ան ժամանակը դաշնայ վրայ կը խօսի : Անմիջապէս Անուրատ հըրամայեց Ալպէթ Եւրէնոսի որդւոյն որ Պէլկրատը պաշարէ :

Ոինչեւ հոս սուլթան Անուրատ միշտ յազթող հանդիսացաւ, ամէն արգելքները ջնջելով շուտով իր նպատակին կը հասնէր : Բայց աս անդամ նոյն բազդը չունեցաւ . Պէլկրատ քազաքին խիստ ընդդիմակալութիւնը, որուն պաշարումը վեց ամիսէն ետև վերցուց, իր պարտութեանց սկիզբը եղն եղաւ :

Վէլլոտ պէյ , - որ 40 տարի առաջ Պայէղիտայ ժամանակը Վէհէմէտ իշխանին և Պայէղիտ փաշային գէմ Անբաստիս քաղը պաշտպաներ էր, բազմաթիւ զօրբով Վալաքիսյէն թրանսիլվանիա անցաւ (18 Անրո 1442)

և Սիսլին (Հերմանշթատ) քառաքը պաշարեց . աս պատերազմին մէջ երեցաւ Վաճառաց առնուանի Յովհաննէս Հունիատ* զօրապետը . Վէղիս պէյ խոսուացաւ որ նիւ ոք Հունիատը կենդանի կամ մեռեալ իրեն բերէ , անոր զրահները և ձին անոր տայ: Հունիատ լոտեմներէ աս բանը իմանալով , իր նիզակակից Սիման զօրապեալին հետ իր զրահները փոխեց , որուն չորս կողմն անցան Օսմանեանք : Սիման երեք հազար քաջ զինուորներով պատերազմէլէն ետեւ անոնց զոհ եղաւ: Բայց քաղաքին պահապան զօրքերը թշնամեաց վրայ յարձակեցան , և Օսմանցւոց բանակը տարուած գերիները աղատեցին: Վէղիս պէյ իր ձիաւոր զօրքով վախչելու ատեն իր որդւոյն հետ սպահնեցին . զինքը : Հունիատ թշնամեաց ետեէն ինկաւ , ու մինչեւ Դանուալէն անդին հալոծեց զանոնք : Օսմանցւոցմէքը սպահ հազար հոգի պատերազմի գաշտին երեսը ծածկեցին : Հունիատ Վաճառաց Վէրորդ Պրանքով նիզակակից իշխանին մէկ կառք բեռնաւորած աւար խըրեց , որն որ հազիւ տասը ձի կըրնային քաշել: Վէղիս պէյին և անոր որդւոյն գլուխները աւարին վրայ անկած էին .

Այս պարտութեան վրէժն առնելու համար Շէհապէտին փաշան ութուուն հաղար Պատերազման առնուանի է . և Եանդօ կըսէն , ոք կը նշանակէ արձագանդ :

այն իր փակեղը (սարք) տեսնելով . բանի մ'օրուան հեռու տեղ պիտի փախչին : Հունիատ անորդիմացն ելու տան և հինգ հազար զօրքով միայն , բայց միոքը դրեր էր որ կամ յաղթէ և կամ մեռնի : Երկու բանակները ճակատ առ ճակատ պատրաստուեցան . Հունիատ իր զօրքերը յորդորեց , անոնց եռանդը վառեց , ու Օսմանցւոց վրայ յարձակելով , յաղթութիւնը տարաւ: Շէհապէտին հինգ հազար Օսմանցւոց հետ գերի բռնուեցաւ , Օսման պէյ զօրապետը և ուրիշ քաջ զօրավորները պատերազմին մէջ ինկան :

Հետեւալտարին (1443)՝ Վաճառք , Լեհք , Վերլացիք , Վըլսհք և Վերմանացի խաչակիր զինուորները Պրանքովից իշխանին առաջնորդութիւնը : Օսմանցւոց վրայ եկան : Դանուալը անցան և մինչեւ Վէմէնարէ հասան . Հունիատ տան երկու հազար ընտիր զօրքով մինչեւ Նիշ անցաւ , իսկ Վլատիսլաւ թագաւորը քսան հազար զօրքով երկու օր հեռաւորութեամբ ետեէն կ'երթար : Առաջին մեծ պատերազմը Նիշմոտ եղաւ: Օսմանեան զօրքերը երեք քաղկի բաժնուած յաջորդաբար թշնամեաց վրայ յարձակեցան , բայց յաղթուեցան : Օսմանեան զօրավարներն էին Իսա պէյ Լեռէնոսի որդին , Յանրազան պէյը , Վիսինի և Սոֆիայի իշխանները . իրենցմէ 2000 հոգի մեռան , 4000 հոգի գերի բըռնուեցան : Քրիստոնեայք Սոֆիան ալ առնելէն ետեւ Փիլիպպեալուի վրայ գացին :

* Այս զօրապետը Օսմանցւոց մէջ ալ անուանի է . և Եանդօ կըսէն , ոք կը նշանակէ արձագանդ :

Վուրատ Վաճառաց մօտենալը իմանալով, Ոուլու Տէրպէնտ արևելեան կողմէն և Խոլատի կամ Ալաթիցա գետը արևմտեան կողմէն երկու կիրճերը գոցեց ու անսնց առջելը պատքաշեց . ձըմեռուան ձիւնը և սառը իր պաշտպանութեանը օդնեցին : Վուրատ հրամայեց որ գիշերը ձիւնին վրայ ջուր թափեն , որպէս զի սառոյց բռնէ : Ասկոյն թշնամիները իրենց զօրագլխին խրախուսանօքը սառոյցներուն վրա ելան և Ոուլու Տէրպէնտի կիրճը գոց գտան . գարձան ան ատենը ու գետին կիրճէն մտնելու փորձ փորձեցին : Հոս իրենց թշնամիներէն զատ ձեան հիւսերուն դէմ պատերազմէլու պտրուառած էին , որոնք հատոր առ հատոր իրենց վրայ կ'իյնային . այսու ամենայնիւ յաղթեցին ու առանց գժուարութեան Շուլզարաց երկիրներուն տիրեցին :

Եալվաց գաշոին մէջ վերջին մէջ պատերազմ մ' ալ եղաւ , որուն մէջ անձամբ կը գտնուէր նաև Վլատիխլաւ Լեհաց թագաւորութ : (Օսմաննեանք յաղթուեցան , և Գասորմ պէյ Շումէլիի կողմնապետը և Վահմուտ- Զէլէպին գերի ինկան : Հունիատ հարիւր և եօթանասուն գերի սպաննել տուաւ , և երկու պէյերուն հետ յաղթանակաւ Օֆան գարձաւ :

Առ գործքերը Եւրոպից մէջ կատարուած ժամանակը՝ Գարամանի իշխանը Վաճառաց գաղտնի գրգռանօքը երրորդ անգամ ապրատամբեցաւ : Կուտինա , Գաշուար , Պիւլավէտին , Ախու-

հիսար , Վահիսար , Վաշէհիր և Պէկչէհիր քաղաքները ասպատակեց : Վուրատ սահմանագլուխուներուն պաշտպանութիւնը իր գօրապետացը յանձնեց , և ինքը Սոխ վերադարձաւ : Իկոնիա , Վարէնտէն և ուրիշ քաղաքները ունակոխ ընելով Գարամանի իշխանը պատճեց : Վաճառաց արշաւանքը , որ իր ներկայութիւնը Եւրոպա կը կանչէր , պարտաւորեց զինքը որ Գարա Վուրուրի Գարամանի վէզիրին ազաշանոցը համոզուի ու անոր հետ հաշտութիւն ընէ :

Վարիանուազօլիս հտոնելով , իր քայլը որ Վաճառաներէն գերի տարսուած Վահմուտ - Զէլէպիին հետ ամսւսնացած էր , անոր առջելը ելաւ և ազաշեց որ իր ամուսինը ազատէ : Վուրատ , որ շարունակ պատերազմներէն ձանձրացեր էր , որոշեց որ Վալաքիոյ , Եւրվից և Վաճառաց հետ հաշտութիւն ընէ : Տրագուլ Վալաքիոյ իշխանին և Պրանքովիչ Եւրվից իշխանին իրենց որդիքը իրենց գարձուց , զրոնք կուրցուցեր էր : Պրանքովիչին երկիրները իրեն տուաւ . և իր ատենադպիրը , որ ուրացեալ յօյն մը էր , հարիւր հոգւովլ Հունիատին խրկեց հաշտութիւն խնդրելու համար : Տասը տարուան զինադպարում մը հաստատուեցաւ (Օսմաննցոց և Վլատիխլաւ թագաւորին մէջ (Յուլիս 1444) առ հետեւեալ գաշնիքներովլ . Ա. Եւրվիան Պէորդ Պրանքովիչ իշխանին տացուի . Բ . Վալաքիան Վաճառաց իշխանութեան տակն ըլոյ . Գ . Վահմուտ - Զէլէպիին

փրկոնացը համար 70 000 ոսկի տացուի : Դաշնայ թուղթը երկու լեզուով շնուրեցաւ, և երկու կողմէն ուշ մեծ երդումը ըրեն : Օսմանցիք խնդրեցին որ Վաճառաց իշխանը սուրբ խորհրդոյն վրայ երգնու . իշխանը յանձն չառաւ և Վեհապահին վրայ երդումը ըրաւ, և Վուրատ՝ Դուրանին վրայ :

Արկէ անմիջապէս ետքը՝ Վաւրատ Արիա դարձաւ, ուր իր Վայետուին անդրանիկ որդւոյն մահուան դոյժը առաւ : Վսկ կուրստեան վրայ սաստիկ ցաւեւլու և թերես անընդհատ պատերազմներէն ձանձրացած միտքը դրաւ որ իշխանութենէն հըրաժարի :

Վուրատ կառավարութեն սանձը իր Վէհէմմէտ որդւոյն յանձնեց որ տասն և չորս տարեկան էր . Խալիլ փաշան իբրև մեծ վէղը դրաւ, և մեծ օրէնսդէտ Մոլլա Խիւսրէվը զօրաց դատաւոր ըրաւ : Խոկ ինքը քառասուն տարեկան հասակին մէջ Վագնեսիա քաշուեցաւ որ հանդիստ և խաղաղ կեանք մ՞ անցընէ . իբրեն ընկեր առաւ Խախի փաշան և Համզա պէյը : Խոկ իր ծախուցը համար Վէնթէշէի, Վարուխանի և Վայրնի կուսակալութիւնը իբրեն պահեց :

Օխնադադարման դաշնքը, որ տասը տարուան համար Օսմանցւոց և Վաստիալաւ իշխանին մէջ հաստատուած էր, վեցը ամիս իսկ չուեց . Օսմանցւոց թշնամիները չկրնալով անոնցմէ կրած նախատանացը վրէժը առնել, Վուրատայ տէրութենէն

կամաւ հրաժարիլը յարմար առիթ ոեպելով, դաշնքէն տասը օր եաքը գետպաններ իրկեցին Վաստիալաւ թագաւորին ու ըսկն թէ առանց Վւրոպից միացեալ տէրութեց հաւանուելը Վաճառաց թագաւորը խաղաղուե դաշնքը մը չկրնար հաստատել : Հունիսին Պուլզարիոյ թագաւորութիւնը խոստանալով, զան ոտք հանեցին, այսպէս Վեհարանի վրայ ըրած երդումը դրժեցին և նորէն պատերազմի պատրաստուեցան : Վաճառաց բոլոր բանակը հաղիւ տասը հաղարի կը հասնէր, և այնչափ զօրութեամբ ինքնինինին կը շաղքորթէին Օսմանցիները նոյն տարին Վւրոպայէն հալածելու :

Հունիսատ Վաճառ զօրքերուն և նիզակակից Վահներուն հետ յառաջ անցաւ . նոյն զօրքերը որ խաչն նշանը իբենց հանդերձին վրայ կը կրէին, Յունաց և Պուլզարաց եկեղեցիները առանց խղճի աւերեցին, քսան և ութը Օսմանցւոց նաւեր այրեցին, քանի մ' ամրոցներու առանց ընդդիմութեան տիրեցին, ու եկան մինչև Վառնա քանակեցան : Վսկ մօտալուա վտանգին մէջ, նաև խարաբները Վէհէմմէտը խրատեցին որ կառավարութեան օանձը վերստին իր հօրը ձեռքը յանձնէ, որ մինչև ան ժամանակը մեծ ուժով և խելքով վարեր էր : Վորահաս իշխանը իր հօրը դեսպաններ իրկեց, Վուրատ ոյսպէս պատախան տուաւ . “Դուք կայսր ունիք, պէտք է որ ան ըշձեղ պաշտպանէ : Զեզի համար կրած այնչափ նեղութիւններէս

եաւ վոյլած հանդոսութեանս վրայ ալ կը նախանձիք ։ Երբ գեսպանները նորէն աղաչեցին, ու տէրութեան վոանդը իմաւ ցուցին անոր ։ Վուրատ քառասուն հազար զօրք ժողվեց ու Շենովացւոց նաւերով Եւրոպա անցաւ իր իւրաքանչիւր զինուուրին համար մէկ մէկ ոսկի տաւով, ու թշնամիններէն չորս հազար քայլ հեռու բանակեցաւ ։

Ի 10 ԵՍ. 1444, երկու կողմէն ալ գիմադէմակատեցան ։ Քրիստոնէից բանակին ձախ և աջ կողմէրը Վ լահները և Վաճառները բռնած էին ։ մէջտեղը հինգ հարիւր ձիաւորներով ։ Գէորգայ դրօշակին քովլ Վ լատիսլաւ թագաւորը կար ։ ետեւն վերջապահ զօրքերուն և քանի մը Եհաց խումբերու հետ սայլերը և բաշմամթերները կային ։ Խոկ Օսմանցւոց բանակին աջ թէնը թուրա - խան Յումէլի կողմնապետը կը կառավարէր, ձախ թէնը Եսիյ Տաճկառանի Գարաճա կողմնասպետը* ։ Խոկ Վուրատ Ենիչերիններովլ մէջ տեղն էր իր առջնը ցցապատնէշ խրամ մը բանաւտուեր և հրամայեր էր որ Աւետարանին վրայ ըրած երդման թուղթը ձողի մ' երկաթին ծոյը ըը անցընեն ։ ամենուն ետեւն ուղտերը և պատերազմի կահերը կը գտնուէին ։ Եցն միջոցին սաստիկ հով մ' ելելով, Վաճառաց բոլոր դրօշակինները պատառեցան,

բաց ՚ի թագաւորինէն ։ աս չարտգուշակ նշանը մեծ երկիւղ պատճառեց Վաճառաց բանակին մէջ ։

Հունիատ իր զօրքերը խրախուսելով, թշնամեց աջ թեւին վրայ յարձակեցաւ և Եսիյ կողմնապետը հալածեց, Վ լահներն ալ միւս կողմէն յումէլի գնդին վրայ վաղեցին և մինչես սուլթանին վրանը հասան ։ Երբ Վուրատ կը պատրաստուէր փախչելու, Գարաճա կողմնապետը անոր ձիուն սանձէն բռնեց ու աղաչեց զսուլթանը որ խայտառակութեան առիթ չըլլայ, թէ և ինքը Գարաճա հոն Վաճառի մը զոհ եղաւ ։ Են ատեն ամեն բան ուրիշ կերպ մ' առաւ ։ Վուրատ և Ենիչերինները անյոզդողդ մնացին ։ Վաճառները փախան ։ Վ լատիսլաւ ըստ հրամանի Հունիատայ փախչել չուզելով, Վուրատ անոր ձիուն ոտքին զսրկաւ, ու թագաւորը անասունին հետ գետինը ինկաւ ։ Գօճա - Խըզը ծերունի Ենիչերին մէկը վաղեց, Վ լատիսլաւին գլուխը կտրեց, և նիզակի մը ծայրը անցուց ու թըշնամեաց պոռաց ։ “ Եհա ձեր թագաւորին գլուխը ” ։

Հունիատ աս տե՛սնելուն պէս, Վ լահաց հետ սկսաւ փախչել ։ Ետեւեալ առտու երբ Վաճառները Հունիատին դարձին կը սպաէին, Վուրատ անոնց վրայ յարձակեցաւ և բաց ՚ի քանի մը հոդիէ ամենքն ալսուրէ անցուց ։

Վուրատ Ազատ - պէջ իր սիրելիններէն մէկուն հետ պատերազմին դաշտած և մեռեալները քննած ատենը ։ “ Հրաշը,

* Եսիյ Տաճկառանի կողմնասպետը իր զօրքով ան ժամանակը բանակին աջ թէնը կը հրամայէ ։ երբ պատերազմը Եսիյ մէջէ ։ ան առենը յումէլի կողմնասպետն ալ ձախ թէնը կը կառավարէ ։

պոռաց, ոյսչափ բազմութեան
մէջ մէկ ալեւոր ծեր մը չգտնուի:
— Եթէ մինակ մէկ ծեր մը գըտ-
նուէր, պատասխանեց Վշապ պէյ,
այսպէս յանդուգն և յիմար
գործի մը ձեռնամուխ պիտի չըլ-
լային „: Երկու հարիւր յիսուն
սայլ լեցուն թանկագին աւար-
ներ ինկան (Օմանցւոց ձեռքը:
Վուրատ Վշապ - պէյը նամակաւ
Եգիպտոսի սուլթանին խրկեց իր
յաղթութեանց լուրը տանելու
համար . և Վաճառ զրահաւոր
պատերազմականներէն քսան և
հինգ հօգի գերի խրկեց, որ ցու-
ցընէ անոր թէ ինչպէս երկաթ-
եայ մարդերու յաղթեց: Իսկ Վը-
լութիսլաւոյ գլուխը մեղքի մէջ
դնել տալով, որ անապական մնայ,
ինչան իր յաղթութեանը Պրու-
սայի Ճիւլպէ Վլի* կառավարչին
խրկեց: Պրուսայի բնակիչները ա-
նոր առջեց ելան, գլուխը լուտ-
ցին և տէգի մը ծայրը անցու-
ցած քաղաքին փողոցներուն մէջ
յաղթական հանդեսով պարու-
ցուցին, այնպէս որ Վառնայի
յաղթութեան երդերուն արձա-
գանքները կարծես թէ Ալիւմ-
պէան լեռներէն կը լսուէր:

Վուրատ միշտ խաղաղոսէր և
անմեղ զքօսասէր բնութիւն մը
ունենալով, և գահակալութենէ
և պատերազմներէ ձանձրացած
վերստին իր Վագնեսից զուար-
ձարի պարտէզը և պալատը** դար-

* Առ անոնվալ միշեւ ցարդ կոստանդնու-
պոլսոյ գուներին մէկը ձեւուէ - Ան գադո-
ւու կը կոչուի կըսէն:

** Աս բնակութիւնը . ուր հիմա քանի մը իր-
ուած պատերէ և սպահ նոճիներէ ուրիշ
բան չտեսնուիր, տակաւ ին ճանապարհորդին
ուշադրութիւնը կը դրաւէ .

ձաւ: Բայց աս հանդստութեան
քաղցրութիւնը երկար ատեն չի
տեեց, հազիւ թէ իր եպիկուր-
եան ապաստանարանին զուար-
ձաւթեանց քունին մէջ կ'երա-
զէր, յանկարծ նախ արտաքին
պատերազմին թնդիւնէն արթըն-
ցաւ . երկրորդ ներքին ապստամ-
բութիւն մը ծագելով, տէրու-
թիւնը գարձեալ իր ազատիչը
կանչեց: Ենիշէրիները չուզելով
որ մէկ դեռահաս տղու մ' իշ-
խանութեան տակին ըլլան, գը-
լուխ վերցուցին, Վգրիանուազօլ-
սոյ մէջ ահագին կրակ մը ձգե-
ցին և քաղաքին մեծ մասը այ-
րեցին: Երբինապետը հազիւ ա-
նոնց կատալութենէն ազատե-
ցաւ . ասոր համար Ենիշէրինե-
րը քաղաքը կողուպտեցին և Պու-
չուլ բլուրը բանակեցան . Տէ-
րութեան պաշտօնեանները անոնց
օրական ուժիկներուն վլոյ կէս-
կէս փող աւելցընելով, խռո-
վութիւնը դադրեցուցին, բայց
Խալիլ մեծ վէջիւը և Խախի - փու-
շան իրենց պաշտօնակից Վարու-
ճէ փաշան Վագնեսիա խրկեցին
և աղաչեցին զՎուրատը որ նո-
րէն տէրութեան կառավարուիը
ձեռք առնէ: Վուրատ տեսաւ
որ իր վեշտասանամեայ տղան ան-
կարուզէ այնպէս ընդարձակ տէ-
րութիւն մը կառավարելու: Են-
միջապէս Վգրիանուազօլս գար-
ձաւ և երրորդ անդամ տէրու-
թեան գաւազանը ձեռքը առնե-
լուն պէս, ամեն բան խաղաղե-
ցաւ . այնչափ իրմէ կը վախնա-
յին և կը պատուէին զինքը . իսկ
Վէ հէմմէտ, զոր Խալիլ փաշան
Վգրիանուազօլէն հեռացընելու

համար որսի հրաւերեր էր , 'ի գարձին՝ տեսաւ որ իր հայրը իր տեղն անցեր է : Վէհէմմէտ թէ և դոռող և փառասէր բնութի մ'ունէր , սակայն չկրցաւ իր հօրը հակառակելու և Վագնեսիա քաշուեցաւ . բայց իր սրտին մէջ ան նախարարին համար գաղտնի ուս մը պահեց , որ մէկ տարուան մէջ զինքը երկու անդամ գահէն իջեցուցեր էր :

Այնուհետեւ ալ Վուրատ կառավարութիւնը ձեռքէն չթուզ և իր յաղթական սուրը անկէ ետեւ Պեղոպոնէսի և Վլզանիոյ վրայ կաւեց : Քանզի Յունաց Յովհսնէս կայորը , որ քիչ մ' առաջ թէւ խաչակիր տէրութիւնները (Օսմանցւոց վրայ գըրգուեր էր , սակայն Ա առնացի պապերազմին անյաջողութենէն ետեւ Վուրատայ հետ բարեկամութեան գաշնքը նորոգեր էր թէւ պէտ երեսանց . իսկ անոր կոստանդին եղբայրը Պեղոպոնէան թէրակղզւոն իշխելով՝ օրէ օր իր զօրութիւնը կը տարածէր : Վուրատայ գահակալութենէ հրաժարած և Վահագտնուած ատենը՝ կոստանդին գէպ ժամանակ գտնելով սկսեր էր թէրակղզին ամրացընել . հիւսիսային Յունատանի հետ կցուած Պեղոպոնէսի բոլոր պարանոցին վրայ իր Ծովը մաս եղբօրը հետ հինգ կանդուն լայնութեամբ և Զ կանդուն բարձրութեամբ հինգ մարտկոցով և մէկ խորունկ խրամով պատ մը քաշեր էր : Ա շինուել վրայ Վուրատ բարկանալով իր եւրոպական և ասիական գունդերը Աէրէս և թէփէ քաղաքները կեն-

դրոնացուց : Կոստանդին չուղեց հնազանդիլ և դեսպան* խրկեց որ սուլթանը պարանոցին անդիի և ասդիի կողմը եղած երկիրները իր իշխանութեան տակը թողու . Վուրատ կոստանդինի յանդուգն առաջարկութիւնը ընդդունեց և միայն վեցը հազար ընտիր զօրքով գնաց պարանոցին ամբութիւնները գիտելու . քանի մ' օր հոն կենսալէն ետեւ՝ երբ կոստանդին անձնատուր չեղաւ , Վուրատ իր վաթսուն հազար զօրքերը թնդանօթներով և պաշարման մեքենաներով բերել տուաւ . և երբ Յոյները կը զուարձանային , Օսմաննեան զօրքերը պարիսպները գնդակոծեցին երեք օր շարունակ . չըրբորդ օրուան իրիկունը Տաճկաց բանակին մէջ հըրահանդէսներ ըրին և պատերազմական ձայներով երեք օրէն յարձակումը կ'իմացընէին : Վրկէ չորսօր ետքը կամ պաշարման եօթներորդ աւտուն՝ փողերուն , թմբուկներուն և սրինգներուն ձայները յարձակման նշանը տուին : (Օսմաննեանք սկսան գնդակոծել և պարիսպներուն սանդուղքներ մօտեցուցին . Խըզըր Ենիշէրին ամենէն առաջ պարսպին վրայ ելաւ . Յոյները փախան , և Օսմաննեանք Պեղոպոնէը կողով տեցին . Մուզ փախող երեք հարիւր Յոյն զինուորներ , և ուրիշ վեցը հարիւր հօգի սուրէ անցուցին՝ յարձակման մէջ կորսուած (Օսմանցւոց վրէմն առնելու . համար :

* Աս դեսպանն էր Քաղկոնդիլաս Աթենացի պատմապիրը , զոր Վուրատ Սէրէս բանտարկեց :

Նոյն օրը Վաւրատ Ա. բայիս մը տաւ, կորնթոսը* այրեց, որուն բնակիչները պարիսպները պաշտպանելէն ետև փախչեր էին։ Անկե անցաւ Վաւրատ և Փաթրասքաղաքը կործանեց։ Ասոր բնակիչներէն մեծադշն մասը փախան։ Ենիչէրիները ամրոցին պատերը ծակեցին, բայց Յօյները հալած ձիւթ (վէֆլ) թափեցին անոնց վլոյց, և ծակերը դոյշելով նորէն ամրացան։ Երբ վէրջապէս Թուրքա-Խան մեծ աւարտով և 60 000 գերիներով եկաւ, Վաւրատ պաշտրումը վերցուց և կոստանդինի հետ հաշտութիւն ըստաւ այն պայմանաւ որ՝ Պեղոսպոնէու Տաճկաց հարկատու ըլլայ։ Վակէ քիչ մ'ետքը Բակուսացւոց տարեկան 500 ոսկի հարկը 1 000ի հանեց։ Վասն զի առ հասարակապետականները երկու նաւ (Օսմանցւոց դէմ խաչակրաց օդնութիւն տուեր էին։

Հետեւեալ տարւոյն գարնան մէջ (1447) Վաւրատ Ալպանից վրայ քալեց։ բայց Ճամբան ըստիպութցաւ հոչակաւոր Հունիատին հետ պատերազմելու, որ տասն և չորս հազար Վաճառ,

* Կորնթոս կամը ըստ Տաճկաց Գորոսոս քաղաքը Յանինի Յանաց արուեստից կենդրանն էր։ Առ քաղաքին մէջ կը տեսնուեր դից գեղեցկացն տաճարները, մասնաւոր յիշառակութեան արժանի էր Ասրիանոսէն շնուռած աղբիւրը, որն որ կարծէիր թէ զէլլէրախանին հեծած պղնձէ Փէկասին սոբին լարկած տեղէն կը բղնէր։ Ու և ուրիշ ամեն հրաշալի շնունները Մումոս հառվայեցին աւերեց։ Յուլոս կեսար քաղաքը վերստին շնեց, և գերութենէ աղասած հռոմեացիներով մւցոց։ Հերովդէս Աստիկս Մումփան աւերած շնուռթիւնը նորէն կանգնեց, բայց Մուրատ Բ. կրակի տուաւ քաղաքը։

ութը հազար Վլահ, և երկու հազար հրացանակիր Պերմանացի խիստ ընտիր զօրքով Պանսւպէն անցնելով, Գոսովով գաշտին մէջ ամրացեր էր։ Վաւրատ իր հարիւր յիսուն հազար զօրքովը անոր առաջը գնաց։ Հունիատ փոխանակ Ալպանացւոց (Վրաւուուտ) օգնութեանը սպասելու թշնամւոյն վրայ քալեց։ Վաւրատ ութը պատգամաւոր խրիեց Հունիատին որ հաշառութիւն ընեն։ Հունիատ ընդունեց աս առաջարկութիւնը։

† 17 Հոկտեմբերի 1448` երկու բանակները դէմադէմ ճակատեցան։ Տաճիկները իրենց սովորութեանը համեմատ շարուեցան՝ եւրոպական դունդերը աջ թեւը, և ասիսկան գունդերը ձախ թեւը։ մէջ տեղը Ենիչէրիները կոյին։ Հունիատոյ բանակին աջ կողմը Վաճառները շարուած էին, ձախ կողմը Ալահաները, մէջ տեղը Պերմանացիները։ Երկու կողմէն ալ հաւասար քաջութեամբ և հաւասար յաջողութեամբ մինչեւ իրիկուն պատերազմեցան։ Հունիատ կը յուսար որ գիշերական պատերազմով մ' անոնց յաղթէ։ բայց իր փորձը պարապը ելաւ։ Ենիչէրիները անընկանելի մնացին և անոնց քաջութեանը պատասխանեցին։ Հետեւեալ օրը պատերազմը նորէն սկսաւ։ Երբ Հունիատոյ բանակին աջ թեւը կը տկարանային՝ թուրքա-Խան եւրոպական բանակաւ Վաճառները հալածեց։ Իսկ յաղթութիւնը Ալահաց մատնութեամբն եւ

դաւ, որոց գլխաւորը պատերազմ մին խառնուած տուենը Վուրատայ քանի մը պատգամաւոր խըրէ կեց, ու Խալիլմեծ վէզիրին միջնորդութեամբը դաշնք ըրաւ, և (Օսմանցւոց կողմն անցաւ: Իրիկուան դէմ՝ Հունիսահիր խիստ հաւատարիմ զօրքերը ժողվեց, Գերմանացի և դաշնակից զօրաց հրամայեց որ Վուրատայ և Յնիչչըրիներուն վրայ յարձակին: Աս գործողութիւր կատարուած ժամանակը՝ Հունիսատ փախաւ: Հունիսատայ բանակէն տասն և ութը հազար հոգի պատերազմի դաշտին մէջ մնացին. խոկ Վուրատ կրկնապատիկը կորսնցուց: Հունիսատ Գոսովայի պատերազմը կը շահէր, եթէ Վլավնիացւոց խոստացած օգնութեանը սպասէր:

Աս միջոցին՝ Վլավնիոյ մէջ Հունիսատայ փառացընախանձող իւնան մը կը ծագէէր, որ իր պատերազմական քաջութեամբը և տաղանդովը քսան և հինդ տարի Օսմանցւոց անհաշտ թշնամին եղաւ: Երբ Յպիռասուը Վուրատայ յաղթական սրոյն առջեւը ընկճեցաւ, անոր Յովհաննէս Քառթրիոթա իշխանը պարտաւորեցաւ Օսմանեանց հարկաւութեամբը Վուրատայ պատանդ տալ: Ասոնցմէերէ մէծերը մէռան: խոկ ամենէն փոքրը, որ Գէորգ Քառթրիոթա կը կոչուէր, իր գեղեցւկութեամբը և նուրբ հանձարու վայնչափ սիրելի եղաւ, որ Վուրատ զան թլփատել տուաւ, ու մահմէտական կրօնիքին մէջ մէծ ցուց, և տասն և ութը տարեկան հասակին մէջ նահանգի մը

կառավարութիւնը տուաւ անոր: Այսպէս ծագէկ հասակին մէջ ըրած քանի մը յաղթութիւններուն և խելացիութեանը համար Վուրատ իոքէնատէր պէյ դրաւ անունը, այսինքն՝ Վլեքսանդր իշխան: Բայց երբ Յովհաննէս Քառթրիոթա իոքէնատէր պէյին հայրը մեռաւ, Վուլթանը անոր իշխանութիւնը իոքէրտէրին տալու տեղ ուրիշ կառավարչի մը տուաւ: առ եղաւ իոքէնատէրին Օսմանցւոց վրայ ունեցած սխը, որուն վրէժը յարմար ժամանակին անոնցմէ առնել կ'ուզէր: Ուստի՝ երբ Օսմանեանք Նիշի քովիցը Հունիսատէն յաղթուեցան, Գէորգ Քառթրիոթա, որ քսան և ինը տարեկան էր ան միջոցին, սպառնալու Վուրատայ ատենացիկը սահուկեց որ հրամանագիր մը գրէ որ Վլհիսարի (Գրոյա) կառավարութիւնը երբէ անոր յաջորդը պատգամը բերողին այսինքն իրեն յանձնէ:

Հրամանագիրը առնելու գնաց Վլհիսարի բանալիները ձեռք ձըգեց, իր վեցը հարիւր զօրքերը գիշերով քաղաքը մացուց և Օսմանեան պահապան զօրքերը, ուրոնք հանդարտ քունի մէջ ընկըմած էին, խողխողեւ առւաւ: “Վլատութիւն ապուալու: Իր առ յանդուգն ձեռնարկութեան մէջ յաջողելով, իոքէնատէր պէյ իր հայրենակիցները, որոնք Յպիռասոսի քաղաքաց մէկ մասին կը տիրէին, իր քովը կանչեց, և անոնց հետ խորհրդակցեցաւ որ Օսմանեան լուծէն աղատելու համար աշխատին: Ասոր վրայ՝ ամեն կողմէն Յպիռացիք դմնուու

բեալ իր քովը ժողվուեցան, ու
բոնք տասն' երկու հազարի հա-
սան :

Փէթրէլլո, Փէթրալպա, Աթէ-
լուզիա քաղաքները անոր հնա-
զանդեցան, և գրեթէ երեսուն
օրուան մէջ բոլոր շաղիռոսի տի-
րեց : Վերձակայ քաղաքներուն
իշխանները իր հետը միացան, և
Խոքէնտէր պէջը իրենց գլուխը
ձանցան : Խոքէնտէր պէջ ութը
հազար ձիաւոր և եօթը հազար
հետեւակ զօրքերով . Ալի փաշա
զօրավարին վրայ վազեց, որ քա-
ռասուն հազար զօրքով իր վրայ
եկեր էր, և մեծ վնաս տուաւ :

Ասկէ շատ չանցաւ Ֆիրուզիա-
շան և Վուսթաֆա փաշան հետ
զհետէ Խոքէնտէրի վրայ վազե-
ցին, բայց յաղթուեցան : Վուս-
թաֆա փաշա երկրորդ անդամ ա-
նոր վրայ ելաւ և գերի ինկաւ :

Օսմանցւոց այսուակ կորուս
տեան լըէֆը առնելու համար՝
Վուրատ անձամբ հարիւր հազա-
րէն աւելի զօրքով անոր վրայ
քալեց, ու Աֆէթիկրատ և Տի-
պրա քաղաքները նորէն առաւ՝
քսան հազար հոգիէն աւելի կոր-
սընցընելէն ետև :

Երբ Վուրատ Շարիանուալիս
դարձաւ, Խոքէնտէր ութը հա-
զար հոգւով Աֆէթիկրատը ամիս
մը պաշարեց (1450), բայց պա-
րապ տեղը : Հետեւալ տարւոյն
գարնան մէջ Վուրատ վերստին
անձամբ եկաւ Քրոյան պաշարեց .
քաղաքին կտռավարչին կաշառք
խոստացաւ, բայց երբ չկրցաւ
իր խորհուրդը յառաջ տանել,
սկսաւ թնդանօթներ թափել
տալ . տասն և հինգ օրուան մէջ

տասը հատ թափուեցաւ . որոնց
չորսը վեց կենդինսոր ծանրութէ
քարեր կը նետէին և վեցը՝ եր-
կու կենդինսարնոց գնդակներ :

Վուրատ ասոնցմով չկրնալով օ-
գուտ մը տեսնել, Խոքէնտէր պէ-
յին գեսպան մը խրկեց և անոր
առած քաղաքները իրեն թողուլ
խոստացաւ, եթէ Վուրատայ իշ-
խանութեան տակն ըլլալ ուղի-
ու տարին միայն հինգ կամ տա-
սը հազար ոսկի հարկ վճարէ : Խո-
քէնտէր աս առաջարկութիւննե-
րը չընդունեց, և Վուրատ քա-
ղաքին պաշարումը վերցընելու
պարտաւորած, վերստին Շարիա-
նուալիս դարձաւ :

Յունաց Յովհաննէս կայսրը
անորդի մեռնելով, անոր երկու
եղագաբը կոստանդին և Տէմէթ-
րիս բիւղանդեան իշխանութէն
համար կը կռուէին : Փրանզաս
հանդերձապետը Վուրատայ խըր-
կուեցաւ որ կայսեր յաջորդը ո-
րոշէ . Վուրատ քաղցրութեամբ
վարուեցաւ անոր հետ և հրա-
մայեց որ կոստանդին իր հօրը
տեղը յաջորդէ :

Նոյն տարին Վուրատ իր Վէ-
հէմմէտ որդին Վիւլյաման պէյ
թիւրքմէնաց իշխանին աղջկանց
մէկուն հետամուսնացուց : Հար-
սանեաց հանդէսը Շարիանու-
ալուսոյ մէջ կատարուեցաւ, և
երեք ամիս տեկց : Աւ Վէհէմ-
մէտ նորէն Վագնեսիա դարձաւ :

Ասկէ գրեթէ ամիս մ' ետե-
երբ Վուրատ Շարիանուալուսոյ
լճին կղզեակի մը մէջ իր սիրե-
լիներուն հետ կըզգօսնուր, կա-
թուածէ զարնուելով մեռաւ
49 տարի թագաւորելէն ետև .

Վուրատ երեսուն տարի մեծ փառքով, արդարութեամբ և մեծագործութիւններով տիրեց. իր գեղեցիկ չէնքերէն մինչեւ ցայսօր անխանդար մնացած կան. Ազդրիանուազուսոյ և Պրուսայի մէջ չինած մզկիթները երեելի են. Վուրատ Բ. տռաջնը եղաւ Օսմանեան սուլթաններուն մէջ որ մեծամեծ կամուրջներ չինեց, ինչպէս են Կարենէի կամուրջը, Աշլանիկի և Ենիշէհիրի մէջ տեղը ճախախուտ երկրին վրայ չինած կամուրջը, որ մէկ քառորդ մզոն երկայնութիւն ունի, Պալլոդ հիսար ըսուած Գաղատից մօտ կամուրջը. Աս վերջնին վրայէն անցնողներէն ժողվուած ստակը Վէք.քէի և Վէտինայի աղքատաց կը իրկուեր :

Առևլթան Վուրատ իր բանակը խիստ կանոնաւորեց. իր պահապանութեամբ համար վեցը հազար հետեակ զօրք կը պահէր քովը. պատերազմի ժամանակը իրեն համար երեք վրան կը պատրաստուէր, իր բոլորտիքը Ենիշէրիները կը գտնուէին, և ուրիշ ասան և հինգ վրաններու մէջ վէզիրները, պաշտօնատարները և սպասաւորները կը կենային. Ենիշէրիներէն զատ երեք հարիւր զինուորներ սուլթանին վրանին պահպանութեանը կը հսկէին. ասոնցմէ ետքը կուգային պահուած (լաբա) ըսուած զինուորները, որոնք Վրիային, Եգիպտոսէն և Աֆրիկէն գալերնուն համար այսպէս կոչուած էին. Ասոնցմէ ալ ետեւ էին թոշակաւոր

զինուորները և ձիաւորները. Վը րեթէ տասը հազար վրաններ կը կանգնէին վայելուչ դիրքով. Ուրիշ մասնաւոր դունդ մ' ալ կար, որ միայն ձամբաները բանալու, վրանները կանգնելու և պաշարները կրելու կ' ըզբաղէր. Բոլոր բանակին հրամանատարութիւնը նումէլի և Վնատոլուի կողմնաւոեաներուն ձեռքն էր, որոնք սուլթանին հրամանին կը հնացանդէին :

Աս խոհեմ սուլթանին օրովը Օսմանցւոց գրականութիւնը, կրօնական գիտութիւնը և իրաւագիտութիւնը առաջ գացին, ու շատ բանաստեղծներ ելան, որոնց մէջ երեելի է Վատէտինի իր չինած երգերուն համար. բայց ետքը Շուպի մնորեալին ամենաստուածեան վարդապետուեր հետեւեցաւ, որուն սկզբունքն ասէր թէ՝ “ Ես Վատուած եմ”, և կը սորվեցընէր թէ մարդուս հոգին Վատուածոյ հետ կը միանայ, ու անոր հետ կը խառնուի, ինչպէս անձրեւ ծովու ջրին հետ : Օրէնսդէտները բանեցին զան ու կենդանի անոր մորթը հանեցին :

Վուրատ Բ. վեց որդի ունէր. Վլայէտտին, Վէհէմմէտ, Պէօյիք Վհմէտ, Հասան Օրխան Զէլէպի, և Քիւչիւք Վհմէտ : Վսոնցմէ չորսը՝ բաց ՚ի Վէհէմմէտէն, որ իր հօրը տեղը անցաւ, Վուրատայ մահուանէն առաջ մեռան, իսկ Քիւչիւք Վհմէտը Վէհէմմէտ խղթել և իր հօրը հետ Պրուսա թաղել տուաւ :

ՍՈՒԼԹԱՆ ՄԻՀԵՄՄՈՒ; Բ. ՖԱԹԻՀ

855 — 1451

Qոմանցւոց ասքաջսուլթանին ձեռքսվը կրստանդհուպօլս սոյ տիրելը հնգեասաներորդ դարուն խոտ երեւելի գէպքերէն մէկն է : Հին Ծիւզանգիս անկումը, ու հաղար և հարիւր տարի տեւելէն ետև Հոռոմաց տէրութեան կործանումը անջնջելի յիշատակներ թողուցին պատմութեան մէջ :

Մէհէմմէտ Բ. իր հօրը մահուան գոյմը երեքօր ետքը՝ Վագնեսոփայէն առնելով, իսկոյն իր ձին հեծաւ ու պառաց . “Ով որ զիս կը սիրէ, թող ետևէս գայ” . և ընկերութեամբ սուրհանդակաց և սուսերակիր զօրաց ճամբայ ինկաւ ու հետևեալ օրը կէլլապօլս հասաւ . ուր երկու օր ալ սպասեց որ իր բազմութիւնը ետևէն գայ իրեն հասնի, նցին հետայն Վդրիանուպօլս սուրհանդակիմը խրկեց ու իր գալուստը իմացուց : Շամբան՝ ժաղովուրդը ամեն կողմէն կը վազէին որ իրենց նորընտիր սուլթանը տեսնեն : Վդրիանուպօլսէն վէզ զիրները, գաւառապետները, գիտնականները ձիով անոր առաջը ելեր էին . քաղաքէն մէկ մզնն հեռու զան տեսնելով, ձիերնէն վար իջան, ու սոքով քալեցին . երբ կէս մզննի չափ ալ առաջ գացին, կեցան ու քիչ մը լուռ մնալէն ետքը՝ առ հասարակ ցաւադին ձայներ ձգեցին և անոր

հօրը մահուան համար բարձրաձայն լացին . Մէհէմմէտ անոնց քավը հասաւ, ձիէն վար իջաւ ու անոնց հետ լացաւ, որոնք կարդաւ իր ձեռքը պատին, առ կէ ետև՝ ամենքնին մէկտեղ նորէն ձի հեծան, ու ընկերութիւնալատը գացին . Հետեւեալ առատու՝ Մէհէմմէտ մեծ հանդէսով և տէրութեան բոլոր աւագանիներուն առջեւը գահը ելաւ . և տեսնելով որ Խոհագ փաշան և Խալիլ մեծ վէզիրը, զինքը ասկէ առաջ երկու անդամ գահէն իշեցընելուն համար իր բարկուէն վախնալով, հեռու կեցեր էին : “ Խնչու համար, ըստ ներքինապետին դառնալով, որ իր քուվը նառեր էր, իմ վէզիրներս ինձմէ հեռու կեցեր են, կանչէ զանոնք ու ըսէ Խալիլին որ իր առջի պաշտօնը ձեռք առնէ, և Խոհագ, իբրև կողմնապետ Վոհոյ, իմ հայրս Պրուսա տանի, ու անոր թաղումը կատարէ” : Երկու վէզիրները ելան սուլթանին ձեռքը պատին, ու Խոհագ փաշան մեծ փոյթով իրեն հրամայուածը կատարեց ու առատաձեռնութիւնալատաց ստակ բաժնեց :


Սուլթան Մէհէմմէտին առաջին գործը անգիտութեամբ եղաւ . իր հայրը Վինոպի Խոփէնտիար օղլու իշխանին աղջիկէն որդի մ'ունեցեր էր Վհմէտ անունով, որ գեռ փոքր էր . բայց Մէհէմմէտ



سلطان محمد خان ثانى الفاتح

ԱՐԵՎԱՆ ՄԵՀԵՄՄԻՏ Բ. Խ-ՔԱՐԵ

ՀԱՅ. Պատրիարք. Եղիշ.



վախցաւ անորմէ որ չըլլայ թէ օր մը տէրութիւնը իր ձեռքէն առնէ . քանզի Ահմէտ օրինաւոր ամուսնութենէ ծնած էր , իսկ Ահմէտ մմէտի մայրը աղախին մ'էր . Ուստի երբ Ախնոպի իշխանուհին սուլթանին սենետկը եկաւ , ու իր խնդակցութիւնը կը յայտնէր , Ահմէտ մմէտ լուրէնոսեան Ալիին գաղտուկ հրամայեց որ երթայ Ահմէտը բաղնիքի մը մէջ խեղդէ : Իսոյ ց գիտնալով որ աս անգիտութեան գործը իր հաղատակներուն սիրաը իրմէ պիտի պաղեցընէ , Լուրէնոսեան Ալիին կեանքը վերցուց , որով իր յանցանքին վկան ու գործիքը աներևոյթ ընելով , համարձակ անոր սպանութիւնը ուրացաւ , ու Ահմէտին գժբաղդ մայրը Խոհագ անունով գերիի մը հետ ամուսնացուց :

Ահմէտ մմէտ իր սերմիացի երկրորդ խորթ մայրն ալ նոյնպէս պիտ' ամուսնացընէր , սակայն վախանալով որ չըլլայ թէ անոր հայրը , որ Աերմիլից Գէորգ իշխաննէր , այսպիսի նախատինքի մը համար իրմէ վրէմն առնէ , մեծամեծ պարտհներով անոր հօրը խրկեց զան և անոր հետ խաղաղութեան գաշները նորոգեց :

Նշյն միջոցին՝ Կոստանդին Շիւզանդիյ կայսեր և Պեղապոնէսի իր Դէմետրիոս իշխան եղացը կողմէն Վէրիանուալուս դեսպաններ եկան Վէհմէմմէտին գահակալութեանը համար Յունաց իշխաններուն խնդիրը լուրէնութիւնը յայտնէր : Սուլթանը քաղաքացին առաջ կայսերութեանը իշխանը գործունեցաւ :

Նինքը անլած պահէ , այլ և տարուէ տարի 300 000 փող վճարէ Ախնութիւնանց թուան Օրխան իշխանին ծախուցը համար , որ Կաստանդինուալուսոյ մէջ քանարկ կեալ էր :

Կրոնցմէ ետեւ ամեն սահմանակից թէ մեծ և թէ փոքր տէրութիւններէն դեսպաններ եկան : Տակուսայի հասարակապետութիւնն ալ դեսպաններ խըրկեց , ու անձնակամ իր հինգ հարիւր ոսկի տարեկան հարկին վըրայ հինգ հարիւր ալ աւելցուց : Ուրիշ դեսպաններ ալ եկան Աւլարիայէն , Հառոդոսի ասպետներէն , Շենովացոցմէ , Վալաթիայէն , Քիսոսի և Վիտիլիէն . Վերջապէս՝ Հունիատայ կողմէն ալ երկու դեսպան եկան ու եռամեայ զինադարտարում մը հաստատեցին : Վիայն Գարամանի հետ պատերազմ բացուեցաւ , որուն Պարահիմ պէջ իշխանը մը տածելով որ երիտասարդ սուլթանը տիկարութեամբ երկու անգամ կառավարութենէ զրկուելուն համար , պիտի չկրնայ գարձեալ իշխանութիւնը վարելու , Վուրատայ ժամանակը իր ձեռքէն առնուած երկիրները վերըստին ձեռք ձգելու փորձ փորձեց : Վէհմէմմէտ անձամբ անոր վրայ քալեց . Պարահիմ վախցաւ , հաշտութիւն խնդրեց և իր աղջիկը անոր կնութեան տալու խոստանալով աղատեցաւ :

Վայսէս ամեն սահմանակից տէրութիւններուն հետ խաղաղութիւնը հաստատելով , սուլթանը իր գաղտնի գիտաւորութը ՚ի գործ դնելու ջանաց , այսինքն

է կոստանդնուպոլայ տիրելը : Ծիւզսնդացւոց տգիտութիւնը և անխորհուրդ ընթացքը իր յազմութեանց և աշխարհակալութեանց գործադրութիւնը փութացուցին : Վէհէմմէտ Պարամանի պատերազմին վրայ էր, երբ կոստանդնուպոլուէն գեսապաններ եկան, ու Օրխանին համար խոռոշացուած ոռձիկը չհատուցանելուն համար գանգատեցան և ըստ պառնացան որ եթէ Վէհէմմէտ խօսք տուածին կրկինը նոյն միջացին չվճարէ, անոր ոսովը Օրխան իշխանը պիտօրակեն, և կառավարութիւնը անոր անցնելուն համար պիտօղնեն : Խալիլ մեծ վէղիրը անոնց այսպէս պատասխան տուաւ . “ Ով անդդոյշ և յիմար Յօյնը, ձեր խորաման կութիւնները և նենդաւոր ընթացքը քաջ կը ճանաչեմնա . մեր վէրջին սուլթանը իր բարդար խիզառը և քաղցր բնութեամբը ձեր վրայ միշա գութ ունեցաւ . բայց մեր այժմեան Վէհէմմէտ իշխանը այնպէս չէ : Ծէ որ կոստանդնուպոլիսը անոր քաջութեանէն ազատի, պիտօնեմման ան ատենը թէ Վատուած ձեր անդդամ խարդախութեանց և խաքէական գործերնուդ վրայ չուզեր նայիլ : Ով յիմարք, նոր ստորագրուած դաշնաց գրերը գեռ չորցան, և արդ եկեր ձեր սովորական մեծաբանութիւնովնիդ պիտի վախցընէք զմեզ : Վենք անխելք և անկար տղաքներ չենք : Վիտք ունիք բան մ'ընելու . մի քաջուիք, ըրէք : Օրխանը Ծարակից իշխան պիտի հրատարակէք . հրատարակեցէք . Վիտք ունիք Վաճառ-

ները՝ Կանուպին միւս կողմէն կանչելու . թող գան : Ձեր արդէն կորսնցուցած նահանգները ձեռքերնէս առնելու կը մտածէք . փորձեցէք նայինք : Գիտցած ըլլաք որ ամեննեին բան մը չէք կը նար ընել . գիտցած ըլլաք որ ունեցածնիդ ալ ձեռքերնէգ պիտի առնենիք : Եյսու ամենայնիւն իմ տիրոջս կ'իմացընեմ, անինչ որ կ'ուզէ՝ այնպէս ընէ ” : Վէհէմմէտ, թէ և աս յանդընութեան վրայ խիստ բարկացաւ, բայց Օրխանէն վախնալով որ ըլլայ թէ ազատուելովը քաղաքական պատերազմներ ծադին, ստիպուեցաւ իր բարկութիւնը զսպել և իր բուն միտքը գեսապաններուն չիմացընել : Բարեկամական խօսքերով զանոնք արձակեց, ու խոստացաւ որ երբ Վարիանուպօլիս դառնայ, կայսեր կամքը կը կատարէ :

Իսկօյն Պարամանի հետ հաշտութիւնը, ու իր բանակը առնելով և ուրիշ շատ զօրքեր ժողվելով, երբ Պրուսա հասաւ, Ենիչէրիները բազմութեամբ անոր առջել վաղեցին ու պարգև ուղեցին : Տեսնելով որ եթէ չոտայ վտանգ պիտի ծագի, իր բարկութիւնը զսպեց ու տասը քսակ ու կի պարգևատուաւ անոնց : Գահակալութէն ՚ի վեր Վէհէմմէտին առաջին առատաձեռնութիւնը աս եղաւ : Ենիչէրիներուն այսպէս բռնի պարգև առնելը հետագայ սուլթաններուն ժամանակը խիստ սաստկացաւ, և կամաց կամաց չափաղանց աւելցաւ, մինչեւ որ տէրութեան գանձը սպառելով, աս սովորութիւնը ըըն-

ջուեցու : Քանի մ' որ ետքը՝
սուլթանը Կազանձը թառւղան Եւ-
նիչերեաց զօրավարը իր առջիւ-
կանեց, իր զօրքերը հնաղանդե-
ցընել չկրնալուն համար յանդիւ-
մանեց զան, քանի մ' ապտակ
դարկու, ու խարազանով ծեծեւ-
լեն ետքը՝ անոր իշխանութիւնը
Առևմթափա պէյին տուաւ : Ու-
հէմմէտ Ենիչերիներուն աս ա-
պրստամբութիւնը տկարացնեւ-
լու համար անսոնց թիւը պակսե-
ցուց ; ու ամեն բան խաղաղը-
նելով Աէլիսոլու անցաւ, ու ա-
նոր մօտ եղած քաղաքներուն
Յաները վանտեց :

Պայէղիս Եղլուրը Պոսփորի ա-
սիական ծովեղբին վրայ Խիւղէլ-
Հիսար ամրոցը շններ էր, սուլ-
թան Ուհէմմէտ ալ որոշեց որ
անոր դիմացի ծովեղբին վրայ ու-
րիշ ամրոց մը շննէ, որպէս զի ա-
սով կարող ըլլայ Աւ ծովին նե-
շուցին տիրելու : Ուստի ձմեռ
բերան՝ իր տէրուե բոլոր երկիր-
ները հրավարակներ հանեց և հը-
րամայեց որ գարնան սկիզբը 1000
որմնագիր և հիւսն Պոսփորի բե-
րանը եւրոպական ծովեղբին վրայ
ժողվուին և հսն ամրոց մը շննե-
լու համար պէտք եղած ատազը,
քարը, կիրը բերեն . Ար ըլւրը
կայսեր և բնակչաց ականջը հա-
սածին պէս՝ երկիւղով լցուե-
ցան . քանզի իմացան թէ ինչ
մտօք կոստանդնուպոլսոյ բերանը
այնպիսի ահագին ամրոց մը շն-
նել կ'ուղէ, և անկէ յառաջ գա-
լիք շարեքը և իրենց մօտալուտ
կորուստը գուշակելով, անմիջա-
պէս դ եսպաններ խրկեցին անոր,
ու փոխանակ Օրխանին համար

խոստացուած թոշոկը պահանջե-
լու՝ աղաւեցին զան որ իր աս դիւ-
տաւորութիւնը ՚ի գործ չդնէ՝,
և իրենք պարտաւորին հարկ տալ
Օսմանեանց : Ուհէմմէտ բար-
կութեամբ մ' անսոնց պատասխան
տուաւ . “ Նենդաւոր Յօյները
Վաճառաց դաշնակցութեամբը
Վառնոյի պատերազմէն առաջ
հօրութեամբ անցնելուն արգելքը
ըլլայնուն համար՝ հայրս ալ եր-
դում ըրաւ որ եւրոպական ծոս
վեզքին վրայ ամրոց մը շննէ, որ
պէս զի Օսմանեանք համարձակ
երթան գան . բայց անոր կատա-
րել չկրցածը ես այսոր պիտի կա-
տարեմ : Եւ նվազ խառնուիլ
ինձ որ իմ երկրիս մէջ ուղածն չի-
նեմ : Գացէք, ձեր կայսեր ըսէք
թէ ես նախորդ սուլթաններուն
չեմ նմանիր . անսոնց չկրցածը ես
զիւրութեամբ կրնամ կատարել,
և անսոնց մաքէն անցածը ես ա-
զատաբար ՚ի գործ կը դնեմ : Եւ
թէ աս նոյն գործին համար ու-
րիշ դեսպան խրկէ ինձի, գիտ-
ցած ըլլայ որ կենդանւոյն անոր
մօրթը հանել պիտի տամ” :

1452 Մարտի 21ին՝ ամեն կոլ-
մերէն՝ կիր, և Ափկամիդայէն՝,
Երէլլիէն՝ ատազ, Ենատօլուէն՝
քար կրելու սկսան . Ենատօլուի
և Շումէլիի կուսակալները, Խա-
լիլ փաշա մեծ վէզիրը և Ապղ-
նուս փաշա վէզիրը և նոյն իսկ
սուլթանը անձամբ ամրոցին շն-
նութեանը կը հսկէին : Սուլթան
Պայէղիսին շննած Խիւղէլ-Հի-
սար անուանի ամրոցը ասիական
ծովեղբին վրայ Պոսփորի նեղուցին
ամենէն նեղ տեղը շնուած էր .
ուստի նոր ամրոցն ալ Ճիշդ անոր

դիմացը սկսան շինել, ուր Հերմէյօն անունով հրուանդանի մը վրայ Հերմէսի տաճարը կը տեսնուեր: Օսվաւն կողմէն՝ հազար սրմագիր և երկու հազար սատար ու նոյնչափ գործաւոր ալ ցամաքին կողմէն կը բանէին: Ուհամէտականները այնչափ մեծ եւանդ ունէին աս բերդին շենութիւնը կատարելու որ տմեն աստիճանի և ամեն կարգի մարզիկ, մինչեւ անգամ աղնուականները և մեծամեծները գործաւ չորմներուն հետ կ'աշխատէին ու քար, կիր, և աղեսո կը կրէին: Արից նաւահանգիստներէն եկած առաջձը և քարը քաւելով, Պառփորի եկեղեցիներուն և չենքեւ բունքարերը, և մանաւանդ Վթէնեայի ծոցին վրայ գտնուած Վթէ քայէլ Հրեշտակապետ եկեղեցւոյն քարերը քակեցին ու անշնութեանը գործածեցին: Այս պէս երեք ամսուան մէջ ամրոցին շնութիւնը վերջացուցին, որուն պարիսպներուն թանձրութիւնը քսան և հինգ ոտք էր, իսկ անոր երեք տաշտարակները, որոնց գմբէթները կապարով ծածկուած էին, երեսուն ոտք հաստութիւն ունէին:

Կոստանդին՝ աս ահագին պատրաստութիւնները տեսնելով, ըսկըսու վախնալ, և մինչեւ ան ժամանակը ըրած անգօր սպառնալիքները ու գոռոզութիւնը մէկ դիթողութ, սկսաւ խոնարհութիւն ցուցընել: Դարձեալ դեսպաններ խրկեց Վեհէմմէտին ու աշաշէց որ Օսմանեան զօրքերը Յունաց սերմաննեալ արտերը չաւերեն, ու ամեն օր համադար-

կերակուրներ և հազուագիւտքն պելիքներ կը խրկեր անոր: Յայց Վեհէմմէտ փոխանակ անոր ազաշնացը զիջանելու և անոր ըրած մեծարանքներուն փոխարէնը ընելու, հրովարտակ հանեց որ իր զօրաց ձիերը, գրաստները, և ուրիշ բեռնակիր անասունները Յունաց սերմանուած դաշտերուն մէջ պիտ' արածուին, և անոր մէկը պիտի չիրնայ արգելք ըլլալ: և եթէ անոնց տէրերը գէմ կենալ ու զէն, բռնութք պիտի վանուուին: Վի և նոյն ժամանակը՝ հրաման ըրաւ Խոֆէնստիարի որդւոյն, որ իր փեսանէր, որ Կոստանդնուպոլսէն մինչեւ կելիքութ գտնուած գաշտերը և պարտէղները աւերէ:

Այս միջոցին՝ Տաճիկ ձիադարամնին մէկը Յոյն մը ծեծելով, ուրիշ Յոյներ անոր օգնութեան հասան, որով կոխուը մեծնութիւնը քանի մը Յոյն և քանի մը Տաճիկ կորուսեցան: Վէհէմմէտ ասքանը ներքին պաշտօնեայէն իմանալուն պէս՝ հրաման ըրաւ որ ան կողմի բնակիչները ուուրէ անցընեն: Առաւօտ մ' երբ հընձողները իրենց արտերը կ'երթային, Օսմանեան զօրքերը անոնց վրայ յարձակեցան, և այսպէս Յունին ամսոյ մէջ Յունաց հետամ վերջին պատերազմը բացուեցաւ:

Կոստանդին աս լուրը առնելուն պէս՝ Կոստանդնուպոլսոց մէջը ամրացուց, և առատ պատշար ժողվելէն ետեւ՝ քաղաքին գոները գոցեց ու ներս գտնուած ամեն Տաճիկները բռնել ու բանտարկել տուաւ: Ասոնց մէջ

սու լթանին քանի մ՛ երխուսառը դնել բինապետները կը գտնուէին , որոնք լուսվ ոկան աղաւել զիայրը որը շուտավ զիրենք աղաւել . թէ որ ուռ լթանին ըստը ուշգառնանք , ըսին , զմեղկ' ըսպաննէ : Այս սրբանանց վրայ գթալով , ու Յայն գեսպաններու հետ զանոնք երարդ օրը ուռ լթանին խրիեց , և այսպէս ըսել տուաւ . “ Կայորը կոստանդնուպոլիս քաղաքը Աստուծոյ ձեռքը յանձնած է , և անոր դռները ան ժամանակը միայն գոցեց , երբ Օսմանեանք խաղաղութեան դաշնիքը լսւծեցին . և թէ պատրաստ է քաղաքը և բնակիչները պաշտպանելու համար իր արեան վերջին շիթը թափելու , մինչև որ Աստուծած սուլթանին մարդ ասիրութիւն տայ , ու անոր սրբին յուզմունքը խաղաղընէ ” : Մէհէմմէտ , առանց առ խօսքերուն տկանջ կախելու , անմիջապէս պատերազմը հրատարակեց :

Այս միջոցին՝ Պատիրի ամրոցին շնուրթիւնը վերջացաւ , որուն անունը Պօղաղ . քէսէն* գրուեցաւ , և չորս հարիւր Ենիչէրիներով Ֆիրուզ աղային կառավարուելը յանձնուեցաւ և հրաման եղաւ անոր որ անկէ անցնող որ և իցէ տէրութե նաւերը կեցընէ , անոնց մէջը խուզարկոււ

թիւն ընէ , ու մինչև որ սահման ուած հարկը ըլձարեն՝ աղաւ ըլթաղու : Եւ որպէս զի իր նպատակին հասնի , Խալիլ վաշային հոգատարութեամբը խիստ մեծ թնդանօթներ թափել , ու ծուլուն վրայ նայող աշտարակին վրայ շարել տուաւ : Մէհէմմէտ առ գործքերը կատարելէն ետև՝ Օգոստոս 28ին ասկէ մեկնեցաւ ու կոստանդնուպոլսոյ ցամոքի կողմի ամբութիւնները , խրամները աչքէ անցաւց . և Աեպտեմբերի 1ին Աքրիանուպոլիս դարձաւ :

Եւ որպէս զի Պեղապոնէսի մէջ տիրող Դեմետրիս և Թաովման կայսեր եղաքարքը կոստանդնուպոլիս օդնութիւն չխրկեն , Մէհէմմէտ , աշնան սկիզբը , խումելիի կուռակուլը դէպէ ՚ի Պարայի թերակղզին խրկեց անոր Համէտ և Հօմէր որդւոց հետ . որոնք Կոսրընթոսի պարանոցը անցան , ու ամեն կողմը աւելիելով կողապտելով մինչև Արքատիա հասնի : Դեմետրիս և Թաովմաս իշխանները կոստանդնուպոլիս օդնութիւն խրկել չկրնալէն զատ՝ հազիւ զիրենք կը պաշտպանէին :

Պարայի մէջ եղած աս ասպատակութեանց ժամանակը՝ Մէհէմմէտ Աքրիանուպոլսոյ մէջ անդար կոստանդնուպոլսութիւնները կուռակուլ ամբոցին շնուրելու ժամանակը՝ (Օրպան անունով թնդանօթն թափառութեամբ) կարծեցին թէ ամրոցին անունցաւ . բայց Յայները որոշ բառը զմիւ տեղ առնելով , կարծեցին թէ ամրոցին անունը պարանոցահատ (կամ գլուխ կորոշ) է , ու իրենց լեզուով Հեծագիտա մականունով կը միշէն : Այս ամրոցը հիմա բումէլ հրամը կը կոչուի :

* Աս ամբոցը Պատիրի նեղացին (Պաշալ) առմենն նեղ տեղը շնունած ըլլալով և նուերուն անցքը կտրելուն համար՝ Պաշալ առմեն անուանեցաւ . բայց Յայները որոշ բառը զմիւ տեղ առնելով , կարծեցին թէ ամրոցին անունը պարանոցահատ (կամ գլուխ կորոշ) է , ու իրենց լեզուով Հեծագիտա մականունով կը միշէն : Այս ամրոցը հիմա բումէլ հրամը կը կոչուի :

ռոճիկ մը կապեց, որուն քառ-
սորդը եթէ Յօյները տուած ըլ-
լային, Օրպան բնաւ կոստան-
դնուազուէն մեկնելու միտք չու-
նէր. Վէհէմմէտ հարցուց անոր
թէ կոստանդնուազուց պարփակ-
ները խարխալելու չափ մեծու-
թեամբ թնդանօթ մը կրնայ շե-
նել: “Ի՞նչ մեծութեամբ թնդա-
նօթ որ ըլլայ՝ կրնամ թափել,
պատասխանեց Օրպան, և կոս-
տանդնուազուց պարփակները հի-
մնայատակ կործանել. Բարելոնի
պարփակներն անգամ առ շնե-
լու թնդանօթիս չեն կրնար դի-
մանալ. Խոռք կու տամ որ առ
գործերը կը շնեմ, բայց չեմ
կրնար հաստատ գիտնալ թէ ո՛ր
չափ հեռու տեղ կրնան երթալ
անոր ու ումբերը” : Առ լթան
Վէհէմմէտ հրամայեց որ ձուլե-
լու սկսի, ըստ թէ ուումբե-
րուն որչափ հեռու երթալ ետ-
քը կը փորձենք: Օրպան իբրև
օրինակ մեծ թնդանօթ մը թա-
փեց, որն որ նոր ամրոցին ծովե-
զերեայ աշտարակին վրայ դրին,
և որուն փորձը՝ նշանը մոիկի շր-
նող ու առաջատաները չժողվազ
նաւու մը վրայ պիտ' ըլլար:

Առ փորձը վենեափիցի Ռիչչի
նաւապետին նաւուն վրայ եղաւ.
մէկ ուումբերով նաւը խորտակուե-
ցաւ ու ընկղմեցաւ: Վէջը գըտ-
նուած երեսունի չափ նաւատի
ները նաւապետին հետ մակայիկի
մը մէջ մոնելով ազատեցան .
բայց ամրոցին պահապանները
զանոնք բռնեցին, շղթայի զար-
կին ու Տիմիթոգա խրկեցին Վէ-
հէմմէտին որ Օրպանին շնած
թնդանօթին արդիւնքը տեսնէ:

Վէհէմմէտ հրամայեց որ նաւա-
տիներուն գլուխը կարեն ու նա-
ւապետը ցիցի վրայ զարնեն և
չժաղուած թողուն որ գաղանաց
ձարակ ըլլան: Օրպանին վարպե-
տութեանը և փորձին յաջողու-
թեանը վրայ աւ գոհ ըլլալով,
հրամայեց որ պաշարման համար
առջի թնդանօթին երկու չափը
հսկայած թնդանօթ մը ձուլէ,
որն որ շուտով լինցաւ: Առ թըն-
դանօթին նետած քարէ գնդա-
կին բոլորտիքը տասն' երկու թիզ-
էր, և տասն' երկու կենդինար
ծանրութիւն ունէր: Յիսուն
զագ եղ (Էօֆուլ) հազիւ կրնային
տեղէն շարժելու, ուստի եօթը
հարիւր հսդի պէտք էր որ զան
գործածէին: Զնւլուելուն պէս՝
Վերիանուազուց նոր շնեուած
Շիհան նիւմա (տեսարան աշխար-
հի) անունով պալատին դրան
առջի քաշեցին ու մեծ աշխա-
տութեամբ լիցուցին զան: Առա-
ջուց քաղաքին բնակչաց իմացու-
ցին թէ հետեւեալ առտու հըս-
կայած թնդանօթը պիտի նե-
տեն, որպէս զի չվախնան և վր-
նաս մը չկրեն: Հետոնեալ առ-
տու՝ կրակը տուին: Դառօղին
մառախուզը բոլոր քաղաքը պա-
տեց: Ճայնը քանի մը փարսախ
տեղէ լսուեցաւ, և ուումբը մէկ
մզնն հեռու տեղ մ' ինալով, մէկ
գրկաչափի խորութեամբ գետինը
խրեցաւ: Առ պատերազմական ա-
հագին գործիքը սուլլթանին մը-
տացը, քաջութեան և աշխար-
հակալուն ոգիին համաձայն գա-
լով, Օրպանէն շնորհակալ եղաւ.
գիշեր և ցորեկ կոստանդնու-
պուզոյ տիրելէն և ամեն բան կոր-

ծանելէն ուրիշ բան չէր մտածեր : Գիշերները իր երկու մտերիմներուն հետ ծպտեալ Վարիանու պօլսոյ փողոցները կը պտըռէր, որ ժողովրդեան և զօրաց միաբը իմանայ : Եթէ գժբաղդութեամբ մէկը զինքը ճանշնար, և ըստ ոռվորութեան՝ անոր “ լիեցցէ սուլթանը ” պոռար, իսկոյն Վէհէմմէտ իր ձեռքովը զան հոն կ' ըստաննէր :

Գիշեր մը յանկարծ Վէհէմմէտ ներքինապետներուն հրամայեց որ Խալել փաշան իր առջեք կանչեն : Վր վէզիրը, որ երկու անգամ Վէհէմմէտը Վուրատայ կենդանութեան ժամանակը դահէն իջեցրնելուն համար միջու երկիւղի մէջ էր, որ ըլլայ թէ Վէհէմմէտ զինքը սպաննելտայ, արծաթ սկաւառակ մը լեցուն ոսկի առաւ հետը ու սուլթանին ներկայանալով, անոր ոտքին առջեք դրաւ, որ հագուած իր անկողնոյն վրայ նստեր էր : “ Ի՞նչէ ատ, հարցուց ոու լթանը : — Տէր իմ, պատասխանեց վէզիրը, աւագանիներուն սովորութիւննէ, որ երբ անսովոր ժամանակի մէջ թագաւորը զիրենք կը կանչէ, ձեռքերնին պարապ անոր առջեք չեն ելլեր . սակայն ասալ իմն չէ, այլ քուկդ . նորհքը ըրէ ուրեմն, ընդունէ զան : — Վտոնք ինծի պէտք չեն, կրկնեց սուլթանը, այլ քէզմէ մէկ բան միայն կը խնդրեմ, որ Խոստանդնութիւնը առնելու համար ինծի օգնես ” : Վեծ վէզիրը, որ գաղտուկ Յօյներէն մեծ ընծաներ առնելով, անոնց կողմանակից էր, սուլթանին աս խնդրոյն վրայ

խիստ խռովվեցաւ . ուստի չկրցաւ անոր բաղձանացը դէմ կենալ, այլ անոր ուզածին պէս պատասխան տուած, “ Վմենակարող Վրտուած, ըստ, որ Յունաց այն չափ երկիրները քու ձեռքդ մատնեց, անտարակցյս անոնց մայրաքաղաքն ալ քեզի պիտի յահձնէ : Բոլոր հպատակներդ քու կամքդ կատարելու . համար ամեն բան յանձն առնելու, և իրենց անձը և արիւնը քեզի համար զոհելու պատրաստ են : — Տէս, կրկնեց սուլթանը, բոլոր գիշերը անկողնոյն մէջ մէկ կողմէն մէկալ կողմը դառնալով, ամենեին մէկ կերպով չկրցայ աչքերս գոցել : Չըլլայ թէ ոսկիէ ու արծաթէ խաբուիս : Յօյս Վստուծոյ և Վարդարէին վրայ դնելով, հաստատ որոշեր եմ որ Յունաց հետ պատերազմինք ու քաղաքին տիրենք ” : Վհա այսպէս աս անգամ վէզիրը սուլթանին առջեն անվտանգ ելլելով, նորէն իր բնակարանը քաշուեցաւ, ուր իր հանգստեան անկողինը թողնով, ահով ու դոզով կարծեր էր թէ մահուան կը հրաւիրուի : Խոկ Վէհէմմէտ նոյն գիշերը և ուրիշ շատ գիշերներ լսոցընելով, և իր սրտին եռանդագին յուզմանց մէջ տագնապելով, կոստանդնուպօլիսը պաշարելու և անոր տիրելու խորհուրդները զինքը կը մաշէին : Ու աս մտատանջութեանց երկար ժամերուն մէջ, մայրաքաղաքին դիրքը, պարիսպները, յարծակման կողմերը կը գծագրէր . ամեն բանին տեղը կը մտածէր ու կը հաստատէր . բանակին, մեքենաներուն, մարտկոցներուն, ականներ-

բուն աեղերը առաջուց կ'սրտէր,
և Աստվածն ինուալուսոյ* դրէցը ու
անոր ամբոցներուն միճակին վայ
տեղեակ եղող անձանց հետ կը
խորհրդակցէր.

Ու հեմետին, աս անթաւ, պատրաստութեանց վրայ՝ մինչև անժամանակը ռամկաց բերանը պը տըսած կաստանդնուս ալօլոյ անկման, աղբէտաբեր գուշակութիւն-

* Որպեսիոյ արեւելեան ծաղըք գելվշի դիբըմ
հիմ Համալիր ուն եօմը բաժնեմերս կոյց
շնուած է ուն Հոռովմ կամ քեւզանդիմ
բազարը երբ Քրիստոնի 550 թւա սկսնին
Կառանելին իր աթոռը հոռ համատակց քառ
զարին անունը Կառանագնուողիս գրու այ-
սինքն Կառանագնու բազար բացց Տաճկինը ը-
իրենց մզու ու Խոսնարու կը կոչեն ապօնցի
քաջար մասմ ասկանան թւան և և և միմ
տիւնիա (մոյր աշխանցի) Յ Եցիերը Անձու
զն (Ճաղիեւալ) անուն աւ կու տան իսկ Ա-
րարացին Քօնսթամբանից և Քաղաք (Քա-
ժամի) կաման անեն որովհետեւ Եղապիցի
Խոյնէն բաժնուած աւ զն շնուած է

Կանանկն ունեալով քաղաքը Սեաւ ծավին
և Քարեապային : Եւ բռուխ և Ծիփ մէջ տե-
ղը կ'ենա : Արդի տեղոք գրեթե եւ ուսկիւ-
նիք . ծովին կողմէն միաց մէկ պարհօայ ու-
նի առանց խրամի . խոկ ջամաքին կողմէն բար-
ձր աշատաբենեալով պատաս կրիմ պարխա-
նիք ունի . զունց առ չեն ալ խոնոց խրո-
կրիմ խրամներ կամ . Տռանիկենին խրո-
քանչեւը ծայրը առ լիման Մէկ հէմմէտին կոռա-
սանիկն նունչով լիսը պաշարած . առունը . մէկ մէկ
ամեց կը շինուեք : Բրոց մէկն էք Ս . Գեղմե-
տրինիք ամբողը նու ահանձնանին մէկ ծայրը
շնուած . որուն անենը առ աշ Ա քրօփիլով
էք , ու հիմա Սէրայ . ողուրնու կ'անուանի :
Երկուորդ ամբողը պատանէնին ծայրը . այսինքն
ցամաքին կողմի անկիւնը շնուած Քիբրօպի-
օն կամ Ժէկվափիրեկիօն (այսինքն Հինգ աշ-
տարս կիւյտու . բերգ) . որ ան ժամանակին ետք
քը . Եօթը աշոտափաներւու . քերդ անենով
երեկոյ եղաւ : Խոկ Երրորդը նաւահանգըր-
տին միւս ծայրը . Քինչյուն ամբողը շնուած
էք , որուն արդի անունը չայլան . Ալբայը
է : Կայսերական մեծ պալատը արդի . Սէրայ
պարմանին տեղը էք : Կասանան անուագովիզ
հիմա տամն և Հինգ գուռ ունի ծափս կու-
մէն . խոկ պաշարանին Ժամանակը Հինգ դուռ
ունէք :

Աւելի Յանաց սրտերսւն մէջ մէջ երկիւզ մը ձգեցին ։ Իսկ Օսմանեանք իրենց մարդարէին գուշակութեան վայ վառեկալ և խըրախուսեալ, իրենց բնական պաժը կրկնապահեցին ։ Փետրուարի առջի օրերը պաշտօւմը սկըսաւ, Կախ և առաջ Ուէ հէ մմէտ Ֆրաման ըրաւու որ ահագին թընդանութը կամ մէտը Վարչականութօլսէն Կրատանդնութօլսոյ պարիսպներուն տակը քերեն ։ Յիսուն զարդ եղ կը քաշէին զան, որուն երկու կոտը մէն հերկերկու հարիւր հոգի կը հսկէին որ թնդանութը աջ կամ ձախ կողմը չնոռի առջեւն՝ յիսուն հիւսն (պիւրիւր) և երկու հարիւր ռահավիքոյ (Եօլ ալլէճը) Ճամբաները կը հարթէին և կամուրջները կը չփոկէին ։ Մուկերպով երկու օրուան ճամբան երկու ամսուան մէջ առնուեցաւ ։ Պարագայ պէջ, որուն յանձնուած էր աս ճանրաբեռ թնդանութին փոխադրութիւնը, այսպէս յամը ընթացքին պարապ միջոցներուն կոստանդնուպոլսոյ հիւսիսային և հարաւային կողմը գտնուածքաղաքները, գիւղերը, արտերը կ'աւերէր և կ'առպատակէր ։ Մեսիվը և Ալիքա քաղաքները, Այս Մմէֆանո. և Պիվատոս բերգերը անձնատուր եղան. միայն Ալիքա իր պարիսպներուն ապաւինելով, անոր գէմ կեցաւ ։ Կոստանդնուպոլսոյ գունդն գուրս եղած աս հարստահարութեանց ժամանակը, մայրաքաղաքին բնակիչներուն մէջ ալ երկայնակութիւն ծագելով, ոմանք Յունաց և օմանք Նորմանոյ եկեղեցիները յարէին և կրօնիքի համար

կը կռուէին : Օսմանեանց գէմ պալպական տէրութիւններէն օշ գնութիւնն ընդունելու յաւսով՝ որչափ ո՞ր անցեալ Ինեկտեմբէրի 12ին Այս Սօֆիա մայր եկեղեւ յացն մէջ գումըրուելով, առ երեսս իրարու հետ հաշուուեցան, սակայն աս միաբանութիւնը մաս խրուլ ծածկուած կրտին կը նը մանէր, որուն չք ժուութեան անը մկայցլ կայցերը միխիրին ծակէրէն չնչին պատճառուով մը գուրս ցալթէելով, նորէն խունվաւթիւնը՝ արծարծէին ու կը բոցավարէին : Պալունականները, քահանաները և սարկաւագները կայս մեր հետ համաձայնելով Յոն նաց, եկեղեցին Վատինաց եկեղեց յայն հետ միացընելու համար Հառվիմէն խրկուած Վզիդուոս կարդինալին մատուցած պատարագին ներկայ կը գտնուէին սակայն՝ արբանները, վանահայրները, և միայնակնեցք բաս ործուն խարէկան միաբանութիւնը և յայտնի նենդութիւնը ընդունեցին, ու Գեննադիոս Յոն պատրիարքին հետ մէկ եղան, որ Փանթօքամօր վանքը քաջուելով, կոնդակները կը տարածէր թէ երկու եկեղեցեաց միանալը մէծ անօրէնութիւն, և ուուրբ թուի մասին մարդապետութիւնը հերետիկոսութիւն է :

Յոննաց գրեթէ կործանեալ տէրութեան սիւներէն ամենէն երեւելին Վուկաս Վատարաս մէծ ծղվակալը պապականաց և Վատինաց սաստիկ հակառակ ըլլալով, պատրիարքին հետ միացաւ, և բացարձակ ըսաւալթէն Վաւեկ քաղաքիս մէջ Տաճկին վակեղը

աւեսնել, քան թէ Լամբին կարծ դինալներուն խոյրը ։ Խակ ժեռ զովուրդը յուսահատած Տաճիկ ներէն աւելի քրիստոնեաց Վատինաց անձնապտութ ըլլալ կ'ուզէին ։ Եհա աս կերպով՝ միաբանութիւնը քաղաքը թշնամիներէն պաշտպանելուն տեղը, Յօնիք և Վատինաք իրարմէ կը փախչէին և զիրար կը անիծէին ։ Մայր եկեղեցին ամայացեալ եւ բեսի վրայ միացեր էր, հիւանդաները առանց հաղորդութեան կը մեռնէին, իրենց որ կողմէն ըլլալնին քահանայից չեսուովանելուն համար ։ Արօնաւորները և կյանքի չեն ուղեր Վատինաց պատուատսեալ քահանաներէն հաղորդութիւն առնելու ։ Վերջապէս կրօնական կռիւը ան առտիճան սաստկացաւ, որ Յօնիք և Վատինաք իրարն կործանմանը կը աշխատէին և այսպէս բոլոր մեծ պահքը անցաւ ։ Պատիկին սուրբաթ օրը կամ 6 Սպրիլ 1453ին Մէհէմմէտ երկու հարիւր յիսուն հաղար զօրքով կոստանդնուպոլսոյ գիմացր հասաւ, ու լորի գափու ըսուուածն առջեւ բլուսկի մը վրայ իր վրանը կանգնեց, ու հըրքամայեց սր ցամաքին կողմէն քաղաքը պաշտին, ու Վագիան նուազովիս թափուած մեծայաղթ թնդանօթը ։ Կրի գափուին գիշա մայը զետեղեն, սակայն առ միւ չոցին աս կողմը շնոււած հաստատամութիւնները և պաշտպանութիւնները խման սուրբիւն ընդգիմութիւն ցուց ցընելուն համար, թնդանօթը սուրբ Ոօմանոս գրան առջեւ փո

խադրեցին, որ ան ժամանակէն անունը Ծօփ - դափու մնաց : Այս մեծ թնդանօթին երկու կողմերը ասորմէ աւելի՝ փոքր մէկ մէկ թնդանօթ ալ գրին : Մեծ թընդանօթը լեցընելու համար երկու ժամ պէտք էր, և օրը հազիւ եօթը անդամ կը նետուէր : Հետեւեալ առտու արշալուսէն առաջ՝ երբ զօրքերը արթնցընելու և պատերազմի նշանը տալու համտր՝ ռումբը ու թերորդ անդամ նետեցին, թնդանօթը երկար ատեն վառողին չդիմանաւըլ, պայթեցաւ, և կտորները ձուլող մաճառ : Օրպանին գալով, սպաննեց զան : Այս պատերազմական ահագին գործիքը երեսի վրայ չճգելու համար, կտորները իրարու հետ միացուցին, մէջը ժայռերու կյոտերը լեցուցին ու դարձեալ օրը եօթը անդամ կը նետէին : սակայն Օրպանը անոր վրայ ըլլալուն համար՝ իրենց յուսացած արդիւնքը չքաղեցին :

Այս միջոցին՝ ոռւլթան Վէհէմ մէտին գեռպան մ'եկաւ Հունիատէն, որ 18 ամիս առաջ Յ տարուան համար զինադադարում մը հաստատած էր Օսմանցւոց հետ, և հիմա կ' իմացընէր որ Վաճառի տէրութեան կառավարութիւնը լատիստի ձեռքը անցնելուն համար՝ իր ըրած դաշնքը ալ չէր ծառայեր . ուստի Տաճկերէն դաշնադիրը ետ խըրք կեց և Վաճառերէն օրինակը ուղեց, իմացընելով սուլթանին որ եթէ կ' ուղէ՝ կընայ Վաճառացնոր իշխանին հետ ուրիշ դաշնագիր մը հաստատել :

Այս դեսպանը թնդանօթուածիդ զօրաց անյաջորւթիւնը տեսնելով, սկսաւ ծիծաղիլ, և անոնց թնդանօթնետելու Ճամբան սորվեցուց : Իմացուց որ՝ եթէ պարիսպները ծակելի ուղեն, պէտք չեն միշտ մի և նոյն տեղունչան առնել : այլ հինգ կամ վեցը գրքուաչափ միջոց ձգելով երկու կողմը պէտք է նետել : և երբ պարիսպները խարխալին, մէջ տեղը մեծ ռումբը մը նետուելուն պէս, մեծ ծակեր կը բացուին : Դեռ պանին խօսքը բռնեցին և մեծ օգուտ քաղեցին : Այսպէս մաճառ արհեստաւորին մէկը ահագին թնդանօթը թափելով, և մաճառ գեռպան մ'անոր գործածութեան կերպը սորվեցընելով, կոստանդնուպոլսոյ Օսմանցւոց ձեռքը իշխալուն ձեռնոտուեղան . քան զի ասոնք ալ ան գուշակութեանը կը հաւատային թէ մինչեւ որ Յայները չնջուին, քըրրիստոնեաները խաղաղութիւն չպիտի տեսնեն :

Այս յաղթ և երկու ուրիշ թընդանօթներէն զատ, բազմաթիւ միջակ և փոքր թնդանօթներ ալ Օտուն գափուէն մինչև Ալթուն գափուն շարուած էին : Տասն և չորս մարտիկոցներէ քաղաքին պարիսպները կը ումբակոծէին, և բազիստրներու ու աղեղներու միջոցաւ քաղաքին վրայ անձրեի պէս քարեր և նետեր կը տեղացընէին : Ական բահալու համար՝ սերվիացի լեռնականները կարմիր և ճերմակ թաղիով պատած շարժական ապաստանարաններուներեւ պաշտպանուած խրամներէն անցնելով, առաջին պարիս-

պը ծակեցին ու առանց թշնամիներէն վնաս մը կրելու՝ յանեկարծ ներս մտան : Յօյները յանեկարծակի եկան և ուր փախչել նին չէին դիտեր :

Ասոնցմէ զատ՝ չորս անուան շարժ աշտարակներ և պաշտրման ահագին մեքենայ մը շնեցին : Չոր Յօյները կիֆէփոլիս (քաղաքառու) կ' անուանէին : Այ մեքենան բազմաթիւ անիւներու միջոցաւ կը շորժէին . ներսէն և դրսէն եզիերեքիլի մորթով պատաճ էր : Ա երի գոտիկոնին վրայ պատերազմականներուն պաշտպանութելը համար աշտարակներ և պարիսպներ շնուած էին , ու խրամներուն կողմը բացուզգ երկու դուռ ունէր : Ո՞չը՝ խրամները լեցընելու համար փայտեր և ոստերու խուրձեր կային : Ո՞չը քենոյին գագաթն ալ շարժական կամսւրջներ շնուած էին , որոնց շղթաները ձգելնուն պէս , առանց դժուարութեան քաղոքին աշտարակներուն վրայ կը յարձակէին :

Այ պատերազմին մէջ Օսմանցւոց բանակը երկու հարիւր յիսուն հազար հոգիէ բաղկացեալ էր . հարիւր հազար ձիաւոր զօրքեր բանակին ետել շարսւած էին : հարիւր հազար հետեւակ զօրքեր ձակատին աջ թել կտի գուլէէն մինչեւ Ալթուն գափուն տարածուած էին , և յիսուն հազար հետեւակ զօրքեր ալ ձախ թել թօփ գափուէն մինչեւ Հայովան սէրային շարսւած էին : Իսկ սուլթան Ո՞չէմմէտ տասն և հինգ հազար կանչէրիներով բանակին մէջ տեղն էր : Աաղնուս

փաշան քանի մը հազար հոգւով Պէյ օգուտի և Ծգ մէյտանը բըլուրներուն վրայ էր : Պալթա օղլու ծովակալը ; որ ուրացեալ բուլղարացի մ' էր , Օսմաննեան նաւատորմիղը Պասիորի ծոցին մէջ պատրաստեր էր , որն որ անոր անուամբը մինչև հիմա Պալթա լիմանը կը կոչուի : Բոլոր նաւոյին զօրութիւնը չորս հարիւր քսան կտոր ցոկանաւերէ բաղկացեալ էր , այսինքն 18 կտոր երեք կարգ թիերով , 48 կտոր երկու կտոր թիերով , 25 փոխադրական կամ բեռնակիր նաւեր , և երեք հարիւրէն աւելի ալ փոքր նաւեր : Այսպէս Օսմաննեանք Յօյներէն քսան անդամաւելի զօրութիւն ունէին :

Կոստանդնուպօլիսը պաշտպանելու համար կայսեր հրամանաւը ժողվուած զօրքերը չորս հազար ինը հարիւր եօթանասուն և երեք հստիէն աւելի չէին : Ասոնցմէ զատ՝ երկու հազար զօրք դուրսէն ասմանց օդնութեան եկեր էին , և Շենովացիք Յովհաննէս Յօւստիննեանին հրամանատարութեամբը երկու ցոկանաւ և երեք հարիւր կտոր ըստ ոմանց հինգ հարիւր զօրք խրկեցին իբրև վերջին օդնութիւն աս կործանեալ տէրութեան :

Կայսրը անոնց շնորհակալ եղաւ , Յուստիննեանը զօրագլուխ անուանեց , և սոկէզօծեալ մուր հակով Լեռնոս կղղին անոր տուաւ . քանզի կը կարծէր թէ Ո՞չէմմէտ իր սուլթան Ասւրատ հօըրը պէս մէկ ժամանակ պաշարելէն ետեւ ետ պիտի քաշուի : Շենովացիք ալ , որոնք Վալաթիոյ

կը ամիրէին, Յօյներուն պէս կոստանդնուպոլիսը Տաճկաց ձեռքը անցնելուն այնչափ չէին հաւաստար, որ բարեկամութեան և խաղաղութեան դաշինքը նորոգելու համար Մէհէմմէտայ գետպաններ խրկելէն ետեւ, Յունացամեն կերպով օգնութիւններ կ'ընէին : Մէհէմմէտ աս բանը իմանալով երդում ըրաւ որ վիշտավը սպաննելէն ետեւ օձին գըլուխն ալ ջախջոխէ :

Կոստանդնուպոլիս գտնուող վենետիկի գետպանն ալ քաղաքին պաշտպանութեանը համար Աւել ծովէն Վրշիկեղակոսը անցնող վաճառականի նաւերը կեցուց ու զօրքերով լցուց ուստի Յօյները կոստանդնուպոլիսոյ նաւահանգստին մէջ երեք ձենովացի, մէկ սպանիացի, մէկ գաղղիացի, չորս կրետացի, երակու Վյժալըի և երեք վենետիկի մեծ վաճառականնաւեր ունէին, ընդ ամենը տասն և չորս կտոր :

Հրագինուց կողմանէ ալ ասկէ աւելի զօրաւոր չէին . քանի ուշափ որ 150 կենդինարնոց ոումքնետող թնդանօթներ ունէին, սակայն գուրսէն նետուած թընդանօթներէն պարիսպները խարսաւած ըլլալուն համար, ներսէն աս թնդանօթները նետուած ժամանակը, իրենց պարիսպները կը փլչէին, և աս կերպով աւելի իւրենց վնաս կ'ընէին քան թէ թընդանօթներուն ամենէն մեծը պայշթեցաւ, Յօյները զան շնողին դէմ կատղելով, կ'ուզէին կախիւ, ուսկէս թէ Մէհէմմէտէն մեծը պայշթեցաւ ամենէն մեծը պայշթեցաւ աս հինգ նաւե-

ապացոյց մը չկրցան գտնել, ազատեցին :

Թաշնամեաց ոումքերէն պարսպին վայ բացուած ծակերը գիշերները տատաղձով, և հողով լեցուն տակառներով արտոյնօք կը լեցունէին, և ականահատներուն վրայ կրակ թափելով, կը փախցընէին : Թէ և Օսմանեանք Մաճառներէն սորվելով, թնդանօթներէն մեծ օգուտ աեսան, սակայն Յովհաննէս կրաւթ գերմանացին յունական հուրը խիստ վարպետութեամբ գործածելով, մեծամեծ վնասներ տուաւ Օսմանցւոց : Մը լցծ բոցերուն միջոցաւ այն երեքկի մորթով պատեալ մեծ մեքենան այրելու և Սուրբ Ուսմանոսի աշտարակը գիշերով կործանելու կարողեղոն : Մէհէմմէտ աս բանիս վրայ չափազանց զարմացաւ, քան զի չէր կարծեր որ Յօյները մէկ գիշերուան մէջ կարենան այնչափ չափ հասցընել :

1453 Մարիլի 15ին, չորս հարիւր կտորէ բաղկացեալ Օսմանեան նաւախումքը գէպ ՚իՊատիորի հարաւային բերանը յառաջացաւ և եւրոպական ծովեղերքին կողմը Պէտքթաշի մօտ խարիսխ նետեց . ասկէ քանի մ' օր ետքը մէկ կայսերական և չորս ձենովացի նաւեր, որոնք օդին դէշութեանը համար բոլոր Մարտամիսը . Քիոս կղզին անցուցեր էին, յաջող հողմով մ', աս կողմերը գալերնուն պէս՝ Օսմանեան նաւատորմէն գրեթէ հարիւր նաւէ բաղկացեալ մաս մը անմիջապէս գնաց նաւահանգստուն բերանը կայնեցաւ աս հինգ նաւե-

բուն թող չոտալու համար որ ներս
մանեն : Երկինքը պարզ էր, ծու-
զը՝ խաղաղ, մայրաբաղսքին պա-
րիսպները մարդիկներուլ լեցուե-
ցան, և սուլթանը ձիու վրայ
հեծած եւրոպական ծովեղերքէն
ծովային պատերազմի մը պատրաս-
տութիւնները կը դիմէր, որուն
մէջ՝ իր նաւերուն թիւը թշնա-
մեաց նաւերէն երեսուն անգամ
աւելի ըլլալուն համար, յաղթու-
թիւնը իր կողմը կը կարծէր : Քը-
րիստոնէից նաւերուն վրային
կարկուտի պէս նետ և անձրի ի
պէս կրակ կը տեղացընէին Տաճ-
կաց նաւերուն վրայ, որոնք խիստ
շատ ցած էին անոնցմէ, և իրենց
առ թերութեանը չնայելով, կայ-
սերական նաւուն տիրել կ'ու-
զէին : Ուրկից բոցավառ նիւթե-
րով լեցուն ամաներ նետելով,
(Օսմաննցոց շատ նաւերուն մէջ
կրակ ձգեցին և քարերու կոյտե-
րով ընկղմեցին զանոնք : Ֆլէք-
թանէլքա կայսերական նաւուն
կառավարը առիւծի պէս առջե-
ւէն կը պատերազմէր : անոր օրի-
նակին կը հետեւ էին և Քաթանէօ,
Նովարը և Պալանէրի Շնովա-
ցիները : Օովուն երեսը նետե-
րուն շուքովը ծածկուած էր, ո-
րոնք (Օսմաննեան միւս նաւերուն
նաւաստեաց նեղութիւն կու-
տային : քանի մը ցոկանաւեր
ալ իրարու զարնուեցան և բա-
ցուեցան :

Ենատեն Ո՛է հէմմէտ ինքզինքը
կորսնցուց, ու հեռաւարութիւ-
նը, ծովը, և իր աւագութիւնը
մոռնալով, ու բարկութէն վըր-
փրբելով, ձիուն կողերը խթեց
ու ծովուն մէջ նետուեցաւ որ

նաւախումբին քովը հասնի և
թշնամեաց ձեռքէն յաղթութիւ-
նը առնէ : Ենոր բոլորտիքը ե-
ղով մեծերն ալ իրենց ձիովնին
անոր ետեէն ծովը նետուեցան՝
մէկ քարընկէց հեռու եղող Յու-
նաց և Շնովացւոց նաւախում-
բը բունելու համար :

(Օսմաննեան նաւերուն զօրքերը,
որոնք յաղթուած ետ կը դառ-
նային, Ո՛է հէմմէտին իրենց օդ-
նութեան համնիլը տեսնելով, նո-
րէն մեծ եռանդով յարձակումը
կրկնեցին, բայց օգուտ մը չու-
սան : վասնղի հողմին յաջողու-
թեամբը քրիստոնէից հինգ նա-
ւերը (Օսմաննեան անհամար նա-
ւերուն մէջէն անցան, և առա-
գաստինին բացած նաւահանգը-
տին մէջ մոտան, որուն բերանը
Դալաթայի Պալթը փաղարի դը-
նէն մինչեւ կոստանդնուպոլսոց
նոյն անուամբ դուռը երկաթ
շղթայով մը գոցեցին : (Օսման-
նեանք առ նաւային պատերազմին
մէջ մեծ կորուստ ըրին ու ա-
կընկոր մնացին :

Ո՛է հէմմէտ Պալթա օղուին վա-
տութեամբ փախչելուն վրայ բար-
կանալով, զան ցցի զարնելկ'ու-
զէր : բայց Ենիչէրիները շատ ա-
ղաչեցին և հազիւ կրցան անոր
կեանքը ազատել : սակայն իր վը-
րէժը ուղեց իր ձեռքովը առնել :
Չորս գերիներ ծովապետը գե-
տինը տարածած բռնեցին, և
Ո՛է հէմմէտ իր ծանր լախտովը
հարիւր հարուած իջեցուց, և
նոյնչափ վէրբեր ըրաւ անոր մար-
մայն վրայ : Յառաջապահ զինուռո-
րին մէկը անոր երեսին քար մը
նետեց և աչքը կուրցուց : Եյս-

պէս Ենիչէրիներուն աղաջանքովը ուրացեալ բուլղարացին աս պատժով ազատեցաւ : Այ գիպուածէն ետե՛ աս կարծիքը ծագեցաւ Օսմանցւոց մէջ, որ մինչեւ ցարդ կ'ըսուի, թէ՝ Վատուած երկրի իշխանութիւնը իրենց տուած է, և ծովու իշխանութիւնը անհաւատներուն թողուցած է :

Յօյները զարմանալի կերպով թէ օգնութիւն և թէ պաշարընդունելով, սկրտ առին ։ Խալիլ փաշա մեծ վէղբը Յօյներուն գրգռութեամբը աշխատեցաւ Կոստանդնուպօլիսը աղատելու և խաղաղութիւնը հաստատելու համար, Օսմանցւոց յաղթուիլը յարմար ժամանակ սեպելով Վէհ հէմմէտը պատերազմէն հղաժարեցընել: Բայց իր կարծիքին դէմ դնողներն եղան Սաղնուս փաշա երկրորդ վէղբը, որ սուլթանին քեռայրը և սիրելին էր, Վէհ հէմմէտ Գուլբանին՝ թագաւորը մեծցընողը, և Աքչէմսէտային օրէնսդէտը: Նաւային պատերազմէն ետեւ բացուած ատեանին մէջ ամենքնին մէկտեղ որոշեցին որ պաշարումը շարունակեն: բայց Վէհ հէմմէտ հարցուց անոնց թէ ինչ կերպով պիտի կարենան նաւահանգստին շղթան կտրել, և թէ եթէ չկարենան շղթան կրորել, նաւերը ինչպէս նաւահանգիստը պիտու կշեցընեն, ու ինչ պէս քաղաքին երկու կողմին վըրայ պիտի յարձակին, ինչու որ մինչեւ ան ատենը միայն մէկ կողմին հետ կը պատերազմէին: Ճողովականները պատասխան չկըրցան տալ: Են ատեն Վէհ հէմմէտ յանդուգն որոշմամբ մը գժուա-

րութիւնը վերցուց : Են աներ կիւղ ոգին, որ ձիով ծովուն վըրոյ քալելտուաւ, հիմա ալ ցամաք երկրի վրայ նաւերը քալեցընելու խորհուրդը ծագեցուց իր մոքին մէջ: Բայց թէ աս խորհուրդը ըստ Օսմանիեան պատմագրաց իր մտաց արգասիքն է, իր ուղեղէն ծագած է ։ գժուար է հաւատալը: Հաւանականաբար հին ժամանակը և իր ժամանակները իսկ այսպիսի գործեր լսած էր: Վրանց հին ժամանակները և միջն դարու սկիզբները խառնելու, տասներորդ դարուն մէջ՝ Նիկէթաս սեպուհը իր նաւատորմիլը Պեղովազնեան պարանոցին արեւելքէն արեւմուտք քալեցուց, ու ետքը Վէթոնի և Փիլոսի մօտ Կրետացւոց բանակը ցրուեց: Սուլթան Վէհ հէմմէտ Բ. էն տասն և չորս տարի առաջ ալ՝ Աննետիկիք նոյնպէս Վոլիճէն կարտա լիճը փոխադրեցին իրենց նաւերը:

Ենշուշտ անկէ ծագած պիտի ըլլայ սուլթանին՝ նաւատորմիլը Վշիքթաշի վրայէն նաւահանդըռախն մէջ փոխադրելու խորհուրդը: ցամաքին երկայնութիւնը երկու պղտիկ մզոն էր, բայց երկիրը՝ անհաւասար և խորտ ու բորտ: Վէհ հէմմէտ աս տարածութեանը մէջ տախտակներով ծամբայ մը ձեւացուց, անոնց վրան՝ նաւերը դիւրութեամբ սահեցընելու համար, եզի և խոյի ճարպ քսել տուաւ: Լոթանասուն կտոր երկու կարդ թիերով ցոկանաւեր և քանի մը երեք և հինգ կարդ թիերով նաւեր ըսկըսան աս ճամբուն վրայ քալե-

յընել, և մէկ գիշերուան միջոցին մէջ, ու ձսրերուն և բլուրներուն վրայէն Պոսփորի ծովեզրէն նաւահանգստին մէջ փոխադրուեցան՝ առաջասաները բացուած։ իւրաքանչիւր նաւուն մէջ մէկ նաւուղիղ առջև և մէկ նաւայետ ետեւը կային։ Յմբուկները էը զարնուէր, փողերը կը հնչէին, և առտու լուսցած ժամանակը՝ Ծոյները ապուշմացին, երբ իրենց պարիսպներուն տակը նաւահանգստին մէջ եօթանասուն կտորէն աւելի նաւախումբ մը տեսան, որոնք կարծէին թէ երկինքէն կամ յանկարծ հան իջած են։

Յովշաննէս Յուստինեան ուրոշեց որ հետեւեալ գիշերուան մէջ թշնամեաց նաւատորմիզը կը բարկի տայ։ բայց առ խորհուրդը Կալաթայի Շենովացիները Վէհէմէտայ յայտնեցին, որոնք պաշտման բոլոր ժամանակուան մէջ հաւատարմութիւն ձեւ ացընելով, երկու կողմին ալ նենգութիւններ ըրին։ Վակայն՝ մի և նոյն գիշերն ալ գաղտուկ Յունաց օդանութիւն կը հասցընէին։ ցորեկը՝ Օսմանցոց բանակին մէջ կը ծառայէին և ամեն մէկ անգամ մեծ թնդանօթին նետուելուն՝ մէջը իւղով մաքրելու համար որ չպայթի, խիստ շատ իւղը երին անոնց։ Երբ Յուստինեանը գիշերը մութին թշնամեաց նաւախումբին մօտեցաւ, Տաճիկները, որոնք արթուն կը հսկէին, մեծ թնդանօթը անոր նաւուն վրայ պարպեցին։ անմիջապէս Յուստինեանին նաւը ուրմերէն խորտակուեցաւ, և հարիւր

յիսուն իտալացի երիտարարդ զենուորներով ընկղմեցաւ։ Յուստինեանը հաղիւ կրցաւ լողալով աղատելու, և Օսմանեանք յաղթութեան ձայներ հանեցին, որ ծովեղերբներէն և քաղաքին եօթը աշտարակներէն կրկնուեցան։

Երբ լուսցաւ, Տաճիկները ու զեցին որ իրենց թնդանօթին երկրորդ փորձ մ' ընեն։ բայց Յուստինաց նաւու մը վրայ բաշելու տեղ, Կալաթայ առջեւ խարիսխ նետած ծանր վաճառքներով լեցուն Շենովացին նաւու մը վրայ պարպեցին, որ իսկոյն ընկղմեցաւ։ Կալաթայ Շենովացիները գեսպաններ խրկեցին և Օսմանցոց գանգատեցան իրենց ըրած օդնութեանը փսխարէն այնպէս վարձք մ' ընդունելուն համար, որ եթէ չընէին, Օսմանեանք ամենն ին պիտի չկրնային իրենց ութուն նաւէ բաղկացեալ նաւախումբը ցամաքէն նաւահանգը տինդիւնը փոխարք անոնցմէ թողութիւն խնդրեցին ըսելով թէ այն նաւը թշնամեացը կարծեր են, և մայրաքաղաքին առմանէն ետքը իրենց կրած ամեն վիասներուն հատուցումը կ' ընեն։

Օսմանցիք՝ առջի գիշերը բըռնած գերիները պարիսպներուն առջեւ տարին և Յունաց աչքին առջեւ խողխողեցին։

Վէհէմմէտ հրամայեց որ նաւահանգստուին վրայ կամուրջ մը հաստատեն։ ջուրին երեսը երկու կարգ տակառներ զըին և երկաթի ճանկերով իրարու կապեցին։ ասոնց վրայ ալ տախտակներ բեկուելով, հինգ կանգուն

լայնութեամբ լաստ մը հաստատեցին, որուն վրայ հինգ հոգի կրնային մէկ կարդ պատերազմիլ, և այնչափ ամուր էր, որ զօրաց բաղմութիւն մ' ու մէկ թնդառնօթ մը կրնար վերցընել:

Հողոր նաւերը քաղաքին պարիսպներուն դիմացը գացին խարիսխ նետեցին: Ան ատեն Յայները մասձեցին թէ ի՞նչ կերպով (Օսմանցւոց կամուրջը և նաւերը այրեն, և աս գժուար գործը Ճը Ճեաքոսո Քօքքո Վենետիկիցին յանձնեցին: Ասիկա խիստ պրագընթաց երեք նաւակներ առաւ ու քառասուն երիտասարդը ընտիր զօքքերով լցուց, ու յունական հուր և ուրիշ այրող նիւթեր առաւ հետք: Գիշերը կամուրջին մօտեցաւ, անոր վրայ երկու երիտասարդ տղաքներ հանեց, ու հրամայեց որ (Օսմանցւոց նաւերուն այրիլը տեսնել նուն պէս, կամուրջը կրակի տան: Բայց պահապանները, որոնք կը հսկեին, մեծահատոր քարերով նաւակները խորտակեցին ու ընկըզմեցին: (Օսմանցւոց միայն մէկ ցոկանաւը այրեցաւ՝ կամուրջին վրայ գրուած կրակին ալ իսկոյն անցուցին: նաւակներուն մէջի զօքքերը (Օսմանցւոց ձեռքը ինչկան, և հետեւալ առտու Յունաց աչքին առջելը սպաննուեցան: Յօյները աս բանին վրէմը առնելու համար, երկու հարիւր Տաճիկ գերիներուն գլուխները պարսպին վրայ կախեցին:

Աս անյաջող փորձին վրայ Վենետիկցւոց և Ճենովացւոց մէջ կուիւ ծագեցաւ: առ վերջնները աս պատերազմին ձախորդու-

թեան յանցանքը Քօքքոյին անվարժութեանը կու ասյին: կայսրը անոնց մէջը մտաւ ու հաղիւ խաղաղուց զանոնք:

Մէհմէմէտ՝ Վալաթիոյ վերի դին Ա. Ծէոդորոս բլուրին վրայ մարտկոցներ հաստատել տուաւ, որպէս զի Վալաթիոյ առջելը խարիսխ նետած Յունաց և Ճենովացւոց նաւերուն վրայ թնդանօթ արձակեն: Ճենովացիք աղաւեցին որ իրենց վաճառականի նաւերուն չմօտան: Մէհմէմէտ պատասխան խրկեց անոնց թէ այն նաւերը վաճառականի չեն, այլ Յունաց օգնութիւն բերող ծովասպատակներու նաւեր են: Ուստի երբ (Օսմանեանք մոմիկ չընելով, նաւուն մէկը ընկըմեցին, Ճենովացիք միւս նաւերը Վալաթիոյ տուներուն տակը քաշեցին, որպէս զի մարտկոցներէն պաշտպանուած ըլլան: (Օսմանեանք սկսան թնդանօթները տանց վրայ պարպել, բայց նաւերուն և անոնց մէջ գտնուած զօքքերուն բան չկրցան ընել, և այնչափ քիչ օգուտ տեսան, որ հարիւր յիսուն թնդանօթ պարպելով, միայն մէկ կին մը մեռցուցին, ան ալ պատէն ինկածքարէ մը զարնուեցաւ:

Արդէն եօթը շաբաթէ՝ ի վեր պաշարումը անդադար կը շարունակուէր ցամաքին կողմէն, ու հիմա ալ ծովուն կողմէն կը նեղուէր: Արկէ առաջ քանի անգամ որ թշնամիք կոստանդնուպօլիսը պաշարեցին, յարձակումը միայն մէկ կողմէն կ'ըլլար: ինչպէս որ Վատինացիք նաւահանգստէն կը պատէն կը պահան առ քաղաքին մէջ

Տոնել: Բայց հիմա (Օսմանեան ցամաքային բանակը մինչեւ խըրամները հասեր էր, և նաւատորմիջը նաւահանգստին մէջը քաղաքին պարիսպներուն առջեւը կը գտնուէր. արդէն աշտարակներէն չորսը կործաներ էին, Ա. Ոսմանոս դրան մօտ մէծ ծակ մը բացուէր էր, ու անոր տակի խրամը լցուցեր էին.

Վէհէմմէտ որոշեց որ կայսեր դեսպան խրկէ ու նորէն առաջարկէ անոր որ հնազանդի և քաղաքը առանց արիւն թափելու իրեն յանձնէ. մի և նոյն ժամանակը դեսպանին պատուիրեց որ քաղաքին սամրութիւնները աչքէ անցընէ. Իսֆէնտիար օղոր Վէհէմմէտին քեռայրը աս գործը յանձն առաւ ու կայսեր ներկայացաւ, ոչ իբրև սուլթանին կողմէն դեսպան մը, այլ իբրև բարեկամ մը, որ Յունոց վիճակին վրայ մեղքընալով, կը խրատէ զանոնք որ Վէհէմմէտին բարկութիւնը իջեցընելու համար զէնքերը վար առնեն, եթէ ոչ իրենց զուակներուն և կանանց հետ գերի պիտօքան. Այսկայն կայսրը պատասխան տուաւ Իսֆէնտիար օղորին որ եթէ Վէհէմմէտ նախորդ սուլթաններուն պէս հաշտութիւնընէ, գոհ պիտի ըլլայ. ինքը կը հաւանի անոր հարկ տալու, բայց ամենեին չկրնար քաղաքը անոր ձեռքը յանձնել. որուն պաշտամութեանը համար բոլոր բնակիչները պատրաստ են մեռնելու :

Աս պատասխանին վրայ, 1453 Մայիս 24ին՝ սուլթանը իր բոլոր զօրաց մէջ հրատարակեց որ նոյն

ամսոյ 29ին թէ ցամաքին և թէ ծովան կողմանէ ընդհանուր յարձակումը ընեն : Օքրապետները մէկ տեղ գումարեց, և երգմամբ խոստացաւ քաղաքին աւարը առնոնց ձեր և միայն պարիսպները և չենքերը իրեն բաժին պահել : Այս լուրին վրայ՝ ամեն կարգի զինուորները ուրախութեան բարձրածայն աղաղակներ հանեցին : Ենիչերիները աղաղեցին սուլթանը որ նաւային դժբաղդպատերազմէն ՚ի վեր իրենց բանտարկեալ պատերազմակիցները ազատէ . Վէհէմմէտ անոնց կամքը կատարեց, ու բոլոր բանակին մէջ ազդարարութիւնը ըրաւոր պարիսպներուն վրայ ու որ առաջ ելլէ, վիճակի մը կամ նաև հանգի մ' իշխանութիւնը անոր պիտի տացուի . և թէ ան վախիկուները որպար թշնամիին երկութէն փախչել ուղեն, անդթութեամբ դահիճին կացինը պիտի ընդունին իրենց գլուխնուն : Վիշայնակեացները բանակին մէջ պըտըտեցան և բոլոր Տաճիկները իրենց մարգարէին անուանը վրայ երդմնեցուցին, որ առանց փախչելու պատերազմին և մահմէտականութեան դրօշակները մայրաքաղաքին պարիսպներուն վրայ տնկեն :

Փողերու ձայներով բոլոր բանակին և նաւերուն մէջ ընդհանուր լուսաւորութիւն մ' ընելու նշանը տրուեցաւ, ամեն մէկ վրանին քովը, Պասփորի ծովեղերքը, Ղալաթիոյ վերի բլուրները, հաւահանգստատին մէջ, վերջապէս ամեն տեղ փաքրիկ կանթեղներ և ջահեր վառուած էին . քաղա-

քը կէս բոլորակի ձեռով լուսաւ ւորուած էր և բոլոր գիշերը աս խօսքերը ամեն կողմէն բիւր անդամ կրկնուեցաւ . “ Վոտուծմէ ուրիշ լատուած չկայ , և Վէ հէմմէտ անոր մարդարէն է . Ըստուած մէկ է , և անոր նմանող չկայ ” : Յաները առջի բերանը կարծեցին թէ բանակին և նաւատորմիզին մէջ կրակ պատահած է . բայց անոնց ուրախութեան ձայներէն և միայնակեացներուն պարելէն իմացան որ իրենց թշնամիները յարձակման պատրաստութիւնները կ'ընեն : Քաղաքին մէջէն ալ վշտագին հառաջանեքով աս աղիողորմ աղօթքը կը լսուէր . “ Տէր , ողորմեա մեղ , Տէր , ողորմեա մեղ , վերցուր մեր վրայէն , ով Ամենակալ , քու արդար պատիմներդ , և զմեղ մեր թշնամիին ձեռքէն աղտոէ ” :

Ամկայն ընդհանուր մօտալուտ յարձակման լուրը՝ Յունաց սըրտին մէջ գրեթէ անցած քաջաւթեան կրակը վերստին արծարծեց . Պաշարման եօթը շաբաթներուն՝ շստ անդամ կարծեր էն թէ թշնամին քաղաքին ամրոցները ծեծելէն ետև՝ պիտի մեկշնի ու ամեննեին յարձակում պիտի ընէ : Վոր համար ամրականներէն շատը պարիսպները թողուցեր ու իրենց տուները քաջուեր՝ էին : (Օ)սմանեանք աս առիթը չփախցընելով , մեծ կարթերու միջոցաւ պարիսպներուն վըրայ բացուած ծակերուն աեղք լցուած հողի կողովները կը քաշէին : Կայսրը աս եղածը իմանալ , փափական ամրականները յանդիմանեց . բայց երբ անոնցմէ

շատերը գանգատեցան որ զիրենք և իրենց կիները ու զաւակները սնուցանելու ստակ չունին , կայսրը ամեն օր բոլոր աշոտրակներուն վրայ և տուներուն մէջ հաց բաժնել առւած :

Այսիսի 28ին գիշերը երբ (Օսմանցւոց ուրախութեան բարձրաձիչ աղաղակներէն կոստանդնուպոլիս գլորդեցաւ , և բնակիչները իրար տնցան , Յովհաննէս Յուստինեանը անխօնջ վատակօք Ա. Ոսմանոսի գրան մօտ բոլորսին բացուած ծակը գոցելու կը պարապէր : Հողէ պատնէմ' ալ շնեց , և խրամով մը ամրացուց զան . ետքը Դուկաս Կոստարաս ծովակալին մարդ խըրկեց և աղաչեց որ քանի մը թընթանօթ խրկէ իրեն : Կոստարաս անոր պատասխան խրկեց թէ Ճննովացւոցմէ պաշտպանուած կողմը թնդանօթի հարկաւորութիւն չունի , Յուստինեանն ալ կը պընդէր թէ նաւահանգստին կողմէն աւելի այն կողմը պէտք է որ թընթանօթ ըլլայ : Ուստի մէջերնին կոիւ մը ծագեցաւ , ու սկան զիրար վար զարնել . Յուստինեանը կը հաստատէր թէ Կոստարաս՝ իր հայրենեացը մատնութշնամի է : Կոստարաս ալ ծանր ամբառանութիւններ կ'ընէր անոր վրայօք , և կայսրը պարտաւորեցաւ գարձեալ անոնց մէջը մտնալ , ու յիշեցընելով անոնց թէ հաստրակաց կորստեանը միջոցին աս տեսակ կոիւներէն ինչ յաւալի արդիւնքներ կը բանան ծագիլ , կարողեղաւ զանոնք գոնէ առ երեսս հաշտեցընելու :

Յուստինեանը թէ խորհուր-

դոլ, թէ գործքով, թէ խրախուսիչ խօսքերով և թէ իր աներակիւղքաջութեամբը զի, ոստարասը կը գերազանցէր : Դիշեր ցորեկ թշնամիին թնդահօթով հեռուսէն կը նեղէր, և մօտէն՝ պատիշշներուն վայ ելողները ոռւրով գետինը կը գլուրցընէր :

Յուստինեանին գործքերը և աշխատութիւնները տեսնելով, ՈՇէհմէտ ըստաւ . “ Երանին թէ Յուստինեանը իմ բանակիս մէջ ըլլար ” : Կաշառքով ուզեց անոր սիրով որսալ . բայց անհաւատարիմ կեցաւ . Պարապ տեղը Յուստինեան կ' աշխատէր պարիսպները նորոգելու . վասն զի հինցած և փոթորիկներէն խարխալած էին, և Յոյները պաշարումէն առաջ, իրենց ժամանակ և ստակ ունեցած ատենը զանոնք նորոգած չէին : Երկու միանձնաւնք, որոնք (Օսմանցւոց գալէն տառը, պարիսպները նորոգելու յանձնառու եղեր էին, ասոր համար երթալու ծախուց գումարը պահեցին, և երբ քաջաքը կողոպտուեցաւ, թշնամիք 70 000 ոսկի գտան, զորոնք տէրութիւնը պարիսպներուն նորոգութեանը համար զոհեր էր :

Այս Ոսմանսոսի գրան վայ, ուր յարձակումը աւելի կենդրունացած էր, և պատերազմը աւելի սաստիկ կերպով կ' ըլլար, կոյսրը կը գտնուեէր Յուստինեանին և անոր երեք հարիւր Շենովացի ընտիր գորքերուն հետ : Ադրիանուպոլսոց ըստաւծ գուռը կուտականի հարկանք, որ հարկաւոր եղած տեղը օդնութիւն հասցընեն :

Դնեն : Գերմանացի Յովհաննես կրաւթ ձուլիչը Եցրի գափուեին քովլը կը գտնուեէր : Հայվան գափուսուեն մինչեւ Ո. Դեմետրիոս եկեղեցին Խղթորոս ռուս ծիրանաւորին յանձնուած էր, որ քանի մը շաբաթէ ՚ի վեր իբրև քահանայապետական առաքեալ մը Հառովմէն խրկուած էր Ֆիորէնց ցայի ժողովին մէջ վճռուած Յունաց և Լատինացւոց եկեղեցեաց միութիւնը կատարելու համար : Աս նուիրակը թէեւ գըրամով և զէնքով Յունաց օդանեց, բայց իր կրօնական միութեան գործքով աւելի վնաս հասցուցեր էր : Ալշէրնիի կայսերական պալատը վենետիկցի գեուպանին պաշտանութեանը տակն էր : Եւաւահանգստին բոլոր եղերքը Յուստինուար մեծ ծովակալին ձեռքն էր : Ոչրայ պուրնուեէն մինչեւ Ֆէննէր՝ ըսրս հարիւր աղչնուական Վէնետիկցիներու հետ կապրիէլ Շարէվիզանօն կը գըտնուէր : և Անորէ Տինիօ ցոկանաւերը նաւահանգստին բերանը կը պահէր : Փէթրօ Յուլիանի ըսպանիացի հիւպատոսը, և Քաթարէնո Վէնետիկցին ծովուն կողմի քանի մ'ամրոցները կը պաշտանէին : Դեմետրիոս Պալէոլոդ և Ակրոլաս կուտէլի ամեն կողմը պիտի հսկէին, որ հարկաւոր եղած տեղը օդնութիւն հասցընեն :

Կոստանդնուպոլսոց գորաց երկու կայանները միայն Յունաց յանձնուած էր : իսկ միւս տասը կայանները Շենովացիք, Վէնետիկցիք, Ապանիացի մը, ռուս ծիրանաւոր մը, Դաղմատացի մը ու մէկ Գերմանացի կը պաշտանէին :

նէին : Բոլոր Յունաց թիւը գըշ ութէ վեցը հազար հոգիի կը հասնէր, իսկ օտար զօրաց թիւը ասոր կէսն էր . վանականները զօրաց մէջ բաժնուած էին, և Յունաց մեծ յայսը Կոտուածածածնայ վրայ էր, որ Օսմանցւոց վերջն պաշարման մէջ, կապոյտ զգեստով երեցեր, ու Տաճիկ ները պատնէշներուն տակէն հաւածներ էր :

Պակայն՝ երբ Օսմանեանք կը պատրաստուէին բաջութեամբ յարձակելու, այնպէս ձայն մը տարածեցաւ թէ՝ խտալցիք և Վաճառք բանակ մը կաղմելով, Յունաց օգնութեան կը հասնին . աս ձայնը Օսմանեան զօրքերը վհատեցուց և պանական երկիւղ մը տիրեց անոնց մէջ . հաւածնաշկան է որ աս սխալ լուրը տարածել առողջ խալիլ փաշան է, որ Յունաց գաղտուկ բարեկամ ըլլալով, կ'ուղէր պաշարումը վերցընել տալ . Երեք օր Օսմանեան բանակը շարժում մը չըրաւ . բայց երրորդ օրուան իրիկունը՝ երկնից երեսը հիւսիսային կողմը փայլակ մը ծագելով, Օսմանցւոց գրեթէ շնչեալ բաջութիւնը արծարծեց . կարծեցին թէ աս օդերեսյթը Կոտուծոց՝ քրիստոնէակց դէմ բարկանալուն, և իր բարկութեան նետերը անոնց վըրայ թափելուն նշանն է : Վէհակմէտ, որ արդէն սկսեր էր մոտածել թէ ինչ ճամբայ բըռանէ . նորէն ատեան մը կաղմեց, որուն մէջ խալիլ փաշային խաղաղական կարծեացը դէմ դրին Վաղնուս փաշա անոր ոխերիմը, Թուրքա խանը և ներքինապետը :

Եսօր վրայ վեզիրը բարկացաւ և գաղտուկ խորհուրդ տուաւ Յունաց, ու գրգռեց որ քաջութեռ պատմերազմին :

Ես ատեանը Վայիսի 27ին կաղմաւեցաւ, Կիրակի, Յունաց ամենայն որբոց տօնին օրը : Երակուշաբթի առտու՝ Վէհէմմէտցամաքին կողմէն յարձակելու համար իր բանակը երկու թեր բաժնեց : Կաւահանգստին մէջ ալ, ութօուն նաւերը Օտուն գափուէն մինչև Պալատ շարել տուաւ . իսկ նաւատորմղին միւս մասը նաւահանգստին բերանը յառաջ անցաւ : Ալֆուն գափուին գիմացը գտնուած (Օսմանեան բանակին թեր հարիւր հազար հոգիէն աւելի կը պարուշ կէր . միւս թերը, որ յիսուն հազար հոգիէ բաղկացեալ էր, բանակին ձախ կողմն անցաւ : Իսկ վերջապահ զօրքերը հարիւր հազարի կը հասնէին, և Վէհէմմէտ մէջտեղը ատան և հինգ հազար Վնիչքրի ունէր իր գլուխը :

Իրիկունը արել մարը մոտած ատենը՝ բոլոր բանակը շարժման մէջ էր : Տաճկաց միաձայն լավագութեան է, և Յունաց Քիւրիէ էլեխոն խորքերը զինուց շոռաշման և փողերուն հնչման հետ կը խառնուէին :

Կոստանդինու կայսրը Սուրբ Սոփիայի եկեղեցին գնաց, և առորք խորհրդոյն հաշորդուեցաւ . իր աւագանիները իրեն հետեւցան . ետքը քիչ մ' ատեն ծովեղրին վրայ կայնեցաւ, և աղաջեց իր քովին եղողներուն որ եթէ անոնց յանցանք մ' ըրած է իրեն ներեն : Իւրաքանչիւր ոք կայսեր

հետ արցունքներ կը թափէին :
Կայսրը տոկէ և տե ձի հեծաւ
իր հաւատարիմ ուղեկիցներուն
հետ, որոց մէջ կը գանօւէր նաւ
և Փրանկաս պատմագիրը, պա-
րիսպներուն բոլորտիքը պարտե-
ցաւ և զօրքերը քաջալերեց . ան-
գիշերը ամեն պատմիշներուն և
աշտարակներուն վրայ արթուն
կեցան . և ագաղաղին առջի եր-
գին՝ կայսրը արդէն իր տեղը,
այսինքն՝ սուրբ Ոսմանոսի դու-
ռը հասեր էր :

Վայիսի 29ին արշալուսէն ա-
ռաջ պատերազմը սկսաւ . բայց
աս անգամ նշանը տալու համար
մեծ թնդանօթքը չնետեցին : Յոյ-
ները խոնջեցընելու համար, Վե-
հէմմէտ առաջ ծեր և անվարժ
զօրքերը հանեց, և իր բանակին
ոյժը վերջնի յարձակման պահեց :
Երկու կողմէն ալ քաջութք պատե-
րազմեցան, և Տաճկաց կորուս-
տը աւելի եղաւ : Վոտու երբ
լուսցաւ, քաղաքին բոլորտիքը
Օսմանցւոցմէ պաշարուած երե-
ցաւ : Փաղերուն, թմբուկներուն
սոսկալի ձայները զօրաց աղողակ-
ներուն հետ խառնուած օդը կը
հնչեցընէին . ամեն մարտկոցնե-
րէն առ հասարակ սկսան ուումք-
նետել, և նոյն միջոցին՝ թէ ցա-
մաքին և թէ ծովուն կողմէն յար-
ձակումըին : Երկու ժամ շարու-
նակ սոսկալի կերպով պատերազ-
մեցան և յաղթութիւնը անո-
րոշ մնաց :

Օսմանեան զօրքերուն ետեէն
վարոցաւոր զինուորներ կային,
որոնք երկաթէ գաւաղանով և
արջառաջլով զանոնք առաջ կը
հռէին : Վեհէմմէտ ալ երբեմի

քաղցրութեամբ, երբեմն սպառ-
նալէօք, և իր երկաթեայ լախ-
տին հարուածներով զօրքերը
յառաջ կը վարէր : Աշտարակնե-
րուն վայէն քարէր կը տեղային
և պարիսպներուն վրայ ելլողնե-
րը գետինը կը կործանէին . յու-
նական հուրը պարիսպներէն մին-
չև նաւահանգիստոր կը հոսէր և ծո-
վուն վրայ անշէջ կը վարէր : Ան-
գուղները իրարու զորնուելով
կը խորտակէին . ոռոմք ոռումքի
պատահելով՝ մեծ ձայթմաւնքներ
կը հանէին . քաղաքը վառօդին
թանձը մառախուզավով պատաժէր:

Այ միջոցին՝ Յուստինեանին
թէ ը կամ ըստ ոմանց ազդքը նե-
տէ մը վիրաւսորուեցու . բայց Շե-
նովցին ազաէց զկայարը որ իր
տեղը անցնի, և ինքը նաւ մը հե-
ծաւ ու Վալաթա փախաւ : Ասոր
վրայ՝ Յունաց բոլոր զօրքերը վր-
հատեցան, և Ասղնուս փաշա,
պաշարելոց շփոթութիւնը տես-
նելով, վերսաին Ենիչերիները
քաջալերեց :

Հասան անունով բարձրահա-
սակ Ենիչերի մը ձափա ձեռքով
վահանը գլխուն վրայ բռնած,
աջ ձեռքով ալ սուր մը, սան-
դուզի մը վրայէն պարոպին վրայ
ելաւ, երեսուն հոգի անոր օրի-
նակին հետեւեցան : Յոյները կար-
կուաի նման նետեր և քարեր նե-
տելով, անոնցմէ տասն և ութը
հոգի վոր գահավիժեցան . ասոնց
տեղը ուրիշներ յաջորդեցին,
բայց անոնք ալ չկրցան կենալ:
Նոյն ինքն Հասանն ալ քարէ մը
զարնուեցաւ, գետինը ինկաւ,
բայց երբ կէս ոտք ելաւ, և բո-
լորովին, կայնիլ չկրնալուն հա-

մարձունկի վրայ կայնեցաւ՝ միշտ վահանը գլխին վրայ բռնած, իրարու ետև իր վրայ ինկած քարերը իր վահանն ալ վերցուցին, և շասան հոն նետերուն և քարերուն մէջ թաղուեցաւ :

Երբ Ա. Ռոմանոսի դուռը քաջութեամբ կը պաշտպանէին, Տաճիկները Օտուն գափու ըսուած գոնէն ներս մտան. աս դուռը Յոյները ժամանակաւ հիւսած էին, քանզի գուշակութեամբ կը կարծէին թէ թշնամին ասկէ պիտի մտնէ. բայց նոյն դիշերը կայսրը զան բանալ տուեր էր որ յանկարծ թշնամեաց վրայ յարձակի. Յիսուն Տաճիկներ աս գոնէն ներս մտան ու պահապաններուն վրայ յարձակեցան. Ես սոր վրայ Ռոմանոսի դրան քովածայն մը լսուեցաւ թէ քաղաքը աւնուեցաւ, և բոլոր զօրքերուն սրտին մէջ սոսկում մը տիրեց. զօրավարները իրենց ամեն ջանքը ըրին, բայց չկրցան թշնամեաց առջեր առնել. և կայսրը անկարելութիւնը տեսնելով. “ Եւ կ'ուղեմ մեռնիլ, ըստու, քան թէ ապրիլ ”: Եւ երբ տեսաւ որ իր քովիններն ալ ձգեցին փառիան. “ Զի՞յ մէկ քրիստոնեայ մը, պոռաց հառաչելով, որ գըլուխս կարէ ”: Ես ըստած ատենը երկու Տաճիկներ վրայ հասան, մէկը երեսին, ու միւսը ետևէն զարնելով, սպաննեցին. Խայոսպէս բիւզանդեան վերջին կայսեր մարմինը դիտկներու կոյտին մէջ իսառնուեցաւ :

Երդ Օսմանեանք դիտկներու պատնէշներուն վրայէն անցնելով, որոնցմասն իրամները և աւ

կանները լցուած էին, և վախչչողները սպաննելով, բաղմութքներս խռնեցան. վասն զի կը կարծէին թէ կոստանդնուպօլսոյ պարիսպներուն վրայ յիսուն հազարէն աւելի ամրականներ կան: Եսպէս երկու հազար հոգի ըսպաննեցին, ու երբ Յոյներուն քիչուղբութիւնը իմացան, դաւդրեցուցին իրենց կոստորածը. որովհետեւ կ'ուղեկին ողջերի բըռնել, ու իրենց փափագը յագեցիլ. Բոլոր բնակիչները նաւահանգստին կողմէն սկսան փախչիլ, ինչու որ Օսմանեանք տակաւին աս կողմին տիրած չէին: Օտուն գափուէն ներս մտնող յիսուն Օսմանցիները, թշնամեաց պատահելով, չկրցեր էին տուաշ անցնիլ. ուստի բնակիչները կարսղ եղան նաւահանգստը ովին վրայ բացուած գոներէն Յունաց և Շենովացւոց նաւերուն մէջ փախչիլ: Ես կողմի պահապանները աս աղմուկին պատճու իմանալով, գոները գոցեցին և պարսպին վրայէն բանվերը ծովը նետեցին. որովհետեւ աւելորդապաշտ գուշակութեամբ կը հաւատասային թէ Տաճիկները քաղաքին մինչև մէջ տեղը, այսինքն՝ մինչև թափուգ փազարը պիտի հասնին, և անգրէն բնակիչներէն պիտի հալածուին :

Են ժամանակը՝ տռ հասարակ մարդիկ և կանայք, ծերը և մանկունք, միանձունք և եկեղեցականք Առւրբ Առփիայի եկեղեցին դիմեցին. քանզի ՚ի վաղուց անտի նանրահաւատ գուշակութը կը հաւատասային որ՝ եթէ Օսմա-

նեանք մեծի կոստանդնի կանագնած սիւնին քովլը, այսինքն՝ արդի Զէնպէրլի թաշ ըսուած տեղը հասնին, երկինքէն հրեշտակ մը պիտ' իջնայ, ու ամենէն թըշտառ աղքատի մը ձեռքը սուր մը տալով. “ Վո աս սուրը, պիտի ըսէ, ու Վոտուծոյ ժազովը դեան վրէմը հանէ ” : Վնմիջապէս Օսմանեանք պիտի հալածուին, ու Յոյները մինչեւ Պարսկաստանի սահմանադլուխները պիտի քշեն զանոնք :

Առուրք Առփիայի եկեղեցին, որ Յունաց և Հռովմայեցւոց մէջ կրօնքի համար եղած կոփուէն ՚ի վեր երեսի վրայ մնացած էր, հիմա Յունաց ապատանարանը եղաւ. եկեղեցւոյն մէջ ծայրէ ՚ի ծայր բազմութեամբ լցուեցան, ու դռները գոցեցին : “ Եթէ աս մօտալուտ ընդհանուր վտանգին մէջ, կ' ըսէ ՚ի ուգասաւ պատմագիրը, իրօք հրեշտակ մը երկինքէն իջնար, և աս խօսքերը ըսէր . Հռովմայ եկեղեցւոյն հետ միացէք, ու ես ձեր թշնամիները կը հալածեմ ” : Յոյները աս հըրաւէրը պիտի ընդունէին ու աւելի Օսմանցւոց անձնատուր պիտի ըլլային, քանի թէ Հռովմայ եկեղեցւոյն ” :

Օսմանեանք տապարներով գուները կոտրետեցին, և բազմութիւնը ոչխարներու պէս բռնեցին ու գերի տարին : Վարդիկները ըուաններով և կիները իրենց դօտիով զորգ ըստ կապեցին՝ առանց տարիքը կամ աստիճանը դիտելու՝ եսպիսկոպոսը գունապաշտին հետ, տիկինը ծառայի հետ, վանահայրը կոյսի հետ : Եկեղեւ-

ցւոյն մէջ քստմնելի տեսարաններ տեղի ունեցան . սրբոց պատկերները կտոր կտոր եղան, ու անոնց վրայի զարդերը կողոպտուեցան . սկիեղէն և արծաթեղէն ամանները յարձակողաց ձեռքը մտնուեցան, եկեղեցական ըզդեստունեցան ձիերուն վրայ ձգուեցան . խաչելունիր վրան Ենիչէրի գլխարկ մ' անցուցած ասդին անդին պորտցուցին : Եկեղեցւոյն բեմը անասնոց մսուր և պղծութեան տեղի եղաւ : “ Այսպէս, կ' ըսէ ՚ի ուգասաւ, Վայկո մարդաբին խօսքը կատարեցաւ . ՚ի թելոյ սեղանին վրէմը պիտի առնեմ, կ' ըսէ Վատուած, և անոր սեղանին եղջերները պիտի փրշրեմ . փղոսկրեայ ապարանները պիտի ապականին, և ուրիշ շատ ապարաններ պիտի ոչնչանան, կ' ըսէ ՚ի ուգուած (1) : Զեր տօները մերժեցի, և ձեր ողջակէղներուն վրայէն աչքերս պիտի դարձընեմ, և զանոնիք պիտի ընդունիմ : Հեռացուցէք ինձմէ ձեր երգերուն ձայները, ես ձեր սրինգներուն նուագը չեմ ուզեր լսել (2) : յոզովոդեանս վախճանը հասած է, ալ չեմ ուզեր անոր պատիմիք երկնցընել, և այն օրը տաճարին գմբէթները ժաղովրդեան աղաղակներով պիտի հնչէն, կ' ըսէ ՚ի ուգուած ” (3) : Իրօք կ. Պօլոյ ամենէն մեծ տաճարին գմբէթը յարձակողաց աղմուկովը և Յունաց կականմունիքներովը կը հնչէր : Աակայն Յոյները տակաւին նաւահանգստուին վրայ եղած պա-

(1) Վահ. գ. 14-15. (2) Այն. ե. 21-24. (3) Այն. ը. 2.

բիսպներուն մէկ մասը կը պաշտանէին , մինչև որ (Օսմանեանք երկու ժամէ ՚ի վեր քաղաքը կողովուելէն ետև՝ անոնց ետևենէն վրանին յարձակեցան . նոյն ժամանակը նաւահանգստին կողմէն ալ Պէջողութէն եկող (Օսմանցիները վրայ հաստան . Յսյները ցուեմացան . և տուներնին փախան , զորոնք արդէն կողովուեր էին թշնամիք : Դուկաս Առոտարաս յօյն զօրապեալ փախչելով , իր տունը մոտած ատենը ձեռք անցաւ , Աիւլէյմանայ (Օրխան իշխանազուն թոռն ալ Մէհմէմետին ձեռքը չկնալու համար՝ աշտարակի մը վրայէն ինքինքը վարնետեց :

Ահա այսպէս 1453 Մայիսի 28ին
հին Բիւզանդիա քաղաքը, առա-
ջին կոստանդիիանոսի ձեռքովը
մեծնալէն 1125 տարի ետև ու
Օսմանցւոց յիսուն և երեք օր
պաշարմանէն ետքը, առնուեւ-
ցաւ : Այս քաղաքը իր հիմնար-
կութենէն ՚ի վեր արդէն քսան
և ութը անդամ՝ պաշարուեր և
եօթը անդամ թշնամիի ձեռք ան-
ցեր էր : Երեք անդամ Հելլե-
նացիք պաշարեցին զան Պաւսա-
նիասայ, Եզկիփիադէսի և Լեռո-
նի իշխանութեան ժամանակը .
Երեք անդամալ Անտերոս, Ապր-
ուիմիանոս և Կաստանդին հռով-
մայեցի կայսրները պաշարեցին .
Երկու անդամ՝ Թուլիմաս և Թոր-
նիկոսս բիւզանդացի ապստամ-
քները . Երկու անդամ՝ Հալէքսիս
Քօմինոս և Վիքայէլ Պալէոլոդ-
բիւզանդացի կայսրները . Երկու
անդամ՝ Պուլլարիոյ իշխանները,
մէկ անդամ՝ Վլարաց թագաւոր

ըը , մէկ անդամ՝ Ալավաց իշխանը , մէկ անդամ՝ Ռուսոները , Առքօլու և Տիր իշխանաց ձեռքովը , մէկ անդամ՝ Լատինիք՝ Տանտօլոգուքսին ձեռքբովը , եօթը անդամ՝ Արաբացիք՝ ամիրատպետներուն զօրապետաց ձեռքովը , հինգ անդամ՝ Օսմանիցիք (Երկու անդամ՝ Պայէջիտայ ժամանակը , մէկ մէկ անդամ՝ Անւսատ , Վաւրատ Բ . և Վէհչէմմէտ Բ . սուլթաններուն ժամանակը) . Կառտանիդնուալոլսայ տիրողներն եղան՝ Պաւանիխաս : Ազկիսիխադէս , Աւերոս , Կոստանդին , Ալէքսիս , Տանտօլոգ . և Վիքայէլ Պալէոլոգ , վերջապէս Վէհչէմմէտ Բ . Օսմաննեան եօթներորդ սուլթանը :

Մէհէմմէտ յտրճակողներուն
հետ մէկոտեղ քաղաքը ըմտաւ,
այլ պարիսպներէն դուրս սպաս-
սեց որ բոլորովին առման լուրը
առնէ ու անանկ մտնէ . կէս օր
մօտ էր, երբ աս լուրը առաւ :
Ան ատեն՝ իր վէզիրներէն և թիկ-
նապահներէն շրջապատեալ ա-
ներիկւղ և համարձակ կործա-
նեալ տէրութեան մայրաքաղաքը
մտաւ, և ուզգակի լուրբ լոփի-
այի եկեղեցին գնաց, ձիէն իջաւ
ու հետի ներս մտաւ : Վեծ զար-
մացմամբ հարիւր և եօթը սիւ-
ները, և զանազան երկիրներէ բե-
րուած վարդագոյն, կանաչ, կա-
պոյտ, սև և ձերմակ մարմարիոն-
ները, աստեղաձեւ հաստաքարերը,
և պորֆիրները (սուճառի մէրմէր),
բարձրաբերձ վերնատունները և
գմբէթները, գյոնզգոյն և ոսկէ-
զօծ ապակիներով աւետարանչաց,
առաքելոց, լուսուածածնի և
խաչելութեան հսկայածեւ պատ-

կելները կը գիտէր . երբ իր անշադք նայուածքը գմբէթներուն վրայէն ստորին կողմերը գարձուց, տեսաւ որ զինուորին մէկը աղնիւ մարմարիսն մը կը կարէր ու կ'աւրէրէր , սրուն երակները այնչափ ալիքներու կը նմանէին , որ կարծէիր թէ եկեղեցին չորս դռներէն ալիքները դուրս կ'ելլեն՝ դըրախտին չորս գետերուն նման : Վէհէմմէտ իր սուսերովլը զարկաւ զինուորին և ըսաւ . “ Քազաքին գանձերը ձեզի թողոցի , բայց չէնքերը իմն են ” . Ու կիսամեռ դուրս քաշեցին նետեցին զան :

Հրամայեց Վէհէմմէտ իր երգեցիներէն մէկուն որ մահմէտականները աղօթքի կանչէ , ու ինքը աւագ սեղանին վրայ ելաւ ու կէս օրուան աղօթքը կատարեց(*) :

Առաջ Սոփիա եկեղեցին շնեց մեծն կոստանդիանոս կայսրը , բայց երկու անգամ ապստամբութեան և պատերազմի ժամանակ այրելով և մէկ երկրաշարժէ մը խարխալելով , թէոդոս և Յուստինիանոս կայսրները ամրութեամբ նորէն շնեցին : Աս եկեղեցոյն մէջ կը կատարուէին թէքաղաքական և թէ կրօնական ամենէն մեծ հանդէսները և տօնախընթութիւնները . ինչպէս են՝ թագադրութեան , յաղթութե , կայսրներուն ամսւանութեանց , մեծ տօներուն . և եկեղեցական ժողովներուն հանդէսները : Աս

եկեղեցին ոչ միայն կոստանդնուպոլսյ մէջ , այլ և բոլոր Յուստինուց տէրութեան մէջ մէկ հատէր գեղեցիկ և հսկոյածն չէնքին համար :

Հին կայսրները յաղթութքա մայրաքաղաքը գարձածնուն պէս՝ ուղղակի (1) . Սոփիա եկեղեցին կ'երթային աղօթք կ'ընէին , ուստի Վէհէմմէտ ալքազքին տիրելուն ետեւ աս տաճարին մեծ սեղանին վրայ աղօթքը ըրաւ : Աս եկեղեցիէն զատ ու ըիշմէկ քանի վանքեր և եկեղեցիներ կողոպտեցին ու մզկիթի փոխեցին :

Վէհէմմէտ Այս Սոփիային գուրս ելլելուն պէս՝ Դուկաս Կոտարասը իր առջև բերել տուաւ ու ըսաւ անոր . “ Տես աս դիակներուն կցտերը և գերիներուն գունդերը , ահա քաղաքը յանձնել չուղենուդ պտուզ աս է ” : Կոտարաս պատասխան տուաւ թէ՝ “ Ոչ ես և ոչ կայսրը իշխանութիւն չունէինք քաղաքը Օսմանեանց ձեռքը յանձնելու , որովհետեւ կայսեր գուրսէն նամակներ եկան , որոնց մէջ կը քաջալերէին զմեղոր դէմկենանք և անձնատուր չըլանք ” : Վէհէմմէտ աս լըսելուն պէս , աս նամակները Խալիլ մեծ վէղերէն եկած ըլլալուն վրայ կասկածեցաւ . բայց աս միջացին բանմը յայտնի չընելուլ , կայսեր վրայ ըրւը հարցուց , և ըսաւ որ արդեօք նաւով մը փախած է . քանզի հինգ ձենովացի նաւեր առագաստնին բացած կըցեր են նաւահանգստէն դուրս ելլեւ ու աղատիլ . միւս նաւերը բաւա-

(*) Մահմէտականք հինգ անգամ օրը աղօթք կ'ընէն , զբ Նամազ կամ Յալաթ կը կոչէն երգեցիկ մը հրաւիրանօքը , որ Միւէզին կը կոչւի :

կան նաւաստի չունենալինուն համար չկրցեր են փսխչիլ : Նոտարաս պատասխան տուաւ թէ կայսեր ինչ ըլլալը չգիտեր . բայց միայն (Օսմանեանց յարձակման ժամանակը զան պալատին դրան առջեւը տեսեր էր : Այս միջոցին երկու կամչէրի եկան ու կոստանդինը իրենք մեռցընելնին կը հաստատէին : Վէհէմմէտ հրամայեց որ դիակներուն մէջ անոր մարմինը փնտռեն և գլուխը իրեն բերեն : Ասկէ ետև ոկտաւ Նոտարասին միմիթարական խօսքեր խօսիլ, անոր կինը և զաւակները իր առջեւը բերել տուաւ և անոնց ամեն մէկուն 1000 ական փող տալ տուաւ, ու խօսք տուաւ ծովակալին որ կայսեր ժամանակը ունեցած պաշտօները և ինչքը իրեն կը թողու :

Այս երախտիքներէն խարուելով, թշուառական Նոտարասը Յունաց տէրութեան իշխանաւոր մարդոց և աւագանիներուն առնունները ներկայացուց անոր : Վէհէմմէտ զանոնք փնտռել տուաւ, և անոնց ամեն մէկ գլուխն համար սպաննողներուն 1000 ական փող վճարեց :

Նոտարաս աս կերպ տղատութիւն պատիւ գտնելով, իր պալատը քաշուեցաւ : Այս միջոցին՝ Վիւլէյմանայ (Օբխան թոռին և կոտանդին կայսեր գլուխները սուլթանին առջեւը բերին . աս վերջնը դիակներու մէջ գտնուեցաւ . իր ոտքի կարմրագոյն կոչիկներէն ճանցուելով, որոնց վրայ ոսկեղէն թելերով արծիւներ բանուած էին :

Արդի Փազլը փաշա ըսուած

հրապարակին մէջ Վեծն կոստանդինի պատիւ իր Հեղինէ մօքը սիւն մը կանգներ էր . թէոդոս կայսրը զան վերցընել տուաւ, ու անոր տեղը կապարեայ սիւնի մը վրայ եօմը կենդինար ծանրութեամբ արծաթով իր կենդանագիրը շնեց ու հոն տնկեց . Յուստինիանոս կայսրը աս կապարեայ սիւնը պորփիւր սիւնի փոխեց, ու եօմը կենդինարնոց արծաթէ արձանը ձիու վրայ իր արոյրէ արձանը թափել տալու գործածեց, որուն ձախ ձեռքը երկրագունու մը կար վրան խաչմը, և աջ ձեռքը դէպ ՚ի Արեւելք տարածելով, կայսեր աշխարհիս աս մասին վրայ տիրելը իմոցընելու համար :

Հայ աս սիւնին վրայ կոստանդինի գլուխը կախեցին, և արձանին գոռող դիրքին հակառակ նցն իսկ յաղթող Յուստինիանուին ձիուն ստքերուն տակը դրին գան : Բոլոր օրը այսպէս արիւնալից հոն թողուցին, ու իրի կունը գլխուն կաշին հանեցին, և գանդը իբրև յաղթուեն նշան ասիական քաղաքները խրկեցին : Կայսեր մարմինը թաղելու հաւանութիւն արուեցաւ Յունաց :

Կոստանդնուպոլսց հետ բաղդատելով, Վալաթայի վնասը շատ քիչ եղաւ : Վայրաքաղաքին աս արծւարձանը ամուր պարիսպներով պատուած Շենովացւոց իշխանութեան տակն էր, որոնց նաւերը ամեն տեղ տարած ուած էին : Շենովացիք, (Օսմանցւոց յաղթութենէն ետև, Վաղնուս փաշա Վէհէմմէտին փեսային և վէզիրին ձեռքովը հաշտութիւն

ըրին սուլթանին հետ , ու հաւաքածակի քաղաքին բանվերը առնոր յանձնեցին և աղաջեցին որ իրենց վիաս մը չհամի : Մէհէմմէտ Աաղնուու փաշային միջնորդութեամբը հաւանութիւն տուաւ և հրամայեց բնակիչներուն որ տեղերնէն չչարժին և Պալաթան եկող կայսերական նաւերուն մէջ մտնելու չհամարձակին : Երբ հաւերը Պալաթայի ծովեղերը հասան , ժաղովուրդը անոնց վրայ թափնեցան , բայց Օսմանցիք դէմ կեցան և քանի մը հոգի սպաննեցին : Դերի չեղած Յոյները Պալաթա անցան , ու աղաւացան . միայն Նոտարաս՝ Կոստանդնուպօլույ իր ողալատին մէջ բնակելու հրաման տուաւ :

Հետեւեալ օրը Աայիսի 30ին , այսինքն՝ Զորեքշաբթի օրը Մէհէմմէտ ձիով քաղաքին բոլորտիքը պարտելու տաենը Նոտարասին բնակարանը գնաց , որ անոր տռչնը ելաւ , ոտքը ինկաւ և իր գանձերը անոր ցուցուց , ըսելով թէ՝ “Աս ամեն գանձերը սուլթանին համար պահեցի : — Աս գանձերը և քաղաքը , հարցուց Մէհէմմէտ , ով ինձի տուաւ : — Աստուած , պատասխանեց Նոտարաս : — Ուրեմն , կրկնեց Մէհէմմէտ , պէտք է որ Աստուծոյ շնորհակալ ըլլամ և ոչ քեզի ” : Աս նախատաւլից խօսքերէն ետեւ՝ Նոտարասի կնոջը անկողնոյն քովը գալով , որ հիւանդ պառկեր էր , սկսաւ միմիթարել զան , և հրամայեց որ ինքզինքը աղէկ նայի . Նոտարասին զաւակները իր առջեւը բերել տուաւ , որոնք անոր ոտքը ինկան և խո-

նարհութիւն ըրին :

Արկէ ետեւ գարձեալ ձի հեծաւ Մէհէմմէտ ու քաղաքին բոլորտիքը պարտեցաւ . բայց քաղաքը աւերած էր , փողոցները անապատ գարձած , և տուները գատարկացած . քանի մ' աւարառուու մարդիկ սուրերնին բացած ասդին անդին կը թափառէն աւար վնտուելու համար : Քաղաքին մեծագոյն մասը աչքէ անցընելէն ետեւ՝ սուլթանը կայսերական պալատը մտաւ , և անմարդացեալ սրահներուն մէջէն անցնելով , սիրտը ելաւ ու մէկ պարսկերէն տաղ մ' ըստւ , որով մարդկացին փառաց անցաւորութիւնը և փոփոխականութիւնը կ' ուղեր ցուցընել :

Այսու ամենայնիւ աս մտածութիւնը , իր յաղթութեանը վրայ պարծենալու , ինքզինքը զեղխութեան տալու և անդթօւթեգործերը ընելու արգելք չեղաւ . պալատին մօտ մէկ փառաւոր սեղան մը գնել տուաւ , և ուրախութեամբ քիչ մը գինի աւելի խմելուն համար՝ կէս գինովցած ներքինապետին հրամայեց որ երթայ Նոտարասին խիստ գեղեցիկ չորեքտասանմեայ զաւակը ուղեւ ու իրեն բերէ : Նոտարաս յուշահատած՝ պատասխան տուաւ նուիրակին թէ աւելի կ' ուղէ իր որդին գահիձի մատնել , քանիթէ սուլթանին : Աս պատասխանին վրայ՝ Մէհէմմէտ գահիձներ խըրկեց որ Նոտարասը և անոր ընտանիքը իր առջեւը բերեն : Օսկակալը իր զաւակներովը սուլթանին գրան գրան առջեւը թողուցին բաց ՚ի չորեքտասանմեայ գե-

շեցիկ որդիեն, որ Վէհէմմէտին քովը տարին :

Առ միջոցին՝ Առարաս իր զաւակները քաջալերեց որ իբրև քրիստոնեաց յնունին, և առ կերպով վերջացուց իր խօսքը . “ Արդար ես գու Տէր ” : Առաջ զաւակները մէկիկ մէկիկ իբրեւց հօրը աչքին առջեց գլխատուեցան . Առարաս հրաման խնդրեց, գլուխց մօտակայ մատուռին մէջ քանի մը վայրկեան աղօթք ըրաւու եկաւ իր գլուխը գահիճին յանձնեց, և իր մարմինը իր զաւակոց տակտուին տաք և արիւն նաշաղախ դիակներուն վրայ ինչ կաւ : Վեռեալներուն գլուխները սեղանատունը տարին և սուլթանին ցույցուցին, իսկ դիակները գուրսը նետեցին, և թաղելու իսկ արժան չտեսան :

Վէհէմմէտ աղջկան մը գրգըռանօքը, որն որ չափաղանց կը սիրէր, արդէն ներուշած Յոյները Վկրէթ պաղարի մէջ գլխատել տուաւ . Վենետիկի և ըլլուպանիոյի հիւպատոսները իբրեւց զաւակներով աս պատիմէն չափատեցան : Յօնթարէնո և ուրիշ տասը աղնուական վենետիկիցիներ Սաղնուս փաշա վէղիքին 7 000 ոսկի տալով հաղիւ կրցան աղատիլ :

Իզիտորոս կարտինալը իբրեւ գերի ծախուեցաւ ու Վալաթիա բերուեցաւ, ուրկից հնաբրով մը նու մը մտաւ ու փախաւ : Փրանզաս պատմագիրն ալ իր բուրը ընտանիքով գերի ինկաւ ու ճամբով մը փախչելով, Պեղոպոնէս գնաց իր կնոջը հետ . իսկ տղան և աղջկը սուլթանին կանանցը տարուեցան : Յունաց

խառա գեղեցիկ տղաքները և աղջկիները Վէհէմմէտին համար պահուեցան, ու մէկալները Վէսիա և Վերիանուպօլիս՝ քշուեցան : Վյապէս քաղաքին պաշտպանութեանը համար մեռնելու համարձակութիւն չունեցողներուն գլուխը մէկ մէկ կերպ գմբաղդութիւն եկաւ :

Կոստանդնուպօլսոյ նաւահանգամին կողմի մէկ ամրոցն ալ պաշարման ժամանակը քաջութեամբ Արետացիք կը պաշտպանէին, բոցցերը Ճենովացուց փախչելը և Օսմանցւոց իրենց ետևէն յարձակիլը տեսան, Վալաթա փախան : Յուստինեանն ալ, որ վէրք մը ստանալով կայսեր քովին փախչեր էր, շատ չանցաւ ամշնալէն և տրամութենէն, կամ գուցէ իր վէրքին սաստկու էն մեռաւ :

“ Յարձակման երրորդ օրը, կըսէ Դուգաս պատմագիրը, Վէհէմմէտ հրամայեց որ իր բանակը և նաւատորմիով իրենց տեղերնին երթան . նաւերը ընկլմելու չափ բեռնաւորուած էին, բայց ինչ տեսակ բեռ կը կարծէք որ ըլլար . ամենուն մէջը ծանրագին հանդերձներ, ոսկեղէն և արծաթեղէն անօթներ, արյուէ և անագէ ամաններ . գերիներ, քահանաներ և աշխարհականներ, միանձունք և կյուներ ցուած էին : Յանակին վրանները գերիներով և նոյն օրինակ կողոպուտներով լեցուն էին : Օաղբելու համար՝ մէկը քահանայական զգեստ կը հագնէր, ուրիշը ոսկեկուռ վիժակները ձիւու վրայ կը դնէր իբրեւ տապահէ (հալլ) : Ոմանք որբանուէր ա-

մաններու մէջ կերտիուր կ'ուշ տէին և սկիչներով գինի կը խըս մէին : Կտաքեր բեռցած գրքեր Արեւլք և Արեւմուտք խրկուեցն, և մէկ արծաթի՝ տասը հաշտոր Արիստոտէլի, Պլատոնի, առառածածաններու և ուրիշ հեղինակներու գործերը կը ծախէին : Աւետարաններուն վրայի ոոկի դրուադը կը հանէին ու կը ծախէին, և եաքը գիտքը կը նետէին : Որբոց պատկերները կ'այրէին, և անոնց կրակովը կերակուր կ'եփէին” :

Ոէհէմմէտ թէ և աշխարհակալ, բայց միանդամոյն աշխարհաշն ալ էր և իր հպատակներուն խաղաղութեանը հոգ տանող : Ուստի չորրորդ օրը՝ Ոէհէմմէտ կոստանդնուպօլիսը նուրոգելու և ժողովրդով լեցընելու հարկաւոր եղած միջոցները սկսաւ ՚ի գործ դնել : Ծենտեղ ձայն հանեց որ քաղաքին պահուող բնակիչները դուրս ելլեն ու իւրաքանչեւը ոք աներկիւղ իր տունը երթայ և առաջուան պէս ազատ ըլլոյ : Յունաց պատրիարքը մեռած ըլլալով, հրամայեց Ոէհէմմէտ որ անոր տեղը ուրիշ մ'ընտրեն և ըստ իրենց ծիսի ձեռնադրեն զան* :

Այսական վրայ՝ գերութեան նէ և մահուանէ աղատուող եկեղեցականները և աշխարհականները ժողովրդ ըրին, ու Գէորգ Ագոլարիոսը, որ Գեննատիոս ալ կը կոչուի, պատրիարքը ընտրեցին ու կայսերաց ժամանակուան պէս ձեռնադրութեան հանդէսը կատարեցին : Ոէհէմմէտ նորընտիր պատրիարքը մեծ խնջոյքի մը հըստ իրեց, և մեծ յարգանօք պատուեց զան : Շարեկամական երկար խօսակցութենէ ետեւ, մեկնելու ժամանակը՝ ծանրագին գաւազան մը տուաւ . ետքը՝ մինչև գոււիթը անոր հետ եկաւ, թէ պէտև Գեննատիոս աղաչեց զան որ ետ դառնայ՝ սուլթանը իր ամեն աւագանիներուն հրամայեց որ պատրիարքին հետ ընկերանան : Գեննատիոս իրեն ընծայ տրուած գեղեցիկ ձին հեծած՝ մինչեւ Ո. Աւաքելոց եկեղեցին գնաց, քանզի հոս բնակելու ու բոշեր էին, Ո. Ոսկիա եկեղեցւոցն աեղք, որ մզկիթի փոխուեր էր էր : Շայց աս եկեղեցւոյն թաղը խիստ ամայի գարձած ըլլալուն և քանի մ' անդամ անդժութեան գործքեր պատրիարքը համար՝ Գեննատիոս աղաչեց զասւլթանը որ պատրիարքական աթոռը Ամենասուրբ Կոյս եկեղեցին փու

* Կայսերաց ժամանակը՝ պատրիարքաց ձեռնադրութեան հանդէսը այսուեն կը կատարուէր : Նորընտիր պատրիարքին գոհարներով և մարդարիմներով զարդարուած ոսկի գաւազան մը կուտային, ու փուտուոր զարդարուած կայսերական ձիս մը վայ հեծուցած՝ ընկերութեամբ ամեն կղերիկոսաց պատրիարքին պաշտու կը տանէին, ու ը երիցակեաները օրինաց և առջութեան համաստ պարգևները կու տային : Կայսրը ծերակայտին մէջ տեղը իր գտնէին վայ նաստած՝ գլուխը բաց անոր եղիսկուպասկան գաւազանը կուտար, կայսեր առաջն մատրանապետը զան կ'օր-

հներ, ու եկեղեցական երգերէն ետեւ՝ կայսրը ուր կ'եւէր՝ պարունի գաւազանը աջ ձեռքը՝ քըսնած, նորընտիր պատրիարքը երեք անդամ ժողովրեան առջեւը կը խնարհէր, և կայսեր ուրքը կ'ինար : Կայսրը արքունի գաւազանը վեր վերընելով, աս խօսքերը կ'ըսէր ան տուն : “ Ամենասուրբ Երրորդութիւնը, որ ինծի թագաւորութիւնը տուաւ, հաստատէ զքել՝ ՚ի պատրիարքութիւննոր չուովմի ” : Այսպէս պատրիարքը կայսերէն իր իշխանութիւնը կ'առներ :

խագրէ , որն որ եաքը Ջէթհիէ
ըսուած մզկիթի փախուեցաւ :

Վէհէմմէտ Գեննատիոսին վը-
կայագիր մը տուաւ , որուն մէջ
պատրիարքին հաստատութիւնը ,
եկեղեցեաց անկէ ետև մզկիթի
շիտխութիլը , քրիստոնէից ամուռա-
նութեանց , յուղարկաւորութեց
և ուրիշ տօնախմբութեց հան-
գէսները աներկիւլ կատարութիլը
կը հաստատէր :

Կոստանդնուպոլսոյ Յօները
այսպէս խաղաղընելով , Վէհէմ-
մէտ Վալաթա անցաւ : Լատինաց
նաւերը փախչող Շենովացիները
գրի առնուեցան , անոնց տու-
ներուն գռները կոտրտեցին ,
բայց չկողոպտեցին . այլ կարա-
սիքներուն ցանկը գրեցին , և
անոնց տէրերուն երեք ամիս
պայմանաժամ տրուեցաւ . աս
պայմանաժամէն ետև՝ չեկողնե-
րուն տուները կարտոիքներով
տէրութեան գրաւուեցան :

Ետքը հրամայեց Վէհէմմէտ որ
Վալութայի ցամաքի կողմի սլա-
րիսաները կործանեն , բայց նա-
ւահանգոտին կողմինները թո-
ղուն : Կոստանդնուպոլսոյ ամ-
րոցները մեծցընելու և ամրացը-
նելու , ու անմարդացեալ քաղա-
քը բնակիչներով լցցընելու հա-
մար՝ նախ որմասդիլներ և կիր
եփողներ ժողվեց ու ետքը հը-
րամայեց սպառնալոք որ Տրա-
պիդոնէն , Անոպէն և Կոփրօ-
քասթրօնէն հինդ հաղար ընտա-
նիք գան ու կոստանդնուպոլիս
բնակին :

Եր ծառաներէն Ալուէյման ա-
նունով մէկուն յանձնեց , որ
մինչեւ Օգոստոս՝ պարիսպները

նորոգելու համար սէտաք եղած
կիրը պատրաստել տայ , և մին-
չեւ Անդամերեր՝ գաղթականնե-
րը կոստանդնուպոլսոյ մէջ զե-
տեղէ : Վէհէմմէտ հրովարտակ-
ներ հանեց որ ան ամեն Յօնե-
րը , որոնք կայսրութեան ժամա-
նակը իշխանութիւն ունեին , իր
քով գան ու ինքը զանոնք աւե-
լի մէծ աստիճաններու պիտի
հասցընէ . ասոր վրայ՝ շատ աղ-
նուատոհմ Յօներ որոշուած օ-
րը , այսինքն՝ Պօղոս և Պետրոս
առաքելոց տօնին՝ կոստանդնու-
պոլիս եկան , բայց իրենց առ
շափաղսնց փատահութիւնը կեան-
քերնին զրհեցին :

Կոստանդնուպոլիսը առնելէն
քսան օր ետքը՝ (18 Յունիս 1453)
Վէհէմմէտ զէսլ ՚ի Ծրիանու-
պոլիս Ճամբայ ինկաւ՝ Յունաց
աղնուատոհմ կոյսեր և տիկին-
ներ հետը առած , որոնց մէջ կը
գտնուէր նաև Կոստարասայ ան-
երկիւղ և առաքինի կինը , որ
Ճամբան մեռաւ : Վէհէմմէտին
ուղղէկիցներուն հետ Շենտէրէ-
լիի գերգաստանէն Խալիլ փաշա
մէծ վէղիրն ալ կար , որուն գը-
լուխը կորել տուաւ : Օսման-
եան տէրութեան մինչեւ այն օրը
ունեցած երկու հարիւրի չափ
մէծ վէղիրներուն մէջ Խալիլ ա-
ռաջինը եղաւ որ գլխատուեցաւ .
ասորմէ ետև մինչեւ հիմա գրե-
թէ քսան անգամ աս բարձրաս-
տիճան իշխանաւորները սպան-
նուած են : Կոփրէն՝ Խալիլ մէծ
վէղիրը գաղուուկ կերպով Յօն-
աց բարեկամ էր , որոնցմէ կա-
շառք անգամ կերած էր : Օր
մը Վէհէմմէտ՝ Կոստարասայ հետ

խօսեցած ատենը՝ հարցուց անոր թէ ի՞նչ պատճառաւ Յօյները ան աստիճան յամառ ու թեամբ իրեն դէմ գրին, Նոտարաս Խալիլ Յունաց գրած նամակները ցուցուց, որոնց մէջ Խալիլը ըսերէր թէ՝ “ Ազէկ գիմացէք, քաջութեամբ կուռեցէք, ու սուլթանը յուսահատելով ետ պիտի քաշուի ”: Մէհէմմէտ Խալիլը ըստորերկրեայ բանտի մը մէջ նետել տուաւ, որ քառասուն օր հոն մնալէն ետև՝ գլխատուեցաւ: Անոր հարստութիւններէն 120 000 տուգադ տէրութեան գանձը գըրաւեց: Անոր Յագուար և Մէհէմմէտ փաշա խորհրդակիցներուն ինչքն ալ նոյնպէս տէրութեան եղաւ: Խալիլի բարեկամները անոր մահուան վրայ չքցին, սրովչետև տէրութեան կողմէն արդիլուած էր:

Արդէն երկար ատենէ ՚ի վեր Մէհէմմէտ՝ Խալիլ վէզիրին Յօյներէն կաշառք ու տելուն վրայ կը կասկածէր: Ուստի օր մը շղթայով կատուած ալուէս մը տեսնելով, ըստւ: “ Ու անմիտ, ինչու Խալիլին չգիմեցիր որ զքեզ ազատէ ”: Աս խօսքին վրայ՝ վէզիրը զարհուրեալ հրաման խընդրեց որ Մէքքէ ու խոտի երթայ, որպէս զի սուլթանին բարկութենէն աղատի: բայց Մէհէմմէտ հրաման չոտուաւ:

Դրիմնուազօլսէն Պարսկաստանի շահին, Յգիպտոսի սուլթանին և Մէքքէի իշխանին՝ հրամարտակներ խրկեց, որոնց մէջ կոստանդնուպոլիսը առնելը կ' իմացընէր: Յօյն ժամանակը՝ Յըրուպական դրացի քրիստոնեայ տէ-

րութիւններէն խնդակցութեան դեսպաններ եկան, որոնցմէ տարեկան հարկ պահանջեց: Աերս վիզ իշխանէն 12 000, և Պեղոս պոնէսի իշխանէն 10 000 տուգադ հարկ խնդրեց: Խոկ՝ Քիոսի և Լեռ փոսի Ճենովացի իշխանները 9 000 տուգադ տարեկան հարկ վճարեցին առ երկու կղզիններուն համար: Տրապիզոնի և Սեաւ ծովի նաւահանգստի քաղաքներուն բընակիչներէն տորեկան 2 000 տուգադ խնդրուեցաւ: Յոկուսացւոց հարկը աւելցուց սուլթանը, ու 1 500ը 3 000 ըրաւ: որովհետեւ առ հասարակապետութիւնը Յօյն փախստական անուանի զրապետաց և գիտնականաց հիւրընկալութիւն ըրեր էր:

Պեղոպոնէսի Յօյները իրենց զգնական Ալպանացւոց հետ և իրենք իրենց հետ անհամաձայն էին: Յունաց վերջին կայսեր Դեմետրիս և Թուվմաս Եղբարբը կոստանդնուպոլիսը առնուելէն ետև՝ ուղեցին Իտալիա փախչել, Ասոր վրայ՝ Ալպանացիք Կաղ Պետրոս անուն զրապետին առաջնորդութեամբը ապստամբեցան, և ուղեցին Պեղոպոնէսի տէրութիւնը անոնց ձեռքէն յափշտակել: Դեմետրիս և Թուվմաս փախչելէ ետ կեցան, ու սուլթանին հարկ վճարեցին, որ 10 000 տուգաթին տեղ 12 000 ուղեց: Ալպանացւոցմէ զատ՝ Մանուէլ՝ Քանդակուզէնը, որ ժամանակաւ կայսեր տեղը անցնիլ ուղեր էր, Յօյն ապստամբներուն գլուխը անցնելով, Պեղոս պոնէսի պիտի տիրէին, թէ որ Մէհէմմէտ թուրքա խանը Օս-

մանեան բանակով մը Պալէոլոդ-
եան եղբարց օգնութեան շխրկէր :
Յանամիք յաղթուեցան, և տա-
ռը հազար Ալպանացի կիներ (Օս-
մանցւոց ձեռքը գերի ինկան :
Յուրա խան խրատեց երկու եղ-
բարցները ու ըսաւ . “ Յէ որ սուլ-
թանը ձեզի չմեղընար ու գրե-
թէ կորսուած երկիրը նորէն ձեր
իշխանութեանը յանձնել չխտար,
անտարակոյս պիտի կորսուէիք :
Փորձով կը տեսնենք որ գուք իշ-
խանութիւն վարելը չէք գիտեր .
ուստի հարկաւ կը պարաւառիք
ձեր հպատակները աղէկ կառաւ-
վարելու : Ազէկ զդուշացէք ներ-
քին ապստամբութիւններէն . աշ-
խուժութեամբ անսնց առաջը ա-
ռէք, և ապստամբներուն գլու-
խը ջախջախնելու մի՛ զանաք : Եր-
կու բանով մենք (Օսմանցիքս այս-
չափ զօրբառը եղանք . չարերը
պատժեցինք և բարիները վար-
ձատրեցինք : Յէ որ ժամանակին
պարագաները չներեն որ չարա-
գործին պատիժը տանք, թողու-
թիւն կու տանք անոր . բայց երբ
ամեն բան կը խաղաղի, առկա-
խեալ մնացած պատիժը ՚ի գործ
կը գնենք ու վրէժիսնդիք կ' ըլ-
լանք : — Յէ որ իրարու համա-
ձայն էք, ձեր գործքերը խաղաղ
և յաջող ընթացք մը պիտի ու-
նենան . բայց երբ ձեր մէջը գըժ-
տութիւն մտնէ, գործքերնիդ
շատ տարբեր պիտի՝ ըլլան ” : Այ-
սոքերէն ետեւ՝ Յուրա խան մեկ
նեցաւ :

Վէհէմմէտ այն ձմեռը խաղա-
ղութեամբ Ադրիանուպոլիս ան-
ցուց : Աիլիլի և Պիվատոս քա-
ղաքները, որոնք կոստանդնու-

պօլսոյ առջեր իբրև երկու պա-
հանորդ կը գտնուէին, մայրաքա-
ղաքին առնուելէն առաջ, իրենց
պարիսպներուն ամրութեանը վը-
րաց վատահացեալ, (Օսմանեան
թեթևազօր գնդերու դէմ գը-
րեր էին, բայց հիմա սուլթանին
յաղթող սուրէն վախցան ու անձ-
նատուր եղան :

Վէհէմմէտ կոստանդնուպոլսոյ
և անոր չընակայ քաղաքներուն
տիրելով, որոշեց որ Աերվիսոյ տի-
րէ : Իիւզանդիան առնելէն տա-
րի մ' եաքը, գարնան մէջ Աեր-
վիսոյ Վէորդ իշխանին գեսպան մը
խրկեց և ըսաւ . “ Այդ քու ժա-
գաւորած երկիրդ քուկի չէ, այլ
լազարի Ավաննոս որդւոյն է,
ուստի լազարի աղջիկը իմ մօ-
րուս ըլլալուն համար իրաւամբ
ինծի կ' ինայ : Վուլք հօրդ բա-
ժինը ինչպէս նաև Սօֆիան կը թո-
ղում քեզի : Յէ որ աս իրաւա-
խոհութիւնը չընդունիս, գիտ-
ցած ըլլաս որ վրադ պիտի գամ” :

Աատամիկ պատուէր տուաւ գես-
պանին որ քսան և հինգ օրէն
ետ գառնայ, եթէ ոչ իր գլու-
խը պիտի կորսնցընէ և մարմինը
վայրի գաղանաց պիտի նետուի :
Այ միջոցին Վէորդ Դանուպէն
անդին անցեր էր որ Հունիատէն
օգնութիւն ուզէ . ուստի Աեր-
վացիք մինչև Վէորդին ետ գառ-
նալը գեսպանը սպասեցուցին,
ու իրենք քաղաքները ամրացը-
նել և պաշար ժողվել սկսան :
Երբ գեսպանը երեսուն օր ու-
շացաւ, Վէհէմմէտ բարկութիք
իր բոլոր զօրքերով Փիլիպպէ ե-
կաւ, ուր գեսպանը գտաւ և հա-
զիւ անոր կեանքը շնորհեց, երբ

ու շահնալուն պատճառը իմացաւ :
Վաճառները գետը անցնելով, թիրնովայի բողոքովիքը եղած երկիրը աւերեր, և աւարով ետդարձեր էին : Վէհէմէտ Փիլիպպակէն գէպ 'ի Աօֆիա վաղեց, իր բանակին մեծագոյն մասը հսութողուց, և ինքը քսան հազար ձիաւոր զօրքով Վերմիա մոտաւ առանց արգելքի . որովհետեւ Գէորգ պատուիրեր էր իր հպատակաց որ ամրոցները պաշտպանեն ; խոստանալովոր Վաճառները անյատղաղ պիտի գան զիրենք աղատեն : Վէհէմէտ իր բանակը երկու թերի բաժնեց . որոց մէկը Վէմէնտրէի վրայ խրկեց, ու միւսը Օսթրումիցի կոմ Վիլիի հիսարի . աս ամրոցները երկրին գըլխաւուոր բանլիքներն էին : Զիաւոր զօրքերը բոլոր Վերմիան առպատակեցին ու յիսուն հազար գերի բռնեցին, որոց չըստ հազարը կոստանդնուպօլաց շրջակայ գիւղերը խրկուեցան հոն ժողովրդով լեցընելու համար : Վէմէնտրէ Օսմանցւոց դէմ դիմացաւ . թէ և արտաքին պարիստաները կործանեցան, բայց ներքին բերդը անառնեկ եղաւ : Օսթրովիցը, երկար ատեն դիմանալըն ետեւ՝ երբ Օսմանցւոց թնդանօթներէն պարիստաները խորտակեցան, դռները բացաւ ան դաշտմբ որ՝ զօրքերը ազատ պիտ' ըլլան : թէ և աս դաշնիքը երդումով հաստատուեցաւ, բայց երբ անձնատուր եղան, բոլոր ամրականները գերութեան քշուեցան : Վէհէմէտ Վէմէնտրէի պաշառումը վերցուց, Աօֆիա եկաւ, ասկէց ալ Վարիանուպօլիս, ուր

գերիները բաժնեց՝ խիստ գեղեցիկ երիտասարդները իբրև աւարին հինգերորդ մասը իրեն պահելով։

Յիբուզ պէյը երեսուն հազար հոգւով թրուսովաց թողուց Վէհէմմէտ որ Ասճառաց և Աերվաց դէմդնէ։ Հունիատ և Գէորգ Օսմանցւոց վրայ եկան, յաղթեցին և Յիբուզ պէյը գերի բռնեցին, ետքը՝ յառաջանցան, երկիրը աւերեցին ու Փիբոթա և Վիտին քաղաքները կը բակի տուին։ Վէհէմմէտ իր զօրքերը առաջ շարժեց սակայն Հունիատ արդէն յաղթութեամբ իր երկիրը քաշուեր էր, և Գէորգ 30 000 ոսկի տարեկան հարկ խոստանալով, Վէհէմմէտ հաշտութիւն ըրաւ (18 Մարտի 1454), և Կոստանդնուպոլիս դարձաւ։

Վ Ենետիկցւոց հետ ալ հաշւ
տութիւնը ըրաւ, և հրաման տու-
աւ որ Վ Ենետիկի հասարակալե-
տութեան հպատակաց պաշտպա-
նութեանը համար դեսպան մը
կենայ Ռիւզանդիա : Ասկէ ետե՝
սկսաւ տէրութեան նոր մայրա-
քաղաքը շքեղոցընել, և ներքին
կառավարութիւնը կարգաւորել.
մզկիթ մը ժննեց ՚ի պատիւ Մար-
գարէին Կյոււպ դրօշակին*, և

* Հոտ մահմէտական աւանդութեան՝ իշխան
Մարգրեթին գրօսակիբը և խիստ երեկէլի ին-
կերներէն մէկն էր : Քրիստոսի 668 թուակա-
նին Եղիս Արքաբացոց իշխանին հետ Կրո-
տանենու պօլսաց պաշարմանը գալովլ, պարիստո-
ներուն տակը մտուեր է . իր վերջինն վայրիեա-
նին մէջ մարդարեացէր և որ օր մը մահմէտա-
կան իշխան մը Յունաց մայուսքարաքը պիտի
առնէ և իր գերեւթմանը պիտի պատուէ :
Սուլթան Մէհմէտ, կ' ըսեն, առ մարդա-
րէութիւնը իմանալով, Ազչէմէտամին օրէնս-
գէտին աղանձք, որ Աստուծոյ հարցընէ թէ

Կրատանգնուապօլսոյ մէջ տեղը
Յունաց կոյսերաց և Ա. Վաշ-
քելոց եկեղեցւոյն աւերակաց
վրայ մեծ պալատ մը շինեց , որ
հիմա Լոքի Արայ կը կոչուի :

Խալիլի թշուառ մահուանէն եւ
տե՛ մեծ վէզիրութեան պաշու-
նը դատարկ մնաց գրեթե տարի
մը , որ մինչև հիմա պատահած
չէ . Աէհէմմէտ՝ իր Վահմաւտ
փաշա մտերիմը , որուն հայրը
յոյն և մայրը սերվացի էր , մեծ
վէզիր անուանեց :

1455ին գարնան մէջ Փոհագ-
պէյին Խաս պէյ սրդին , որ Օս-
մանեան տէրութեան եւրոպա-
կան սահմանագլուխներուն կա-
ռավարիչն էր , իմացուց Վէ-
հէմմէտին թէ դիւրին է Արլիա-
մանել և անոր տիրել : Անմիջա-
պէս Վէհէմմէտ իր զօրքերը Վ-
դրիանուապօլսոյ մէջ կենդրոնա-
ցուց , ու գնաց Խոսքիւպի արեւ-

մարդարէին գուշակին գերեզմանը ուր կը-
գանուի : Օբէնոգէուլ ազօթքի կայսեցաւ , և
անուիլք մ' երեցաւ անոր , որ Էյուսպ ան-
ձանէ իր գերեզմանին տեղը ցուցուց , ու ի-
մացուց որ հն գետմարքիչ մը փորեն . Ծուրի
ազքիւր մը և ճերմակ մարմարին մը պիտի
գանեն , որուն վայ երբացերէն գրեր փորա-
գրուածէն Հետեւուառառու՝ Ագչէմուստին
ուութանը օրոշեալ արուարձանը տարաւ , որ
անիկ ետեւ մինչև ցարդ Էյուսպ կը կոչուի ,
ուորիսպիւրուն տակը փորել տուաւ , և իրօք
ազքիւր մ' ու մեծ տաղանաքար մը զաւաւ ,
որուն վրայ արձանագրութիւն կար . կը ունի :
Սէհէմմէտ առ տեղը մզկիթը շնելին ետեւ ,
Շէմսէտամինին ու աւաղանիներուն հետ հն գնաց
ու ազօթք ըրաւ , և օրէնսդէտը անոր
գեղեցիլ վաղակառը (էալաղան) մը տուաւ :

Աս սուր տապու սովորութիւնը , որ Վէհէմ-
մէտ Բ. Էն ՚ի վեր յաջորդներուն գահը ելւ-
նէն հինգ կամ վեցը օր եաքը ՚ի գործ կը գը-
նէն , լայլէլի հայք կ' ըստուի , և օճաման ու
պատկան տեղը կ' ըստու :

մտեան կողմը Վարաթովալ* լերան
տակը բանակեցաւ :

Աերլիան նուաճելու համար ո-
րոշեց որ առաջ առ երկրին ՚, ու
վապրու կամ՝ սվապիւրուէ խիստ
ամուր և խիստ հարուստ քազա-
քին տիրէ : Խսա փաշային ձեռ-
քով անոր կառավարչին առա-
ջարկեց որ անձնատուր ըլլոյ ի-
րեն . երբ անիկա յանձն չառաւ ,
քազաքը պաշարեց և ութը օր
շարունակ ռմբակոծելէն ետեւ
Յունիսի Աին անոր վրայ յարձա-
կեցան ու տիրեցին : Վաղաքին
մէջ անբաւ գանձեր գտան , ո-
րոնք Օսմանեան զօրաց բաժնու-
եցան : Վորմէ ետքը թրէփածա-
և թաշչիսար ամրոցները իրենց
հարստութիւններովը Օսման-
ցւոց ձեռքը անցան : Վէհէմմէտ
Վասովայի գաշտը իջաւ , և Վու-
րատ Ա. իր հաւուն յիշտակին
համար , որ հոն մեռեր էր , ա-
ռատ պարգևներ բաշխեց իր զօ-
րաց , և միայն իր պահապան ու-
ղեկիցներովը Վդրիանուապօլսոյ
վրայէն Կսատանդնուապօլս գար-
ձաւ , ու սիրոյ և գինւոյ զուար-
ձութեանց տուաւ ինքինքը :

Վէհէմմէտայ Կսալսպրոտի գէմ
ըրած պատերազմէն առաջ , Հը-
ռողացւոց մագիստրոսին կողմէն
Վդրիանուապօլս գեսպաններ եւ
կեր էին և մեծ պարգևներով
կ' ուղէին բարեկամնւթեան գա-
շնիք մը հաստատել : Երբ վէզիր-
ները անոնցմէ հարկ կը պահան-
ջէին , գեսպանները պատասխան
տուին թէ իրենք չեն կընար ա-

* Վա լուր իր արծաթի հանքերովը երեւլ է :

սոր հաւանիլ, և Օսմանցի գեռապան մ' իրենց հետ գալով, կը ընայ մագիստրոսին հետ խօսիլ: Վէզիրներէն մէկը անոր հետ գընաց, և երբ Հուստոս հասաւ, մագիստրոսը պատասխան տուաւթէ Հուստովն պապը արգիլած է ոչ միայն տարբեր կրօնք ունեցող իշխանաց, այլ և քրիստոնեաց թագաւորաց և տէրութեց իսկ հարկ չվճարել. այսու ամենայնիւ ինքը պատրաստ է ամեն տարի ընծաներ խրկել դեսպանաներու հետ. բայց թէ որ սուլթանը աս կերպ մեծարանաց չհաջիր, ուղածը կրնայ ընել: Այս պատասխանին վրայ՝ Հուստոփ ոսի ասպետներուն դէմ պատերազմ հրատարակեց, ու շուտով հարիր ութունն նաւերէ և նաւակներէ բաղկացեալ տորմիլմը պատրաստել տուաւ ու Առավորութի առնուելէն անմիջապէս ետքը՝ առնաւախումբը Համզա պէտին հրամանատարութեանը յանձնեց, որ նախ Էսֆիրսի վրայ գընաց, ու նաւահանգուտէն գորս խարիսխ նետեց: Այս կղզւոյն Ճենովացի գուբար՝ Դուգաս պատմագրին ձեռքը բառութեր, վեցը հաղար արծաթ ֆիօրին, քսան եղ, յիսուն ոչսար, ութը հարիւր կշառ գիշի, հաց և պաքսիմատ. տասը կենդինարէն աւելի պանիր և նաւաստեաց համար անբաւ պաշարներ ընծայ, խրկեց. Համզա քառասուն և ութը ժամ հոս մնալէն ետել՝ Քիս գիմեց, բայց ասոր քնակիչները ոչ պատիւ ըրին և ոչ սլարդ եներ խրկեցին: Համզա ծովապետը սուլթանին

հրամանագիրը կղզւոյն գեսպաններուն կարդաց և քառասուն հաղար ոսկի պարտքերնին խընդրեց. ասոնք ուրացան և իմացոցին որ ամենենին պարտք չունին: Համզա պէտ ոչ նաւահանգիստը մանել կրնար, որուն բերանը քսան կտոր աղէկ զինեալ նաւեր կային և ոչ քաղաքին վրայ յարձակիլ, որուն բոլորտիքը եւրեք գրկանափի խորութեամբ կը կին խրամներ բացուած էին, և բաղմաթիւ իտալացի քաջամրականներ կը պաշտպանէին զան. ուստի բաւական սեպեց քաղաքէն դուրս եղած այգիները և պարտէզները աւերելու:

(Օմաննեան նաւատորմիզը Քիսէն մեկնեցաւ ու Հուստոփոս գընաց. բայց աս կղզւոյն ամրութիւնները Քիսովինէն աւելի ըլլալուն համար՝ Համզա որոշեց որ անխորհուրդ յարձակում մը չընէ: Ուստի ասկէ ալ Քօն կը զին գնաց, որոնց քաղաքը աւերած գտաւ. աւերակաց մէջ մը նացած քանի մը ծերերը և կիները իմացուցին թէ երկրին բընակիչները և ասպետները Ուագէարդը քառուած են: Համզա պատմակի մէջ երկու որ անձնատուր ըլլան, բայց անոնք ասոր հակառակ՝ թնդանօթներով պատասխանեցին: Քսան երկու օր հոսկեցաւ Համզա, այսչափ միջոցին՝ բերգին վրայ ելլելու, և իր մեքենաները գործածելու փորձածելու փորձ փորձեր էր, և տեսնելով թըշնամեաց կողմէն իր զօրաց հա-

սուցած վեսը, պաշարումը վերցուց :

Եթ դառնալու տուեն՝ գարսձեալ Քիոս հանդիպեցաւ, ու նաւահանգուին տուջել խարիսխ նետեց : Օսմակալին հրամանին հակառակ, որ իր բաղմաւթեանը արգիլեր էր որ քաղաքը չելլեն, քանի մը գինովցած Տաճիկներ ծովը նետուեցան ու լողալով կղզին ելան : Առնցմէ մէկը եկեց գեցոյն վրայ ելաւ, և սկսաւ կղմինտրները գետինը նետել : Լատին մ' աս տեսնելով, զարկաւմեցուց զան ։ ասոր վրայ՝ անոր օգնութեան եկող Օսմանցւոց վրայ ինկան Յոյնք և Լատինք ձեռքերնին գաւազան և սուր առած : Օսմանցիք ծովեզը փախան որ նաւատորմզին հասնին : Յոյնք և Լատինք ետենէն ինկան, և խուռն բազմութեամբ ցոկանամին մէջը նետուեցան, այնպէս որ բեռին ծանրութենէն նաւը ընկղմեցաւ : Կղզոյն երեւլիները Համզայի բարկութիւնը իջեցուցին, որ բնականաբար քաղցր և հեղ բնութիւն մ' ուներ, ցըռկանաւին և կորսուած Օսմանցւոց կրկին գինը վճարելով : Օսմապետը խարիսխը քաշեց և Լեռ փոս գնաց, որուն դքսին հրամանով Դուգաս փառաւոր ճաշմը տարաւ անոր :

Երբ Համզա Ադրիանուպոլիս հասաւ, Վէհէմմէտ, անոր վատութեանը վրայ բարկանալով, ըստաւ : “ Թէ որ հօրս սիրելի եղած քլլայիր, մարմնաց կաշին հանել պիտի տայի ” : և իր առջեւն վարեց առանց խօսք մը մը տիկ ընել ուղելու : Ետքը ցըռ-

կանաւին կորսւստը իմանալով, նորէն իր առջել բերել տուաւու ըստաւ : “ Համզա, ուր է այն ցոկանաւը, որ Քիոսի մարդիկ ները ընկղմեցին : — Օսման տակը : — Բայց ի՞նչպէս ” : Են ատեն Համզա եղածներուն տեղեկութիւնը տուաւու :

Վէհէմմէտ անոր տեղը Եօնուս փաշան ծովակալ ըրտաւ, ու տասը նաւերով Առջապեղագոսի կըղզեցաց վրայ խրկեց, ինքն աւ ցամաքէն գէպ ՚ի Յոյնք կղզին գնաց, ուր Եօնուս փաշան աւ իր նաւատորմիզով պիտի գար (24 Յունուար 1456) :

Ենոսի իշխանը, որուն վրայօք Եփսալյի գատաւորները սուլթանին բողոքեր էին, Սոմբրակէ փախչելով, իր խիստ գեղեցիկ աղջկան հետ Վէհէմմէտին պարգևներ խրկեց, որով անոր աչքը մտաւ : Վէհէմմէտ Ենոս, Թասոս, Սամօմբրակէ և Խմզրոս կղզիներուն տիրեց :

Վէհէմմէտ, աս յաղթութիւններէն ետեւ, Քիոսի վրայ վաղեց բայց աս կղզւոյն իշխանները խազալութեան նոր դաշինքով մը սուլթանին բարկութիւնը իջեցուցին . 30 000 սոկի վճարեցին իբրև ընկղմեալ ցոկանաւին հատուցում, և տարին 10 000 սոկի հարկ խօստացան : Աս պատճառաւ Վէհէմմէտ՝ Քիոսի և Լեռ փոսի տիրելէն ետ կեցաւ, ու գէպ ՚ի էմոս ուղղեց իր ընթացքը . որուն բնակիչները իրենց Նիկոլայոս իշխանին գէմ սուլթանին բողոքեցին և աղաչեցին որ (Օսմանեան կառավարիչ ընէ մը գնէ իրենց վրայ) : Վէհէմ-

մէտ Նիկողայոս իշխանին տեղը
Համլա պէյ նախորդ ծովագետը
դրաւ, բայց մեծ պատրաստուա
թեամիք Վաճառաց դէմ պատեւ
բաղր ընելու պարաւորած ըլ-
լուսով, Արշեպեզստոսի Երկրակա-
լու թիւնը անկատար թազուց :

Վարիլ ամէն ՚ի վեր Վաճա-
ռաց երկիրը ձայն մը տարածուեւ-
ցաւ թէ Վէհէմմէտ մեծ պատ-
րաստութիւններ կը տեսնայ Պէլ-
կրատ բաղադրին տիրելու, և թէ
Քրուսովացի մէջ պաշարման թըն-
դանօթներ կը թափուին : Խրօք,
1456 Յունիսին 13ին, հարիւր
յիսուն հազար հոգիով և երեք
հարիւր հրաղէնքերով Պէլկրատայ
վրայ եկաւ . գիշեր և ցորեկ քա-
ղաքը ռմբակօծել տուաւ . ուում-
բերուն թնդիւնը քրան և չորս
մաճառի մզոն հեռու տեղէն կը
լուէր, կոստանդնուպոլուոյ քո-
վը Պէլկրատոյ տիրելը Վէհէմ-
մէտ խաղալիք մը սեպելով, կը
կարծէր թէ տասն և հինգ օր-
ուան մէջ պիտի կարենայ տունել
ան քաղաքը, որն որ իր հայրը
վեցը ամիս պարապ տեղը պաշա-
րեր էր : Երկու հարիւր կտոր նա-
ւէ բաղկացեալ Օսմանեան տոր-
միզը Դանուպի ծովը իջեցուց որ
Վաճառաց պատրաստած օդնու-
թիւնները չթողուն որ Պէլկրատ
հասցըննեն :

Հունիատ, Վաճառաց և վաթ-
սուն հազար խաչակրաց սպարա-
պետը Երկու հարիւր նաւ ժող-
վնը էր, որոնցմով Օսմանեան
առմիզը ցրուեց և Պէլկրատ մը-
տաւ : Վէհէմմէտ եօթը նաւ և
հինգ հարիւր հոգի կորսնցուց .
անկայմ և նաւաստի չունեցող

նաւերը սյրեց որ թշնամեաց
ձեռքը չանցնին :

Վէհէմմէտ բարկանալով ինք-
նին Ենիչէրիներուն գլուխը ան-
ցաւ, ու Յուլիսի 21ին տուաւու-
կանուին թմբուկներուն և փողե-
րուն ձայնովը Պէլկրատին առջի-
գիւղը մտաւ և երկրորդ պարիսպ-
ներուն վրայ յարձակեցաւ : Հու-
նիստ վհատեալ արգէն սկսեր
էր յուսահատիլ, սակայն Յով-
հաննէս կափիսթրան, որ խաչու-
կրաց բանակին հոգին էր, վա-
ռած փայտեր թափել տուաւ
Օսմանցւոց վրայ, որոնք արգէն
սկսեր էին պարիսպներէն վեր ել-
լել, ու աս կերպով խրամնե-
րուն մէջը գահավիժեց զանսնիք :

Կէս օր մօտ Օսմանցիք ետ քա-

շուեցան . ան ատեն՝ կափիսթրան

իր հետը հազար խաչակրատ առած

անոնց վրայ յարձակեցաւ :

Վէհէմմէտ աեսնելով որ իր
յառաջապահ զօրքերը ցրուե-
ցան, առիւծի պէս թշնամեաց
դէմ պատերազմեցաւ . մէկ հա-
րուածով թշնամիին մէկուն գը-
լու իր ձեղքէց, բայց իր ազդըն
ալ վիրաւորեցաւ : Եսոր վրայ՝ ըս-
կըսաւ Ենիչէրեաց Հասան զօրա-
վարը յանդիմանել բարկութք
թէ ինչնւ յառաջ չվարեր իր
գունդը : Եներկիւղ և քաջ զօ-
րավարը պատասխան տուաւ ա-
նոր . “ Օօրացդ մեծագոյն մասը
վիրաւորուած են, ու մնացածնե-
րը չեն հնազանդիր ” : Այլսաւ ու
սուլթանին աչքին առջեր թըն-
նամեաց վրայ յարձակեցաւ, և
փառաւոր մահուամբ զոհ եղաւ
անոնց : Վեցը հազար ձիաւոր զօր-
քեր աս միջոցին օդնութեան հա-

անն (Օսմանցւոց և խաչակիրները հալածեցին : Խակայն Վէհեմ մէտ պարտաւորեցաւ պաշսրումը վերցընել, և հարիւր կառք վրաւորեալներով Աօֆիա քաւշուեցաւ, ուր պատերազմէն փախչողները սպաննել տուաւ : Երեք հարիւր թնդանօթ, և քսան ու չորս հազար հոգի կորսնցուցերէր :

Հունիատ սպարապետը աս փառաւոր յաղթութենէն ետև հազիւ երկու շաբաթ ապրեցաւ . երեք ամիս ետքն ալ կափիսթրան անոր պէս հիւանդութենէ Պէլկրատ մեռաւ և սրբոց կարգը գանեցաւ : Վնոր տօնախմբութեան հանդէսը կը կատարուի մինչև հիմա Վէննայի Ա. Խոեփաննոս եկեղեցւոյն մէջ, ուր Օսմանցւոց դէմ խաչակիր գորքերը հանելու համար այնչափ անգամ քարոզ տուեր էր :

Վոլտավիոյ Պետրոս իշխանը (Օսմանեանց զօրութեանը վրայ վախնալով, անձամբ Վէհեմմէտին առջեւ երաւ, ու 2 000 մաճառ ոսկի տարեկան հարկ խոստացաւ իր երկրին խազազութեանը համար :

Վէհեմմէտ Ադրիանուոլովս դառնալով, Պէլկրատայ մէջ յաղթուիլ մառնալու համար՝ իր Պայէզիս և Վուսթաֆա որդւոց թլփատութեան հանդէսը խիստ մէծ փառքով կատարեց : Վա իշխանազուններուն առաջինը Վմասիյ կառավարիչ էր և երկրորդը Վագնեսիոյ, որոնք իրենց բազմութեամբը Ադրիանուոլովս կանչուեցան . միանգամայն ամեն կողմէրը շրջաբերական

նամակներ խրկուեցան, որոնց մովտէրութեան բարձրաստիճան պաշտօնեանները, գիտնականները, զօրապետները, գատաւորները և բանաստեղները հրաւիրուեցան : Ադրիանուոլովս մօտ գտնուած մեծ կղզւոյն մէջ բանակ մը կազմեցին, և սուլթանին վրանին մէջ գահ մը դրին : Հանդէսին առաջին օրը գիտնականները մեծարուեցան : Վէհեմմէտիր արքայական զգեստները հագած գանձին վրայ նստեր էր, իր բոլորտիքը չորս երեւլի գիտնականները կը գտնուէին, որոնք գիտութեան գահոյն չորս սիւները կը սեպուէին : Վրոնց պարագյուխն էր Խայրէտափին Խօօձա Վէհեմմէտին վարժապետը, ուրուն աջ կողմը նստեր էր, և ձախ կողմը՝ Վէլինա Վալի էթթուզի . սուլթանին դիմացը կը գտնուէին Խորզուպէյ Ջէլէպի մայրաբաղաբին առաջին գատաւորը, և Շիւքրիւլահ բժիշկը . Վիւս գիտուններն ալ ըստ իրենց արժանաւորութեան մէկ մէկ տեղ նստած էին : Վէկնելու ժամանակին, իւրաքանչիւր ուրուք գեղեցիկ պատմուճաններ և գըրամներ բաշխեցին : Երկրորդ օրը՝ տէրիլինները և միանձունք Վէհեմմէտին ներկայացան, որ անոնց հետ խօսակցելէն ետև՝ նոյնպէս պարգևներով ձամբեց : Երրորդ օրը՝ զինախազութեան, ձիարշաւութեան, նետախազութեան հանդէմները կատարուեցան, որոնց մէջ յաղթող հանդիսացողը հանդիսացողները առաջ պարգևներով վարձատրուեցան : Ու երջապէս չորրորդ օրը, ժողովրդոց

գրամ բաժնուեցաւ : Քոլոր աշագանիները սուլթանին ընծանել բերին : Մահմատ մեծ վեցիրին բերած ընծաները ամենէն գերազանց էին :

Հանդէսը կատարուելէն ետև՝ Մէհէմմէտ իւրէնոսի երկու թռուերը, որոնց երկուքին ալ անունը խօս էր, մէկը Մահմառաց և միւսը Ալպանիոյ վրայ խրկեց : Ու ինքը կոստանդնուպօլսոյ մէջ Յօմը աշտարակաց (իշտի գուլէ) ամրոցը չինելէն ետև՝ երբ կը պատրաստուէր անձամբ Մորայի վրայ երթալ, Մահմուտ փառաշ մեծ վէզիրին հրամայեց որ երթայ Մերվիոյ չնուաճուած քաղաքներուն տիրէ :

Մահմուտ փաշան կոստանդնուպօլսոյ մօտ դաշտի մը մէջ զօրք ժողվեց, ու Դանուպի եղեցքը քալելով, քանի մը բերդեր նըւաճեց, քաղաքներ առաւ, և Բամազանի տօները նիշի մէջ անցընելէն ետև՝ Քոլումպալը պաշտրեց, որուն կառավարիչը երկար ատեն դիմանալէն ետև՝ պարտաւորեցաւ անձնատուր ըլլալու : Ուրիշ յաղթութիւններ ընելէն ետև՝ հրամայեց Մէհէմմէտ - պէտին որ Դանուպէն անդին անցնի և Մահմառանը ասպատակէ : Ըսկա գնաց մօարաք ամրոցին տիրեց, Մահովան աւերեց, և իր նաւերը մեծ կողոպուտներ, երիշտասարդ տղաքներ և աղջկներ, անասուններ, ծանրագին կարասիքներ լցուցած ետ դարձան : Աս ամեն կողոպուտը սուլթանին ասրուեցաւ, որ Խւսիւլա կը գտնուէր աս միջոցին :

Պէլկրատայ ազատուելէն անմիւ-

ջապէս ետքը՝ Դէորդ Պրանքովիչ Մերվիոյ իշխանը մեռեր էր, մէկ աղջկ և երեք տղայ թողով՝ Գըրիգոր, Մտեփան և Լազար : Ասոնց երկու առաջիններուն աչքը Մուրատ կուրցուցեր էր : Լազար իր երկու կոյր եղայրները հաւածնելէն և իր մայրը թունաւուրելէն ետև՝ 20 000 լիտր ոսկի տարեկան հարկ տուաւ . բայց իր անօրէն փառասիրութեան պտուղը երկար ատեն չկրցաւ վայելել, քանզի երկու ամիս իշխանութիւնը չվարած մեռաւ : Լազարի Նեղինէ այրի կինը, Մերվիան Օսմանցւոց ձեռքէն ազատելու համար՝ երկիրը պապին ձեռքը յանձնեց իրը ՚ի կալուած : Մերվիոյ աւագանիները գժգմնելով, աւելի կ' ուղէին Օսմանցւոց լուծին տակը մտնել քան թէ պապին, ու Մահմուտ փաշային Միխալ Վաղովիչը իրենց իշխան ընտրեցին : Նեղինէ բարեկամութեան նշաններով Միխալը իր ամրոցը հրաւիրեց, բռնել տուաւ զան և Մահմառատան խրկեց բանտարկել տուաւ : Մակոյն Մէհէմմէտ եկաւ Նեղինէն Ոէմէնտրէի մէջ պաշարեց, ու թող տալով զան որ իր գանձերովը անկէ մեկնի, խաղաղութեամբ ամրոցին տիրեց : Մսորմէ ետքը՝ ուրիշ մէկ քանի բերդեր ալ առանց ընդդիմութեան Մէհէմմէտին յաղթող սուրբին տակը հնազանդեցան, և երկու հարիւր հազար բնակիչ գերի բռնուեցան : Այսպէս կոստանդնուպօլսոյ առնուելէն վեցը տարի ետքը՝ Մերվիան Օսմաննեան տէրութեան տակը անցաւ :

Պեղոպսնէսի մէջ Դեմետրիսս
և թողմաս իշխանները իրարու-
հետ կռուել յու տեսնը՝ Վէհէմ-
մէտ անձամբ անոնց վրայ գնաց
(15 Մայիս 1458)։ Նախ՝ թարշ-
սոս քաղաքը պաշարեց, որուն
բնակիչները անձնատուր եղան։
Վէհէմմէտ անոնցմէ երեք հա-
րիւր երիտասարդ տղաքներ հե-
տը տարաւ և քաղաքին մէջ կա-
ռավարիչ մը դրաւ = թարսոսի
ապստամբ Ալպանացիներէն քը-
սան հօգի ձեռք անցան։ Լախ-
տերով անոնց թեւերուն և ոտ-
քերուն ոսկորները ջախջախէցին,
ու այնպէս թշուառ մահուան մէջ
թողուցին։ Այ անտանելի գործո-
ղութիւնը եղած տեղին անունը
թօգիմագ հիսարը մնաց։

Անկէ Աշմոս քաղաքը պաշա-
րեց, ու ջուրին ընթացքը փո-
խելով, ան աստիճաննեղ խօթեց
բնակիչները, որոնք անասուննե-
րը կը մորթէին ու անոնց արիւ-
նովը հաց կը շաղէին։ Անձնա-
տուր ըլլալու համար դաշնքներ
ընելու վրայ էին, երբ Անիչէրի-
ները պարիսպներէն անցան ու
քաղաքը կողոպտեցին։

Արկէ ալ թօւպէլայի վրայ գը-
նաց, ու երկու օր պաշարելէն
ետև, իր զինուորներէն շատը վի-
րաւորուած տեսնելով, ետ պիտի
քաշուէր, երբ քաղաքէն դես-
պաններ եկան անձնատուր ըլլա-
լու համար։ Վէհէմմէտ անոր բը-
նակիչները կոստանդնուպոլիս տա-
նել տուաւ։ Ամկէ ետև՝ իր ըն-
թացքը դէպ ՚ի Պաղէնիքա ուղ-
ղեց, բայց Ալպանացի ամրական-
ները անձնատուր ըլլալուն հա-
մար Վէհէմմէտ տս տեղէն հե-

ռացաւ ու իր բանակը Վուշայի
վրայ քալեցուց աս քաղաքը սէ-
պացեալ լերան մը վրայ շինուած
միայն մէկ կողմը մատչելի էր,
ան ալ երեք կարդ պարիսպնե-
րով պաշտպանուած։ Վէհէմմէտ
աս կողմը պաշարեց, թնդանօթ-
ները շարել տուաւ։ քաղաքին
ջուրին ընթացքը փոխեց, ու Է-
սա պէջ թարգմանով մը գնաց ա-
նոր իշխանը ստիպելու օր անձնա-
տուր ըլլայ։ Երկար խօսակցութե-
նէ ետև՝ Վէհէմմէտ յարձակ-
ման հրամանը ըրաւ։ Երեք կար գ-
պարիսպներուն առաջինը Օսման-
ցւոց մեծ թնդանօթէն աւերակ-
դառնալով, քաղաքացիք երկրորդ
պարիսպը քաջութեամբ պաշտ-
պանեցին։ Բայց եօթը կենդի-
նարնոց ուումք մը քաղաքին պա-
շարի համբարանոցին վլայ ինկաւ;
և ջնջեց զան։ Քաղաքին եպիսկո-
պոսը կերպով մը քաղաքացւոց
պաշար չունենալը սուլթանին ի-
մացուց, ու դրգուեց զան օր պա-
շարու մը շարունակէ։ Վէհէմմէտ
դարձեալ գեսպան խրկեց օր ան-
ձնատուր ըլլան։ Ան տեսն՝ քա-
ղաքէն երկու դեսպան եկան ուուլ-
թանին բանակը, որոնց հետ Վէ-
հէմմէտ այսպէս խօսեցաւ։ “Պա-
ցէք ըսէք ձեր տիրովը օր ես պա-
տրաստ եմ անոր հետ խաղաղու-
թեան և բարեկամութեան դա-
շնէք հաստատելու ան պայմանաւ.
որ Պէղոպսնէսի արդէն տիրած
երկիրներս ինծի պիտի մնան, և
իր ձեռքը եղած երկիրներուն
համար տարին 500 լիտր ոսկի հարկ
պիտի տայ ինծի։ Իսկ Փաթրասի
թօգիմաս իշխանին ալ իմացուցէք
որ իր երկիրը շուտով ինծի թող

ձգէ, եթէ ոչ ես զէնքերովլ պիտի երթամ ձեռքէն առնեմ”։ Դեսպանները թրիփոլից գացին, ուր Դեմետրիոս և Թաովլասանները ժողովուեր էին աս հասարակոց լինասուն ճարմը գտնելու համար ։ վերջապէս ՈՇէհէմմէտին դաշնքները ընդունեցին (Յուլիս 1458)։ Դեմետրիոս՝ արդէն (Օսմանցոց ձեռքը անցած երկիրները, Կորլն թոսի և Քալապրիթայի շրջականները սուլթանին յանձնեց ։ Թաովլամաս ալ Փաթրասը անոր տակը եղած քաղաքներովլ ՈՇէհէմմէտին թողուց ։ Այ կերպով խաղաղութեան դաշնքը հաստատուեցաւ ։ Պեղոպօնէսի բոլոր հիւսիսոյին կողմը (Օսմանցոց տակը անցաւ, և Խօմէր թարութանի որդին Փաթրասէն մինչև Քալապրիթա Աքայիս կառավարիչ գրուեցաւ ։ ՈՇէհէմմէտ Աթէնք գնաց, որն որ արդէն թարախան տիրեր էր ։ Քանի մը ժամանակ տակաւին Դեմետրիոս և Թաովլամաս և Վլապանացիք իրարու հաստատուեցաւ ։ Օսմաննեան կառավարիչներուն դէմ կ'ապստամբէին ։ (Օսմանցիք առ առթիւ քաղաքները կը կողոպտէին, բնակիչները սուրէ կ'անցընէին, մինչև որ երկու եղայրները իրենց լինասուն չափը և իրենց մօտալուտ կորուստը տեսնելով, Քառիցա եկան իրարու հետ խորհրդակցելու և նոր երդումներովլ խաղաղութիւնը հաստատեցին ։

ՈՇէհէմմէտ անոնց իրարու հետ հաշտուիլը իմանալով, ապստամբութեանց և խովովութեանց պատճառը Համզա պէջին վրայ

թողուց, որն որ Խօմէրի տեղը Պեղոպօնէսի կառավարիչ դրերէր, ու անոր տեղը Սաղնուս փաշան դրաւ ։

Թաովլամաս դարձեալ դաշնքը սորբի տակ առաւ ու լակոնիա և Մէսէնիա իր եղորը քաղաքներուն տիրեց ։ նոյն ժամանակը երեք դաշնքներովլ մեծամեծ պարգևներ խոստացաւ սուլթանին, որ Ուղուն Հասանին դէմ պատերազմի պատրաստութիւնները տեսնելու դրազած ըլլալով, հաւանութիւն տուաւ ։ նախ (Օսմաննեան գունդերը Յունաց բերդերէն հեռանան, երկրորդ՝ Թաովլամաս 3 000 լիտր ոսկի հարկ վճարէ տարին, և երրորդ՝ քսան օշըն թաովլամաս կորնթոս գտնուի ու (Օսմաննեան գեսպանը գայ զինքը գտնէ ։ Այսպէս խոստման քներ ըրբաւ նենդաւոր իշխանը, բայց չիրցաւ հարկը հոգալ ։ Ուստի Մէսէմմէտ բարկանալովլ Ասմիոյ Ուղուն Հասանին դէմ ընելու պատերազմը հետագայ տարուան թողուց, ու անձամբ երկու եղարց դէմ Պեղոպօնէսի վրայ քալեց (13 Վպրիւ 1460)։ Կորնթոսի մէջ Դեմետրիոսի քեռայրը շղթայի զարկաւ, ու Սպարտա գնաց ։ Դեմետրիոս իր եղայրէն մատնուելով, ինքն ալ զան մատնեց ։ սուլթանին բանակը գնաց, որ պատուասիրութիւննեց զինքը, ու չթողուց որ երթայ ։ Սպարտայի մէջ պահապան զօրքեր թողուց, ու Քարիցայի վրայ քալեց ։ Այ քաղաքը շուտովլ (Օսմաննեան լուծին տակը մտաւ և կողոպտուեցաւ ։ բայց քաղաքին բերդը անմատոյց հո-

զարլուրի վրայ ըլլալուն համար՝
բաւական Ենիչերիներ ամրական-
ներէն վար գահավիժեցան . սա-
կայն հուսկ յետոյ բերդին երեք
հարիւր հոգիէ բաղացեալ պա-
հապանները անձնատուր եղան .
Մէհէմմէտ հրամայեց որ զանոնք
հրապարակը տանեն և խեղդեն ,
ու քաղաքապետնին սղոցով մէջ-
քէն երկու կտոր ընեն :

Մէհէմմէտ աս ամրոցին ալ
տիրելէն ետև՝ Էջոնտարի քաղա-
քին վրայ գնաց , որուն բնակիչ-
ներուն մէկ մասը իրենց կիներո-
վըն ու զաւակներովը տուներնին
թողոցին ու Սարտիքա ամրոցին
մէջ պատսպարուեցան և քաջու-
թեամբ (Սամանցւոց յարձակմա-
նը դէմ դրին : Բայց (Սամանցիք
քաղաքը կողոպտեցին , վեցը
հազար այր և կին մինչեւ անգամ
անասունները սուրէ անցուցին :
Մէհէմմէտ խօսք տուաւ և եր-
դում ըրաւ բերդին պահապան-
ներուն որ եթէ անձնատուր ըլ-
լան , ամեննեին ոչ պիտի սպան-
նուին , ոչ գերի պիտ' ըլլան , և
ոչ վնաս մը պիտի հասնի իրենց :
Բայց երբ անոնք բերդին դըռ-
ները բացին , Մէհէմմէտ զանոնք
ամենը մէկէն թէ՛ այր և թէ կին
հրապարակի մը մէջ տանել , ու
հազար երեք հարիւր հոգւոյ չափ
սպաննել տուաւ :

Մէհէմմէտին յաղթութիւննե-
րը և անգթութեան գործքերը
լսելով , Պեղսպոնէսի միւս ամ-
րոցներուն կառամբարիչները ին-
քնին եկան անձնատուր եղան . Եր-
քատիոյ տասը հազար բնակիչնե-
րը շղթայի զարնուեցան ու մահ-
ուանէ աղատելով , կոստանդնուր-

պօլսոյ արուարձանները բնակե-
լու խրկուեցան :

Մէհէմմէտ աս երկրակալու-
թեանց շարունակութիւնը Սաղ-
նուս փաշա կողմնապետին յանձ-
նեց , ու դէպ ՚ի Սոստոն և Փի-
լս Վենետիկցւոց ձեռքը եղած
քաղաքները գնաց : Ծովլմաս (Ը-
մանցւոց իր երկիրներուն տիրե-
լը տեսնելով , յուստահատոծ իր
զաւակներովը նաւ մը մտեր կը
փախչէր , երբ Մէհէմմէտին Փի-
լսի առջև բանակիլը Վենետիկ-
ցիք տեսան , նշան տուին անոր
որ անկէ հեռանայ . քանզի նաւը
տակաւին նաւահանգստէն դուրս
ելած չէր , և իրենք երդմամբ
խաղաղութեան և բարեկամուտե-
գաշնիքը հասաւատեցին : Եյսու-
ամենայնիւ (Սամանցւոց ձիաւոր
զօրքերը Փիլոսի բոլորսիքը աւե-
րեցին , ու Լալանացիները գերի
տարին :

Մէհէմմէտ դէպ ՚ի Հիւսիս
յառաջ անցաւ , և իր Ճամբուն
վրայ գտնուած քաղաքաց տի-
րեց : Դիմետրիոս իշխանին Ենոս
քաղաքին կառավարութիւնը յան-
ձնեց , ու 60 000 փող եկամուտ
սահմանեց անոր : Իսկ Ծովլմաս
իշխանը Հոռովհ պապին քովը
փախչէր եր Ա. Ենդրէսասայ գըլ-
խոյն ուսկորները անոր տանելով :

Եյսպէս ահա սուլթան Մէհ-
էմմէտ բաց ՚ի Վենետիկցւոց
ձեռքը գտնուած քանի մը նա-
ւահանգիստներէն , բոլոր Պեղս-
պոնէսի տիրելով , յաղթանակաւ
Ծորիանուպօլիս դարձաւ :
Կոստանդնուպօլիսը առնուե-
լէն ետև եօթը տարի անցեր էր ,
և տակաւին Մէհէմմէտ Ասիա

ուրք չկոխեր էր, այնչափ զբաղեալ էր՝ Եւրոպայի մէջ աշխարհակալութիւններ ընելու, Յոյները հնազանդեցընելու և Սերվոյ ու Ալպանից դէմ պատերազմելու։ Սերմիան արդէն Օսմանցւոց տակը հնազանդեր էր, բայց Խոկէնտէր պէյին անյաղթելի քաջութեամբը Ալպանիան տակաւին կանգուն մնաց։ Եւրոպայի մէջ Յունաց երկծիւղ կայսրութեան գօրութիւնը կործանած էր, բայց Տրապիզոնի մէջ Քոմէնոս մը կը գտնուէր, որ Արևելեան տէրութիւնը հաստատ պահել կ'ուզէր։ Այս իշխանն ալ հասարակաց կործանման մէջ թաղելու համար՝ պէտք էր որ Վէհէմմէտ առ այժմ Եւրոպայի մէջ խաղաղութիւնը հաստատէր ու Արիա դառնար։ Այս պատճառաւ Վորայի նուածուելէն անմիջապէս ետքը, Վէհէմմէտ Քոքէնտէր պէյին հետ խաղաղութեան գաշինքը հաստատեց։

Վուրատ Բ. ի մահուանէն ՚ի վեր Խոքէնտէր պէյին վրայօք յիշատակութիւն մը ըլքինք ։ աս Ալպանացի իշխանը աս տասը տարուան մէջ Օսմանեանց դէմ անդադար և գրեթէ միշտ յաղթող պատերազմներ ըրեր էր, որոնց վրայօք Օսմանեան պատմագիրները լրութեամբ կ'անցնին և սուլթան Վէհէմմէտին անձամբ անոր դէմն ելլէլէն առաջ ըրած գործքերը յիշխատակութեան արժանի չեն սեպէր։

Դ'ենովացիք, որոնք Փաքը Արիս ծովեղերեայ քանի մը քաղաքներուն կը տիրէին, դեսպան մը խրիեցին Վէհէմմէտին ու Պա-

լաթիան խնդրեցին։ երբ սուլթանը անոնց առաջարկութիւնը ընդունեց ու այսպէս պատասխան մը տուաւ։ “Ես ամեննեին բռնութեամբ Պալաթիոյ չտիրեցի, այլ կոստանդնուպոլսոյ իշխելէս ետև՝ անոր բնակիչները իրենց կամոքը բերին քաղաքին բանլիքները ինծի տուին, և ես աւելի անոնց օգտին համար ընդունեցի ղանոնք”։ Դ'ենովացիք Օսմանցւոց դէմ պատերազմի պատրաստուեցան։ Ուստի Վէհէմմէտ նաւատօրմիղ մը և բանակ մը կազմեց որ զանոնք պատմէ, և Պալաթան անոնց չտալին զամ՝ որոշեց որ Աւատ ծովուն վրայ գտնուած Վմաստրա քաղաքըն ալ անոնց ձեռքէն առնէ։ Զարիւր յիսուն նաւերէ բաղկացեալ տորմիլին հրամանաւարութիւնը Վահմուտ փաշային տուաւ, ու ինքը բաղմաթիւուղար և ուրիշ անասուններ հետը առածած իր ասիական բանակը քաղաքին վրայ քալեցուց, ու խաղաղութեամբ անոր տիրելէն ետև՝ քաղաքացւոց երրորդ մասը հոնթողուց և մնացածը իբրև գաղթական կոստանդնուպոլսոյ քաղակայ գիւղերը խրկեց։

Վէհէմմէտ իր արշաւանացը ընթացքը այնչափ գաղտնի կը պահէր որ մէկը չէր գիտեր թէ ուրու վրայ պիտօն երթայ ։ ամեն մարդ տարակուսի մէջ էր թէ ասպատերազմի պատրաստութիւնները Ճ'ենովացւոց համար էր, Սինոպի թիւրքմէններուն թէ Տրապիզոնի Յունաց ։ Ուստի երբ աւագանիին մէկը անոր արշաւանքին նազատակը հարցուց, Ակ-

ՀԷմմէտ բարկութեամբ պատասխան տուաւ . “ Յէ որ իմ մօքուքիս մազերէն մէկ թելը իմ խորհուրդս խմանար , իսկոյն պիտի բոցընէի և այրէի զան ” :

Վէհէմմէտ կոստանդնուպոլսոյ տիրելէն առաջ Պրուսա գտնուած ատենը , Հայոց ազգին և անոնց Յովլակիմ անուն առաջնորդին վրայ մասնաւոր սէր մ’ ունէր . ուստի օր մը իրարու հետ խօսակցած ատեննին՝ երբ Յովլակիմ եպիսկոպոսը ըստ անոր թէ՝ “ Աստուած քու թագաւորութիւնդ բարձրացընէ , ու զօրութիւնդ անընկճելի ընէ ” , սուլթանը խօսք տուաւ որ եթէ կոստանդնուպոլսոյ տիրէ , զինքը հոն տանի , ու Հայոց վրայ պատրիարքը ընէ : Արդ երբ կոստանդնուպոլիսը առնելէն ետեւ առաջնին անգամ Պրուսա եկաւ , իր ըրած խոստմունքը յիշեց , Յովլակիմ եպիսկոպոսը պատրիարք կարգեց , ու կոստանդնուպոլիս խրկեց Հայոց քանի մ’ երեելի գերդաստաններով , որոնց համար ոմանք վեցը գերդաստան կ’ ըսեն , ուրիշից մնացած է Վեցեակ ժողովուրդ կամ ըստ Տաճկաց ալլը ձեման անունը :

Վէհէմմէտ Պրուսայէն Աինոպի Խամայիլ պէյ իշխաննին դեսպան խրկեց ու իր քաղաքը ուղեց ըսելով . “ Շատ կը ցանկամ քու Աինոպ քաղաքդ ունենալ , որուն փոխարէն՝ Փիլիպպէի կառավարութիւնը կու տամ . թէ որ գոհ չես , գիտցած ըլլաս որ ես անձամբ վրադ պիտի գամ ” : Ա ին անդամայն Աինոպի իշխաննին Պըզլ Վհմէտ եղբօրը տուաւ Խո-

մայիլ պէյին երկիրներուն մեծ մասը , ու ինքը դէպ ՚ի Աինոպ յառաջ անցաւ : Վահմուտ փաշան նամակներով և բերնով համոզեց զան որ անկարելի է դէմկենալը . և Խամայիլ պէյ տեսնելով որ իր երկիրներուն գրեթէ կէսը իր եղբօրը ձեռքբանցեր էր , սուլթանին առջել ելաւ և ուղեց անոր ձեռքբանցել . բայց Վէհէմմէտ չժողուց , անոր հետ գրկուեցաւ՝ անդրանիկ եղայր կոչելով զան , և Ենիշէհիրի , Ղյնէկիօլի և Եարհիսարի կառավարութիւնը անոր յանձնեց :

Վյապէս առանց զէնքի և առանց աշխատութեան Աինոպը Վէհէմմէտին ձեռքբանցաւ , թէ և քաղաքը չորս հարիւր թնդասնօթներով և երկու հազար պահապաններով պաշտպանուած էր : Աինոպի նաւահանդիստը գտնուած նաւերուն մէջ խիստ մեծ նաւմը գտաւ , որն որ կոստանդնուպոլիս խրկեց և ինքը երեք անոր չափը տարապայման նաւ մը շինել տուաւ . բայց աս նաւը նաւահանդստէն դուրս չելած ընկըզմեցաւ :

Վէհէմմէտ Աինոպին Վյապէյ և Աերաստիյ վրայէն դէպ ՚ի կարին (Երզըքում) գնաց , որպէս թէ իր միաքը Տրապիզոնի վրայ երթալ չէ , այլ Վագոյունը ըստուած թուրքաց Ուզուն Հասանին , որ Տրապիզոնի կայսեր հետ ազգական ըլլալով , տարի մ’ առաջ Վէհէմմէտին դեսպաններ խրկեր ու ինդրեր էր որ Դաւիթ Քօմինոսին (Օսմանցւոց տուած 2 000 ոսկի հարկը չուզէ : Եւ որպէս զի Վէհէմմէ-

տը պարտաւորէ որ ան հարկէն ետ կենայ, անոր Ո՛էհէմմէտ Ա. հաւուն Ա՛ք գօյունի իշխանաց տարուէ տարի տուած ընծաները յիշեցուց, և համարձակեցաւ իսկ վալթսուն տարուան չարկուած պարզեները խնդրելու : Ո՛էհէմմէտ այսպէս պատասխան տուաւ գեսպաններուն . “ Գացէք խաղաղութեամբ, եկող տարի ես անձամբ պիտի գամ պարագս վը ձարէմ ” :

Աւդոկիոյ արևելեան կողմը և Աերաստիայէն երկու օր հեռու Գօյունլու հիսար Ուղուն Հասանին ամրոցը կը գանուէր : Ո՛էհէմմէտ անոր վրայ վաղեց, առաւ բերդը և երբ դէպ ՚ի Երազնկա կ' իջնար, Հասանին Աարա մայրը Հիւսէյին չէյխին հետ մեծագին ընծաներով անոր առջել ելաւ և իր որդւոյն կողմէն կը խնդրէր որ խաղաղութիւն ընեն : Ո՛էհէմմէտ մեծ մարդասիրութիւնոնց հետ խօսեցաւ, խնդիրը նին ընդունեց, և դէպ ՚ի Տրապիզոն ճամբայ ինկաւ : Իայց ճանապարհին վրայ բարձրաբերձ և դմենդակ լեռէ մ' անցած ատենը՝ Աարա, որ միշտ անոր միտքը գարձնելու կ' աշխատէր, ըսաւ անոր . “ Ո՛էկ Տրապիզոնի համար, որդեակս, ինչու համար այդչափ նեղութիւններ յանձն կ' առնես : — Աայր իմ, պատասխանեց սուլթանը, օսմանեան սուլը իմ ձեռքը սւանդուած է . Եթէ այս չափ նեղութեանց համբերեմ, Դափի (յաղթող) ըսուելու պիտի չարժանանամ, և եթէ այսօր կար վալը մեռնիմ, Աստուծոյ առջել ամօթով պիտի մնամ ” :

Տրապիզոն քաղաքը հին ատեւնը թրափէզուս, այսինքն՝ սեղան կամ քառակուսի կ' ըսուէր, հաւանականաբար իր քառակուսի ձևին համար : Այս քաղաքին Յոյները Ոինոպէն եկած են, և երբ խաչակիրները կոստանդնուպոլսոյ տիրեցին, կայսերական ցեղէն Քօմինուսի գերդաստանը Տրապիզոն եկաւ ու իշխանութիւն մը հաստատեց : Աս քաղաքին տկար իշխանները, թէև կայսր ըսուելու մնոտի պատուանունը ստացան, ամեն կողմէն իրենցմէ աւելի հզօր իշխաններէ շըլապատած ըլլալով, անոնց պաշտպանութիւնը ստանալու համար՝ ամենուն հետ խնամութիւն կ' ընէին : Չի գիտոցուիր թէ Աիհրդատ ժամանակաւ աս քաղաքին մէջ ի՞նչ ըրաւ, բայց Տրայանոսի, Ատրիանոսի և Յուլոսիանոսի շէնքերը խիստ անուանի են :

Ո՛էհէմմէտ Տրապիզոն չասած՝ Աահմուտ փաշան, որ Օսմանեան նաւատորմիզով քանի մ' օր առաջ հասեր էր, պարապ տեղը Դաւիթին քաջութեանը դէմ կը դնէր :

Դեսպան խրկեց Ո՛էհէմմէտ Դաւիթին և իմացուց որ կամ իր գանձերովը և ծառաներովը աղատութեամբ քաղաքէն գուրս ելլէ և կամ սպասէ ու կեանքը կորսնցընէ : Դաւիթ երկար ատեն Աահմուտ փաշային յորդորանացը ականջ չկախելէն ետեւ՝ վերջապէս պարտաւորեցաւ իր ընտանիքովը նաւ մը մտնել ու կոստանդնուպոլիս երթալ, և Տրապիզոն քաղաքը (Օսմանցւոց ձեռքը անցաւ :

Արկէ քիչ մ' ետքը՝ Վէհէմ
մէտ Դաւիթին վրայ կասկածե-
ցաւ . քանզի Ուզուն Հասանին
կինը անոր նամակ մը գրեր էր ,
որուլ անոր Ալէքսի հօրեղպայրը
իր քովը կը հրաւիրէր . և հրա-
մայեց որ Դաւիթը և անոր ըն-
տանիքը շղթայի զարնեն ու ետքը
գլուխնին կտրել տուաւ բաց 'ի
Դաւիթի ութերորդ որդիէն , որ
իր հաւատքը ուրացաւ :

Հեղինէ կայսրուհին , սուլթա-
նին հրամանին հակառակ , որ կ'ու-
զէր որ դիակները շանց և բազէ-
ներուն կերակուր ըլլան , աղքա-
տի զգեստներ հակած ու ձեռ-
քը բահ մ' առած՝ գլխատման
տեղը գնաց , ու կեանքը վուանդի
մէջ գնելով աներկիւղութեամբ
փոս մը փորեց , բոլոր օրը շու-
ները և բազէները վարեց , և դի-
շերը իր սիրոյ առարկաները թա-
ղեց , որոնց վրայ ինքն աւ չու-
մնալով մեռաւ :

Հաւ աս կերպով Յունաց իշ-
խանութեան տրեելեան և արե-
մունքան Ճիւղերը ահտին արիւն-
հեղութեամբ ջնջուեցան , և Վէ-
հէմմէտին աշխարհակալ ձեռքին
տակը ընկճեցան :

Վէհէմմէտ Տրապիզոնէն դար-
ձաւ չդարձաւ՝ Վալաքիոյ Վլատ
իշխանին պատերազմներուն առ-
պարէզը կանչուեցաւ , որ խորա-
մանկ և իրմէ աւելի անգութ-
բռնաւոր մ' էր . Վս իշխանը իր
անագործին բնութեանը համար
երեք անունով ճանցուած է .
Վաճառները Տրաքուլ (սատա-
նայ) կը կոչեն , Վլահները՝ Ջէ-
փէլփուշ (գահիծ) , իսկ Օս-
մանցեր՝ Դաղդուլ Վաղդուլ (ցը-

յահար իշխան) : Իր դժոխային
գաղանութեան քանի մ' օրինակ-
ները հսո դնենք :

Իր սիրելի զբոսանքն էր ցցա-
հարութեան հանդէսներուն ներ-
կայ գոտնութիւն , և մանաւանդ ցը-
ցահար ողորմելեաց բազմութե-
մէջ իր ողալատականներուն հետ
սեղան նստիլ : Երբ Օսմանցւոցմէ-
գերի բռնէր , կը հրամայէր որ
անոնց ոտքերուն կաշին հանեն ,
ջեղերը աղով շփեն , ու անոնց
տանջանքը սաստկացընելու հա-
մար՝ վէրքերնին այծերուն լիդել
կու տար : Օսմաննեան դեսպան-
ները գլուխնին բաց անոր բա-
րեել չուղենուն համար , փա-
կեղին երեք բեկուով գանդեր-
նուն վրայ գամել տուաւ , որ-
պէս զի աղէկ հաստատուած ըլ-
լան : Օր մը իր երկրին ամեն
մուրացկաններուն մեծ խնջողք մը
ըրաւ , երբ անոնք ամենքնին ալ
աղէկ կերան և խմեցին , սեղա-
նին վրայ կրակ ձգեց , և բոլորը
մէկն այրեց : Անգամ մը՝ ողոր-
մելի կանանց ծիծերը կորել տու-
աւ , և անոնց տեղը՝ հրամայեց
որ տղայոց գլուխները կապեն .
Տղաքներուն ստիսեց որ իրենց
մօրը եփած միօր ուտեն . հնարք
մը մոնածեց թէ ի՛նչպէս մարդիկ
ները բանանց ծարդէ և կաթ-
սայի մէջ եփէ : Օր մը՝ էժն վրայ կը-
րօնաւոր մը տեսնելուլ , անասու-
նին հետ ցցի զարնել տուաւ .
Քահանայ մը , որ քարող տուեր
էր թէ ուրիշ ունեցածին պէտք
չէ ձեռք դպշընել , երբ սեղա-
նին վրայ Տրաքուլին իրեն հա-
մար կորած հացը առաւ , Տրա-
քուլ իսկոյն հոն ցցահար սպան

նել տուաւ : Վաճառստանէն և
թրանսիլվանիայէն Վլսհաց լեւ
զուն սորվելու համար եկողչորս
հարիւր երիտասարդները մէկ
տեղ այրեց : Պահեմիոյ վեցը հա-
րիւր վաճառականները շուկային
մէջ ցցահար սպաննել տուաւ :
Հինգ հարիւր իշխանաւոր և ազ-
նու ական մարդիկներ իրեն կառ-
կածելի երկնալով, ցցի զարնուե-
ցան : Եթէ Վալսպիոյ աս բըռ-
նաւորին տարօրինակ գաղանու-
թեան ամեն օրինակները մի առ-
մի դասենք, շատ երկար պիտի
ըլլայ : Քսան հազար հսդիէն առ-
ելի իր կրիցը զոհ ըրաւ :

Կը անգթութեանց վերջ տա-
լու, և Տրագուլ Օսմանեանց
տարեկան հարկ վճարել չուզե-
լուն համար, Վէհէմմէտ պատե-
րազմ հրատարակեց անոր գէմ :

Վիտինի Համզա պէյ կառավա-
ռիջ անոր վրայ իրկեց, որ նեն-
գութեամբ Տրագուլը հրաւիրեց
որ անձամբ գայ տեսութիւն ը-
նելու : Սակայն Տրագուլ անոր
լարած որոգոյթը իմացաւ, Համ-
զան բռնեց և անոր հետը եղող-
ներուն ձեռքերը և ուքերը կո-
տրելով, ամենքն ալ ցցի զարնել
տուաւ : Իսկ Համզան ալ անոնց
մէջ տեղը աւելի բարձր ցցի վրայ
զարնուեցաւ : Եսկէ ետեւ՝ Տրա-
գուլ Բուլղարիա արշաւեց, շատ
քաղաքներ կրակի տուաւ և ա-
ւերակ դարձուց, ու իր հետը
քսան ու հինգ հազարէն աւելի
գերի տարաւ :

Երբ աս ամեն եղածները Վէ-
հէմմէտին ականջը հսան, երկու
հարիւր յիսուն հազար հոգւոյ
չափ զօրք ժողվեց, և Վահմաւ

փաշային ձեռքովը մինչեւ Դանուպ
խրկեց : Իսկ ինքը հարիւր եօթա-
նասուն նաւերով Մեաւ ծովէն
Դանուպը անցաւ և ամեն գա-
ցած քաղաքները և դիւղերը կը
այրէր և կը կործանէր :

Տրագուլ իր կիները և որդի-
ները Պրաշով թողուց : Օքրաց
կէոր՝ Օսմանեանց նիզակակից
Մալտաւ իսյ իշխանին գէմ խրկեց,
կէսի ալ գրեթէ եօթը կամ տա-
նը հազար հեծելազօրք իր բով-
պահէց : Ետքը՝ անձամբ Օսմա-
նեանց բանակը լրտեսեց, ու գի-
շեր ժամանակ ջահերով և լազ-
տերներով աւոնց վրայ յարձա-
կեցաւ, ու այնչափ մօտեցաւ որ
Վէհէմմէտին վրանը մանել կ'ու-
զէր : սակայն Ենիչէրիները քա-
ջութեամբ կուռելով, հալուծե-
ցին զան : Օսմանցիք իսկոյն պա-
տերազմի պատրաստուեցան ու
Վլսհաները հալածեցին, անոնցմէ
հազար գերի բռնեցին : Առւթա-
նը հրամայեց որ ամենն ալ սու-
րէ անցընեն :

Վէհէմմէտ Վլսհաց բանակին
ետեւէն ինկաւ ու անտառ մը
համանելով զարհուրելի տեսարան
մը տեսաւ : քանզի քսան հազար
Օսմանցիք և Ռուլղազը դաշտի
մը կէս ժամու չափ ճանապարհի
երկայնութեանը վրայ ցցահար-
եալ կամ խաչուած էին, ու
Համզա պէյն ալ իր իշխանական
զգեստներովը անոնց մէջ ցցուած
էր :

Տրագուլ ամեն կողմանէ Օս-
մանեան բանակը նեղելէն ետեւ,
վերջապէս Վաճառստան փախաւ,
որուն Վաթիաս Քորվէն թագա-
ւորը բանտարկեց զան :

Հրոսակները Վլսհաց երկիրը
առպատակելով և հետերնին եր-
կու հարիւր հազարի չափ ձի և
ուրիշ անասուններ բերելով,
որ լթանին քովն եկան : Խոկ Վէ-
հէմմէտ անոնց Վլի պէջ իշխանին
պատուիրելով որ Տրագուլայ տե-
ղը անոր Ռատուլ եղբայրը Վա-
լաքիս իշխան դնեն, Կոստանդ-
նուպօլիս դարձաւ :

Ուստուլ տասն և հինգ տարի
թագաւորեց ամեն տարի տասը
հազար ոսկի հարկ վճարելով, ու
երբ իր ծառաներուն ձեռքովը
սպաննուեցաւ, Տրագուլ բանա-
տէն փախաւ, ու կրկին անգամ
երկրին իշխանութիւնը ձեռք ա-
ռաւ . սակայն երկու տարիի չափ
իշխանութիւնը քշելէն ետև՝ իր
գերիներուն մէկեն սպաննուե-
ցաւ : Օսմանցիք անոր գլուխը
շատ քաղաքներ պտըտցուցին ու
այնուհետեւ Վլսհաց աշխարհին
բոլորութին տիրեցին :

Վշխան մէջ Վէհէմմէտ Լեսիո-
սի վրայ դիմեց, որն որ Խիւզան-
դացի կայսրները Շենովացւոց
տուեր էին. Քաթալանցի ծովառ
պատակներուն գէմ անոնց տու-
ած օգնութեանը փախարէն : Շե-
նովացիք քիչ մը ժամանակ ետքը
տիրեցին նաև. Խնոս, Խալրոս,
Թասոս, Լէմմոս և Վամաթրակէ
կղզներուն : Վէհէմմէտ իր վաժ-
ունն փոքր և եօթը մեծ նաւե-
րուն մէջ թնդանօթներ, բաղիս-
տրներ և ռումբեր լեցընել տա-
լով Վահմաւտ փաշա վէղիրին հը-
րամանատարութեանը յանձնեց,
ու ինքը գրեթէ երկու հազար
Ենիշէրիներով Վրիյ ծովեղեր-
քէն ան կղզին անցաւ, ու դես-

պան մը խրկեց Լեսիոսի Նիկո-
զայոս Շենովացի իշխանին, որ
իր երկիրը իրեն թօղու, ու ինքը
կը խոստանայ ուրիշ աւելի աղէկ
երկիր մը տալու : Նիկոզայոս,
իր ունեցած ուազմամթերին,
պարիսպներուն ամրութեանը,
հինգ հազար աղէկ զինեալզօրաց
և քսան ու հինգ հազար բնակ-
չաց վրայ ապաւինելով, այսպէս
պատասխան տուաւ . “ Քանի որ
կենդանի եմ, քաղաքս և կղզիս
ուրիշն պիտի չմատնեմ ” : Վէ-
հէմմէտ Վրիյ վերադարձաւ ու
պաշարումը Վահմաւտ փաշային
յանձնեց, որ քսան և եօթը օր
շարունակ պարիսպները ումբա-
կոծեց, ու շատ տեղերոր խար-
խալեց : Քաղաքին մէջէն քանի
մը անդամ ամրականները գուրս
ելոն, բայց Տաճիկները քաջու-
թեամբ հալածեցին զանոնք : Վն
տանեն՝ կղզւցն իշխանը խիստ
զղալով, Լեսիոսը մեծ վէղիրին
յանձնեց, ու խոստացաւ ուու-
թանին գրօշակին տակը ծառա-
յելու : Վահմաւտ փաշան իսկոյն
սուրհանդակ մը խրկեց Վէհէմ-
մէտին, որ մեծ ուրախութեամբ
իշխանին առաջարկութիւնը և
ինդրած խազաղութեան և բա-
րեկամութեան գաշինքը ընդու-
նեց : Նիկոզայոս լալով անոր ոո-
քը ինկաւ, ու ներումն խնդրեց:
Վէհէմմէտ միսթարեց զան ու
ապահովուց որ իր հետաղնդե-
լու ուշանալուն համար պէտք չէ
վախնալ . հարստութիւններն ալ
իրեն թողուց, բայց հրամայեց
որ կղզւցն միւս քաղաքներն ալ
իրեն յանձնէ : Նիկոզայոս հեա-
ղանդեցաւ յօժարութեամբ իր

ամեն երկիրները անոր տալու :
 Ո՞է հէմմէտ լեսփսսի կամ Ո՞ի
 տիլլի մէջ հինգ հարիւր պահա-
 պան զօրքեր թաղօւց . հոն դըտ
 նուած երեք հարիւր ծովասպա-
 տակները մէջքերնէն սղոցել
 տուաւ . խկ կղզւոյն բնակիչները
 երեք կարգ բաժնեց . խիստ աղ-
 քատները և խիստ անպիտան
 մարդիկները քաղաքին մէջ մնու-
 ցին . միջնի կարգը լինիչքեաց
 բաժին ինկաւ . խկ խիստ հա-
 րուստները կոստանդնուպօլիս
 երեք գաղթական խրկուեցան .
 իրեն համար ալ երեելի քաղա-
 քացւացմէ ութը հարիւր տղոյ
 և աղջիկ ընտրեց : Ալէքսիս Քու-
 մինոսի այրի կինն ալ , որ ան
 ժամանակին ամենէն գեղեցիկ
 կինն էր , իր կանանց մէկը ըրաւ:
 Նիկողոյոս դուքսը , որ լես-
 փոս կղզին յանձնելին ետև ա-
 զաստութիւն ստացեր էր , յան-
 ցանքով մը շղթայի զարնուեցաւ
 և ստորերկեայ բանտի մէջ դը-
 րուեցաւ . աս պատիմէն և ասկէ
 ետև գալու մահուանէն ազատե-
 լու համար , մահմէտականութիւ-
 նիքը ընդունեց , և փառաւոր
 հանգեսով պատմուձան և փա-
 կել հագաւ : Բայց ասով ալ
 չազատեցաւ . բիչ մը ատեն ետքը
 նորէն բռնուեցաւ , և բանտի
 մէջ խեղթեցին զան :

Ան ձմեռը Ո՞է հէմմէտ կոս-
 տանդնուպօլսոյ և տէրութեան
 ուրիշ քանի մը քաղաքներուն
 մէջ մեծամեծ շինութիւններ ը-
 րաւ : Տարտանեան բերդերը շի-
 նեց , որսնց առաջնը լւորողա-
 կան ծովեղերքին վայ Ո՞էտտ իւլ
 պահը (թումբ ծովու) կը կոչուի ,

իսկ Արփական ծովեղերքինը՝ Զա-
 նադդալէսի (պնակներու բերդ) ,
 աս տեղը բրափ անօթներ շինուել-
 նուն համար : Եւ ան տեղը , ուր
 ժամանակաւ սուրբ Առաքելոց
 եկեղեցին շինուած էր , մեծ մըզ-
 կիթի մը հիմնարկութիւնը ըրաւ ,
 որ աշխարհակալին անուննովը կո-
 չուեցաւ :

Խոկ երբ գարունը եկաւ , Ո՞է
 հէմմէտ հարիւր յիսուն հազար
 հոգւով նոր աշխարհակալութիւն
 ետևէ եղաւ : Տրագուլը շինուա-
 ծոծ՝ այսինքն տարի մը առաջ
 Ո՞է հէմմէտ Պոսնիոյ թագաւորէն
 հարկ խնդրեր էր . բայց աս իշ-
 խանը (Օսմանեան գեսպանը) իր
 գանձատունը տարեր ու պատ-
 րաստ գրամները ցուցընելով ,
 այսպէս պատասխաներ էր . “ Ո՞-
 չա իմ ստակս , որն որ ամենեին
 միտք չունիմ սուլթանին խրկե-
 լու : Ինչու որ եթէ ան միտքը
 դրեր է որ իմ վրաս պատերազ-
 մի ելլէ , զինքս պաշտպանելու
 համար ասոր հարկաւորութիւն
 ունիմ , իսկ թէ որ յաղթուխու-
 իմ հայրենիքս փախչելու ստի-
 պուխմ , դարձեալ աս ինձի հար-
 կաւոր է աւելի հանդիսատ կեանք
 մը անցընելու համար ” : Ասոր
 վայ Ո՞է հէմմէտ Պոսնիոյ դէմ
 պատերազմ հրատարակեց , և երբ
 Տրագուլը նուածեց , իր Ուահ-
 մուա փաշա վէգիրը առջեւն խըր-
 կեց ու ինքն ալ անոր ետևէն
 ճամբայ ինկաւ : Պոսնիոյ թագաւ-
 ուրը Պապիքսա (Օգոստ բերդին
 մէջ պաշտպանուեր էր , ուստի
(Օսմաննեան բանակին անցնելու ճամբանները հարթելու և դիւրացընելու հոգը իւրէնոսի որդւոց յանձնուեցաւ, որոնք ըստ հարկաւորութեան կամուրջները կը կործանէին կամ կը նորոգէին։

Մէհմէտ աս բերդին առում մը կէտիք Մէհմէտ փաշա մեծ վէգիրին քարձրագոյն հրամանատարութերը պիտի յանձնէր, որ արդէն Քարամանը և Գըրըմը նուածեր էր, բայց աս պատերազմին գժուարութիւնները յառաջբերելուն համար, սուլթանը զանիշխանութենէ ձգեց, և անոր

տեղը Վէհէմմէտ փաշա Գարաւ
մանին՝ մեծ վէզիր ըրաւ :

Եւ որովհէտեւ խատիմ Վիւլէյ-
ման փաշան Ռումէլիի կողմանապե-
տքանի մը պատերազմներու մէջ
յաղթուեր փախչեր և կամ մեծ
կոտորած ընդուներ էր, անոր հա-
մար Վէհէմմէտ աս կուտակուլ և
Կէտիք Վէհէմմէտ փաշան Ռումէլի
հիսարին մէջ բանտարկեց :

Վրգէն Տաւուտ փաշա Ռումէ-
լիի կողմանապետը Աքոտրայի վրայ
խրկուած էր, և Քրոյան տա-
րիէ մը 'ի վեր պաշարուած նեղը
մոնտուլ, քաղաքին բնակիչները
մինչեւ շուն և կատու ուտելու
պարտաւորեր էին : Աս միջոցին
Վէհէմմէտ հասնելու, բնակիչն-
ները իրենց սակաւաթիւ գնդու-
լը քաղաքը ազատելու յօյսեր-
նին կորեցին . սուլթանին գես-
պաններ խրկեցին ու խոստացան
քաղաքը յանձնել . ան ատեն
գրեալ դաշնուք մը ընդունեցին,
որով ազատ պիտի ըլլային իրենց
հարստութը քաղաքէն դուրս ել-
լալու, թէ որ (Օսմաննեան իշխա-
նու թեան տակը ըլլալ չեն ու զեր:
Աս կերպով անձնատուր եղան զօ-
րավորին, և երբ քաղաքէն դուրս
ելան, զօրավորը զանոնք ամենն
ալ շղթայի զարկաւ և Վէհէմմէ-
տին առջեւ տարաւ . Ասուլթանը
անոնցմէ գլխաւորները զատելով,
որոնք իրենց փրկանքը վճարելու
կարող էին, մնացածները սուրէ
անցընել տուաւ :

Վէհէմմէտ Քրոյայի վրայ քա-
լած ատենը՝ Ռումէլիի Տաւուտ
փաշա կողմանապետը, որ Ալպանացի
ծնած էր, բանակին մեծ մասով
Աքոտրայի վրայ գացեր էր : Իր

ետեւ հասաւ և Անաթուլիոյ
Պուսթափա ողէյ կողմապետը
(8 Յունիս) . ան ատեն՝ ձիա-
ւոր զօրքերը հինգ գունդի բաժ-
նուեցան, որոնք իրարմէ թուով
և գրօշկներուն գոյնովը յայտ-
նի կը զանազանէին : Առաջին գուն-
դը վեցը գրօշ ունէր, որոց չոր-
սը Ճերմակ, մէկը կանաչ, և մէկը
վարդագոյն էր . երկրորդ, եր-
րորդ, չորրորդ գնդերուն մէջ
երկու ծիրանեգոյն, երկու կա-
նաչ և երկու դեղն գրօշ կը
ծփոյին : Հինգերորդին մէջ, ուր
կը գտնուեր Տաւուտ փաշան, եօ-
թը գրօշկոր, չորս վարդագոյն,
մէկ Ճերմակ ոսկեկուռ և երկու
կանաչ : Վիայն ասիական զօրքերը
երեսուն հազար հոգիի կը հաս-
նէր, սակայն պաշարման բանակը
տակաւին կատարեալ չէր : Յու-
նիսի 15ին եկան նաև հինգ հա-
զար Անիշէրիք Ճերմակ գրօշկուլ,
որոնք սուլթանին յառաջապահ
զօրքերն էին . երեք օր ետքը՝ նո-
րէն մեծ գունդ մը եկաւ :

Վէհէմմէտ գեսպաններ խրկեց
Աքոտրայի կառավարչին որ անձ-
նատուր ըլլայ, երբ ան յանձն
շառաւ, հրամացեց սուլթանը որ
քաղաքին առջեւ ը գտնուած բլին
վրայ փայտեայ ամրոց մը կանգ-
նեն, չորս մէծ աշոտարակներուլ,
որոնք քարերուվ լեցընել տուաւ
պաշարման մեքենաները և հրա-
զէնքերը պաշտպանելու համար,
Տասը հազար ուղտերով թնդա-
նօթները և ուղտամթերները հսկ
փօխագրուեցան : Ամսուին ըե-
րանը (Օսմաննեանք) սկսան ահա-
գին թնդանօթներով պարիսպ-
ները Ճեծել, որոնց ամեն մէկը

հաղիւ օրը տասը, տասն և հինգ
անգամ՝ երեքէն մինչև տասն ե-
րեք կենդինար ծանրութեամբ
ռումբէր կը նետէր :

Այսնց մէջ աեսակ մը թնդա-
նօթ ալ կար, որ ծծմբախառն
իւղով թաթխած ռումբէր կ'ար-
ձակէր, որոնք ինկած տեղը կայ-
րէին : Այս ռումբէրը սաստիկ
շառաչիւնով մը կը ճայթէին, ու
իրենց ետեէն գիտաւոր տուղնե-
րու պէս լուսոյ երկար հեաքեր
կը թողուին օդը պատռած ատեն-
նին : Այսկայն քաղաքացիները
մեծ ճիգով կ'աշխատէին ռում-
բէրէն ինկած կրակները մարելու :
Այս թնդանօթները նոյն իսկ պա-
տերազմի գաշտին մէջ թափուե-
ցան, և դեռ աղէկ մը չպաղած
կը սկսէին գործածել : Տասն և
մէկ կտոր աս կերպ մեծ թնդա-
նօթներ թափուեցան, որոնք ե-
րեսուն օր պաշարման միջոցին՝
շարունակ գործածուելով 2500
ռումբէր նետեցին :

Այս պատերազմին մէջ կ'ըսեն
թէ Օսմանեան զօրաց թիւը ե-
րեք հարիւր յիսուն հազար հո-
գիի կը համնէր . Աքոտրայի չորս
կողմի լեռները և բլուրները գրե-
թէ քառասուն մզոն տարածուե-
լոյց Օսմանցւոց ձերմակ վրան-
ներով ծածկուած էր : Առվլթա-
նին համար ինը մզոն տարածուե-
լոյց ինը վրաններ կանգնուած
էին, որոնք երեք կարգ պահա-
պաններով պահպանուած էին :

Ամիս մը շարունակ ռմբակոծե-
լով, պարիսպները խարխալեցան,
խրամները քարերով և խուրձե-
րով լցուեցան : Ան ատեն Աշ-
հեմմէտ հրամայից որ ընդհանուր

յարձակումը ընեն . առտու արել
ելլէն առաջ, երբ քաղաքացին
ները եկեղեցին մէջ կը գլու-
նուէին, Օսմանցիք չորս թնդա-
նօթ արձակելով, յարձակման
նշանը տուին, և նոյն միջոցին՝
հարիւր յիսուն հազար հոգի ա-
մեն կողմէն մրբկի նման քաղաքին
վրայ վաղեցին : Պատերազմի զան-
գակը քաղաքացւոց ժամերգուիը
և ազօթքը ընդմիջեց, և եկեղե-
ցին դուրս նետուեցան պա-
րիսպները պաշտպանելու համար:
Արդէն Տաճիկները՝ լցուած խր-
բամներուն քովը հասեր էին, և
պարիսպներուն վրայ կ'ելլէին,
արդէն մեծ գրան մարտկոցին
վրայ Օսմանեան գրօշակը անկեր
էին, երբ քաղաքացիները զար-
մանալի քաջութեամբ ձեռք ան-
ցած մարտկոցը տռին ու թշնա-
միները հալածեցին :

Այսօր վրայ Վէհէմմէտ հրամա-
յեց որ նորէն քաղաքին մեծ գրան
վրայ յարձակին . քանզի աս կողմի
երկու մեծ աշխարհկները աւե-
րակ դարձեր էին ահագին ռում-
բէրէն, և հօղէ պարիսպ մը միայն
կար . Անգամ պատերազմը
խիստ սաստիացաւ և Օսմանցիք
նորէն իրենց գրօշը մարտկոցին
վրայ անկելու կարող եղան : Ան-
տենը՝ քաղաքացւոց ՚ի պահեա-
տի ունեցած երիտասարդներու-
նոր գունդ մը առիւծաբար թըշ-
նամեաց վրայ յարձակեցաւ, նո-
րէն զանոնք հալածեց, Օս-
մանեան գրօշակները իլեց, և
Ա . Արկոսի գրօշ տնկեց : Ահա
աս կերպով. երիտասարդ քա-
ղաքացւոց քաջութեամբը այն
օրուան յարձակումը վերջոցաւ,

որուն մէջ քաղաքացւոցմէ չորս հարիւր կորիձներ միայն ինկան, իսկ (*Օսմանցւոցմէ* տասն'երկու հազար հոգին աւելի) .

Հինգ օր ետքը (29 Յուլիսի), երրորդ յարձակումը ըրին . օշուան հետ պատերազմը սկսաւ, մինչև իրիկոն տևեց, և երկու կողմէն ալյաջորդաբար կը յաղթէին և կը յաղթուէին, մինչև որ Մէհէմմէտ սաստիկ բարկացած հրաման ըրաւ որ տասն և մէկ հսկայանման թնդանօժնեւրով քաղաքին մեծ դուռը ծեծեն, առանց դիտելու թէ ան ոռումը բերը թշնամեաց վրայ կը նետուին թէ՝ նոյն (*Օսմանցւոց վրայ*, ուրինք արդէն մեծ դրան տիրերէին, և երբ իրենց ետևնէն առանակնկալ դժբաղդութեան գալք տեսան, երկիւզով լցուած ըսկան ետ փախչիլ: Մէհէմմէտ յուսահատելով պոռաց: “ Աւ այսուհետեւ Աքոտրայի անունը չէմ ուղեր լսել: բոլոր ջանքերս պարապը ելան” :

Առաջանական կազմութեամբ օր ետքը խորհուրդ մը կազմուեցաւ, որուն մէջ Լուրէնոսեան Մհմէտ պէյը առաջարկեց սուլթանին որ պաշարումը վրցընէ, և իրեն գունդը մը զօրք ձգէ. քաղաքը պաշարելու համար: Մէհէմմէտ հաւտնեցաւ, բայց Աքոտրայի բոլորաբը գտնուած քանի մը ամրոցներուն տիրելէն ետեւ: Այսպէմբէրի ծին գիշերը՝ վողերուն ձայնով և ջահերով բանակը պատրաստել տուաւ, և լոյս դէմմէկ ձերմակ և մէկ կարմիր գրջաշակներով քառասուն հազար հոգւով ճամբայ ինկաւ:

Ծումէլիի և Ենաթոլիոյ կուսակաները Աքոտրայի հետ հաղորդակցութիւն ունեցող կողմէն ըը տշուարակները շնուցին և հոն զօրքեր դրին, որպէս զի՞ պաշարուողներուն դուրսէն օդինութիւն չաղցընեն: Ատկայն՝ սաստիկ ձմեռը վրայ հասնելով, կուսակաները պարտաւորեցան իրենց տեղերնին քաշուիլ, և Լուրէնոսեան Մհմէտ պէյը հոն թողուցին քառասուն հազար ձիւառը զօրքով, որ պաշարումը շարունակէ: Քաղաքացւոց պաշարը հատնելու վրայ էր, միայն հաց և ջուր ունէին, և դուրսէն ընդունելու յոյսերնին կորեր էին: սակայն քանի մը Խոտացիներ քաղաքէր եցին զքաղաքացէրը որ տակաւին քիչ մը դիմանան, իմացընելով անոնց որ Աննետիկէն դեսպան մը խրկուեցաւ ՚ի կառանդուազօլիս որ հաշոռ թիւն ընէ: Խատեն համբերութեամբ իրենց թշուառութեանը տարին և իրեք ամիս մը ետքը խաղաղութիւնը հաստատուելուն լուրը եկաւ, բայց ան դաշամբ որ Աննետիկէթ Աքոտրան (*Օսմանցւոց թողուն*, և բնակիչները կամ (*Օսմանեան լուծին* տակը խաղաղութեամբ հոն բնակին, և կամ իրենց հարստութեամբ քաղաքը թողուն երթան: ամբականները և քաղաքացիները իրենց կառավարչին ատենաբանութեամբը գրգռեալ վերջին որոշումը ընդունեցին, և պատանդներով խաղաղութեան դաշինքները հաստատելով, չորս հարիւր յիսուն այր, և հարիւր յիսուն կին տասն և մէկ ամիս պաշարման մէջնեղու-

թիւն, վտանգեա թշուառութիւն կրելէն, ու երկաթէն և սովէն սպառելէն ետև՝ իրենց ամեն ինչը քը, զէնքերը և սուրբ անօթները հետերնին առնելով, տրտմաւթեամբ իրենց պարխապները թշողուցին, զորոնք իրենց և թշնամեաց արխւնով ոռողեր էին, և Օսմաննեանք յազմանակով Աքոտքայի մէջ մտան :

Աս խազաղութեան գաշինքը հաստատուեցաւ 1479 Յունուարի 29ին կոստանդնուպոլսոյ մէջ որով Վենետիկի հասարակապետութիւնը երկու ամսուան մէջ Աքոտքան և Օսմանցւոց ձեռքէն առնուած ամրոցները Մէհէմմէտին պիտի յանձնէր, և երկու տարուան մէջ հարիւր հազար ոսկի վճարէր : Եւ Մէհէմմէտ, Քրոյայէն և Աքոտքայէն զատ, Օսմանցւոց՝ Ալպանիոյ, Պորայի և Դաղմատիոյ մէջէն առած երկիրները հասարակապետութեան գործընէ : Դաշնագիրը շնող Շիովսննի Տարիօ վենետիկցին եւ բեք ոսկեկուռ դիպակէ պատմուանները ընդունեց :

Աս գաշինքէն ետև՝ Միլքոն թիւ վիզանի կոստանդնուպոլիս եկաւ իրեն գեսպան, և Տարձագոյն Դուռան ալուրիշետեսպան մը խրկեց ի վենետիկ, որ խիստ պատուեցաւ դուքսէն, և ականակուոգոտի մը ընծայեց անոր սութամանին կողմէն, բայց ան գոշամբ որ Մէհէմմէտ աս գոհարը հեղեղուն պէս՝ դուքսը ետ տայ զան, և առ կերպ ետ պահանջելը խազաղութեան դաշնաց լուծուելուն նշան համարուի : Դեսպանը իր հետը ոսկի մեծ բաժակ մը ալ-

տարեր էր, որ գուքսին և տասն' երկու ատենակալներուն հետ անով խմէ :

Այս գեսպանը ուրիշգաշնիք մը ալ հաստատեց, որով հասարակապետութիւնը, սուլթանինից զակակից գտնուելու համար, հարիւր կաոր յոկանաւերէ բաղկացեալ տորմիթմը պատրաստ պիտի ունենար, և Մէհէմմէտ ալ իր կողմէն կը խոստանար որ հարկաւոր եղած ատենը հարիւր հազար ձիաւոր զօրքով հասարակապետութեան օգնութեան հասնի : Ահա այսպէս Ահապոլսոյ թագաւորէն ետքը՝ քրիստոնեայ աղքերէն Վենետիկցիք եղան, որ Օսմաննեանց հետ բարեկամութեան գաշնիքներ հաստատեցին ու իրարունիղակից եղան :

Եօյն տարին, քառասուն հազար հոգիէ բաղկացեալ հրոսակներու գունդ մը տասն' երկու նախարարներու առաջնորդութեամբը, որոց գլխաւորներն էին Միխալէան Ալի և Խոբէնտէր, Լուրէնոսէան Հասան պէյ և Խապէյ, Մահառոտան մտան և մինչեւ Թիրանսիլվանիա ասպատակեցին : ասկայն՝ այսչափ գլխաւորներուն թիւը անմիաբանութիւն ձգելով, բանակին ոյժը տկարացուց : Ատեփանոս Պաթոր Թըրանսիլվանիոյ իշխանը շուտով բանակ մը կազմէց Օսմանցւոց վայյարձակելու համար, որոնք երկիրը արշաւելով մէծ աւարով մեկնիլ կուզէին, և անոնց առջելաւ բայց առջի բերանը իր ձախ թեւը խորտակեցաւ, և ալ թեւն ալ տկարանալու վրայ էր, Պաթոր, փախչողները նորէն միա-

յընելով, յաջորդաբար երկու ձի կորսնցուց և վեցը վերը ստացաւ : Այ միջոցին հասաւ Քինիս թմբշվարի կոմոք ու Պաթորին բանակին մեռեալ ոյժը կենդաւնցուց : Կատեն՝ պատերազմի յաջողութիւնը փոխուեցաւ, և Օսմանեանը չարաշար յաղթուեցան, ու երեսուն հազար մեռեալ թողուցին : Բայց Քինիս իր յաղթութիւնը սոսկալի անգթութիւններով աղտեղեց : Թշնամեաց դիակներուն վրայ սեղան գնել տուաւ, բաժակներէն թափուած գինին՝ ուռոգած արիւնին հետ կը խառնուէր, և յաղթողները ան կոյտ կոյտ մեռեալներուն մէջ վայրենի ուրախութեամբ պար խառնուցին : Հետեւեալ առառու՝ Օսմանցւոց դիակներովը բուրգեր կանգնեցին :

Հետեւեալ տարին (Օսմանեան հրոսակները աս նախատանաց վրեժը առնելու համար՝ նորանոր ասպատակութիներով մինչև Կրաց հատան : Գիւղերը և քաղաքները աւերակ դարձուցին, ու եկեղեցիները կողովտեցին և կործանեցին : Այ աւերմունքները արեմուտք եղած ատենը, Վարեւելքին կողմն ալ Աէհմէտին հրամանաւը զօրավարները ամրոցներու և կղղներու կը տիրէին : Այ միջոցիս՝ սուլթանը Իմպրոսի մէջ ամրոց մը շինել տուաւ, և Լեմնոս կղղին բժիշկներ խրկեց որ մատանեհար կաւը քննեն :

Այ միջոցին (1480), Եղիպտոսի սուլթաններուն հետ ունեցած բարեկամութեան դաշնիքը լուծուեցաւ երկու պատճառներու

համար : Այս որ Եղիպտոսի Խօշգատէմ սուլթանը անարժան պատասխանով մը մերժեր էր Աէհմէտին խնդիրը, որ կը յորդորէր զան իր ծախիւքը Աէքքէի Ճամբուն վրայ գտնուած ջրմուղները, աղբիւրները և հորերը նորոգել, որպէս զի ուխտաւոր ները հանդարտութ Ճամբորդութիւնը ընեն : Եւ երկրորդ՝ որ Խօշգատէմին Պայթէպա յաջորդը Աէհմէտին կամացը հակառակ Շէհաբիւլար Օիւլգատըրեանը* Պարաշէն բանել տալով, շղթայակապ կախեր և անոր տեղը անոր Պուտագ եղբայրը հաստատեր էր : Աէհմէտին իր միւս զբաղմունքներէն աղատելով, տասը տարի ետքը Պուտագին վրայ գնաց, զան նորէն Եղիտասս հալածեց, անոր Ալայիւտտէլիթ եղբայրը անոր տեղը դրաւ, և գունդ մը օդնական զօրք տուաւ անոր :

Վիխական աս պատերազմը վերցինը եղաւ : Արկէ մինչեւ իր իշխանութեն վերջը աշխարհակալը Եւրոպական պատերազմներով զբաղեցաւ : Էննարտօ Յոնիական կղղեաց իշխանը Աէապօլսոյ թագաւորին բարեկամանալով, Աէհմէտ անոնց վրայ եղած ամբաստանութեանը ականջ կախեց և բսան ու ինը նաւէ բաղ-

* Ասկէ հարիւր տարի առաջ Թիւլիթնաց տոհմը Մարաշու մէջ անկախ տէրութիւն մը հաստատեցին իրենց Զէյնիտունի Գարանա Զիւլգատը գլխաւորին ձեւքովը ասոնց վրայ Օմաննեան պատճենեան մէջ շատ անդամ յիշուած է : Օմաննեան սուլթաններուն անոնց հետ ունեցած խնամութեանց պատճառաւ :

կացեալ տորմիլ մը պատրաստեւ լով, կէտիք Ահմէտ փաշա նախորդ մեծ լիզերը բանտէն հանեց, թեռաղօնիկէի կուսակալը բաւ և Յոնիական կղղեաց վրայ խրկեց :

Կէտիք Ահմէտ Ասնթա Մաւրա և Օանթա կղղիներուն վրայ եւ լսու, և տռանց ընդդիմութեան անոնց տիրեց ։ Վասնզի էօնարատո անոնց գալուն չպատսելով, իր գանձերով Ահապօլիս փախչեր էր : Աս կղղիներուն տիրելէն ետեւ՝ աշխարհակալին աչքը ։ Իտալից ծովեզերքին վրայ յարեցաւ, ուր մինչեւ ան ժամանակը ամենենին Օսմանցի մը սովը կոխած էր : Ո՛հէմէտին աշխարհակառ թեան աս եռանդը Անենետիկացոց թելադրութեամբը աւելի ևս գրգռեցաւ, որոնք աս միջոցին թշնամի էին Ահապօլոյ թագաւորին, և իրենց Աեբաստիանոս կրիթթի դեսպանը Ո՛հէմէտին իրկեցին, և իմացուցին անոր թէ Ահապօլոյ Փրունթուսիոն, Տարենտոն և Օթրանտքաղաքները ժամանակաւ արևելեան հոռոմկայսերաց իշխանութեան տակը ըլլալնուն համար՝ իրաւամբ կրնայ տիրելասոնց իրար մասն Յունաց իշխանութեը :

Կէտիք Ահմէտ փաշա Խնիչքիներով լցուած հարիւր կոտր նաւերէ բաղկացեալ տորմիզը Փուլից ծովեզերքը ուղղեց, Օթրանթելաւու Օսմանցոց գէրեղած իշխան Իտալիոյ աս պատուարին տիրեց : Հոս ալ դարձեալ իրենց անդթութիւն ի գործ դրին ու բընակչաց արիւնով յարեցան ։ Եւ կեղեցիները կործանեցին, սրբոց

պատկերները այրեցին, ոսկեղէն և արծաթեղէն սրբանուեր անօթները հալեցին, բնակիչները չարացար տանջեցին, ու քսան և երկու հազար բնակիչներէն տասն' երկու հազարը սուրէ անցուցին, քաղաքին կառավարիչը և եպիսկոպոսը մէջբերնէն աղոցեցան, իսկ մնացածները գերի տարուեցան :

Կէտիք փաշային նաւատորմիլը Փուլից ծովեզերքը չելած Ո՛հէմէտին փաշա վաթսունցուկանաւով Հոռոդոս կղղին* վրայ գացեր էր

* Հոռոդոս կղղին Փոքր Աքիոյ հարաւային արեմուեան ծովեզերքէն երեք կամ չորս աշխարհագրական մղոն հեռու կը գտնաւի : Հոռոդոս անունը, որ Յունակէն վարդ, և Փիւնիկացոց լեզուալ օձ կը նշանակէ, հաւանականարար Յօնիկը և Փիւնիկեցիք աս կղղւցն մէջ շատ ծաղկի և օձ գանենուն համար այսուհետ կոչուած է : Աս կղղին իր գիրքով յիշուակներով, ընարագիտութեամբը և քաղցութեամբը շատ երկելի է : Սորոց Դեմետրիս թագուորը աս կղղւցն վոյց գարով, ըլլացաւ, առնել զան՝ թէպէտեգուսային մէքենաներ հնարել տուեր էր : Քանզի երբ Դեմետրիս առաջին պարիսսը կործանելու կարող եղաւ, ներէն հռոգացիք թագուերան, տուեներուն և տաճարներուն քաղաքը և փայտով ուրիշ սրարիսոյ մը շնեցին, երբ աս երրորդ պարիսսն առանուեցաւ, քաղաքացիք երրորդ մը շնեցին, Դեմետրիս յուսահասելով, հաշտութիւն խօսեցաւ : Աս խօսու ընդդիմութեան և յանդութեանը համար՝ Հոռոդոսիք ութունն մէթր բարձրութեամբ և ինը հազար կենդինար ծանրութեամբ հռչակաւոր սկայագործ արձանը կանգնեցին, որուն տակէն նաւերը առագաւանին բացած կ'անցնեին : Բայց կոնդունուելէն յիսուն և վեց տարի ետքը կործանեցաւ, և ինը դար ետքը անոր կը տորուանեներով ինը հարիւր ուղղաւ բեռնաւորեցին : Հոռոդոս որչափ իր յիշաստակարան ներով : իր արուեստուգէտէսներով և վարժարաններով երեւելի եղաւ, նշիպէս ալ իր քաղաքական օրէնքները, կառավարութեան բարեկարգութիւնը, և իր պատերազմական զրութիւնը գովեստից արժանուուր եղան :

որ ան միջոցին Ա. Յովհաննու կարդի ասպետներուն ձեռքն էր : Աէսիհ փաշա երկու երեք անգամ ցամաքը ելաւ ծովեղերեայ քանի մը ամրոցները զարնելու համար, բայց անսնց իշխաններէն ետ մզրւելով, նորէն նաւերը քաշուելու ու Ֆիսիոս ծոցին մէջ կոստանդնուպօլսէն մեծ նաւատորմիզին օգնութեան հասնելուն սպառելու պարտաւորեցաւ : Վ երջապէս 1480 Մայիսի 20ին նուերը հասան, ու բալորը մէկէն հարիւր վաթուն նաւ եղան :

Աէսիհ փաշա երեք Հռոդացի մատնիշներու առաջնորդութը կղզին պաշարեց և սկսաւ ումբակոծել Ա. Նիկողոսի աշտարակը, երեք հարիւր թնդանօթի հարուածէն ետքը առ աշտարակին պարիսպը խարխալեցաւ, ու մեծ ծակ մը բացուեցաւ . բայց երբ Հռոդացիք աս կողմը նորէն ամրացուցին ու փայտեայ պատնէշմը չնեցին, Օսմանցիք եօթը հարիւր մեռեալ թողէն ետև՝ բաշուեցան :

Հետեւալ օրը՝ Աէսիհ փաշա իր զօրքերը ցամաքային կողմը փոխադրեց ու պաշարեց . ութը խոշը թնդանօթներով Հռեկից թաղը սկսաւ ծեծել : Վիմիջապէս Հռոդացիք Հռեկից տուները փլեցին, ու անսնց քարերով և փայտերով ներսէն ուրիշպարիսոպ մալշնեցին : Վ շնութեան համար՝ առպետ և գիւղացի, քաղաքացի և վաճառական, կիներ և առայգ աղջիկներ, ամենքնին ու կիր, փայտ և քար կը կրէին :

Օսմանցիք նորէն փորձ փորձեցին Ա. Նիկողոսի բերդին վրայ

յարձակելու, նաւակներով կամուրջ մը շինեցին, որուն վրայ վեցը հոգի կարգաւ կայնելով կը նային պատերազմիլ . առ կամուրջին մէկ ճայրը խարիսխալ մը հաստատած էին, միւս ծայրն ալ պարանով մը նշտարակին ողարսաց վրայ հանեցին . սակայն գիշերը Վիգղիացի նաւաստի մը լողալավ ջնուրին տակէն խարիսխալ հանելուն պէս՝ կամաւրջը ջուրին մէջ կախուեցաւ . Օսմանցիք մակոյկներով անոր ծայրը քաշեցին ու ծովեղերը թումբին հաստատեցին : Յունիս 19ին մըրկալից գիշերը Օսմանցիք աշտարակին վրայ յարձակելուղեցին . երկու կողմէն ալ սկսան ումբակոծել, սակայն կամուրջը խորտակեցաւ, ու անոր վրայ եղող յարձակողները ծովուն մէջ խղթուեցան : Կէս գիշերէն գրեթէ մինչև կէսօր պատերազմը . կատաղաբար տեղ, վերջապէս Օսմանեանք երկու հազար հինգ հարիւր հոգի կորսնցընելով ետք քաշուեցան :

Վ պարտութենէն ետև Աէսիհ փաշա չյուսահատեցաւ . իր բոլոր ոյժը Ա. Նիկողոսի աշտարակին քովիլ պարիսպներուն վրայ թափեց, ու երեք հազար հինգ հարիւր ումբագութեամբ կարող եղու մեծ ծակ մը բանալ . սակայն Հռոդացիք մեքենայ մը հնարերէին, որ թշնամեաց մարտկոցներուն վրայ տհագին ժոյռերու կտորներ կը նետէր, որոնցմով Օսմանցիք խարմները կը լեցընէին և Հռոդացիք ստորերկրեայ Ճամբաներով զանոնք ներս կ'առնէին իրենց մեքենային . գործածելու համար . այնպէս որ Օսմանցիք

չեն կրնար իմանալ թէ ինչպէս
Խրամները միշտ կը պարզուեին :

Մէսիհ փաշա տեսնելով որ
ըրած յարձակումներով չաղու-
ղեցաւ՝ ասուտաց մագիստրոսին
Յօն մը խրկեց որ անձնատուր
ըլլայ . երբ ան յանձն շառաւ ,
Մէսիհ փաշա բարկութեամբ
լոււած հրաման ըրաւ որ նորէն
յարձակումընեն , և խոստացաւ
քաղաքին կողոպուտը զօրաց թու-
ղուլ : Այսոր վրայ Օսմանցիք սու-
վորական պատրաստութիւններէն
զատ՝ աւարին համար պարկեր գը-
տան , առայդ աղջիկները և գե-
ղեցկագէմ տղաքները կապելու
համար պարաններ , և առպետ-
ները ու զինուորները ցցի զար-
նելու համար ութը հազար ցո-
ղեր պատրաստեցին :

1480 Յուլիսի 28ին , (նոյն օրը
որ Օսմաննեան բանակը Փուլիոյ
ծովեղերը կ'ելլէր . Օթրամնթի
վրայ յարձակելու համար ,) ա-
րել ծագելու ատենը՝ թնդանօթ
մը արձակուելով , յարձակման
նշանը տրուեցաւ , և Օսմաննեանք
անընդդիմակ զօրութեամբ աւե-
րէալ պարիսպներուն վրայ յար-
ձակեցան : Երկու հազար հինգ
հարիւր հոգի խրամատէն ներս
մտեր էին ու ետևնէն քառա-
սուն հազար հոգի խրամներուն
վրայէն վեր կը խուժէին : Երկու
կողմէն աւ քաջութ կոռուեցան .
Օսմաննեանք , կ'ըսէ Աստէտտին
պատմագիրը , շղթայաղերծ ա-
ռիւծներու նման իրենց որսե-
րուն վրայ ինկան , և Հոռոդացիք
Մակաբայեցւոց նման իրենց կրօն-
քին և ազատութեանը համար
կը պատերազմէին : Երդէն Օս-

մանեանց դրօշը պարիսպներուն
վրայ կը ճօճար , արդէն յարձա-
կողները պարիսպէն վար քա-
ղաքին մէջ չորս սանդուղներ
կախելով , վար իջնալու վրայ էին ,
երբ Մէսիհ փաշա , քաղաքը
իբրև առնուած տեսնելով , պա-
րիսպներուն վրայ աղաղակողներ
հանեց , ու իմացուց որ քաղա-
քին կողոպուտը սուլթանին պի-
տի ըլլայ : Իսկոյն Օսմաննեանց
եռանդը պաղեցաւ , խրամատէն
դուրս գտնուող գունդերը չու-
զեցին վեր ելլել ու ներսիննե-
րուն օդնել . ան ատեն՝ քաղա-
քացիները ներս մոնողները հա-
լածեցին , և անսից սանդուղնե-
րէն վեր ելլելով , Օսմանցւոց տի-
րած տեղը ձեռք անցուցին : Եր-
կու ժամ ալասկէ ետև սաստիկ
պատերազմելով , Օսմաննեանք
պարտաւորեցան փախչել :

Այսպէս Օսմաննեանք Մէսիհ
փաշային ագահութեանը պատ-
ճառաւ կորակոր կոստանդնուպօ-
լիս գարձան՝ երեք ամիս Հոռո-
դոս կղզին պաշարելէն ետև , ո-
րով ինը հաղար մեռեալ և տասն
և հինգ հազար վիրաւորեալ ունե-
ցան :

Մէհէմմէտ Մէսիհ փաշան իշ-
խանութենէ ձգեց և կէլիպօլիսի
գաւառապետ ըրաւ . ասոր տեղը
Մաղնեսիա Ջէլէպին վէլիր ըրաւ ,
որ մինչեւ ան ժամանակը Օս-
մաննեան զօրաց դատաւորն էր : Ա-
գատաւորին ալ իշխանութիւնը
Մոլլա Անուսլիհէտտին Գասսթէլա-
նիին տուաւ . բայց Մէհէմմէտ
փաշա Գարամանին անոր թշնամի
ըլլալուն համար՝ հաւաննեցուց
Մէհէմմէտը որ զօրաց դատաւո-

բութեան պաշտօնը երկուքի բաժէնէ . ան ալ Անիսլիհէտափինը խումէլիի բանակին միայն դատաւոր ըրաւ՝ խումէլի գաղիասքէրի անուանելով զան, իսկ Վհաթոլիոյ դատաւորութիւնը Հաճի Հասանզատէրին տուաւ, և զան Վնաւ տոլու գաղիասքէրի կոչեց*:

1481ին գարնան սկիզբը՝ Վհէհէմէտնորէն մեծ պատրաստութիւններով Աքիւտար անցաւ, բայց մէկը չէր գիտէր թէ ո՞ր կողմը պիտի քալէ . քանզի ըստ իր սովորութեանը աս անգամ ալ եր միտքը յայտնած չէր . Վակայն բանակը Աքիւտարէն մեկնելով, երբ Հիւնքեար Չայըրը հասաւ, պարտաւորեցաւ հան կենալ, Քան զի . սուլթանը, որ քանի մը ժամանակէ . ի վեր հիւտանդ էր, նոյն տարւոյն Վայիսի Յին մեռաւ՝ երեսուն տարի իշխելէն և յիսուն ու երկու տարի ապրելէն ետեւ . Եր մեռնելու պատենը կտակով պատուիրեց որ իր տեղը իր Պայէզիս որդին անցնի և իր մարմինը իր Կրոստանդնուպոլսոյ մէջ շնած մզկիթին մէջ թաղեն :

Այս մեծ սուլթանը իրաւամբ Դազի (աշխարհակալ) ըսունելու արժանաւորութիւնը ունեցաւ . քանզի եօթը մեծ տէրութեանց և երկու հարիւրէն աւելի քաղքաններու և գիւղերու տիրեց :

* Ասոնց պաշտօնն էր պարտքերուն և ժառանգութեանց դասը տեմնել, և հասարակաց դպրատաններու մէջ ուսուցիչ գնել . Բութէլիի դատաւորը Վհաթոլիոյ դատաւորէն աւելի պատուաւոր էր՝ արքայանիստ քաղաքը իր բաժնին մէջ ըլութւն համար . բայց երբ սուլթանը Ազիս անցներ, Վհաթոլիոյ դատաւորին պատիւը աւելի կըլսար :

Խնչէս խիստ երևելի մարդոց կը պատահի, քանի մը պատմագիրներ Վհէհէմէտփին փառքը նսեմացընելու աշխատեցան . սակայն աս սուլթանին հին Շիւզանդիոյ տիրելը, (Օսմանեան պետութեան սահմանները այնչափ փառաւոր յաղթութիւններով ընդարձակելը, դպրատուններ, աղքատանցներ, մզկիթներ, իշեաններ, յիմարանոցներ, գրատուններ հաստատելը, արուեստները և գիտութիւնները ծաղկեցնելը, տէրութեան քաղաքական կառավարութիւնը բարեկարգելը բաւական են անոր համար պատմութեան մէջ փառաւոր տեղ մը պատրաստելու .

Բայց իր աս զարմանալի գործքերը չեն կրնար իր ցուրտ անգիտութիւնները մոռցընել տալ մեզ, որովիր եղայրը սպաննեց, բռնած գերինները անխնայ ջարդեց, իրեն դէմ կեցող քաջ զիսնուրութիւնները տանջեց, հաւատարիմ ամբականները սուրէ անցուց, թագաւորները և կայունները գըւխատեց . ինչպէս էին Տրապիզոնի կայսերութեան ընտանիքը, Պոսնիոյ թագաւորը, Լեսպոսի և Վթէնքի իշխանները :

Վակայն սկետք չէ աս սուլթանին անգիտութեանց վրայօք քանի մը Եւրոպացի պատմագիրներուն հաւատալ, որոնք չափազանցօրէն և անհաւատալի կերպով կը պատմեն . Խնչէս են աս արտավէպները թէ՝ իր տասն չորս մանկլաւիկներուն փորը պատռել տուերէ, որ ստուգէ թէ ովլէ աղքատ կնոջ մը վարունգները ուտուղ :

Եւ թէ սուլթան իր ձեռքովը իր կանանց ամենէն սիրելին սպանաներ է՝ անոր մեզկութեանը վրայ ջրաց բրած տրտունջները դադրեցընելու համար։ Եւ դարձեալ թէ՝ դատաւորի մը կաշառակրծութիւնը ստնձելու համար՝ անոր զաւակը անոր տեղը նստեցընելով, անոր հօրը մօրթը վրան փաթթել տուեր է։ Եւ ուրիշասոնց նման անգթութեան անհաւատալի օրինակներ յաճախեալ են։

Յունաց, Պոնտացւոց, Ճենովացւոց, Անեստիկացւոց, Աերվացւոց և Ալահաց ամենէն գեղցիկ տղաքները, որոնք պալատին մէջ կը ծառայէին և ետքը մէկ մէկ աստիճանի կը հասնէին, նախ և առաջ սուլթանին ցանկութեան կատարմանը գործիք եղած էին։ Այս կերպով Մէհէմմէտին փաշամինչել վէզիր եղան, և Տրագուլ ու Ջրանքո՛ Ալոհաց և Աթէնքի իշխան։ Իր անհեթեթ կրից դէմ կեցողը դահիճին կացինը կ'ընդունէր։

Այս գլուխը վերջացընելէն առաջ՝ պէտք է սուլթան Մէհէմմէտին աշխարհաշէն հաստատութեանց և թողուցած յիշատակարաններուն համառօտ պատկերը տալ։ Կոստանդնուպոլիսը առնելէն ետև՝ ութը եկեղեցի մզկիթի փոխեց, և չորս մզկիթ ալինքը շինեց, որոց ամենէն երևելին է Առևհամմէտիյէ կամ Ֆէթհի հիւել ըսուածը, որուն շէնքը, կապարապատ գմբէ թները, մարմարեայ և պորֆիրու սիւները այնշափ գեղեցիկ են, որ սուլ-

թան Մէհէմմէտ կոստանդնուպոլոյ մէկ թաղը ան մզկիթը շնող իրիսթօտուլոս յոյն ճարտարապետին տուաւ, որ որդւոց որդի ժառանգեն զան։

Այս մզկիթին բոլորակը զանազան շէնքեր շինեց յօգուտ հասարակաց ասոնց մէջ կան ութը ուսումնականաց համար ազքատանոցներ, մէկ հիւանդանոց, մէկ յիմարանոց, իջեաններ, դպրոցներ, բաղնիքներ և ժողովարան մը։

Այս սուլթանը հին պալատէն զատ՝ կայսերական նոր պալատն ալ շինեց 1462ին Աքիւտարի դիմացը եղած հրուանդանին վրայ։ Պալատին մէջ մոնելուն պէս բակ մը կը տեսնուի, որուն աջ կողմը կը գտնուի գանձատունը, հիւանդանոցը, ևն, և ձախ կողմը հարկ ժողովողին, շինուածոց տեսչապետին, ուեն ներքինապետաց ատենագորին բնակարանները, ընմայանոցը, զինանոցը, ախոռապետին բնակարանը և մեծ ախոռները։ Կոստանդնուպոլիսը և հինգ ոտք երկայնութեամբ նուրբ անցքէ մը կ'անցնուի, որուն երկու ծայրը գոցուած է, և կը կոչուի անջրազետութիւնի մէջ երկուց դրանց (իբի քափու արասը) աս անցքին պատերուն վրայ նախնի զէնքերը կախուած են, և ասկէ անցնիլը մահահրաւէր էր։ ան աւագանինները, որոնք սուլթանին աչքէն կ'իյնային, զանազան պատճառներով պալատը կը կանչուէին, և աս անցքին մէջ իրենց մահը կը գտնէին։ Այս անցքէն դուրս

կը բնակին սուլթանին բարապանաները, և երկրորդ բակը կը բացուի, որուն աշ կողմը կը գըտանուին խոհանոցները և մառանները, և ձախ կողմը՝ վրաններուն պահանոցը, պատույ զգեսներու շտեմարանը և սև ներքինապետին բնակարանը:

Այ բակէն ալ կը մանուի Երջանկութե ըսուած դռնէն պալատին բուն ներքին կողմը. ուր կը բնակին սուլթանը, սուլթանուհին, աղախիները, արքայազուն իշխանները, իին ծառայները, երկու գունդ ճերմակ և սև ներքինիները, և ամեն պալատական պաշտօնեայները. Այ ընդարձակ պալատին մէջ բազմաթիւ պատշտամներ կը տեսնուին՝ սմանք ծովուն եղեցքը և ոմանք պարտէզներուն մէջ շինուած. Այ չէնքերը զանազան թանձրախուռն ծառոց մէջ տեղը ամփիթէտորոնի ձեռվ կ'երեան, և որ կողմէն որ նայուին, զարմանալի տեսքը մը ունին.

Այուլթան Վէհէմմէտ առ պալատէն զատ՝ վաճառանոցներ ալ շինեց, կոստանդնուպոլսոյ պարիսպները նորոգեց, պէտք եղած տեղերը աշտարակներ շինեց, և առ մայրաքաղաքը գաղթականներով լեցուց, որով իրաւումք Երբորդ հիմնադիր Շիւզանդիս մայրաքաղաքին կրնայ ըսուիլ, որն որ նոյն մտօք. Խոլամզօլ կոչեց, այսինքն՝ լրում մահմէտականութեան:

Պահայն Վէհէմմէտ միայն աշխարհակալութեամբ և աշխարհաշինութեամբ երեւլի չեղաւ. այլ ուսումնական միացութեամբ իր աշխարհական մասունքը կը պարունակի առաջարկութեանց և հանդէռներու վրայ, և երրորդը՝ յանցաւարաց տոյժին և իշխաններուն ուժիին վրայ:

Ա գիոտութեամբը իր ազդը ծաղկեցուց, և շատ գիանականներ և մատենագիրներ յառաջ եկան Օսմանցւոց մէջ իր իշխանութեատենը. քանզի ինքն իսկ յունարէն, լատիներէն, արաբերէն, պարսկէրէն և քաղթէարէն գիտէր, և Օսմաննեան բանաստեղծներուն կարգը կ'անցնի կ'ըսեն:

Այուլթան Վէհէմմէտին շինուած օրէնսդրութիւններն ալ երեւլի են, որոնք մինչեւ ցարդ իր առուամբը Դանուննամէի առաջան Վէհէմմէտ ըսուած օրինաց գրքին մէջ բովանդակեալեն՝ երեք գլխաւոր մասերու բաժնուած. առաջին մասը տէրութեան մեծամեծաց կարգին վրայ շինուած է, երկրորդը՝ սովորութեանց և հանդէռներու վրայ, և երրորդը՝ յանցաւարաց տոյժին և իշխաններուն ուժիին վրայ:

Այ Օրէնսդրութեան առաջին մասին վրայ ուրիշ տեղ երկարութէն պիտի խօսինք, երկրորդ մասին խխոտ երեւլի յօդուածները՝ պայրամի տօնախմբութեանց, սուլթանին կնիքին ու գահակալութեան յաջորդութեան կարգին կանոնները կը պարունակեն. Այուլթանը առաջին յօդուածին մէջ օրէնք կը դնէ որ ամեն պայրամին՝ աւագանիները և տէրութեան ամեն մեծամեծները գանիր ձեռքը պագնելու, սակայն անոնց՝ սուլթանին հետ սեղանակից ըլլուլու սովորութիւնը կը ջնջէ: « Չեմ ուղեր որ մէկը իմ կայսերական վեհափառութեանս հետ սեղանակից ըլլայ: Իմ օգոստավառ նախնիքս ժամանակաւ իրենց վէղերները իրենց հետ սե-

զանակից ըրին . ես աս սովորութիւնը կը ջնջեմ” : Երկրորդ յօդուածին մէջ՝ Ո՞է հէմմէտ տէսլութեան կնիքը մէծ վէզիրին պահպանութեանը կը յանձնէ իբր ՚ի նշան անոր գերագոյն իշխանութեանը : “ Իմ բարձրութեանս կնիքը, կ’ ըսէ, մէծ վէզիրին կը յանձնեմ . թէ որ տէսրութեան գանձը բացուի կամ գոցուի , անոր ներկայութեան առջել պէտք է որ ըլլոյ ” :

Երկրորդ մասին ամենէն սոսկալի օրէնքն է՝ գահակալութեանջորդութիւնը ապահովնելու համար , ժառանգ արքոյազունին իր եղբայրները սպաննելու օրէնքը : Հին և նոր պատմութիւնները քաղաքական առ պատճառաներով սպաննուած եղբայրներուն շատ օրինակներ կը ներկայացընեն մեզ , սակայն երբէք օրէնքով չեն հաստատեր առ անգութ սովորութիւնը : “ Իմ որդւոցս կամ թոռներուս ով որ իմ տեղս անցնի , աշխարհի անդ որբութիւնը տապահովընելու համար իր եղբայրները թող սպաննէ ” :

Օրինաց մէջ գահակալութեան յաջորդութիւնը արիւնաներկ հիման մը վրայ հաստատուիլը տեսնելով , պէտք չէ երրորդ մասին մէջ եղած առ օրինաց յօդուածին վրայ զարմանալ , քանզի կ’ ըսէ . “ Արեան գինը պէտք է որ սատիկանութեան գործակալները կարեն . մարդ մը մեռցընողը թողվձառէ 3000 փող , աչք հանողը՝ 1500 փող , և գլուխ ծակողը՝ 50 փող ” : Աւ աս յօդուածը աս խօսքերով կը վերջացընէ . “ Աշզկանցս զաւակները պէտք չեն կու

սակալներուն տեղը յաջորդել , այլ գաւառապետ միայն կրնանըլլալ ” : Ո՞ւ կերպով վէզիրներուն հետ ամսւսնացեալ սուլթանունիներէն ծնած զաւակներուն բարձր իշխանութեան մը հասնելով տէրութեան վրայ գալու վասանգէն առաջը առնուեցաւ : Ո՞ւ կարգագրութիւնը սուլթանունիներուն թուներուն համար կաելի է ըլլոյ , քանզի աս իշխանունիներուն զաւակները ծըսնելուն պէս՝ ’ի մահ կը դատապարտուեին :

Ա.թ՝ տէրութեան գործակալներուն զանազան մասերուն վրայ խօսինք : Չորս թիւը (Օսմանցւոց շատ սիրելի է . քանզի առաջին իշխանութեանց հիմն է կ’ ըսեն . չորս հրեշտակ , ինչպէս կ’ ըսէ Պուրանը , Բարձրելոյն աթոռը կը վերցընեն : Ուստի և Ո՞է հէմմէտ տէրութեան չորս սիւները կամ չորս նեցուկները հաստատեց , այսինքն են՝ վէզիրները , գաղիասքէրները , տէֆլթէրտարները և նիշանձըները , որք միանգամցն ատեանին 4 սիւներն են :

Տէրութեան առաջին սիւները և ատեանին նեցուկները են վէզիրները , այսինքն բեռնակիրները , որովհետեւ Տէրութեան բեռութիւնցուսերուն վրայ առած են . Ասի և առաջ՝ վէզիրը մէկ էր , ետքը՝ երկու ըսին , ետքը՝ երեք , և սուլթան Ո՞է հէմմէտ վէզիրներուն թիւը չորս ըրաւ , որոց առաջինը՝ մեծ վէզիր կ’ ըսուի , և միւսներէն շատ աւելի մեծ աստիճան և իշխանութիւն ունենալով սուլթանին տեսանելի պատկերը , անոր փոխանորդը .

գործակալութեամեն ճիւղերուն
գլխաւորը, և կառավարութեան
կեդրոնը ու նեցուկն է:

(Օմանցոց մէջ վէզբրու-
թիւնը Վուրատ Ա. ին իշխանու-
թեան ժամանակը սկսաւ Շէնտէ-
րէլի տոհմէն, և մինչև Վէհէմ
մէտ Բ. տեեց, որ երբ Խալիլ
փաշյին գլուխը կտրել տուաւ,
աս տոհմին ձեռքէն վէզբրու-
թիւնն ալ առաւ, և մինակ իշ-
խեց: Երբ տարի մը ետքը՝ սուլ-
թանը նորէն մէծ վէզբր մը սահ-
մանեց, միայն բանակին հրամա-
նատարութիւնը տուաւ անոր իբ-
րև սպարապետ, և ինքը անձամբ
գահերէց կ'ըլլոր դիւանին մէջ:
Վակայն օր մը Վէտիք Վհմէտ փա-
շյին վէզբրութեան ժամանակը՝
ցնցոտի զգեստներով թիւրքմէն
մը ատեանը ներկայացաւ, և իր
հայրենեաց բիրտ լեզուով հար-
ցուց: “Զեր մէջէն մվ է մեր
սուլթան երանելին”: Վէհէմմէտա
երբ բարկացաւ, մէծ վէզբրը աս
առիթը չկորսնցնելով, իմացուց
սուլթանին որ անկէետե իր նուրի-
րական անձը այնպիսի նախատա-
նաց. ենթակայ չընելու համար՝ ա-
ւելի աղէկ է որ ատեանին գոր-
ծոց հօգաբարձութիւնը վէզբր-
ներուն թողուլ: Վշարհակալը
աս առաջարկութիւնը ընդունեց,
և ան ժամանակէն տեսչութիւնը
գրեթէ վէզբրներուն ձեռքը մնաց
և մասնաւորաբար մեծ վէզբրին
ձեռքը: Կաբաթը ըորսօր, այսին-
քըն՝ Վաբաթ, Խիրակի, Երկու-
շաբթի, և Երեքշաբթի, մեծ վէ-
զբրը միւս վէզբրներուն, գաղեաս-
քէրներուն, տէֆթերտարներուն
և նիշանձըներուն ետեէն ատեա-

նը կ'երթար ։ Երբ սրահին դու-
ռը կը հասնէին, ամենքնին ալ
երկու կարգ կը կենային դդու շու-
թը ձեռքերնին թեզանիքներուն
մէջ պահելով, մեծ վէզբրը անոնց
մէջէն կ'անցնէր, ամենէն առաջ-
սրահը կը մտնէր, ետեէն ժողո-
վին անդամները զսդ զսդ ներս
կը մտնէին: Վեծ վէզբրը բազմո-
ցի մը վրայ կը նստի, միւս վէ-
զբրները և գաղեասքէրները իր աջ
կողմը կը նստին, և տէֆթերտար-
ները ու նիշանձըները՝ ձախ կող-
մը: Իր առջեւը կը կենան աղեր-
սակբաց վերակացուն, որ դատե-
րը կը մէկնէ ։ բէյիս էֆէնտին
կամ աէրութեան ատենադպիրը
բազմոցին ստորոտը կը նստի ։ ար-
քունի սենեկապետը և նուրիա-
կապետը իրենց սենեկապաննե-
րովը և նուրիակներովը ժողովին
ներկայ կը գտնուին:

Վէզբրներուն իշխանութեան
նշաններն են ձիու երեք ձարե-
րը* ։ պէյլէրպէյիները (կուսա-
կալները) երկու ձար ունին, իսկ
սանձագլէյերը (գաւառապետ-
ները) մէկ հատ միայն: Վէզբր-
ները ամառուան մէջ թաւիշէ
(գապիֆէ) վերաբէուներ կը հագ-
նին, որոնց կոճակները և ծնօտ-
ները (ժենար) ոսկիէ են ։ իսկ ձը-
մեռուան մէջ՝ ան հագուստին
ներքին կողմը մուշտակներ ան-
ցընել կու տան: Վէզբրներուն
տարեկան եկամուտը նախ և ա-
ռաջ 100 000 փող էր, ետքը՝
200 000ի ելլու ։ սակայն՝ իրենց
իշխանութեանը տակ եղած կա-

* Պրոնք գաւառզնի վրայ անցուցած՝ վէզբրնե-
րուն և իշխանաւորներուն առ Ալեէն կը տա-
նէին:

լուածքները աս գումարին հինգ կամ վեցը անգամը կը բերէին տարին :

Ո՞ւծ վէզերին՝ վէզերներուն կամ երեք ձարիւը փաշաներուն վրայ ունեցած աւելի պատիւը և առտնձնաշնորհութիւնները ասոնք են : Ա. Կայսերական կնիքը իր ձեռքն է, որով ատեանի օրերը գանձին և դիւանատան դըռները կը կնքուին : Բ. Խշանութիւն ունի իր պալատին մէջ մասնաւոր ատեան մը բանալու : Գ. Իր պալատէն կայսերական պալատը գացած ատենը կամ անկէ իր բնակարանը դարձած ատենը, և Ուրբաթ օրերը՝ մզկիթը որ երթոյ, տէրութեան սպարապետը և նուիրակապետը իրենց բազմութեամբը անոր ուղեկից կ'ըւլան : Դ. Ամեն Զօրեբշաբթի օրերը՝ գազիասքէրներուն և տէքթերտարներուն այցելութի կ'ընէ իր պատոյ փակեղը հագած : Ե. Ուրբաթ օրերը նուիրակներուն և թիկնապահներուն հետ պտըտիլը : Զ. Լնիչէր աղասլըն շաբաթը անգամ մը իրեն այցելութիւն ընելը : Է. Կոստանդնուպոլսոյ դատաւորին, Լնիչէր աղասլըն, չափուց և կշռոց վերակացուին և ոստիկանին ուղեկիցներուն հետ քաղաքը և վաճառանոցները աչքէ անցընելը : Ը. Շաբաթը անգամ մը ատենական կալները և սանձագլէյերը պատոյ փակեղով և պաշտօնական հագուստով իրեն այցելութեան կուգան, իսկ միւս վէզերներուն քիչ անգամ և իրենց սովորական զգեստովնին կ'երթան :

Տէրութեան և ատեանին եր-

կրորդ սիւներն են գաղիասքէրները կամ զօրաց դատաւորները : Օսմանեան պետութիւնը սկսելէն մինչև Ո՞ւծմմէտ բ. ին իշխանութեան վերջը՝ միայն մէկ զօրաց դատաւոր կար Եւրոպից և Ասիոյ դատելի խնդիրները քննելու, Խշարհակալին կենաց վերջն տարին՝ Ո՞ւծմմէտ փաշա Պարամանի մեծ վէզերին թելադրութեամբը զօրաց դատաւորութեան պաշտօնը երկուքի բաժնուեցաւ : Ասոնց օրական եկամուտը 500 փողէր, սակայն դատերը տեսնելու համար առած վարձքերնին տասնպատիկ աւելի էր : Գաղիասքէրները իշխանութիւն ունէին սուլլմանին ունին դրութեան ատեանին մէջ գըտնուելու, ուր իրենց գործոց ընթացքը կ'իմացընէին : Երեքշաբթի և Զօրեբշաբթի օրերէն զատամեն կէսօրէն ետքը իրենց տանը մէջ մասնաւոր ատեան մը կը բանային, որուն ներկայ կը գտնուեին դատաւորները և դըպրատանց հոգաբարձուները, ու ամեն պէտք եղած տեղերը դատաւորներ և հոգաբարձուներ կը կարգէին :

Տէֆթէրտարները կամ ելևմբակ համարակալները տէրութեերրորդ սիւներն են, որոնք առջե բերանը երկու էին՝ մէկը նումէլիի, միւսը Վաթովոյ, բայց ետքը չորս եղան : Ասոնք ալ ունինդրութեան ատեանին կը ներկայանային, սակայն մեծ վէզերին հրամանին տակն էին :

Վերջապէս՝ տէրութեան չորրորդ սիւներն են նիշանձըները, կամ սուլլմանին սովորագրու-

թեան ատենադպիրները , որոնք ատենադպիրին շմած արքունի հրովարտակներուն և հրամանագիրներուն իմաստները կրկին աչքէ կ'անցընէին և կը հաստատէին . բայց հիմա միայն հրովարտակներուն մէջ սուլթանին ըստորագրութիւնը կը դնեն :

Կոսնցմէ ետքը կուգան արտաքին և ներքին աղաները . Վրտաքին աղաներուն առաջինն է 12 նիչէր աղասըն , որ 'ի սկզբան 500 փող օրական եկամուտ ունէր , սակայն ետքը մինչև 90 000 փող ելու : Կոստանդնուպօլսոյ ապահավութեան իշխանութիւնը ասոր տրուած էր , և ինքը մեծ վէղիրին հրամանին տակն էր . Առ վորաբար կրնար Շումէլիի կողմնապետ , կամ ծովագետ ըլլալ . և եթէ աչքէ իյնար , Քասթէմունիի գաւառապետ կ'անուանուէր , ինչպէս որ երեսէ ինկած մեծ վէղիր մ'ալ ծովագետ և Կէլիագոլուի գաւառապետ կ'ըլլար .

Վշխարհակալին ժամանակը՝ զօրաց թիւը շատ տկար էր՝ ետքի ժամանակներուն մէջ եղածներուն հետ բազդատոելով : Հետևեակ կանոնաւոր զօրքերը սուլուրաբար երեսուն հազարի կը հասնէր , և հեծեալ կանոնաւոր զօրաց թիւը հազիւ ութը հազար էր : Հետևեակ զօրքերը մէկ զօրապետ ունէին , որ հետեակ զօրաց աղան կ'ըսուէր , իսկ ձիաւոր զօրաց զանազան գնդերուն վեցը զօրապետ կար , որոնց իւրաքանչիւրին օրական եկամուտը 100 փող լէն աւելի էր : Այս զօրաց սակաւութեան փոխարէն՝ հրոսակներու (ագլոնձի) անհամար բազ-

մութիւն մը կար , որոնք թըշնաւմեաց երկիրները կ'աւ երէին . Վրտաքին աղաներուն կարգն են թօփճու պաշը՝ թնդանօթաձիգ դնդին զօրագլուխը , ձէսկէճի պաշը՝ ռազմամթերին պետը , թօփարապաճը պաշը՝ պատերազմի սոյը լապեաը , մէհթէր պաշը՝ զօրաց երաժշտապետը :

Նոյն կարգին մէջն են կայսերական ասպատանի ըսուած երկուասան պաշոնատարները , որոնք սուլթանին ձիուն կողերուն անմիջապէս քովերէն քալլու իշխանութիւնը ունէին : Վստակած սուլթանութիւնը մէջն էին սուլթանին դրոշակիրը (միրի ալէմ) , երկու ախոռապետները (միրախօր) , սուլթանին սեղանի մատակարարը (շանիկիր պաշը) , և չորս որսորդապետները :

Պալատին պաշոնատարները ներքին աղաները կոչուած են , որոնց ամենուն գլխաւորն է գափու աղասըն , այսինքն՝ բոլոր պալատան կառավարիչը , որ Ճերմակ ներքինապետ մը է , ու գափու օղանը ըսուած երեսուն կամ քառասուն ներքինապետներու կը հրամայէ , որոնք մանկլաւիկները կը հսկէին : Վստակու օղաններէն չորսը միշտ սուլթանին հետ կ'ըլլային :

Գափու աղասըն միշտ և ամեն տեղ սուլթանին հետ կ'ընկերանար , բաց 'ի երբ սուլթանը պալատին գուլը ելլէր որսորդութեան կամ սլուցելու երթալլու համար : Վստակու աղասըն պալատը կը մնար որ անոր պահպանութեանը հսկէ :

Ներքին կամ իչ աղասըներուն

երկրորդն էր գանձապետը, որ դարձեալ ձերմակ ներքինապետ մը էր և միշտ սուլթանին հետ կ'ըլլըր : Այս սուլթանը մզկիթը երթար, աս ներքինապետը անոր ուղին տակը օթոց մը կը փրէ՝ երկու անգամ գետինը խոնարհելին ետե, իբր այն թէ իր կեանքը վանդի մէջ դնելով, իմոնայթէ ան երկիրը թունաւորած է :

Իչ աղասըներուն երրորդը կը սեպուի սուլթանին մատակարարը, որ անոր բերուելու կերակուրին առջեւն կը քալէր, սեղան կը շիտկէր, շաքարեղինները բանդակները և օշարակները պատրաստել կու տար, և ամեն կերակուրներէն առաջ ինքը կ'ուտէր՝ թունաւորելու կասկածէն ապահով ըլլալու համար :

Վերջապէս իչ աղասըներուն չորրորդին յանձնուած էր կայսերական պալատին պահպանութիւնը : Ծէ որ առ իչ աղասըներուն աստիճանը մէծնար՝ իրարուտեղ կը յաջորդէին, չորրորդը երրորդ կ'ըլլար այսինքն կերակրոց մատակարար, կերակրոց մատակարը՝ գանձապետ, և գանձապետը գափու աղսոր:

Այս գափու աղասըն հրամանին տակը եղած երեսուն կամ քառասուն ձերմակ ներքինապետներուն գլխաւոր պաշտօնն էր մանկլութիւններուն երեք սենեակներուն ապահպանութիւն, որոց առաջինը կամ ամենէն առանձնացեալը խասուա կ'ըսուէր, երեքրորդը կամ ամենէն մէծը՝ պէօյիւք օտա, երրորդը կամ ամենէն փոքրը՝ քիւչի օտա : Խասուա պաշտօնը, որ սուլթանին վրան կը

հազըլնէր և կը հանուեցընէր, խաս օտայի միւս երեք իչ աղասըներուն առաջինն էր . որոնք են . Ա . Ամիլիհտարը, կամ սուլթանին զինոկիրը : Բ . չուհատարը, կամ առաջինն սենեկապանը, որուն պաշտօնն էր հանդէսներու մէջ սուլթանին թիկնոցը կրել . և Գ . Շիքեապտարը, կամ սուլթանին ձի հեծած ատենը ասպատանը բռնողը :

Կանանցը սեներքինապետներու պահպանութեան տակը յանձնուած էր, որոնց գլխաւորը, այսինքն զըլլար աղասըն միւս բոլոր ներքին և արտաքին աղասներէն աւելի զօրաւոր էր :

(Օսմանեան պետութիւնը Վէհէմմէտը . ին ժամանակը երեսուն և միցը Կայսեր ունէր, որոց ամեն մէկը մէկ մէկ սանձագ պէյիներ կամ գաւառայեաներ կը կառավորեին և դրեթէ չօրս հարեւոր ձիւոր զօրբեր ունէին :

Տէրութեան զանձին տարեկան եկամուտը երկու միլեօն սոսկի կը հասնէր :

Վէհէմմէտին ժամանակը ծաղկած իսկառ երեք ելիք բանաստեղծները . և զիտունները . Անան փաշա, Վհմէտ փաշա, Վագուպ փաշա վէզիրները, Վէհէմմէտ փաշա Գարամանի մեծ վէզիրը . Օկյիէպ անուտանի կին բանաստեղծը, Շէմալի, Շէլիս Ափուլէնի, Ալայէտսին Արապի, Իպն Վագների, Վասթէլոնի, Հաճի պապա, Վոլլա Գուրանի, և այլն . Վա վէրջինը սուլթան Վէհէմմէտին դատախարակն էր, անոր Վագնեսիսից կարավարչութիւնը վարած ատենը : Այս Վէհէմմէտ սկսաւ

իր վարժապետին մոխկ չընել և
կարգալ սորմիլ չուզել, Վուրասո
անոր հայրը Գուրանիին գաւաղան
մը տուաւ, որ հարկ եղած ատե-
նը գործածէ զան. Գուրանի որ
աներկի զե խիստ մէկն էր, Վէ-
հէմմէտին քովու գալով յայտնի
իմացուց անոր իր ընելիքը. Վէ-
հէմմէտ ծագր ըրաւ զան, և Գու-
րանի իսկոյն գաւաղանը իշեցուց
և պատմեց զան: Վէհէմմէտ գա-
հը ելլելով, ու զեց վարձատրել
իր վարժապետը, բայց ան յանձն
չուաւ: Այ Վոլոս Գուրանին
սուլթանին քովս այնչափ հաս-
մարձակ էր, որ երբեք վէզեր մը
չէր համարձակեր անոր ըրածը
ընել: Ընդու սուլթանին առջն
չէր խոնարհեր: այլ միայն իր
ձեռքը անոր ձեռքին կը դպցը:

նէր, ըսելով. “Կ'ողջունեմ քեզ”:
Այ սուլթանին ժամանակը եօ-
թը բժիշկ կային, որոց շրութ
Պարսիկ, մէկը Տաճիկ, մէկը
Վրաբացի և մէկը Հրէայ էր:
Այ վերջնը, որուն անունը
Եադուղ էր, տէֆթէրտարի
տասիճանը հասնելն ետե,
մահմէտական եղաւ: Կարելի էր
որ աս բժիշկը, որ իր պաշու-
նակիցներէն ամենէն վորպետն
էր, սուլթանը իր վերջին հի-
ւանդութենէն աղեկցընէր, եթէ
Վէհէմմէտ Գարամանի մեծ վէ-
զերը աշխարհակալին միոքը չընէր
որ պարսիկ Լարի բժշկին տուած
գեզերն ալ առնէ: Այս լժանին
վրանին ատկը բժիշկները կըռ-
ուեցան, որոց իրարու հակառակ
գեզերէն սուլթանը մեռաւ:

ԱՌԻԹ. ԵՆ ՊԱՅԵԶԻՏ Բ. ՎՃԵԼԻ

887 — 1481

Ուծ վէզիրը մեծ ջանքով հոգ տարաւ սուլթանին մահը գաղ տուկ պահէելու, որպէս զիյաջորդիշանազունը դայ կոստանդնուպոլիս համնի, եթէ ոչ՝ զօրաց մէջ գժառաթիւն պատահէելով, Պայէզիս պիտի չիրնար իշխանութեան համնի, և ինքը իր գլուխը պիտի կորսնցընէր: Առաջանը մեռնելուն պէս՝ մեծ վէզիրը անոր մարմինը կառքի մը մէջ նըստեցընել տուոււ, և սովորական թիկնապահներով կոստանդնուպոլիս խրկեց, որպէս թէ սուլթանը իր առաջնորդ համար բաղնիքները մոնել կ'ուզէ:

Երկէ իսկցյն սուրհանդակ մը խրկեց Ամասիա Պայէզիս սուլթան անդրանիկ առքայազննին, ինչպէս որ սուլթանը իր մեռնելու ատենը պատուիրեր եր բայց Շէմ կրտսեր արքույազունը աւելի սիրելուն համար մի և նոյն ժամանակը անոր աւմէկ սուրհանդակ մը խրկեց, որպէսպի ան յաջորդէ հօրը տեղ:

Այցրաքաղաքին և բանակին մէջ եղած յարաքերութիւնները խափանելու համար, որ և իցենաւերուն և նաւակաց Աքիստարի նաւահանդիսուց մօտենալը արգիլեց: և նորեկ ինիչէրի շօքերը քաղաքէնդարս հանեց, որ գետին վրայի կամսւրջը նորուգեն: Աս ինիչէրիներէն բանակին մէջ հրատարակուեցաւ աշխ

իսարհակալին մահուան գաղոնիքը: իսկցյն ինիչէրիները առ պատամբելով, իրավութիւն հանեցին և կոստանդնուպոլիս դիսմելով, Հոկից և մեծատանց տուները կողովուեցին և Ուհէ հէմմէտ Գարամանցի մեծ վէզիրը սպաննեցին: Իսհագ փառչո, որ արդէն մոյաբազուքին տեսչութիւնը կը վարէր աշխարհակալին հրամանաւը, հազիւ կրցաւ խոռվութիւնը հանդարտեցընել, Պայէզիտոյ Գարգուտ որդին, որ իրեւ գրաւ իր հօրը հաւատարամութեանը հին պալատին մէջ կը կենար, արքունի աթոռոյն տեղակալ անուաննելով:

Առաջան Ուհէ հէմմէտի մահուան գոյժը Շէմ և Պայէզիտ արքայազուններուն տանող սուրհանդակներուն առաջինը Ամսան փաշո Անաթոլիոյ կուսակալէն բռնուեցաւ և սպաննուեցաւ: Երկրորդը հարիւր վամփուն մզնն հեռաւորութեամբ տեղը ութը օրուան մէջ առնելով, Ամասիա հանաւ ։ Հետեւեալաւ առ Պայէզիտ չորս հազար ձիաւ սոր զօրքերով ճամբայ իսկաւ և ինն օրէն ետև Աքիստար համաւ:

Կոստանդնուպօլիսոյնեղուցը տէրութեն մեծամեծաց և բանակին զօրապետաց նաւահիներով ծածկուած էր, որոնք նորընտիր սուլթանին առաջը կ'ելլէին: Այ-

անհամար նաւակներուն մէջէն, որոնց անթիւ գրօշները օդին մէջ կը ծածանէին, ենիչքրիները առաջ անցան, իրենց նաւակները մինչև սուլլթանին ցռկանաւին քովլ մօտեցուցին և խնդրեցին որ Վուսթաֆա փաշան ետ խրկէ քանզի Խահագ փաշային գրգռանօք քը անոր մեծ վէ զեր ըլլալը չէին ու զեր։ Վուլլթանը սիրով անոնց խնդիրքը բնդունեց և իր առ առ մենէն անձնանուեր վէ զերը նորէն Երիա վերագարձուց։

Ագոյ սև զգեստներ և նոյն գոյնով փակեղ մը հագուծ կոստանդնուպօլիս մանելով, երբ պալատին կը մօտենար, ենիչքրիները անոր գրան առջը ը պատերազմի կարգով կեցեր էին; և իրենց գլաւորներուն միջացաւ քանի մը խնդիրներ ըստին նախ և առաջ՝ մեծ վէ զերը սպաննելնուն և Հրեից տուները կողոպտելնուն համար ներումն խնդրեցին, ետքը՝ աղաչեցին որ իրենց ռոճիկը աւելցընէ, կամ գոնէ երբեմն երբեմն պարգևներ չնորհէ իրենց ։ աս երկու խնդիրներն ալ ընդունուեցան։

Հետեւ օրը, այսինքն 1481 Վայիսի 21ին սուլլթան Վէհէմ-մէտին թաղման հանդէսը կատարուեցաւ։ սուլլթան Պայէ զիտ անձամբ իր հօրը գագաղը վէ զերներուն։ և մեծամեծաց հետ վերցընելով, մինչև աշխարհակառ լէն շինուած մղկթին ետեի կողմը պատրաստեալ շիրիմը տարաւ։ Ծաղմանէն ետեւ զուարթառառաս ողորմութիւններ բաժնուեցան, և Պայէ զիտ սկսյ հանդէրձները հանելով, գնաց փառաւոր հան-

դէսով արքունի գահը նստաւ, և Խոհագ փաշան մեծ վէ զեր անուանեց։

Եղբայրասպանութեան քաղաքական օրէնքը Պայէ զիտ գահը ելած ատենը չկրցաւ կատարել։ մէկ եղբայր մը ունէր միայն, բայց ան իրմէ հեռու տեղգրտուու ելով աչ միայն պիտի կարենար իր կեանքը պաշտպանել, այլ և գահակալութեան համար կը ռուիլ։ Շէմ իր հօրը և Վէհէմ-մէտ Պարտանի մեծ վէ զերին մահուան գոյգը տանելուն պէս շուտով քանի մը գունդ զօրք ժողվեց և Պրուսա գիւնց, որ նախ տէրութեան նախքին մայրուքաւզաքին տիրէ։ Վուլլթան Պայէ զիտ Վաս փաշան երկու հազար յառաջապահ ենիչքրիներով անոր վրայ իրկեց և ինքը անձամբ։ Երեւար անցաւ որ հան բոլոր բանակը կենդրունացընէ։

Պրուսոցիք ենիչքրեաց սովորական ասպատակութիւններէն վախնալով չունեցին նա գուռը բանալ ոչ ։ յաս փաշային և ոչ Շէմ արբայրդ ւոյն։ Բայց երբ տեսան որ իրենց պարսպին տակը, Վաս փաշան Շէմն յաղթուեցաւ և ենիչքրեաց մեծագոյն մասին հետ գերի բռնուեցաւ, քաղաքին գռները Շէմին բացին, որ յաղթական հանդէսով Պրուսամտաւ, անոր բոլոր գանձուն տիրեց, և իր անունովը գրաման գամ կտրել տոււաւ։

Տասը օրի չոփ Պրուսայի իշխանութիւնը փարեց։ բայց երբ իմացաւ որ Պայէ զիտ բոլոր զօրութեամբը իր վրայ կը քալէ, երեք մոլլաներէ զատ իր հօրը Աէլճուդ

խաթուն հօրաքսյը իբրև գեռապան անոր խրկեց որ երթայ խաւ զաղութեան բարեխօսութիւնը ընէ և Պայէզիտայ միոքը ընէ որ Վրիոյ կառավալսրութիւնը Շէմին թողու , և ինքը Եւրոպիոյ մասին տիրէ : Բայց Պայէզիտ լոկոնական ոչի Վրաբացւոց առ առակովը պատասխան տուաւ թէ . “ Թագաւորաց մէջ ամենին ին աղշդակցութիւնը չկայ ” : Եւ իր ընթացքը շարսւնակեց գէպ ՚ի Պարուսա ; Քանզի ոչ միայն իր բանակին զօրութեանը վասյ , այլև Շէմին Վ. շթինեան Եագուադ հաղարապետին մատնութեանը վասյ ալ կը վատահէք , որուն Վնաթուլոյ կառավարութիւնը և 100 հազար փող եկամաւ խօսուցեր էր , եթէ Շէմը Ենիշէհիր դաշը տանեւ :

Հազարապետը խօսուումը ընդունեց և կրցաւ Շէմին միոքը ընել , որ իր քանակը երկուքի բաժնելով , մէկը իր Կէտիք Եասուհ զօրավարին հետ գէպ ՚ի Ակէա խրկեց , և միւս մասը իր հետ առած Ենիշէհի կողմը քաշը : Կէտիք Եասուհ զօրավարը Վնաթուլոյ կառակալ Վինան փաշյին հետ զարնուելով , մինչեւ Ենիշէհիր հալոծուեցաւ :

Պայէզիտ ալ անձամբ Ենիշէհիր վրայ քալեց , ուր հասաւ նաև Կէտիք Ենիշէտ փաշս Պահքայի և Օթրանթի տիրողը , և պատերազմը սկսաւ Ենիշէհիր գետին աջ եղեցին վասյ (20 Յունիս 1481) : Արդէն Շէմին գունդերուն մէկ մասը ասիսկան հնձեալ զօրբերէն փախչեր էին , երբ մատնուն Եագուադ աղա-

չեց զՇէմը որ բանակին ամենէն ընափիր մասը իրեն յանձնէ սրպէաթէ Պայէզիտայ զօրաց գէմ գնելու համար : Երբ Շէմ անոր խնդիրը կատարեց , Եագուադ բանակին ընափիր ընտիր զօրբերով Պայէզիտայ կողմը անցաւ , որովհ պատերազմին յազմութիւնը որոշէց , ոք առաւուուէն մինչեւ կէս օր առեր էր :

Են տուենը՝ Շէմին բանակը կազմազ Ծիւրքմէնք , Պարամանք Տորդուաք և Վարսագք առ հասարակ սկսան փախչել , և նոյն ինքն Շէմ վիրաւորուելով միայն մէկ ձիով հազիւ փախաւ , և եօթներորդ օրը Իկոնիա հասաւ , ուր 3 օր մնալով ետէ՝ իր մօրը և կանանց հետ նորէն ճամբայ ինկաւ գէպ ՚ի Վարեստան . Բերիոյ , Դամասկոսի և Եագուազէմի Եգիպտացոց կուսակարիները մեծ պատուլ ընդունելութիւնուին , և երբ Եգիպտոս հասաւ՝ փառաւոր հանդէսով Վայթէպս սսւլ թանին պալատը տարուեցաւ , որ մեծ ընդունելութիւնուաւ անոր , իբրև իր սրդին գրկեց զան , միիթարական խօսքեր ըստաւ և իր պալատներէն մէկը անոր առուաւ որ հօն բնափիր :

Վակայն պատերազմէն ետէ՝ սուլթան Պայէզիտ իր եղորը եւ աւելն ինկեր էր . երբ Իկոնիոյ մօտերը հասաւ , ան կողմերուն Ծիւրքմէնները սուլթանին առաջը ելան , և աղաչեցին որ զիրենք հարկէն աղատէ , ըսելով թէ իր թշնամին Շէմը իրենց երկրէն անցնելու ատենը կողոպտեր են : Առ լթանը երեսանց անոնց ըրաւծը գովից , և հրամայեց որ ան-

ընողները արքունիքը գան, որ իրենց մաերմաւթեանը և գործոցը համեմատ վարձքերնին ընս գունին: Դողութեան մասնակից եղողներուն հետ շոտերն ալ մէկ մէկ վարձք առնելու յօյսովելոն դուռը գացին: անատենը՝ սուլթանը զանոնիք ամենքն ալբաննել և խաչածե փայտերու վասյ կախել տուաւ: “Վահ ահան, ըստու և ան գերիներուն վարձքը, որոնք սուլթաններուն պատերազմներուն մէջ կը համարձակին մտնել: Զեզի ան միտյն կ'իյնայ որ աւելի հզօրին լուծին տակը խոնարհիք: Խթէ տէրութեան մը երկու ժառանգորդները իրարու հետ՝ կռուին, ամեննին օտարաշկան մը իրաւունք չունի կռույն մէջ մանելու”:

Իկոնիա կենալով, Պայէղիտ հըրամայեց Կէտիք Վհմէտ փաշային որ Շէմին ետեէն լինայ. Պարամանի կառավարութիւնը իր Վարտու լըահ որդւոյն յանձնեց, և ինքը նորէն ճամբայ ինկաւ կոստանդնուպոլիս դառնալու:

Երբ Պրուստ մօտեցաւ, ենիչէրիք ուղեցին ոռ քաղաքը կողոպտել. “Հասման տուր մէզ, ըսին, որ քաղաքը կողոպտենք. քանզի Պրուսացիք Վաստ փաշային առակը եղող մէր եղայրակցաց տեղ Շէմին բացեր և ին իրենց գուները”: Երբ սուլթանը յանձն չառաւ, ենիչէրիք աղոտամքեցան: “Վէքաջքը, պուտոց անատենը Պայէղիտ քաղաքակցաց, յանձնեցէք ինձի քաղաքը”: Երբ բնակիչները անյողողոդդ մացին, իւրաքանչիւր մարդու գլուխ 1000 փակտալով քաղաքը ձեռք ձգեց:

Կէտիք Վհմէտ փաշային՝ Շէմին ետեէն երթալուն վասյ շտա չոն, ցու, երբ Պայէղիտ հրաման խըրկեց անոր որ կոստանդնու պօլիս դառնայ, ուր վէղիրուն պաշտօնը կը վարէր: Բայց իւ խիստ և գուռող բնութեամբը, և Վաւոթաֆա փաշո վէղիշին սադրանիօքը Պայէղիտ զան զըստուն պիտի տար, բայց խսհոգ փաշո միջ վէղիրին աղողանացը վասյ աղատութիւն տուաւ անոր, և նորէն վէղիր ըրտաւ զան: Քոնզի Պարամանի մէջ եղած մրիկը գագրեցնելու համար անոր հզօր բազէին հարկաւորութիւն ու նէր: Պասըմ պէջ, որ Պարամանի իշշիանաց վէրջինն էր, և ժամանակու Աւգուն Հասանին քավը տապատաներ էր, սահմանագլուխ նէրը անցեր, Պարամանի կու ու կալ Վահ փաշո ներքինապեաը հալածելէն ետե, որ Վագոս լըահ արքայորդ ւոյն քովը իրեւ առաջնորդ էր, իկոնիան ալ պաշտրեր էր:

Կէտիք Վհմէտ փաշան տեսնելով որ Պայէղիտ իր բաղկին հարկաւորութիւն ունի, մինչև որ իր թշնամիէն վրէմը չառաւաւ՝ պատերազմի չգնաց: Ենիչէրեց ձայնէն քաջալերեալ՝ ինդրեց որ Վնութափա փաշոն բանտարկուի, և իր խնդիրը ընդունեցաւ: Վոկէ ետե՝ իրը պատանդիր հաւատարմութեանը իր զաւակը սուլթանին քովը թողուց և գնաց Պասըմ պէջը մինչև Վորեստան փախցուց և ետքը արենագարձու ձմեռը անցընելու:

Վոհմեւուան մէջ արքայորդին Շէմ Վէքքէ և Վէտինէ գա-

ցեր ու նորէն Եղիպատոս գործեր էր : Ուր ոչ միայն Պատոզմակյան, այլև և վարք Արփայքանի մը Օսմանեան բդեշխներէն հըրառւիբանաց նամակներ ընդուՆեց, որոնցմանը կը յարդորէին զի՞նքը որ ժամանակին պատեհած թշութը ձեռաք ձգէ : Այ հրաւերներէն յորդորւելով Շնէմ Եղիպատուն Բերիտ եկաւ, ուր եկան իրեն հետ միացան Խիկիւրիցի Մահմաւակալը, և Վետիր Ահմէտ փաշոյին բանակէն փախչող ները :

Երբ Պայէջետ առ եղածը լսեց, Վետիր փաշոյին բարեանալով հըրառան ըրաւ որ նորէն ետ դառնաց, և ինքը Արիտ անցնելով Այսոսի դաշտին մէջ զօրքերը ժաղկցեց :

Սակայն Շնէմ արգէն Վիլիկիա մտեր էր, ուր Պատոզմ պէյ իր առջնը ելաւ, և անոր հետ միաբանեցաւ : Շնէմ իսոստացաւ անոր որ երբ արքունի դահը ձեռք ձգէ՝ զի՞նքը ցկեանս Պարամանի կուսակալ կ'ընէ :

Վետիր Ահմէտ փաշա սուլթանին հրամանաւը Աարէնտոյէն մեկնեցաւ և Խկոնիա գնաց անկէց Ազտուլուն արքայալունք մինչեւ Պարահիսարի ամրոցը տանելու համար : Երբ Աիտիզմի հասաւ սուլթանին հետ տեսնուեցաւ, որուն ձեռքը պագաւ, ինչպէս ըրաւ նաև Վայտուլուն :

Այ միջացին՝ Շնէմ և Պատոզմ պէյ Խկոնիա հասեր ու զան պաշտօն էին (Յունիս 1482) : Պաղպին Ալի փաշա կառավարչին խիստ պաշտպանութեղը վայ:

Շնէմ յայսը կարեց և երբ Պայէջետայ մատենալուն ըուրը տարածուեցաւ, Շնէմին բանակը ցրուեցաւ, և արքայալունը Արշէհը վրայէն շուտով Վիլիկիա փախտաւ : Սոկէ նորէն գեսպան խրկեց Պայէջետայ ու աղաջեց զան որ Օսմանցւոց ասիական մասը իրեն ձգելու հաւանի, երբ իր խնդիրը ընդունուեցաւ, սրոշէց որ Արաբիտ կամ Պարսկաստանի փախչի : Բայց Պատոզմ պէյ խրատ տուաւ անոր որ Եւրոպա փախչի յուտալով որ Օսմանեան պետութեան եւրոպական գալաքաներուն կարենայ տիրել, Շնէմ առ առաջարկութիւնը հաւնելով, Վիլիկիան Պրէնի անունով իր խիստ հաւատաբիւն ծառաներէն մէկը ձուոդոսի մեծ մագիստրոսին մէծ պ սրգեներով գեսպան խրկեց ու խնդրեց որ բարեկամուրը ընդունելութիւն տայ իրեն, և անկէ հեռու երթալու միջացները շնորհէ :

Հոռոգոսի մագիստրոսը նաւած խումբ մը խրկեց Շնէմին համար որ առնէ զօն կղմին բերէ : Եշը Հոռոգոս հասաւ խիստ պատուաւոր ընդունելութիւններ գտաւ, իր դանուած ցոկանաւէն մինչեւ ծովեղերը տառը ոտք երկայնաւ : Նութեամբ և չորս ոտք լսյնուը կամաւը մը նետեցին բոլըրովնի թանկագին կերպաներով ծածկուած, որպէս զի արքայողունը կարենայ ձիսլ ցամաք ելլէլ : առ պետաները, որոնք եղերը կ'ըսպասէին, մեծ հանգէսոով քաղաքը մտցաւցին : Բոլոր անցնելու փողոցները օժոցներ փրաւեցն վրան ծաղիկներ և մըտենիի

Ճիւղեր թափուած : Վրջնէն կը քալէին ծառաները և երդեցիկները փառաւ օր դժեստներ հագած : Վրոնց ետևէն կու գար մագիստրոսը ձի հեծած , որուն վրայի ծածկոյթը ոսկիխով և արածաթով բանուած էր , իր աջ կողմը կը գտնուէր Շէմ , և ետևէն բոլոր աւագանիները կ'երթային : Վյապէս մագիստրոսը ճամբան թարզ մանի մը միջոցաւ արքայազնունին հետ խոսելով , մինչեւ անոր համար պատրաստուած պալատը ընկերացաւ հետոր : Վերքայազնունին Վլի պէյ մասերիմը կիլիկիա խրկուեցաւ նորէն Գասըմ պէշին քովը , որ Շէմին կինը , զուակները , ծառաները և ինչը առնէ բերէ : Որորդութիւնը , նիզուկախաղութիւնները , հանդէսները և երած շուռութիւնը փախոսականին տառապանիրը ոիչ մը մեղմեցին :

Այսին օրերը Վայէղիստոյ կողմէն զեսպաններ եկան Հառու և ու զեցին բարեկամութեան զաշինքը Հաստատել : Հառու այսիք մէկ կողմէն իրենց շահը և միւս կողմէն՝ ասպինջականութեն պարտաւորութիւնին մոած ելով , որոշեցին որ արքայազնունը կղզիէն հեռացընեն և Գաղղիա խրկեն : Բայց ճամբայ հանելին առաջ գուշնք ըրին անոր հետ որ երբ Շէմ արքունի աթոռը ելլէ տէրութեան բոլոր նուահանդիսուները Հառու ասոդոսի ասպետաց նաւերուն բաց ըլլան , տարին երեք հարիւր ըրիստանեայ գերի առանց փրկանքի աղատէ , և 150 հաղոր ֆիօրին վճարէ մագիստրոսին իրեն համար ըրած այնչափ

ծախուցը փախորէն : Շէմ Օգոստոսի վերջին օրը (1482) իր երեսուն ծառաներով և ընկերակիցներով նաւը մոտաւ :

Վոկե ետև Հառոդոսի ասպետները Պայէղիստոյ հետ բարեկամութեան գաշինքը հաստատեցին , որ երկու տէրութեան մէջ ծովու և ցամոքի վրայ խաղաղութիւն ըլլայ Պայէղիստոյ բոլոր կենցը մէջ ասպետները զգուշութիւնը մէմ պահպատասրի ամեն տարի (Օգոստոսի 1ին 45 000 ոսկի վճարել :

Շէմին Հառոդոսին մեկնելին մինչեւ իր գմիգակ մահը տասն՝ երկու տարի անցեր էին , զորանք գերութեան , երբեմն բանակուն երբեմն ազատութեան մէջ անցուց :

Հառոդոցի ասպետները Շէմին ծախուցը համար Պայէղիստէն ընդունած տարեկան 45 000 ոսկիէն և մեծ պարգևներէն յորդորուելով , երցածնուն չափ զգուշութեամբ ոու լիթանին առ թշնամին կը պահպատնէին . անոր մարզիկներէն մէկ քանին պատճառներով և մասցաները բոնութեամբ անոր քովէն հեռացուցին և Հառոդոսին իշուկեցին . իսկ զննքը եօթը տարի Վաղղիայ մէկ բերդէն մէկալ բերդը պահելով , այնչափ խսութիւնն կը բանեցընէին որ Շէմ ամեն ժամանակ փախչելու փորձեր կ'ընէր : Վերջապէս՝ Վաղղիայ թագաւորը յուստուլով որ օմանեան սուլթանին եղացըրը Հռովմայ պապին քովը մասլովը քրիստոնէից օդուած կ'ըլլայ , հաւանեցուց ասպետները որ ար-

Քայլունը պապին յանձնեն :

Հռովմայ պապը մեծ պատռով
ընդունելութիւն տուաւ Շէմին
և փառաւոր հանդիսիւ Վատիկանի
պալուոը տարաւ զան, քան-
դի և Պայէզիս իր եղբօրք ծախու-
ցը համար տարին քառասուն հա-
զար ոսկի պապին տալու կը իսուս
տանար :

Երեք տարի այսպէս Խնճովիկեն-
տիանոս Ը. ին պալատը մասց,
երբ առքահանյապետը մեռաւ-
ու Աղեքանդր Զ. անոր տեղը
անցաւ և Պայէզիսայ հետ Շէմին
համար եղած դաշինքը նորոգեց :
Տչցից երբ Գաղղիացւոց Կարոլոս
թագաւորը Բոտալիոյ վրայ եկաւ,
արքայորդւոյն գերութեանը վրայ
մեղքընազով, խնդրեց զան և ա-
ռաւ :

Այս միջոցին Տէլլադ Առևոթա-
ֆա անունով Շէմին յցն ու-
րացեալ սպիրիչը պապին գրդաւա-
նորը սուփրելու ատենը՝ ածելիով
քիչ մը գծելով, արիւնին մէջ
թոյն գրաւ և Կոստանդնուպոլիս
փախու : իրկ Շէմ Նէապօլիս
հանելով, թցնէն ոյնչափ տր-
կարացեր եր, որ Եղիպատոսէն
եկած նամակը չէր կոնար կարդա-
լու և հասկընալու : 1495 Փետ-
րուարի 24ին մեռաւ, Ալարուլոս
թագաւորը խիստ ցաւեցաւ, և
անուշ հոտեր խրկեց որ անոր
գիտկը օծին : ուստի իր Անոն
պէյ և Շէլու պէյ սենեկապետ-
ները անոր մորմինը լուսցին, մե-
ռելիներու սովորական աղօթքը
քրին և երկաժժ առապանի մէջ գլո-
րին զան : Երբ Պայէզիս Շէմին
մեռնիլը իմացաւ, փութաց իր
եղբօրք վերջն խնդրեքը կատա-

րել, որ կտակով աղաջեր էր իր
մեռնելու ատենը որ իր մարմինը
մահմէտական երկրի մէջ թաղուի-
խոկցն զեսպան մը խրկեց Նէա-
պօլիս, ու գիտկը առնելով Պրու-
սա բերուեցաւ, և թաղուեցաւ :

Դառնանք նորէն ՚ի կարգ պատ-
մութան : Պայէզիս երեսուն և
հինգ տարեկան էր երբ գահը
ելու : իր ժամանակին մեծ մասը
ուսմամբ անցընելով, տւելի ու
սումնասէր եղաւքան թէ՝ պա-
տերազմասէր : Խնութեամբ ալ
խաղաղասէր էր, ուստի միայն
արտաքին թշնամիներէն ըստի-
պեալկամենիչը իներուն գրգը-
ութեամբը պատերազմ ըրաւ :
Բարձրահասակ էր, երկոյթք
ուժեղ, քիթը խիստ կոր, ու մա-
զերը, մօրուքը և աչքերը ու ա-
մենեին իր հօրը պէս փառաւու
զգեստներ չէր հագներ :

Ծուտով Վենետիկցւոց և Ռա-
կուղացւոց խնդրերուն զիջաւ,,
ու իր հօրը անոնց հետ ըրած
գաշինքը հաստատեց : բայց Վե-
նետիկցւոցմէ առած 100 հազար
ոսկի տարեկան հարկը չորս ան-
գամին ընդունելու հաւանեցաւ :
Խնկուղացւոց հարկն ալ երեք հա-
զար ոսկիի իջաւ :

1495 Հոկտեմբեր 14ին Պայէ-
զիս իր եղբօրք գէմ ըրած ար-
շաւանքէն Կոստանդնուպոլիս
գարձաւ : ասկէ հինգ շաբաթ
ետքը՝ մեծ խնջայք մը ըրաւ, մե-
ծամեծաց և բոլոր վէղերներուն
պատույ հանդերձներ բաշխեց,
իսկ Վետիք Վհմէտ փաշային՝ ոս-
կեկուռ պատմուձանին տեղ ու և
կտակ գլխանոց մը տուաւ ՚ի
նշան անոր մօտալուտ մահու անը .

և իրօք՝ երբ սուլթանը ակնարութիւնի մը ըրաւ՝ և սպասաւոր ներէն մէկը սուսերով զարկաւ և սպաննեց զան։

Այս սպանութեան պատճառը Վհմէտայ անխորհուրդ համարածակութիւննէր, որով միշտ սուլթանին վրէժիսնդըրութիւնը գըրգուերէր։ Երբ տակաւին պատանի երՊայէղիս, կէտիք Վհմէտ փաշա խրոխամբար կը վարսւէր անոր հետ անդամ մը Պայէղիս սպառնալով, երբ ըստ անոր։

“Այդ ինձի ըրած նախատինքդ միտքդ պահէ։ — Ի՞նչ պիտի ընես, պատասխանեց գոռոզութեամբ Վհմէտ, իմ հօրսարեւուն վրայ երդում կ'ընեմ որ երբ իշխանութեան հասնիս՝ ամեննեին սուսերս մէջքս պիտի չկապեմ քեզի ծառայելու համար”։ Ասոր համար՝ երբ (Օթրանթէն դարածամակ իր մէջքը կատելու՝ իր ձիուն համետէն կախերէր էր։ “Վարժապետո, ըստ անոր սուլթանը, ինչպէս անցածը կը յիշես։ մոռցիք երիտասարդութեան յանցանքները, սուրդ մէջքդ կախէ, և իմ թըշնամիներուս դէմ գործածէ”։

Այսպէս Վհմէտ առ ժամանակեայ Պայէղիսայ հետ հաշտուեցաւ՝ երբ Պարամանի պատերազմին համար իրեն հարկաւորիլու տեսաւ բայց իր պատերազմակը բնութեամբը չէրդադրեր սուլթանին կամսցը դէմ գործածէ։

միացաւ Վուսթաֆա փաշան իշխանութենէ ձգելու համար, աս յանդուգն փորձը սուլթանին բարկութեան չափը լցուց։ և Վհմէտայ մահը որոշուեցաւ։ Եւրոպական պատմագիրները աս վէղին սպաննուիլը աւելի ետքը և Վդրիանուպօլսոյ ճամբան եղաւ կ'ըսեն։

Վրոր վրայ շատ չանցաւ։ Իսհագ փաշա մեծ վէղիրն ալ իշխանութենէ ձգեց, ու անոր տեղը Վնաթոլիոյ Տաւուտ փաշա* կուսակալը դրաւ։

1483ին գարնան մէջ Պայէղիսի իր բանակաւը անձամբ Փիլիպպէի և Վաճառստանի սահմանները գանուած (Օսմանեանց բերդերը աչքէ անցուց, և աղէկ մը ամրացընելէն ու Վաճառաց թագաւորին հետ հնդամեայ զինագագարում ընելէն ետեւ։ Վդրիանուպօլսոյ դարձաւ, ուր Շամազանին տօնին հանդէսը կատարեց։ Վսկէ ալ կոստանդնուպօլիս եկաւ։

Այս տարուան վերջերը մեռան Գասրմ պէյ Գարամանի իշխանաց վերջինը, և Պայէղիսայ Վպուլահ որդին։

1484 Վայիսի 1ին՝ Պայէղիսի իր բանակը դէպ ՚ի Վդրիանուպօլսուղեց Վոլոտավիոյ վրայ քալերու համար, և թնդանօթներուն մե-

*Ասոր անունվը կը մէշտակուին մինչ ցարք Կաստանդնուպօլսոյ հարաւային արտարձաններէն մէկը, անոր մէջ եղած մղիմիլը և աղքատանցը, զորնը Տաւուտ փաշա շնից։ Եւ առ ակզս սովորութիւննեղու կոստանդնուպօլէն Եւրոպական պատերազմի Երթալու համար Օսմանեան բանակը կաղնեցւ մէկը ըլլաւ։

ծերը Աեաւ ծովուն վրայէն
Դանուպին բերանը խրկեց :
Պայէզիտ բաւական ժամանակ
Ծրիանուազօլսոյ մէջ մնաց, և
իր անոււամբը յիշուած մղկիթին
հիմնարկութիւնը ըրաւ, ու անոր
բոլորափը ամեն տեսակ օգտակար
շնչքերով զարդարեց :

Յունիսի Զօհն՝ Դանուպը անցաւ, և Վալաքից իշխանը անոր առաջ ելու խսկոյն ու տարեկան հարկին հետ քսան հազար զօրք բերաւ սուլթանին : Յունիսի Զօհն՝ Քիլիա բերգը ծովէն և ցամաքէն պաշարեց, և նոյն ամսոյ 15ին անոր տիրեց :

Մակէ Ացքիրմանի վրայ գիմեց, աս պատերազմին մէջ Մէնկլի Քէրէյ Վըրըմի թաթար խանը յիսուն հազար զօրքով օգնութեկաւ առաջն առաջն անդամ, և տասն և վեց օր պաշարմանէն ետե՛ Ացքիրմանն ալ առնուեցաւ : Առութանը ոսկեկուռ գլխանոցով մը պատուեց Վըրըմի խանը և շատ պարգևներ տալով, նորէն իր տեղը արձակեց :

Խոկ ինքը Ացքիրմանուազօլիս դառնալով, ձմեռը հոն անցուց, և հոն ընդունեց Անձառաց թագաւորին, Եղիպտոսի սուլթանին, Հնդկաց շահէն գեսպանները : Աս վերջնը փիզեր, անալութներ, անուշահոտութիներ և ոսկի ընծայ բերելով՝ Պայէզիտոյ դահակալութեանը խնդակից կըլլոր : Անձառաց գեսպանը խազականը խնդակից իր անորէն եղիպտոսի սուլթանին ազգականը սովաննեց :

Առուլթանը խիստ պատուեց Անձառաց կեղաց գետապանները . բայց Եղիպտոսի սուլթանին գեսպանը չպատուեց . ինչու որ Պայէզէպա Եղիպտոսի սուլթանը Շէմայ օժանդակութիւն և սէրցու ցընելէն աւելի՝ Տարսոնի և Ատանայի մօտ Կիլիկիոյ ստհման ները գտնուած քանի մը բերդերուն տիրեր և Հնդկաց շահէն գեսպանն ալ նեղէր էր՝ Պայէզիտոյ բերած ընծաներուն մեծ մասը կողոպտելով, Եւ դարձեալ Մէք բէ գացող ու խտաւ որներուն նեղութիւն կու տար :

Պայէզիտ հրաման խրկեց Պարամանի Պարակէօղ փաշա կու սակալին որ երթայ այն բերդերը Եղիպտոսոց ձեռքէն առնէ : Պարակէօղ անոնցմէ զատ չորս ալ ուրիշ բերդերու տիրելէն ետե՛ երբ իր յաղթութեանը վրայ պարծենալով, անհոգ կը զուսնուր ան կողմերը, Իւզպէք Եղիպտոսոց զօրագլուխը և Հալէպի կոռավարիչը անոր վրայ հասաւ, զօրբերը ցրուեց, Առուսա պէյը և Ֆէրհատ պէյ սուլթանին ազգականը սովաննեց :

Ասոր վրէժը հանելու համար՝ Պայէզիտ Հէրսէկ Ահմէտ փաշան խրկեց իրեւ ընդհանուր սպառապետ, բայց Պարակէօղ և միւս զօրավարները անոր հնազանդիլ չուզելով, ան ալգերի բռնուեցաւ, ու Տարսոնը և Ատանան նորէն եղիպտոսոց ձեռքը ինկան :

Անատենը՝ Պայէզիտ բարկութեամբ լցուած Տաւուտ փաշա մեծ վէզիրը չորս հազար ենիչէրիներով և ուրիշ շատ զօրքե-

բով Կիլիկիա Խրենց Եւրոպից խանութիմ վաշտ կողմանապետն աւ հետը տալուլ։ Թշնամիները աս տեսնելով վախցան, և երբ կեչ սէրնին վախսան, մեացածները խաղաղութեամբ անոնց առջի ը ելոն, և իրենց բերդերը անոնց ձեռքը յանձնեցին։ Վատանը՝ և մեծ վէզիւր անոնց իշխանին պարզեներ տալով պատուեց զան, և եաքը զօրբերը արձակելով ինքն ալ Պայէ զիտայ քավը դարձաւ։ Վիզի վէ քաղաքը և անոր ստքը պարգաւաւ։

Մեծ վէզիւրին Միոյ մէջ Գարամանի խռովութիւնները հանդարտեցընելու ատենը՝ Վարիտանացւոց* իշխանը, որոնք եօմը հարիւր տարիե ՚ի վեր Սպանիոյ մէջ կը տիրէին, Վրագոնի Փերամինանութագաւորէն նեղութելով Պայէ զիտէն օգնութիւն ինդրեց, և նամակին հետ արաբացի լեզուով չինուած ողբերգութիւն մը խրենց, որուն մէջ մահմէտականաց կրած նեղութիւնները և Սպանիոյ մէջ մահմէտականութեան մարիւլ կ'ողբար։

Պայէ զիտ գրգռեալ հրամանը ըրաւ որ մէջ նաւատորմիզ մը սպատրաստեն, ու անոր հըրամանատարութիւնը Տիժմալ։

* Վարիտանացիք կամ Վազիք Արարացւոց տոհմէն էին և Ափրիկեի արևմտան կողմէ կը բնակէին։ Վանք Հառվիճայեցւոց հետ ըստ պատերազմնենան համար շատ անուանի եղուն, և օթներորդ դարուն Արարացիք կամ մահմէտական Արակինոսք մինչեւ ան կազմիը արշաւելով՝ Էպանիոյ ալ տիրեցին, և անոնց զիտաորը ամրապետաց հրամանն առակը մինչեւ 1491 կ'իշեւը հան։ Ըստ համար ասոնք ու շատերէն Սաւրիտանացիք կ'ոչուեան։

Եէս իր մաերիմ պաշտօնեային յանձնեց, և Վատանիոյ վայ խըրեց որ երթայ բոլոր անոր ծու վեզերեաց ամրութիւնները զարնէ։

Հետեւ աւ տարւցին գարնան սկիզբը Վիզի վաշտ՝ իւմ մէլինոր կուսակալը, Խալիլ վաշտ՝ Վիաթուլիոյ կուսակալը, Վինան վաշտ, և Հերսոկ Վհմէտ վաշտ, (ուրուն՝ Եգիպտասի սուլթանը աղատութիւն շնորհէր էր) (Օմանցւոց հետ ընելու հաշտութիւնը գիւրացընելու յուսով), հարիւր նաւէ բաղկացեալ տորմիզով մը Գարամանի կազմը դիմեցին։ Ծավին և ցամաքէն յարձակելով Կիլիկիոյ միւս բերդերէն զատ Միան ալ առին, Շայց իւղէր Եգիպտացւոց սպարապեալ բաղմաթիւ զօրքով անոնց դէմը ելու և Օմանցւոց զօրքերը նորտակէց։ Վիզի վաշտ Վարենտամ դառնալով, Պայէ զիտայ հրամանաւը Գարակէօզ վաշտ և անոր ընկերները Կոստանդնուպոլիս խրկեց, որոնք այս անգամ ալ առաջ վախչողները եղան։ Պայէ զիտ առաջ չղթայի զարկաւ զանոնք, և արը Գարակէօզ և մէկ քանիները զիտատել տուաւ, իսկ մահացածները իշխանութենէ ձգեց։

Եգիպտացւոց դէմ եղած պատերազմը երթալով սաստկացաւ Վլայիւտոէ վլէթ անունով Օիւլդատորեան իշխանին։ Նենդութեամբը, որ (Օմանեանց օգնութեամբը իր Պուտագ եղորը անդ թագաւորեր էր։ Վլայիւտոտ վլէթ երբ Եգիպտացւոց յաջողութիւնը աեսաւ՝ անոնց հետ

միացաւ . իսկ ընդ հակառակն առ նոր Պուտագ պէյ եղայրը , որ մինչեւ ան ատենը Դամասկոսի մէջ եգիպտացւոց ձեռքը գերի մնացեր եւ , Եւրոպա փախաւ , գընաց սուլթանին սովքը ինկաւ , և ան ալ Ալիզէի գաւառապետ ըրաւ զան , և Օխուգատրեանց իշխանութիւնը անոր յանձնելու համար՝ քանի մը օսմանեան զօրապեաներու հետ Ալոյիւտուէլը լէթի վրայ խրկեց , բայց Պուտաց գի զօրքերը թշնամոյն զօրքերէն խխտ քիչ ըլլալուն՝ յաղթուեցաւ : Այս յաջող լուրին վրայ իւղպէք Եգիպտացւոց սպարապետը Ալոյիւտուէլէթի հետ միացաւ ու կեսարիան պաշարեց : Հերսէկ Ահմէտ փաշային հրաման եկաւ որ աս միաբանեալ թշնամուց գէմ գնէ . բայց երբ Ալոյիւտուէլէթին և իւղպէքին կեսարիայէն յառաջ անցնելուն և գէպ ՚ի Նիկոտէ գալուն ձայնը տարածուեցաւ , Պայէզիս որոշեց որ անձամբ անոնց վրայ քալէ և կուղպէք Պէտքթաշէն Աքիւտար անցնիլ :

Այս միջոցին թունուզի իշխանէն գեսպաններ եկան կոստանդնուպոլիս՝ գուրան մը , մարդարէին աւանդութեան գրքերը և ուրիշ պարգևներ ընծայ բերելով Պայէզիսայ՝ Եգիպտոսի սուլթանին հետ զան հաշտեցընելու համար միջնորդութիւն ընելու մոօք : Նոյն ժամանակը լուր հասաւ՝ թէ Եգիպտացւոց զօրքերը Հերսէկ Ահմէտ փաշային մօտենալը տեսնելով , երեք որ յարձակում ընելէն ետեւ՝ ետ քառ շուրջը են : Ուստի գեսպաններու միջնութիւնը կուսանական անցան , բայց Ահմէտ գուրիս զօրավարէն յաղթուեցան : Ուրիշ զօրավար մալ Օսմանն շւոց գլուխներով լցուած երկու

ըուն խնդիրքը գիւրութ ընդուռնուեցաւ : Պայէզիս փոխանակ Արիա անցնելու՝ Ադրիանուպոլիս գնաց , անկէց ալ կաստանդնուպոլիս դարձաւ իր թռաւանց թրլ փառութեան և իր մէկ աղջկան ամուսնութելը տօնախմբութիւնները կատարեց :

Պայէզիսայ հինգ որդիկը Արիա ամենէն գեղեցիկ կողմերը կիշելին . Ահմէտ Ահմախ մէջ կը նստէր , Ըէհինշահ՝ Գարամանի մէջ , Ալէմշահ՝ Մէնթէշէի մէջ , Գորգուտ՝ Սարուխանի մէջ , և Աէլիմ՝ Տրապիզոնի մէջ : Առևլթանին երեք աղջկներն ալ ասմիջոցին ամուսնացան , և անոնց տօնախմբութիւններն ալ ձիասպարէզին մէջ կատարուեցան :

Այսպէս Արիա խաղաղելով , և Անենետիկի հետ սահմանագրութիւնները հաստատելով , Պայէզիս իր աչքը Ահմառուտանի վրայ գարձուց որ անոր Ահմատաթիաս Քորլին իշխանին մահուանէն ետեւ՝ նախարարաց երկպառակութիւններէն խռովութեան մէջ էր : Ուստի Ահմէնտրէի խատիմ Աիւլէյման փաշա կուսակալին հրաման խրկեց որ գէպ ՚ի Ահմառուտան քալէ , և ինքն իսկ 1492 Ահմատի 1ին կոստանդնուպոլսէն մեկնեցաւ , ու գէպ ՚ի Առֆիա գնաց , որ անկէ Պէլկրատայ վրայ քալէ : Ասկայն Ահմէնտրէի Օսմանեան գունդերը Պոսնիոյ մէկ քանի ամբոցներուն տիրելէն ետեւ՝ մինչև Ահմառուտան անցան , բայց Ահմառուտանի զօրավարէն յաղթուեցան : Ուրիշ զօրավար մալ Օսմանն շւոց գլուխներով լցուած երկու

սայլ Վաճառաց ծերակոյտին խըր կեց իր յաղթութեան նշան :

Անատէն՝ Պայէղիս Պէլլատը առնելու յօյու կորելով, Առջիայէն ելու, և Ալպանիա երթալու տառենը՝ խիստ նեղ փոշոցի մը մէջ մարդասպան մը գալէնտէրի զգեստ հագած իրեն մօտեցաւ որ դանակով զարնէ . բայց սուլթանին թիկնապահները բռնեցին զան ու կտոր կտոր ըրին* : Պայէղիս քանի մը ամիս Ալպանիա կեցաւ՝ կոստանդնուպոլսոյ մէջ եղած ժանտախտին պատճառաւը :

Աակայն Օսմանեան հրոսակները երեք գունդ բաժնուած Աւստրիոյ հարաւային կողմերը արշաւեցին, և մէծ անդթու թէ և չարաշար ասպատակեցին : Տըզաները ցցի ցորկին կամ անոնց գլուխը պատի զարնելով ջախշախեցին . աղջիկները իրենց մայրերուն, կիները իրենց երիկնուն առջեւ լլկեցին : Փողցները մեռեալներուն դիսկներով և անդամներով ծածկուած էին . ոս մօրդակեր հրոսակները զոհ հերուն գլուխները երկար շամշ փուրներու վրայ կը խորովէին ու անոնցմով կը կերա կրէին :

Աակայն քրիստոնեաները առեղածները տեսնելով միացան, և երեւելի զօրապետներու առաջ

* Աս գիղուածէն, կամ գուցէ Ա. Մուրատին՝ պատերազմի գաշտին մէջ Քողկեսլիչն ապանանուելն ետե՛ հաստատուեցաւ որ մէկը զինեկալ չինայ սուլթանին մօնենալ, և երկու սենեկա պան ներկայանալ ու զովին թեւերէն բանեն . Արքոյանազմներուն եղած առ կերպ զգուշուիլ առնելուն անցնելով արարողական օրէնք մը եղան, որուն կը հնարանդին թագաւորաց և կայսերաց գեապանները :

Նորդութեամբը Օսմանեան հըրոսակներուն վրան յարձակեցան . ասոնց ձեռքը ինկած քսան և հինգ հաղար գերիներն ալ պատերազմի ժամանակը շղթանին կոտրտեցին և թշնամւոյն ետեւէն յարձակեցան : Եօթը հաղար քրիստոնեայ և տասը հաղար Օսմանցիք պատերազմի դաշտին մէջ մասցին . եօթը հաղար Օսմանեանը գերիներէն ոմանք պարկերու մէջ կը կարէին, ու ջուրին մէջ կը նետէին, ուրիշները աղացքի անիւի կը կապէին, կամ կենդանի մարթեղերծ կը նէին, և կը խորովէին :

Նշն տարին որ Վիկալեան Վ.լի պէյը պատերազմի մէջ սպաննուեցաւ, Վէմէնտրէի խատիմ Վ.լի փաշան ալ Վաճառներէն հալոծուելով, տասն և հինգ հաղար հսդի մեռել կամ գերի թողուցեր էր :

Վ նախատիմները Օսմանցւոց վրայէն հանելու համար, հետեւելու տարին՝ Ետքուող փաշան Գարամանի կուսակալը Վ.ստրիա արշաւեց, ու տասն և հինգ օր առպատակութիւն ընելէն և ժողովաւրդը ջարդելէն ետեւ Գերմանացի զօրավարներէն հալածուեցաւ :

Վսկէ Խրուաթիստանի վրայ գընաց, ու Վասպինայի քով պատերազմ բացուելով, տասն և հինգ

Հաղար եօթը հարիւր Անձառ պատերազմի գաշտին վլայ մնացին . Տէրէնչէնի պան Անձառաց իշխանը , իր եղայրը և որդին գերին ինկան Ետքուպ անոր եղբօրը և որդւոյն գլուխները կը արելտուաւ և սկուտեղի մը մէջ դնելով , Տէրէնչէնիին խրկեց : Պատերազմին մէջ մեռած հինգ հաղար քրիստոնեաներուն քիթերը կարեցին , և Տէրէնչէնի պան իշխանին հետ կոստանդնուպոլիս խրկեցին իրեւ նշոն (Օսմանեանց յաղթութեանը : Տէրէնչէնի Պայէղիստայ ներկայանալով , ամենենին իր սովորական գոռառողութիւնը շխանարհեցուց : սակայն սուլթանը չտանչեց զան , այլ միայն բաւական սեպեց կղզի մը աքսորել զան , ուր երեք ամսուն ետքը աս իշխանը մեռաւ : Ետքուող փոտառ աս յաղթութեանը փոխարէն փոտաւոր սուր մը և պատուական արքունի ձի մը ընդունեց , ու խոմելի կուսակալ անուանեցաւ :

Անձառաց Քինիս իշխանը , մահուան անկազնոյ մէջ պառկած և մէկ խօսք մը անդամ բերնէն հանելու անկարող , (Օսմանցի պատանդները և աշխարհագրական տախտակ մը բերելտուաւ : ձեռքը իր պարանոցը տանելով , ազդու նշանով մը իմացուց թագաւորին թէ ինչպէս պէտք է քրիստոնէից թշնամիներուն հետ վարութիւ և նոյն միջոցին՝ տախտակին մէջ (Օսմանցւոց սահմանադլսւխները կը ցնացընէր , որ սպէս թէ այնչափ նախատանաց վրէժը առնելու համար՝ սահմանները անցնին : Քանզի հետեւալ

տարին՝ (1494) , Օսմանցիք նորէն միհչե թըմբշվար արշաւեր էին : Բայց Անձառ մը աս արշաւանցին վլէ մն առաւ : Աէմէնտրէի արուարձանները այրելտուաւ : իր բանակը հօն ցրուելով , ժողովուրդը , անասունները , ցորեն , ստակ , ամեն բան կողոպտեցին : Մաստենը Անձառը Օսմանցի գերիները չարաչար գործածեցին (Օսմանցւոց ըրածին փոխարէն : Օգւարձութեան համար անոնց գլուխները կը կարէին , և կենդանիները իրարու կը ծախէին :

Այս նոյն տարին՝ Անձառ գեպան մը կոստանդնուպոլիս խըրկուեցաւ հաշտութիւն ընելու համար , և 1495ին (Օսմանցի գեպաններով ետ գարձաւ , որսնք արծաթեղին ամաններ և ուրիշ պարգևներ բերին խաղաղութեան նորոգութիւնը խնդակցելով : Իրենք ալ ասոնց փոխարէն՝ նոյնչափ թանկագին պարգևները ընդունեցին : Երեք տարուան համար զինադադարում հառտատուեցաւ ; բայց ան գաշամբ որ Տէրէնչէնիի կորսնցուցած գերիները ետ տան , երեք տարի եղած աւերմունքները նորոգեն , և զինադադարումը ուրիշ երեք տարուան համար ալ հաստատուի , եթէ թագաւորը ուզէ , կամ թշնամութեան գործերը սկսուին երեք ամիս առաջ իրարու իմաշցընելով :

Պայէղիստ իր գրացի տէրութեց հետ հաշտութիւն ընելով , խաղաղութեան հին գաշնքները կը նորոգէր : Աօթը տարիէ ՚ի վեր Եհաց հետ ալ բարեկամութիւն

ունէր . բայց ասոնց Յովշաննէս
Վլոգէրթ վերջին թագաւորը Վու-
տաւիոյ վրայ գալով , Պայէզիտոյ
բարկութիւնը գրգռեց : Վաճա-
ռաց Ալատիսլաւ թագաւորը զա-
նոնք հաշուեցընել ուղեց , բայց
Պայէզիտ հրաման ըրաւ Պալի ոլէյ
Վալդօչ օղլու Վիլսուտէի կառաւ
վարչին որ Աեհաց վրայ երթայ :

Վալդօչ օղլու երկու անգամ
յարձակելով , վաթսուն հազար
հոգւով Աեհաստան մտաւ , նա-
ւային կամուրջով Ծնեսթեր գե-
տը անցաւ , և իր բանակը խումբ
խումբ բաժնելով մինչև Խարոս
լուն և Հալիչասպատակեց , քա-
զաքները այրեց , բնակիչները գե-
րութեան տարաւ , և անբաւ
գանձեր ժողվեց : Իր արշուանքը
աւելի առաջ պիտի տանէր , թէ
որ իր բանակը օդին ցրտութեւ-
նէն և պաշորին նուազութենէն
չնեղէր , կամ դէզադէզ ձեան
տակ չթաղուէր : Ուստի Պալի ոլէյ
Քիլի և Վաքիրման գարձաւ ու
ժողված աւարը իր զօրոցը բաժն-
եց , և արձակեց զանոնք՝ բայց
առ արին հինգերորդ մասը ըստ
օրինի սուլթանին պահեց : Վու-
տավիոյ Պողոսն իշխանին ալ սա-
մուր մուշտակ մը և երկու ձարչ-
քով դրօշ մը պարգև տուաւ
առ արշաւանքին նիզակակից ըլլո-
լուն համար :

Վլոգէն 1492էն հետէ Օս-
մանցիք և Ուուսք առաջին ան-
գամ բարեկամական յարաբե-
րութեանց մէջ մտեր էին : Իվան
Գ . Ուուսաց թագաւորը Վէնկիլ
Քէրէյ Վըրըմի խնանին ձեռքովը
Պայէզիտոյ բարեկամութիւնը ըստ
տացեր էր , և 1495էն՝ Վիքայէլ

Փլէշչել առաջին ոռւս դեսպա-
նը Աէնկլի Քէրէյի յանձնարա-
բական թղթերովը Կոստանդնու-
պօլիս երկացաւ , և Օսմանեան
երկիրներուն մէջ լիսւսաց առու-
տուր ընելու ապահովութիւնը կը
խնդրէր : Հրամայեր էր իրեն
ոռւսաց կայսրը որ սուլթանին
առջել ելած առեն՝ անոր երկր-
պագութիւն ընէ , և ուղղակի
դեսպանախօսութիւնը ընէ : Փլ-
էշչել թագաւորին աս հրամանը
կատարելէն դատ՝ սուլթանին
տուած պատույ պատմուծանը
ընդունեց : Ասոր համար Պայէ-
զիտ դժգոհ սրտով արձակեց զան ,
և իր գրած պատասխանին մէջ ,
դեսպանին անքաղոքավարութե-
նէն գանգտատեցաւ :

Վքէ չորս տարի ետքը՝ (1499) ,
Վլէքսիս Լոյզը վասթով Ուուս
երկրորդ դեսպանը բաղմանթիւ
Ուուս վաճառականներով և յան-
ձնարարական թղթերով եկաւ ,
և Փլէշչելի ըրած տմարդութեց
համար ներումն խնդրեց : Վայ-
պէս ահա ոչ միայն մօտաւոր
տէրութիւնները , այլև հեռա-
ւորներն ալ Օսմանցւոց հետ
բարեկամութեան դաշնիք հաս-
տատելով , անոնց փառքը և
համբաւը կ'աւելցընէին :

1498ին Վենետիկցիք ալ ուղե-
լով նոյն բարեկամութիւնը ան-
խղէլի հաստատել Օսմանցւոց
հետ , բանզի աս միջոցին իրենց
թշնամինները շատցեր էին , Օան-
թակզիին հարկին հետ Վիտրէա
Զանդանի դեսպանը խրկեցին ;
որ բարեկամութեան դաշնիքը նո-
րոգէ : Աակայն Վիլանի , Ֆիո-
րէնցայի և Վէապօւսոյ դեսպան-

ներուն թելտիրութեամբը Պայէղիս Վենետիկցւոց դէմ պատերազմի գրգռուեցաւ . անոր համար՝ առ երեսս բարեկամութիւն խօսեցաւ անոնց հետ և դաշնիքը գրել տուաւ ոչ տաճէրէն լեզուով, ինչպէս սովորութիւն է, այլ լատիներէն . քանզի աս կերպով կը կարծէր թէ անխիզք պիտի կրնար դաշնիքը լուծել:

Կոյն ժամանակը հրաման ըստ որ Վենետիկցւոց դէմ մեծ բանակ մը և նաւատառորմիզ մը պատրաստեն . ցամաքային զօրքերը վաթօուն և երեք հազար հոդիկ կը հասնէին, որոց քսան և ութը հազարը եւրոպական զօրք էին, ասութ հազարը ասիսկան, ու թը հազար հեծեալք, և նոյնչափ ենիչէրիք :

Նաւատառորմիզին հրամանատաշը ութիւնը Տաւուտ փաշա ծովաչկալին և Քէմուլ Շէխ և Պուրցագ Շէխ ծովաչեաներուն պուաւ, և արձակեց զանոնք ու Կառապատուք պաշարեն, ու ինքը Ծունիսի մէջ Ադրիանուսօլիսերթալով, խռմէցի կուսակուլցամաքին Կողմէն ամրոցին վկայ խրկեց:

Վակայն հակառակ հողմերուն պատճառաւը Օսմանեան նաւատառորմիզը Վորայի հարաւային արևմտեան կողմը գտնուած Վափիէնցան կզզին առջելը երեք ամիս խրիտիս նետելու պարտաւորեցան: Երբ Ճամբայինկան, Վասպակտութիւնը Վենետիկցւոց հարիւր շիսուն նաւուց տորմիզը կը կրիմանի ծովակալը անոնց Ճամբան կորելուզեց: Քորֆուէն

ասոր օգնութեան եկեղ էր նաև Որեւտանօ ծովապետը տասն և հինգ նաւով. տորմիզին յառաջապահ նաւերը Ալգուն Արմէնիօ ծովագետին հրամանատարութիւնը տակն էր:

Պատերազմը Վափիէնցա կղզին առջել սկսու. Ալգուն Արմէնիօ Պուարը Շէխիսին մեծ նաւը բռնեց, ու Լարետոսիօ ալ անոր օգնութեան հասնելով, երկու կողմէն ալ ակիչներ նետեցին, նուեթը իրարու մօտեցուցին, և սկսն պատերազմիլ: Վնատեն Պուարը Շէխս յաւսահատելով, որոշեց որ երեք նաւերն ալ մէկ տեղ այրէ . կրակը նաւերուն կազմածները և կայմերը բոցավառելով, երկու նաւատառորմիզը ներուն իթստ երեկիլ հրամանատարները այսինքն Վենետիկի Արմէնիօ և Որեւտանօ, ու Օսմանեան Պարա Հասան և Պուրցագ Շէխ ծովաչեաներուն բոցերուն կամ ծովուն ալիքներուն մէջ կորսուեցան: Իսկ Արմանի, որ նախանձու համար Որեւտանին օգնութեան չէր հասեր, ինքն ալ յազմուելով, Օսմանեանը ազատութիւն Կաւալակոսի ծոցին մէջ մտան, որուն ամրոցը շուտով անձնատուը եղաւ:

Վենետիկցւոց ամենէն ամուր բերգը առնուիլը լուելուն պէս Պայէզիս հրամայեց Վինան փաշա Վնաթոլիս կուսակալին, որ Վուրայի և Բումէլիի մէջ տեղը, նեղուցին բերանը հինգ բերեց շենէ: Վուաթաֆա փաշային ալ ապսպից որ Վենետիկցի ձեռվրապատուն հատ նաև շինէ, որ պէս զի անոնցմնով կետեալտա

րին Վեթոնի և Կորանի կարենայ տիրել և ինըը Ագրիանուազօլիս դարձաւ : Եցին օրը՝ Շենտէրէլիք տոհմէն խալիք որդի Խպրահիմ մեծ վէզիրը մեռաւ , և անոր տեղը անցաւ Հռոգոս պաշարող Վեսիհ փաշան :

Նաւակակտոսի պատերազմին ժամանակը՝ Խոբէնտէր փաշան Պատ նիոյ կառավարիչը , որ քսան տարի առաջ Վենետիկցիները սարսափեցուցած էր , նորէն տասն և հինգ հազար հոգւով մինչե Ֆրիուլ և Ուտինէ գիմեց . իր զօրքը երեք թեփ քամնեց , որոց մէկը մինչե Վիչէնցա և Խատիշքա յառաջ անցաւ . իսկ միւս խումբ երը թշնամեաց երկիրները մոնելով , հարիւր երեսուն և երկու քաղաք և գիւղ մոխիր դարձուցին և շատ մարդիկ գերի բռնեցին կ'ըսեն . Աակայն Օսմանեանց՝ երեսուն տարուանէ հետէ Վատրիոյ , Վաճառուտանի , Բարանսիլիսնիոյ և Վեհաստանի վայ ըրած ասպատակութեանց վերջինը աս եղաւ մինչե Վենան պաշարելնին . Խոբէնտէր փաշան շատ անցաւ հիւանդանալով , որդնոտեցաւ մեռաւ :

Վենետիկցիք 1498էն ՚ի վեր Օսմանցւոց կրած այնչափ վեստուց վայ՝ Վէ ֆալմնիան առնելով քիչ մը միսիթարուեցան : Վակային մեծ գարուն սկիզբէն ՚ի վեր իշխանդացի կայսրները Վենետիկցւոց թօղուցին , բայց Վեհէ հէ մմէտ թ . ին վերջին տարիները Օսմանցւոց ձեռքը անցաւ Կէտիք Վհմէտ փաշային ձեռքով : Նաւակակտոսի առնուելուն հետեւալ տարին՝ Փիղանիին հրա-

մանատարութեամբը Վաղանիան և Վենետիկցի նաւախումբ մը Վէ ֆալմնիոյ տռ.ջէ բրեեցաւ : Խարձատե պաշարումէն ետե՝ յարձակմամբ քաղաքը տռ.պին , որուն գլխաւոր գրան վրայ , Փիղանիին փառաւոր յաղթութեան նշան քար մը կանգնեցին : Երբ Վուսմափա պէջ ձմեռին մէջ քառասուն նաւերուն շինութիւնը փութացընելով , արդէն քսան և երկու հատը պատրաստուած նաւարանէն ծովը պիտի ձգուեին , մէկ մ'ալ Վենետիկցիք մէկ գիշերուան մէջ զանոնք այրեցին : Հասարակապետութեան գունդերն ալ միւս կողմէն Օսմանցւոց մէկ ուրիշամբոցը ձեռք ձգեցին :

1500 Վարիլ 7ին՝ Պայէզիս անձամբ Ագրիանուազօլմէն ձամբաւելու դէպ ՚ի Վորա , որ իր ներկայութեամբը իր զօրքը քաշուերէ , և Լագուպ փաշա Վնթոնի առջելով հասնելուն պէս՝ ինքն ալ հան հասաւ , ու ծովին և ցամաքէն խսուաթեամբ պաշտեց զան : Պաշարուելէն երեք շաբաթերը թրէվիզանին Վենետիկցի ծովագետը օգնական գունդով և պաշարներով օգնութեան հասաւ . Վենետիկցիք բարերադշութեամբ թշնամեաց նաւատարմիղին մէջն անմիաս անցնելով , նաւահանդիստը մտան , և երբ կ'աշխատէին ամեն կողմէն ամբոցը պաշտպանէլ , Վինան փաշա Վնթոլիոյ կուսակալը ու մբակոծութեամբ խրամատ մը բացաւ պարսպին մէկ կողմը , և յարձակում ընելով , ամբոցը առնուեցաւ (10 Օգոստոս) :

Ամբականաց խիստ գլխաւոր ները սուրէ անցան . Վնտրէա Թալդոնի եպիսկոպոսն ալ բռնեցին՝ քահանայապետական զգեստով եկեղեցւոյն մէջ քարող տուած ատենը , և անոր գլուխը կորեցին : Հինգ օր քաղաքին հրդեհը տեսեց , և վեցերորդ օրը , որ Աւրբաթ էր , Պայէղիստ քաղաքը մտաւ և եկեղեցին մըզ կիթի փոխեց : Պարփակներուն բարձրութիւնը և խրամներուն խորութիւնը դիտելով , ըստ , “ Վոտուած տուաւ ինձի աս ամրոցը իմ Աինան կուսակալիս և Անիչէրիներուս ձեռքովլ ”: Պարփակին վրայ ամենէն առաջ ելը լու Անիչէրիին՝ տէրութեան ամենէն երեւլի գաւառներուն մէկուն կառավարութիր տուաւ :

Արկէ զրեթէ ամիս մը ետքը Ալի փաշո մեծ վէղիրը և Տաւուտ փաշա ծովակալը պատերազմնի Փիլոս և Կորոն ամրոցներուն ալ տիրեցին : Պայէղիստ Անթոնի և Կորոնի մէջ հինգ հազար դրաւ ամրոցներուն պահպանութեանը համար : Ասերկու քաղաքներուն եկամուտը Անքրէի և Անտինէի կրօնական հաստատութեանց ընծայուեցան : Հրամայեց Պայէղիստ որ երեք հարիւր հիւսն Անթոնի աւելեալ տուները և պարփակները նորոգեն : Խոյն միջոցին՝ ոչ միայն արևելեան իշխանաց , այլև Հռոդ ացւոց մագիստրոսին , ըլլալանիոյ , Գաղղիոյ , Եհաստանի և Անձառուսանի թագաւորներուն իր յաղթութեան աւետաւոր նամակները խրկեց :

Անդ կողմէն՝ Վենետիկի հա-

սարակապետութիւնն ալ Աւրոպիոյ աէրութեանց գումականներ խրկելով , Վնդղիոյ , Գաղղիոյ , Ապանիոյ , Եհաստոլոյ , Եհաստանի և Անձառուսանի թագաւորներէն , Հռոմիոյ պապէն և կայսերէն օգնութիւնկը խնդրէց . Բայց ասոնցմէ միայն Անձառաց , Ապանիացւոց , Գաղղիացւոց թագաւորները և պապը մեծ նաւախներուլ օժանդակ գունդեր խրկեցին (Օսմանցւոց գէմ :

Ապանիացւոց և Վենետիկցւոց նաւատորմիջները Կոնսալվօ և Փէղարօ ծովակալներուն առաջնորդութեամբը Յոնիական ծովը տարածեցան . պապին տորմիզին (Օպիւսոն կարդինալը Արշապեղագոսի ջաւաղացաւ . Տամբէնսթէն ծովակալն ալ գաղղիացի նաւերով Եսփոսի վրայ գնաց , ցամաք ելաւ . և քսան օր քաղաքը պաշարեց : Այսպէս միացեալ նաւախումբները (Օսմանցւոց ջուրերը մտնալով , շատ կղզիները անոնց ձեռքէն առին : Պայէղիստ սաստիկ բարկութեամբ Հերսէկ Վհմէտ փաշան իբր սպարապետ և Աինան փոշա Անտոլիոյ կուսակալը անոնց վրայ խրկեց : Որոնք ոչ միայն Աւրոպացւոց արշաւանացը գէմ գրին , այլ և Անդայի մէջ քանի մը բերեր ալ անոնց ձեռքէն առին :

Քէֆալսնիան կորսնցընելուն վրէժը առնելու համար՝ Պայէղիստ Գաղմատիոյ և Պոսնիոյ վրայ խրկեց իր Առուսթաֆա փաշան , որ մինչև Անձառուսան արշաւելով , Թրանսկիլանիոյ և Ծմբշվարի կառավարիչներէն յաղթուեցաւ ,

որոնք Օսմանցացմէ անթիւ գերի բռնեցին անոնց գլուխնեւ ըով բուրդեր կանդնեցին յաշթութեան ան նշան :

Դարամանի մէջ՝ թիւբբենաց թօրզուտ և Վարտագ ցեղերը Դարամանի իշխաններէն դրդը ուռած ասպստամքեր և այնչափ բռնցեր էին, որ Ամասիոյ; Դարամանի և Պէկչէհրի արքայորդի կուսակալք ուրիշ օգնական գունդերով հաղիւ անոնց դէմ կրնային գնել. ուստի պէտք էր որ Պայէզիտ Վէնետիկցւոց և Անձառաց Հետ հաշտութիւն ըներ և իր զօրութիւնը աս կողմը թափէր: Վէնետիկցիք երեսուն և մէկ յօդուածով խաղաղութեղանքը ընդունեցին, Անձառա Անձառա կղզին նորէն (Օսմանցւոց դարձուցին), բայց Քէֆալոնիան իրենց պահեցին: (44 Պէկտամքեր 1502):

Եզն Ճամանակը՝ Անձառաց Հետ ալ եօթը տարուան համար հաշտութեան դաշնքը ըրաւ, որուն մէջ Անձառաց տակը եւ զած ամեն երկիրները, մասնաւորաբար, Աերվիան, Պրոնիան Պուլպարիան, և Անդրիոյ, Դաշզիոյ, Սպանիոյ, Փորթուկալի, Լեհաստամի, Վէտոլուոյ թագաւորները Վէնետիկի հասարակապետութեան գահները, Վէնետիկի հասարակապետութեան առաջնորդ մահերէցը, շըռուոսի մագիստրոսը և Քիոսի Շնորման:

Հերսէկ Վէմետ փաշոն, որ Վէնետիկցւոց դէմ պատերազմի սկսուած առենք մէջ վէզիրութեան պաշտօնէն զրկուել էր քանզի Հերսէկովինաւ ծնածքը ըստ համար կոստակածքի հարիւր:

որ շլայ թէ իր հայրենակցաց և կրօնակցաց ակնարկութիւն ընէ, բայց հիմա հասարակապետութեան և Անձառաց հետ հաշտութիւն ընելու պատճառ ըլլալուն համար, երկրորդ անգամ մէջ վէզիրութեան գահը ելու: Հերսէկ Վէմետ փաշա երեք տարի մէջ վէզիրութիւն ընելէն ետեւ նորէն իշխանութէ ինկաւ և իր տեղը անցու Խատիմ Ալի փաշ: Ասոր վկայ Պորդուտ արքայորդին նեղանալով որոշեց որ Եղիպտոս փախչի իր Շէմ հօրեզօքը նման: Ուստի ութմառն և եօթը ուղեկիցներու հետ իր բոլոր գանձերը մէկ տեղ առանելով հինգ նաւով ճամբայ եւ լոււ իր սուլթան հօրը պատճառ ու լով թէ Վէքքէ ուխտի երաթաւ կ'ուղէ:

Հինգ օրէն Պորդուտ Ալիքսանդրիա հասաւ, ուրիշ դեսպան մը խրկեց Պահիրէ որ իր գալուստը սուլթանին իմացընէ, Եղիպտոսի սուլթանը մէջ շըռով և հանդեսով ընդունելութիւն տուաւ անոր, խստ ընտիր ինը երիւար, և ինը կարտ ուղար իշրեն, և հարիւր ձի, եօթմանասուն ուղար իր ուղեկիցներուն, ինը հաղար սոկի, ինը կոտոր սոկի կուտ հանդերձներ և ինը երիւարաբդ, տղաներ անոր պարգև և խրկեց: Աստմեն սուզեկիցներով և քառասուն թմբկահարներով Պորդուտ դէպ, իմայրաբաղնքը ճամբայ, ինկաւ, ուր մէջ փառքով մտաւ, և սուլթանին պատճառը իջաւ:

Իր հանապազօրեայ պիտոյիցը համար սուլթանը հինգ հարիւր

ոշխար, յիսուն կենդինար շաքար, երկու հազար հաւ, յիսուն զամբիւղբրինձ, երկու հազար սագ, հարիւր յիսուն կենդինար մեզզ ատակ, ասոնցմէ զատ շատ տոտակ ալ խրկեց անոր:

Դըքէք օր հանգստանալէն ետեւ՝ սուլթանին հետ տեսնուեցաւ. օր Գորդուտին աչքերը պատաւիր զաւկին տեղ դնելով զան. Գորդուտ ալ սուլթանին պարանոցը պատաւ, ինչպէս օր իր հօրը ընելու սովորութիւն էր: Անոր քավը գահի մը վրայ նոտաւ, բայց սուլթանը որչափ որ անոր մեծ պատիւ ցուցուց, ոչ Ուկքէ ու խոտաւորութեան թողուց որ երթայ, և ոչ անոր միւս ինդիքք ները ընդունեց. քանզի չէր ուշդեր Պայէղիտայ հետ ունեցած խաղաղութիւնը աւրել. Գորդուտ ասոր վրայ խոհեմձամբայ մը բռնեց, Ալի փաշային նամուկ մը խրկեց, որուն մէջիր Ուկքէ ճանապարհորդելուն համար ներում կը ինդրէր, և կ'աղաչէր որ նորէն իր թէքքէ ի կառավարութեանը գառնալու հրաման ուղէ իր հօրմէն: Այ ինդիքքը ընդունուեցաւ, և ինքը նորէն իր իշխանութեանը գարձաւ:

1509ին՝ պատմութեան մէջ յիշուած ամենէն սոսկալի երկրաշարժութիւնը կոստանդնուսոլսոյ մէջ տեղի ունեցաւ: Հարիւր և ինը մզկիթ, հաղար եօթանասուն տուն, ցամաքային կրկին բոլոր պարիսպները, ծովային կողմին ալ մեծ մասը, Ետափ գուլէն, պալատին պատերը ծովին կողմէն մինչև Պահճէ գափուսուն ՚ի հիմանց կործանեցան:

Աշխարհակալին մզկիթին չորս ամենամեծ սիւներուն խոյակները Ճեղքուեցան, գմբէթը մէկ կողմին վրայ ծուռւեցաւ: Ուկհէմմէտի մզկիթին մօտ հիւանդանոցին, ութը Ճեմարաններուն և աս տեսակ բազմաթիւ շինութիւններուն գմբէթները Ճեղքուեցան. Բ. Պայէղիտի մզկիթին գմբէթը փլուեցաւ: Պանի մը հազար մարդիկ, կանայք և աղայք աս փլատակաց տակը կորսուեցան:

Քառասուն և հինգ օր շարունակ սաստանութիւնը տեղ ոչ միայն կոստանդնուսոլսոյ մէջ, այլև Եւրոպիոյ և Վսիոյ բոլոր Օսմանեան երկիրներուն մէջ: Զօրում քաղաքին կէսը աներեւոյթ եղաւ. Կէլիպօլուի ամրոցները փլուեցան, Տէմոթիքա, ուր Պայէղիտ ծնաւ, գրեթէ բոլորովին աւերակ գարձաւ: Օ'ովը ալիսկոծեալբարձրացաւ, և իր կատաղի ալիքը կոստանդնուսոլսոյ և Պալաթիոյ վրայէն անցան, քաղաքին արուտարձանին հին ջրմուղները աւրուեցան: Այս Սոֆիայի պատերուն ծեփը, որով Օսմանեանը եկեղեցւոյն յախճապահեալ պատերը ծեփեր էին, թափեցաւ, և աւետարանչաց հըսկայածե պատկերները վերստին երեան ելան: Քրիստոնէից եկեղեցիները ամեննին չինասեցան:

Պայէղիտ իսկ իրեն պալատին պատերուն չլստահելով, տասը օր պարտէղին մէջ վրանի տակ անցուց, բայց հոս ալ վախնալով Աքրիանուպօլիս փախաւ: Հատշանցաւ՝ տէրութեան աս երկրորդ մայրաքաղաքն ալ սաստկապէս սաստնեցաւ. որմէ վեց օր ետքն

աւ (Նյեմքերի 16) սոսկալի փոթորիկ մը ելաւ . Յունացադեալ յորդեց և աւերակները ու երկրաշարժէն բացուած բոլոր խոռոչները ծովացուց :

Խատենը՝ Պայէզիս երկրաշարժէն եղած ամեն աւերակները նորոգելու . համար ոտնակաց ատեան* մը կազմեց, որուն ինքն աւ ներկայ գտնուելով, խորհրդականներուն ուղած առ հետեւալ խօսքերովը ատեանը բացու . “Զեր անիլուտութիւններէն և անգթութիւններէն հարստա հարելոց հառաջանքը մինչ երկինքը բարձրացան, և ահա ատոր համար երկնային բարկութիւնը մեր քաղաքին և աշխարհիս վրայ ինկաւ”: Անդէն որոշուեցու որ եօթը հազար հոգի աւերակները շնուրելու գործածուին : Երկու ամսուան մէջ (29 Մարտէն մինչև 1 Յունիսի 1510), ոչ միայն կոստանդնուպոլոսյ և Պալաթիոյ պարիսպները առաջընան պէս շնուրեցան, այլև Վլթուն գափուի եօթը աշխարակները, Պըզ գուլէսին, Վլթութիոյ աշխարակները, Ֆէնէրը, նոր պալատը, մեծ ու պատիկ Զէքմէճէններուն կամուրջները, և Արքվիթի պարիսպները նորոգուեցան կամ շնուրեցան :

Այս նորոգութեանց վրայ տօն մը կատարելու համար՝ Պայէզիս ըստ թախանձանաց աւագանւոյն և գիտնականաց հրաման ըրաւ

որ երեք օր արծաթ անօթներու և սպասներու մէջ ազքատաց կերակուր տրուի :

Պայէզիս ընդաբոյս խաղաղականութեան վրայ՝ անոր ծերութիւնը և ստէպ հիւանդութիւններն ալաւ ելցան . առ պատճառներով՝ Մաճառաց, Լեհաց և Աննետիկուց հետ խաղաղութեան գաշնիքը նորոգեց : Մակայն ներքին անակնկալ քաղաքական պատերազմները եղացր եղար գէմ, որդիք իրենց հօրը գէմ յարուցանելով, ամեն բան տակներվաց ըրին :

Քանզի Պայէզիս Միից Տաճկատանի կուսակալութիւնները իր չորս որդւոցը բաժնելով, Վհմէտը աւելի սիրելուն համար, զան իրեն յաջորդ ընտրեց Պորգուտին տեղը, որ անսրմէ մեծ եր . Խնիչէրինները և վեզիրներն ալ Վհմէտի կողմը կը բռնէին, քանզի Պորգուտ ինքնինքը երաժշտութեան և բանաստեղծութեան ապահովելու, կառավարելու անբաւական կ'երեւար իրենց :

Վոր վրայ՝ Աէլիմ արքայորդւոյն փառատիրութենցոյ գըրգուեցու, թէ և Վհմէտն աւելի փոքր եր, բայց կուզէր որ կամ նենդութեամբ և կամ բռնութեամբ յաջորդութիւնը ինքը առնէ : Վրանց իր հօրմէն հրաման առնելու՝ իր Տրապիզոնի կուսակալութիւնը թողուց, և Վէֆէ գնաց, ուր իր Արևէյման որդին կ'իշխէր : Երբ Պայէզիս հրաման խրկեց անոր որ նորէն իր տեղը դառնայ : Աէլիմ փոխանակ հընազանդելու՝ Տրապիզոնին տեղ Եւրոպիոյ մէջ կուսակալութեան

* Այսինքն է Այաք տիվանի . քանզի Օսմանեան աւագանձները . պատերազմ և հարկաւորութեան ատեն , ձիու վրայ հեծած ատեան կազմելու սովորութիւն ունէին :

գաւառ մը ուզեց, որպէս զի թագաւորանիստ քաղաքին մօտ ըլլայ:

Երեք անգամ Աէլիմ իր խընդիրը նորոգեց, և կուզեր Ագրիանուազօլիս գալիր հօրը ձեռքը համբուրելու համար քանզի ըլլ սան և վեցը տարուանէ հետէ զան տեսած չէր. Երեք անգամին աղ Պայէզիստ անոր աղազանիը մերժեց և խումէլիի մէջ ուզած գաւառը չառւաւ: Անատենը Աէլիմ հնազանդութեան լուծը թութիւց (մարտ 15) և գունդերով Ագրիանուազօլուսոյ վրայ ըտեց, որպէս զի իր ներկայութեամբը իր խնդիրը ընդունել առաջ: Աէզիրները միաձայն առաջարկեցին սուլթանին որ անոր խնդիրը չառագ անոր թէ աս անհնազանդութիւնը նրանի վտանգաւոր օրինակ մը կրնար ըլլալ իր եղբարց: Աւստի Պայէզիստ՝ Առուէտատին Աարքիէրզ գիտեական օրենուդիրը խրկեց որ երթայ իր որդին աղազանիքով համազէ: բայց Աէլիմ ամենենին մտիկ չըրաւ անոր:

Ան ատենը՝ Պայէզիստ իր վէզիրներէն գրգռեալ խումէլիի Հասանի վաշա կողմնազետը տասն և հինգ հազար հոգեւոլ իր անհընազանդ որդւոյն վրայ խրկեց: Հասան վաշա, որ հրաման ուներ միայն արքայորդին վախցընելու, երբ տեսաւ որ միայն մէկ օրուան հեռաւորութեամբ Ագրիանուազօլույ մօտեցէր էր, փախաւ և նորէն քաղաքը մտաւ: Առ վախցիրը ժողովագիր մը շինեցին ու սուլթան Պայէզիստ Կաստանդնուպոլիս գարձաւ, և Աէլիմ Աէմէնորէ գնաց:

Երեցաւ՝ որպէս թէ Աէլիմ քիչ ժամանակէն արքունի գահը պիտի ելլէ:

Եօր Աէլիմին բանակը Ագրիանուազօլուց գրանց առջեւը Չուգուրօվս գաշոը հաստատուեր էր, Պայէզիստ իր զօրքովը անձամբ անոր առջեւ ելաւ: իր վրանին վորագոյները բանալառւաւ, և աչքերը արցունքով լցուած իր որդւոյն բանակը իր գէմը պատրաստուած տեսաւ: Աակայն Հասան վաշա մէջ մըտնելով այս անգամ պատերազմը արգիլեց: ու գեսպանութեամբ Աէլիմին գնաց, և սուլթանին կողմէն ըսաւ անոր թէ անկարելի է առ ժամն որ իր հայրը տեսնէ: բայց իր խոստանոյ Պայէզիստ որ իր կենդանութեան առենը Ամէտը իր տեղը չաջորդեցընէ, և Անտինը ու Ալոճահիսարն աւաելցնելով իր խնդրանօքը Աէմէնորէի գաւառին կուսակալութիւնը իրեն կու տայ: Առ պայմաններով գաշնագիր մը շինեցին ու սուլթան Պայէզիստ Կաստանդնուպոլիս գարձաւ, և Աէլիմ Աէմէնորէ գնաց:

Առ գիպուածները Եւրոպայի մէջ պատահած աստենը՝ Ասիոյ մէջ ալքաղաքական պատերազմ մը ծագելովտէրութիւնը կը ըստ պառակար: Պորգուտ արքայորդին Աէլիմին Ագրիանուազօլույ վրայ քայլելը լսելուն պէս՝ ինքն աւապստամբեցաւ, Անթալեայէն ելաւ, և Ատրուխանի գտւառին աիրեց, որ մինչեւ ան աաենը ուղեր և չիրցեր էր զան ձեռք ձբգել, որպէս զի ինքն աւ գահակալութեան համար ըլլալու կը ու-

ւոյն մօտ գտնուի . քանդի կամ
իր հօրը կենդանութեամբը և
կամանոր մահուանէն ետե կ'ոււ-
զէր արքունի գահը ելլել : Աա-
կայն երբ Թէքքէէն կ'անցնէր ,
գունդ մը ելուզակներէ կողոպ-
տուեցաւ , որոնց գլուխ էր Դա-
րապըրդ օղու Շահգուլին , որ
ըստ Ըսմանցոց Շէթան գու-
լու կը կոչուի , և Շահ Խամսիլ
Պարսից թագաւորին տնունովը
փոքր Ասիյ մէջ կը բռնանար :
Դարակէոզ Վնաթնիյ կողմնա-
պետը ելուզակաց վրայ իրկուե-
լով , անոնց ձեռքը գերի ինկաւ
և իր բոլոր բանակը ջարդուեցաւ :

Առ շփոթութիւններուն լուրը
Եւրոպացի մէջ տարածուելով ,
Աէլիմ , որն որ Ադրիանուպոլսէն
Ումէնտրէ երթալու ճամբուն
վրայ էր , իր ընթացքը փոխեց և
նորէն դէպ ՚ի Ադրիանուպոլիս
գնաց : Պայէզիտ քանի մը անդամ
գեսպաններ իրկեց անոր որ իր
Ճամբան շարունակէ դէպ ՚ի Աէ-
մէնտրէ . բայց Աէլիմ չնաղան-
դեցաւ : Ասոր վրայ Պայէզիտ
կոստանդնուպոլիսը կորսնցնելէն
վախնալով , շուտով աս մայրաքա-
ղաքը դարձաւ : Բայց դեռ հոն
չհասած՝ Աէլիմ Ադրիանուպոլիս
դարձաւ , բանտերը բացաւ ,
գանձերը պարպեց , և քաղաքին
մէջ պաշտօններու և իշխանու-
թեանց նոր կարգեր դրաւ :

Այսու ամենայնիւ՝ կոստան-
դնուպոլսոյ մէջ ալ Ահմէտ
արքայորդւոյն կուսակիցները կը
զօրանային , որոնց գլուխ էր Ալի
փաշա մեծ վէզիրը : Պայէզիտ ասոր
գրգռանօքը՝ կոստանդնուպոլսէն
մեկնեցաւ Աէլիմին վրայ երթալու

համար , որ Ադրիանուպոլսէն
իր բանակովք յառաջ կը քալէր :
Չորլուի մօտ գաշտի մը մէջ՝
երկու բանակներն ալ իրարու
պատահեցան : Ալի փաշա մեծ
վէզիրը ձիով Պայէզիտայ կառքին
մօտենալով , որուն մէջ սուլթանոր
յօդացաւութե ախտիւ պառկեր
էր , վարագոյքը բացաւ , և Աէ-
լիմին բանակը անոր ցուցընելով ,
ըսաւ . “ Այսպէս զաւակը իր
հօրը ձեռքը համբուրելու կու
գայ , թէ զան գահէն ձգելու ” :
Վիւս վէզիրներն ալ նոյնպէս
Պայէզիտայ բարկութիը այնչափ
գրգռեցին , որ իր բանակին կող-
մը գառնալով , պոռաց . “ Ա՛լ
գերիներս , որ իմ հացս կ'ուտէք ,
յարձակեցէք սա ապօտամբաց
վրայ ” : “ Ա՛էծ է Աստուած ”
պօռացին մէկ բերան տասը հա-
զար հոգի , և խկօն թշնամւոյն
վրայ յարձակելով , հալածեցին
զան : Աէլիմ իր Դարապութուտ
ըսուած օդապարիկ ձիովը մաղա-
պուր աղատեցաւ , ու Աէաւ
ծովուն եզերքը հասնելով , Վըրըմ
իր Աէնկլի Քէրէյ խան աներին
քովը փախաւ : Իր բանակէն եր-
կու հաղար հոգի կորսուեցան ,
և մատանակը ցրուեցան կամ
Վըրըմ փախան :

Վնաթովիոյ կողմնապետը Շէ-
թան գուլուին ձեռքը գերի լինա-
լին ետե՝ ցցահարութեան տան-
ջանքը ընդուներ էր . Ալի փաշա
մեծ վէզիրը աս նախատինքը ջըն-
ջելու , ելուզակաց գունդերը հա-
լածելու , որոնք մինչեւ Պրուսա
հասեր էին , և աս առթիւ Ահ-
մէտ արքայորդին՝ Աէլիմին եղած
խոստմանը հակառակ՝ իր հօրը

կենդանութեամբը գահը հանեւ-
լու համար Վրիելը վազեց։ Աս-
կայսն Ենթէրիք Ալիմին անդր-
դուելի քաջութիւնը տեսնելով,
աւելի անոր հետ կապուեցան,
և Ահմէտ անսնց պարգեներ ճա-
պաղելով, չիրցաւ անսնց սիրալ
շահիւ։ Միատենը Ահմէտ և մեծ
վէզիրը նայեցան որ իրենց ակնկա-
լութիւնը պարապը ելսւ, և ո-
րոշեցին որ իրենց գիտաւորու-
թեան կատարումը ժամանակին
պարագաներուն թօպւն։ Ուստի
Ալի փառա առ ժամն ելուզակաց
վրայ վազեց։ որոնք անոր գալը
լսելուն պէս՝ Վըզլ գոյա լու-
նամէջը փախան, ուր Գորդուտ
արքայորդին առաջիկայ տարին
կողոպտեր էին։ Այ լեռնամէջը
հովտին մէկ կողմը Պարամանի
մէջ վէրջանալուն համար՝ մեծ
վէզիրը առ կողմին պահպանու-
թիւնը Պարամանի հառավարիք
Հայտէր պէյին յանձնեց։ ու
թշնամիք երեսուն և ութը որ
ամեն կողմէն պաշարուելին ետեւ՝
վէրջապէս ժայռերուն մէջէն
Ճամբայ մը բացին, Հայտէր պէ-
յը սպաննեցին և Կեսարից Ճամ-
բան կարկին։ Անձ վէզիրը առ
եղածը երկրորդ օրը իմանալով,
իր ենիքը իներէն ամենէն քա-
շերը ձի հեծցուց, ապստամք-
ներուն ետեւն վազեց, ու Այր-
մըսագլութի մօտ անոր հասաւ
(Օգոստոս 15)։ Երկու կողմէն
ալ կատղութեամբ պատերազ-
մեցան։ բայց Ծէյթանդուլու և
մեծ վէզիրը պատերազմի դաշտին
մէջ մնացին, և երկու բանակ-
ները իրենց գլխաւորները կոր-
սընցընելով ցիրուցան եղան։

Այսպէս ահա Խատիմ։ Ալի
փառա մէծ վէզիրը, Կորսնի և
Ահմէտնի աիրելէն, տէրութեան
մեծամեծ ծառայութիւնները ը-
նելէն ետեւ՝ վէզիրներուն մէջ
առաջնը եղաւ որ պատերազմի
դաշտին մէջ իր կեանքը կորսըն-
ցուց։

Ծէյթանդուլուի ընկերները
Պարսկաստանի մէջ ալ ասպատա-
կութիւնները ընկելնուն համար՝
Խոմայիլ շահ պատրուտկաւ մը
անսնց երկու գլխաւորները խըն-
ծուքի մը հրաւիրեց և զանոնք
աղէկ մը յանդիմանելէն ետեւ
եռացեալ ջրով լեցուն երկու
մեծ կաթուաններու մէջ նետել
տուաւ, և անսնց զրբը իր զօ-
րաց հետ խառնեց։ Այ դործով
Խոմայիլ կ'ուզէր իր տէրութիւնը
ապահովընել, և Պայէզիսոյ քո-
վը ելուզակաց ըրուծ ասպատա-
կութեանց համար զինքը անպարտ
հոնել։ բայց և զան իր զօրու-
թենէն վախցընելու համար,
գեսպանումը Խոզէքեանց Ծէյ-
տէք խանին գլուխը Կոստան-
դիուպոլիս Պայէզիսոյ խրկեց։

Ալիմ արքայորդոյն դէմ ե-
զած պատերազմին հետեւ եալառ-
տուն՝ Պայէզիս յազթանակու-
թեամբ Կոստանդնուպոլիս դառ-
նալով, Ահմէտ ալ իր հօրը կեն-
դանութեամբը գահը ելլելու-
յուսով, Ալի փաշային յազթուե-
լին ետեւ՝ դէմ ՚ի մոյրաքաղաքը
Ճամբայ ինկաւ և մինչև Ալիմիլէ
յառաջ եկաւ։ Հէրսէկ Ահմէտ
փաշան երրորդ անգամ մէծ վէ-
զիրը ըլլուով, Համարձակեցաւ
Ենիքը իներուն մտաց գէմգնել,
որոնք Ահմէտէն աւելի Ալիմին

կողմը կը բռնէին :

Վուսթաֆա երկրորդ վէզիրը
Վհմէտի առաջը երթալու պատ-
րաստութիւններ ընելուն համար՝
ենիչերիները ապստամբեցան
(15 Օգոստոս 1511) : Վիշերը
Վուսթաֆա փաշոյին պալսուը
մտան, և անոր երեսուն հազար
սոկոյ չափ արժողութեամբ կա-
րասիքը թալլեցին . անկէ անցան
Հէրսէկ Վհմէտ փաշոյին պալս-
ուը, որ ջանաց ստակով և խոսու-
մնւնքով զանոնք խաղաղոցին է .
ասով ալ գոհ չեղան, Վհմէտի
կուսակից վէզիրներուն և նա-
խարարներուն տուները, Եւրո-
պացի վաճառականաց խանութ-
ները կողապտեցին :

Ըս ապստամբութեան առաջը
առնելու համար՝ Պայէզիս մեծ
վէզիրը իշխանութենէ ձգեց, և
անոր տեղը Վուսթաֆա փաշոն
մեծ վէզիր ըրաւ, Վհաթովոյ
զօրաց դատաւորին տեղը Վոլս
Խալիլին տուաւ, և ուրիշ ա-
ւագանիները փոխելով, հազիւ
աղմուկը դադրեցաւ :

Վհմէտ արքայազունը կոստան-
դնուալուսոյ այնափ մօտենալէն
ետեւ՝ ամեն կողմէն ինքզինքը
անօգնական տեսնելով, նորէն
ետ դարձաւ, ու իր Շէհինշահ
հանգուցեալ եղորը Վէհէմմէտ
որդւոյն վրայ քալելով, որ Պա-
րամանի կուսակալ էր, զան Խ-
կոնիայի մէջ պաշարեց, և զան
նեղը իօթեց որ անձնատուր ըլ-
լայ :

Պայէզիս դեսպան խրկեց անոր
ու խրատեց որ այն անիրաւ
գործէն ետ կենայ . բայց Վհմէտ
հրամայեց որ դեսպանին քիթը

և ականջները կորեն և այնպէս
արձակեն : Վէհէմմէտ ստիգմայ
անձնատուր ըլլուլով, Վհմէտ զին-
քը աղատ թողուց :

Պայէզիս Վհմէտին ըրածներուն
վրայ նեղանալով, և մանաւանդ
վէզիրներուն գրդուանօքը Ոէ-
մէնորէի կուսակալութիւնը Ոէ-
լիմին շնորհեց, և հրաման տուաւ
անոր որ Վըրըմէն Եւրոպա վերա-
դառնայ : Բայց արդէն Ոէլիմ
Յունուարի վերջերը երեք հազար
ձիուոր զօրքով Վըրըմէն մէկներ
և Դանուապի սառին վրայէն ան-
ցնելով մինչև Վգրիրման հասեր
եր :

Եղին միջոցին Պարգուտ, որ մին-
չւ ան ժամանակը իր Վարուխանի
կուսակալութիւնը հանդարտու-
թեամբ կը վարէր, Վհմէտէն վախ-
նալով, իր հօրը և ենիչերեաց
սիրտը շահելու ու Վհմէտին և
Ոէլիմին տեղուածեան գտնը
ելլելու համար փորձ մը փորձեց :
Իր մաերիմներէն միայն երեք հո-
գի հետը առած՝ ծպտեալ Կառ-
տանդնուալովս գնաց, ենիչերի-
ներուն ձմերանոցը իջաւ, և զա-
նոնք շահելու զեց յիշելով անոնց
թէ երեք տարի առաջ նրանից
պարգևներ տուեր էր իրենց :
Բայց ենիչերիները այնչափ Ոէ-
լիմին կապուած էին, որ յայտնի
անոր երեսին ըսին թէ արքայա-
կան աթոռը ելլելու անբաւա-
կան է :

Ի 6 Վարտ 1512, ենիչերիները
ուոք կոխեցին և սուլթանէն Ոէ-
լիմը ուղեցին որ Վհմէտի վրայ
երթան : Պայէզիս չուղելով անոնց
խնդիրքը ընդունեց, իսկոյն Ոէ-
լիմին սուրհանդակներ խրկուե-

ցան իր հօրը հրամանը տանելու և զան կոստանդնուպոլիս հըրաւերելու համար։ Երբ երեսուն մղոն հեռաւորութեամբ մայրաքաղաքին մօտեցաւ, ենիչէրիներուն զօրավարը անոր առաջը գընաց, և երբ Ենիպաղչէ հասաւ (19 Մարիլ), վէղիները, աւագանիները, և իր Գորդուտեղայրը մեծ պատուով ընդունելութիւն տուին անոր։

Պայէղիտ անբաւ գանձեր ժողվելով, և անոնց միջոցաւ յուսալով որ իր աթուոյն վրայ հաստատուն կրնայ մնալ, խոստացաւ իր Աէլիմ որդւոյն որ երեք հարիւր հաղար ոսկի նոյն միջոցին կը համրէ, և երկու հարիւր հաղար ոսկի ալ տարեկան ռոճիկ կը կապէ, թէ որ յանձն առնունորէն քաղաքէն գուրս ելլէլ։

Բայց Աէլիմ ենիչէրիներուն օդնականութեանը վրայ վսուսանալով, որոնց երեք փողուոճիկ խոստացեր էր օրը, առ խոստմաւնը ընդունեց։ Ի՞ստենը Պայէղիտ երեք խնդիրք ըրաւ։ Նախ՝ որ մինչև իր մեռնիլը զինքը արքունի՝ գահին վրայ թողու, և ետքը իւեն յաջորդէ, երկրորդ՝ գանձապետը իր գանձերովը իւրեն թողու։ և երրորդ՝ Աէլիմ իր Վհմէտ եղորը հետ հաշտուի։ Բայց Աէլիմ միայն անոր վէղին խնդիրքը ընդունեց և իր հայրը գահէն վար առնելու պատրաստուեցաւ։

Հաբաթ օրը՝ 25 Մարիլ 1512, ենիչէրիները և սպաները ու կոստանդնուպոլսյ ժողովուրդը առ հասարակ վէղիներուն հետ մէկտեղ բազմութեամբ արքունի

գուռը դիմեցին։ Պայէղիտ իր աթուին վրայ նստած հրամայեց վէղիներուն որ հարցընեն թէ ինչ է ժողովուրդին խնդիրքը։ անատենը միաձայն բարբառով այսպէս պատասխանեցին։ “Ո՞ւ սուլթան տէրը ծեր է և հիւանդ, թող Աէլիմը մեզ սուլթան ըլլայ”։

Երբ տասն'երկու հազար ենիշէրիներուն հետ ժողովուրդը երկու երեք անդամ նոյն բանը կրկնեցին, Պայէղիտ պարտաւորեցաւ աս խօսքերը ըսել։ “Ահա իմ տէրութիւնս Աէլիմ որդիիս կը թողում։ Աստուծոյ օրհնութիւնը անոր վրայ ըլլայ”։

Կատենը բազմութիւնը “Ո՞ւ է Աստուած” պուաց, և բոլոր պալատը ու քաղաքը անոնց ուրախութեան ձայներովը հնչեցին։ Աէլիմ, որ մինչև ան ատենը առաջին և երկրորդ դրանց անշրպկետը կեցեր էր, ուր հիմա աւագանիները և դեսպանները սուլթանին ունկնդրութեանը ներկայանալէն առաջ սպասելու կը պարտաւորին, վէղիներէն ներս հրաւիրուելով, յառաջ անցաւ իր հօրը ձեռքը համբուրեց, զան աթուոէն հանեց, կառքի մը մէջ դրաւ, ու ինքը ձիուլ անոր առջեւը խնալով մինչև հին պալատը տարաւ վան։ Որմէ ետեղ դարձեալ վերստին նորէն պաւատը դարձաւ իր հպատակաց և աւագանիներուն խնդակութիւնը ընդունելու համար։

Պայէղիտ այսպէս զրկուած միայնութեան մէջ քսան օր անմիթար անցնելէն ետեւ հրաման խնդրեց իր օրդիէն որ Տէմնթիքա քաշուի, օրպէս զի իր

ծնած քաղաքին մէջ իր կեանքը կնքէ : Աէլիմ սիրով անոր խընդիրքը կատարեց, անոր ճանապարհութեան խնամակալութեանը Յօնուս փառակին և Պառմ համարակալին յանձնեց, և ինքն ալ անձամբ մինչև Խորենէ գագուասուն իր հօրը կառքինքում հետի քալեց, ակնածութեամբ իր ծերունի հօրը վերջին նրատները մոտիկ ընելով :

Սակայն Պայէզիս իր ծնած քաղաքը Հասած՝ իր ճամբորդութեան երրորդ օրը (26 Վայիս 1512) Այաքաղաքը մեռաւ : Առ մահը սմանք անոր զառամեալտարիքին, հիւ անդութեանց և բարոյականցոց կու տան, և սմանք կ'ըստն թէ հրէայ քմիշի մը Աէլիմին հրամանովը մահու դեղ տուաւ անոր և Պայէզիս իմանալով ասքանո, առաւ բաժակը և աներ կիւղ խմեց զան բոելու : “ Որդ եակս, ձիգ սրբնթաց ըլքայ, և ուրդ կարսոյ . հանդերձիգ դըրքաշկը գումիէ դշյնայ, և կեանքը կարձ ըլքայ ” :

Սուլթան Պայէզիսոյ երկարաւուն իշխանութիւնը միշտ գըտքաղդ պատերազմներով և բնական խաղաղապահութեամբ վերջացաւ : Վանդի մատենտդրութեան բանաստեղծութեան պարապելով, Օսմանեան պետութեահմանները ընդարձակելու այնշաբի հոգ չտարաւ :

Ընութեամբ հանդարտաբարոյ էր, կ'ըսէ Անդրէաս Կրիթիքի վենետիկցին, բարեգութ և մելամազգոտ, բայց մարմնով գեր, Արուեստները և ճարտարութիւնները կը սիրէր, աստեղակալութեանը մէջ տեղականական և առաջատար պատուածութեան մէջ առաջատար էր, և առաջատար պատուածութեան մէջ առաջատար էր, և առաջատար պատուածութեան մէջ առաջատար էր :

Գիտութեան և օրինաց մէջ քաջաղեակ էր, և արեգնաւուօրութեան մէջ իր ժամանակին ամեն մարդոցմէ աւելի յաջողակ էր : Խիստ ողորմանէր ալ էր . քանզի իր իշխանութեան ատենը 8 600 000 փող ողորմութիւն տուեր էր աղքատներուն . ամեն տարի 14 000 սոկի Վէքքէ կը խրէէր . Զարդարանքը չէր սիրեր, անոր համար ոչ իր նախորդ վեցը սուլթաններուն իւսչիտի ըսուած սոկեկուռ փակեզը հագաւ . և ոչ եօթերորդին հնարած բոլորածն գլխարկը . այլ շղաշատեառով պատած գլանածն փակեզը մը շինել տուաւ, որն որ Վիւճէ վէզէ կ'ըսուի :

Եր սուլթանին իշխանութեան ժամանակը՝ տէրութեան տուեկան եկամուտը 4-5 000 000 սոկի կը համնէր : Օսմանեանը Սոխյ մէջ քառն և չորս գաւուռ և Եւրոպից մէջ երեսուն և չորս գաւուռ ունէին : Թոշակաւոր զօրսց թիւն էր յիսուն հազար, և ենիչէրիններունը տասն երկու հազար : Սոլյօրաբար՝ պատերազմի համար եօթանասուն ցականաւեր պատրաստ կը կենոյին : Աէլիմի վերներուն եկամուտը 25 000 սոկի կը համնէր, Սոխյ և Եւրոպից կողմանադետներունը 30 000 սոկի, բանակին երկու գաւուռ ուրներունը 5 000 սոկի :

Տէրութեան ատենակալներն եին երեք ձարիւք երեք վէզիրները, երկու զօրաց գաւուռ ուրները, երկու համարակալները և մէջ ատենադպիրը, որսիք Շաքաթ օրէն սկսեալ չորս օր շարունակ արքունի պալատին մէջ